



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1377

1378

1379

511(078)

U-78

M. SETIAN
BIBLIOTHEQUE ET ATELIER DE RELIURE
CONSTANTINOPLE
Bakmakdjilar Yokouch



2010

1800

այ
511

ԸՆԴՊՐՁԱԿ

ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ



Ի

ՍԻՄԻՐՆԷ ՄԻՔԱՑԷԼԵԱՆ

ՀԱՏՈՐ Ա.



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻՔԱՑԷԼԵԱՆ

—
1878


5F

15866


Ը Ն Գ Ա Ր Ձ Ա Կ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՏՆՍԱԿԱՆ ՆԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ



ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ



ԳԼՈՒԽ Ա.

ՍՍՀՄԱՆՔ

1. ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ Թուոյ գիտութիւնն է, որ զանոնք հաշուելու սկզբունքը և կանոնները ապացուցիւ կը սովորեցնէ :

2. Քանակ կամ ֆանակարիւն կըսուի այն բանը, որ կրնայ աւելնալ և պակսիլ և որչափ բլլալը հասկցուիլ. ինչպէս՝ երկայնութիւնը, ծանրութիւնը, ժամանակը, ջերմութիւնը, ևայլն :

3. Միարիւն կամ Չափ կըսուի, որ իր տեսակէն եղած քանակի մը որչափ բլլալը ցուցնելու համար որոշուած է. ինչպէս՝ եօթը խնձորին միութիւնն է մէկ խնձոր. և ծանրութեան միութիւնն է մէկ հօխա, կամ մէկ քիլօկրամ. երկայնութեան միութիւնն է մէկ էնտագէ, մէկ արշըն, մէկ մկրո. ևայլն :

4. Ամբողջ միութեան մը ստորաբաժանումը, որ իր հաւասար կտորներէն մէկն է, կոտորակնաչ

91
40

միտքիւն կըսուի . ինչպէս՝ ուրուպը կոտորակեալ միութիւն է էնտաղէին նայելով . մարան կոտորակեալ միութիւն է զուրուշին նայելով : Նմանապէս քառորդ , ութերորդ , տասներորդ , հինգերորդ , կոտորակեալ միութիւններ են :

Ծ . Մի և նոյն տեսակի միութիւնները մէկ տեղ գալով թիւ յառաջ կը բերեն , որ կըլլայ երեք տեսակ :

Ա . Արտոյը կամ ամբողջական թիւ , որ ամբողջ միութեանց մէկ տեղ գալով կը շինուի , ինչպէս՝ երկու , երեք , և այլն :

Բ . կոտորակ կամ կոտորակեալ թիւ , որ կոտորակեալ միութեանց մէկ տեղ գալով կը շինուի , ինչպէս՝ կէս , երեք քառորդ , երկու հինգերորդ , և այլն :

Գ . Խտան կամ կոտորակաւոր թիւ , որ ամբողջ և կոտորակ թուոց մէկ տեղ գալով կը շինուի . ինչպէս՝ երկուք ու կէս , հինգ երեք քառորդ , ևն :

Ե . վերացեալ թիւ կըսուի , որոյ միութեան անունը որոշեալ չէ . ինչպէս՝ երկու , երեք , չորս , և այլն : Թանձրացեալ թիւ կըսուի , որոյ միութեան անունը որոշեալ է , ինչպէս՝ երկու մարդ , երեք հոխայ , չորս խնձոր , և այլն :

Զ . Թանձրացեալ թիւերը հասանու կըսուին , երբ ամենքն ալ մի և նոյն բանի համրանք են , ինչպէս՝ կորը մարդ , ոտը մարդ , ինչը մարդ : Եւ երբ տարբեր բաներու համրանք են տարասնու կըսուին . ինչպէս՝ հինգ մարդ , վեց ոչխար :

Միայն համասեռ թիւերը կրնան իրարու վրայ աւելնալ կամ սլակսիլ , և տարասեռները ո՛չ երբէք :

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թուարանութիւնը ամէն տեսակ արհեստներու և զիտութեանց մէջ ամենակարևոր կերպով պէտք ըլլալուն համար , ամէն մարդու գիտնալն ալ անհրաժեշտ եղած է , և դպրոցական ուսմանց առաջին տեղը կը բռնէ : Ժամանակ մը մեր դպրոցներուն մէջ միայն երեք կամ չորս առաջին գործողութիւնները դաս կը տրուէր և այն ալ լոկ գործնականապէս , վաստն զի այն ատեն այնպէս կենթադրուէր որ այսչափ ժըն բաւական է : Բայց երբ մեր դպրոցները տակաւ առ տակաւ սկսան կարգի մտնալ , այս ուսումը քիչ մը ընդարձակորէն աւանդելու պէտքն զգալի եղաւ , այսու ամենայնիւ հարկ եղած եղանակաւ դաս տալու կարևորութիւնը վերջի մէկ բանի տարուանս մէջ բորբոսի յայտնի եղած է , ի շնորհս մէկ բանի Եւրոպական ոճով հաստատուած դպրոցներու : Յիրուի մինչև այսօր շատ մը թուաբանութիւններ յօրինուած և ի լոյս եկած են , բայց գրեթէ ամէնքն ալ աւելի գործնական ընթացք մը ունին , թէպէտև մէկ քանիներ կան որոց մէջ ապացուցական թուարանութիւն մ'ըլլալու ջանքերն յայտնի կը տեսնուին , բայց անոնք ալ Տաճկաստանի պէտքերը չեն լեցնէր , բորբոսի Եւրոպական չափերու և Եւրոպական դըրամներու վրայ յարմարացած են իրենց կիրառութեան մասը :

Շատոնց կը փափաքէի որ իմ երկհատոր թըուաբանութիւնս ուրիշ ձևով մ'աւանդած ըլլայի , իւրաքանչիւր կանոն իր քովն իւր ապացոյցն ունենար ,

մանաւանդ առաջին հատորը որուն սպացուցական մասը իբրև յուեւուած վերջը կցուած է : Այս անգամ նոր ոճով բարբաբին սպացուցական ըլլալու պայմանաւ ի լոյս կրնձայուի, աւելի ճիս օրինակներով : Բայց թուարանութիւնը ինչպէս որ յայտնի է միանգամ ուսմամբ ամէն որ կարող չէ ըմբռնել, աւոր համար այն սիլլոբները, կանոնները և խոնդիրները որոց ըմբռնումը և լուծումը դժուար է, անոնց վրայ աստղանիշ դրուած է, որպէս զի դասատուք աշակերտաց ընդունակութեանը նայելով առաջին անգամ չի սրահանջեն նորեկ աշակերտներէն անոնց ուսումը և լուծումը :

Ի վերջոյ կաղաչեմ՝ այս ճիւղիս մասնաւորութիւն ունեցող դասատուներուն, որ զգուշանան այնպիսի դասագիրք տալու աշակերտաց ձեռքը որոյ հեղինակը միայն անոր գործնական ուսմանը հետամուտ ըլլալով այնպէս յօրինած է իւր գիրքը, միայն աժան ըլլալու տխրասով մը դպրոցական աշակերտաց թուարանական ճաշակը մարելով անոնց անընդունելի կանոններ տարածած է, որուն ալ շատ օգնած են տեղոյս գրավաճառները :

Աշխատութեամբ յառաջ եկած գործ մը, տարապիսան աժան չի կրնար ըլլալ :



1. Ի՞նչ է թուարանութիւնը .
2. Քանհոսթիւնն ի՞նչ է .
3. Միութիւն ի՞նչ բանի կըսուի .
4. Կոտորակեալ միութիւնն ի՞նչ է : Ե. Թիւն ի՞նչ է, և քանի տեսակ է : Կոտորակն ի՞նչ է : Խառն կամ կոտորակաւոր թիւն ո՞րն է : Ե. Վերացեալ թիւն ո՞րն է : Թանձրացեալ թիւն ի՞նչ է :
7. Թանձրացեալ թիւերը քանի տեսակ կըլլան . ո՞րն է համասեռ և ո՞րն է տարասեռ : Ո՞ր տեսակ թիւերը միայն կրնան լրատու վրայ աւելուալ և իրարմէ պակսիլ :

Գ Լ Ո Բ Ե Ք

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԹԻԻԻԲ

Հ Ա Տ Ո Ւ Ս Ծ Ա .

ԹՈՒՌԻՄՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԹՈՒՌՑ

Յ. Թիւերն Սկեռն են, վասն զի թիւ մը որչափ մեծ ըլլայ, անիէ մէկ աւելի ուրիշ թիւ մ'ալ կրնայ մտածուիլ, և այսպէս հետզհետէ : Այս անհուն թիւերը քանի մը բառերու և նշաններու միջոցաւ յայտնելուն և գրելուն կըսուի Թուումն . որ երկու տեսակ է, Թուումն բանաւոր, Թուումն գրաւոր :

1^o ԹՈՒՌԻՄՆ ԲԱՆԱԻՌ

Զ. Քանի մը բառերու միջոցաւ ամէն թիւ յայտնելու կերպը կըսուի Թուումն բանաւոր :

1Թ. Պզտի տղայք առաջին անգամ իրենց մատներուն վրայ կը համրեն, առաջին մարդիկ ալ միայն

իրենց մտաներուն վրայ եղած համբանքներուն զատ անուններ դրած են . ինչպէս՝

մկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթ, ութ, ինն, տասն,

Մէկը կըսուի Պարզ կամ Առաջին կարգի միութիւն, և միւս թիւերն ալ մինչև ինն՝ Առաջին կարգի թիւք :

11. Տասը՝ որ տասը սարդ միութիւններէ կը բաղկանայ, կըսուի Տասնաւոր կամ Երկրորդ կարգի միութիւն, և տասնաւոր միութիւնն ալ սարդ միւսորայ պէս համբելով յառաջ կուգան .

Մէկ տասը կամ տասն Վեց տասն կամ վարսուն
Երկու տասը » քսան Եօթ տասը » եօթսուն
Երեք տասը » երեսուն Ուրբ տասը » ուրսուն
Չորս տասը » քառսուն Ինը տասը » իննսուն
Հինգ տասը » յիսուն

Ասոնք ալ կըսուին տասնաւոր կամ երկրորդ կարգի թիւք :

Երկու յաջորդական տասնաւորներուն, այսինքն . տասնին - քսանին, քսանին-երեսունին, և այլնին մէջ եղած ինը սարդ միւսոր թիւերն ալ հեռագհեռ տասնաւորներուն քով գրուելով արտասանելու սովորութիւն եղած է . ինչպէս՝

Տասնըմկ, տասներկու, տասներեք . . . տասներիւր .
Քսանըմկ, քսաներկու, քսաներեք . . . քսաներիւր .
Երեսունըմկ, երեսուներկու, երեսուներեք, երեսուներիւր .
Քառսունըմկ, քառսուներկու, քառսուներեք, քառսուներիւր .
.
Իննսունըմկ, իննսուներկու, իննսուներեք, իննսուներիւր .

12. Իննսունըիննին մէկ աւելին է Հարիւր, որ աստիճանաւոր միութիւն ըլլալով կըսուի Հարիւ-

րաւոր կամ Երրորդ կարգի միութիւն, և սարդ միւսւորներու պէս համբելով կըլլայ՝

Մէկ հարիւր կամ հարիւր, երկու հարիւր, երեք հարիւր, չորս հարիւր, հինգ հարիւր, վեց հարիւր, եօթ հարիւր, ութ հարիւր, ինն հարիւր :

Ասոնք ալ կըսուին Հարիւրաւոր կամ Երրորդ կարգի թիւք :

Երկու յաջորդական հարիւրաւորայ, այսինքն, հարիւրին - երկու հարիւրին, երկու հարիւրին - երեք հարիւրին, և այլնին մէջ գտնուած իննսունը ինը թիւերը կարտասանուին, տասնաւոր և միւսոր թիւերը հարիւրաւորայ քով գրուելով, ինչպէս՝
Հարիւր մկ, երկու հարիւր տասը, երեք հարիւր քսանը հինգ, ինն հարիւր իննսունը ինը :

13. Ինն հարիւր իննսունը իննին վրայ մէկ աւելցընելով կըլլայ հազար, որ տասն հարիւրաւոր միութիւն է, և կըսուի Հազարաւոր կամ Չորրորդ կարգի միութիւն, և սարդ միւսւորայ պէս համբելով կըլլայ Մէկ հազար կամ հազար, Երկու հազար, Երեք հազար, Չորս հազար, Հինգ հազար, Վեց հազար, Եօթը հազար, Ուր հազար, Ինն հազար :

Ասոնք ալ կըսուին Հազարաւոր կամ Չորրորդ կարգի թիւք .

Տասն հազարն է հազարի տասնաւորը, միութիւն Հինգերորդ կարգի, և թիւերն են
Տասն հազար, Քսան հազար, Երեսուն հազար, Քառսուն հազար, Յիսուն հազար, Վարսուն հազար, Եօթսուն հազար, Ուրսուն հազար, Իննսուն հազար

Հարիւր հազարն է հազարի հարիւրաւորը, միութիւն Վեցերորդ կարգի, և թիւերն են

Հարիւր հազար	հինգ հարիւր հազար
Երկու հարիւր հազար	Վեց հարիւր հազար
Երեք հարիւր հազար	Խօրե հարիւր հազար
Չորս հարիւր հազար	ուր հարիւր հազար
իկն հարիւր հազար	

Երկու յաջորդական հազարաւորաց մէջ եղած բոլոր թիւերը ըսելու համար հազարաւորէն ետքը կը դրուին հազարէն փոքր եղած թիւերը, ինչպէս՝

Հազար մէկ հազար հինգ հազար իկը
 Երկու հազար տասը իկն հազար փարսաւեր
 հինգ իկն հազար իկնաւեր իկը :

Երկու յաջորդական տասն հազարաւորաց մէջ եղած բոլոր թիւերն ըսելու համար ալ տասն հազարէն ետքը կը դրուին իրմէ փոքր եղած թիւերը, ինչպէս՝

Տասն հազար մէկ քսան հազար հինգ
 երեսուն հազար քսանը իկը քստասունը հինգ
 հազար վեց հարիւր տասնըվեց իկնաւեր իկը
 հազար իկն հարիւր իկնաւեր իկը :

Վասնապէս երկու յաջորդական հարիւր հազարաւորաց մէջ գտնուած բոլոր թիւերն ըսելու համար նաև հարիւր հազարաւորէն ետքը կը դրուին հարիւր հազարէն փոքր եղած թիւերը, ինչպէս՝

Հարիւր հազար մէկ երեք հարիւր հազար քրասուր
 եր հինգ իկն հարիւր հազար քսան
 իկն հարիւր իկնաւեր իկը հազար իկն հարիւր իկնաւեր
 իկը :

Ինն հարիւր իկնաւեր իկը հազար ինն հարիւր իկնաւեր իննէն մէկ աւելին է Միլիօն, միարիւն Եօր, ներորդ կարգի, և թիւերն են՝

Միլիօն	տաս միլիօն	Նօրն միլիօն
երկու միլիօն	հինգ միլիօն	ուր միլիօն
երեք միլիօն	վեց միլիօն	իկն միլիօն

Ինչպէս որ յայտնի կը տեսնուի ամէն կարգի թիւերը ինն հաս են :

II. Հազարն աւելի բարձր դասի միութիւն կը համարուի, որ ունի իր միաւորները, տասնաւորները և հարիւրաւորները, ինչպէս պարզ միաւորի դասն ալ ունի իր միաւորները, տասնաւորները և հարիւրաւորները :

Հազար հազարը կ'ըլլայ նոր դաս մը, որ է Միլիօն, հազար միլիօնը կ'ըլլայ Երկիլիօն, հազար երկիլիօնը կ'ըլլայ Երիլիօն, և այսպէս հետզհետէ Քառիլիօն, Հնգիլիօն, Վեցիլիօն, և այլն, տասնը մէկ մէկ նոր դասի միութիւններ են, որ իրենցմէ անմիջապէս ստորին եղած դասին հազար անգամն են, և առանձինն ունին միաւորներ, տասնաւորներ և հարիւրաւորներ : Ասանկով

- Ա. Գասի թիւերն են, պարզ միաւորի դասը,
- Բ. » » » հազարաւորի դասը,
- Գ. » » » միլիօնի դասը,
- Դ. » » » երկիլիօնի դասը,
- Ե. » » » երիլիօնի դասը,
- Զ. » » » քառիլիօնի դասը.

.

 սոցն ամէն մէկ դասերն ունին միաւոր մը, տասնաւոր մը, հարիւրաւոր մը :

Հազարէն բարձր եղած դասերուն անունները շինուած են մէկ երկու, երեք թիւերը շիօն մասնիկին հետ բարդուելով :

Պ. Ինկերտոյ դաս և քսանըփեցերտոյ կարգի ըիւ է :
4. Երկիտեմի հարիւրաւորք քա՞նկերտոյ կարգի ըիւ է :

Պ. Տասներփեցերտոյ :

5. Երկիտեմի տասնաւորք քա՞նկերտոյ կարգի ըիւ է :

Պ. Տասնըմէկերտոյ :

18*. Պոխադարձորար . կարգի մը համբանը զխոնաւով զասին անուեր և նայն զասին հարիւրաւորին կամ տասնաւորին կամ միաւորին սկիւղ որոշելու համար : բաժնելու է կարգին համբանը՝ երեքով, երաժը քա՞նկերտոյ դաս ըլլալը կիմայնէ, որմէ երկուք պակսեցնելով և մնացածը յօնիկ հետ բարդելով զասին անուեր կը գտնուի : Եթէ բաժանուի մէկ կամ երկու մնացորդ թողու, քանորդը մէկ աւելի համարելու է . թէ որ մէկ աւելցած է՝ առաջարկեալ թուոյն բարձրագոյն զասը միաւորին սկսած է . եթէ երկու աւելցած է՝ առաջարկեալ թուոյն բարձրագոյն զասը տասնաւորին սկսած է : Քսան և հինգերորդ կարգի թիւ մը քններորդ զասի թիւ է և եօթնիտեմի միաւորն է : Չասն զի քսանըփեցերտին մէջ երկը ութ անգամ կայ մէկ կաւելնայ, որով քններորդ զասի թիւ կըլլայ, և երկու պակսեցնելով յատուջ կաւայ եօթը, և զասին անուեր կըլլայ եօթիտեմ, և որովհետեւ մէկ աւելցած էր, եօթնիտեմի միաւորն է, կամ եօթնիտեմի միաւորին սկսած է քսանըփեցերտոյ կարգի թիւ մը :

Խ Ն Դ Ի Բ Գ

- 6. Տասն և ուրերտոյ կարգի ըիւր ո՞րն է :
Պ. Քսանիտեմի հարիւրաւորք :
- 7. Երեսներըտրսերտոյ կարգի ըիւր ո՞րն է :
Պ. Տասնիտեմի միաւորք :
- 8. Տասնըփեցերտոյ կարգի ըիւր ո՞րն է :
Պ. Քսանիտեմի միաւորք :
- 9. Տասներտոյ կարգի ըիւր ո՞րն է :
Պ. Երկիտեմի միաւորք :
- 10. Ուրերտոյ կարգի ըիւր ո՞րն է :
Պ. Միտեմի տասնաւորք :

19*. Գլխաւոր ազգերին ունեք մէկ զասի թիւերը վեց կարգ կը համարեն, որով՝
Ա. Գասը կունենայ պարզ միաւոր, տասնաւոր, հարիւրաւոր, հազարաւոր, տասն հազարաւոր, հարիւր հազարաւոր կարգի թիւերը :
Բ. Գասը կունենայ միլիոնի միաւոր, տասնաւոր, հարիւրաւոր, հազարաւոր, տասն հազարաւոր, հարիւր հազարաւոր կարգի թիւերը :
Գ. Գասը կունենայ երկիլիոնի միաւոր, տասնաւոր, հարիւրաւոր, հազարաւոր, տասն հազարաւոր, հարիւր հազարաւոր կարգի թիւերը :
Ուստի այս ոճով միլիոնը երկրորդ զասի թիւ է, երկիլիոնը երրորդ զասի թիւ կայն :

Խ Ն Դ Ի Բ Գ

- 11. Վեց կարգը մէկ դաս համարելով տասներտոյ կարգի ըիւր ո՞րն է :
Պ. Միտեմի հազարաւորք :

- 12. Եւանապէս քառակերտոյ կարգի բիւր ո՞րն է :
Պ. Երկիտեան տասնաւորը :
- 13. Միկիտեան տասնաւորը քա՞նկերտոյ կարգի բիւր է :
Պ. Ութերտոյ :
- 14. Երկիտեան հազարաւորը քա՞նկերտոյ կարգի բիւր է :
Պ. Տասն և վեցերտոյ :
- 15. Միկիտեան տասն հազարաւորէն սխալաւ բիւր մը քա՞նկի կարգ բիւր կը պարտեալի ամէնը :
Պ. Տասն կարգ բիւր :

2^o. ԹՈՒՌՈՒՄՆ ՊՐԱՒՈՐ

20. Ղրաւոր թուուման նպատակն է ամէն թիւ գրել տասը թուանշաններու միջոցաւ, որք են
դրո, մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, տասն, ուր, ինն,
0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9,

Առաջին տողին մէջ գրուածները բոլոր անուններն են, որ միայն հայերէն գիտցող մը կրնայ կարդալ և բանը . բայց երկրորդ տողին մէջ գրուածները բուն քրուանշաններն են, որ ամեն ազգ տեսածին պէս իր ընդամենը անունց անունը կրնայ :

Այս քուանշանները յԱրարացոց անուամբ են, և Արարացի քուանշանը կրատին, Արարացոց ձեռքով Երուսա մտած ըլլալուն համար . բայց կը կարծուի որ Հեղիատասնի մէջ գտնուած ըլլայ, ինչպէս հին Արարացի մատենագիրք ալ կը վիպին :

21. Այս թուանշաններով ամէն թիւ գրելու եղանակը երկու պայմանի վրայ հիմնուած է .
Ա. Իրարու քով գրուած ամէն թուանշան իր

աջ կողմի թուանշանի միութենէն տասնաւորաւորի անելի և փոխադարձաբար իր ձախ կողմի թուանշանի միութենէն տասն անգամ պակաս միութիւն ունեցող կարգի թիւ կիմացնէ :

Բ. Զրօն պակաս կարգերու տեղ կը դրուի :

Այս պայմաններէն կը հետեւի որ թուանշանները երկու տեսակ նշանակութիւն ունին, մէկ մը իրենց նշանակութիւնը, որ յացարձակ կամ ձեռք նշանակարիակ կըսուի, մէկ մ'ալ գտնուած տեղին համեմատ նշանակութիւնը որ տեղական նշանակարիակ կըսուի . տասնիով վերոյգրեալ թուանշանները չէ թէ միայն ինը թիւերը կիմացնեն, այլ ամէն կարգի թիւերն ալ .

- 1ը կը ցըցուի նաև տասը, հարիւր, հազար, և այլն,
- 2ը » » » քաակ, երկու հարիւր, երկու հազար, քաակ հազար, երկու հարիւր հազար, երկու միլիօն, և ըն.
- 3ը » » » երեսուն, երեք հարիւր, երեք հազար, երեսուն հազար, երեք հարիւր հազ . երեք միլիօն, ևն :

Բայց ամէն կարգի թիւերը իրարու հետ չի շփոթելու համար միաւորները աջ կողմը առաջին տեղը կը գրուին, տասնաւորները միաւորաց ձախ կողմը երկրորդ տեղը, և հարիւրաւորները՝ երրորդ տեղը և այլն կը գրուին : Ինչպէս՝ հինգ հարիւր երեսուն և չորսը թուանշանով գրելով կըլլայ

534

- Այլ կողմէն համարելով Ա. քուանշանը որ է 4 է միւսոր,
 - » » » Բ. » » » 3 » տասնաւոր,
 - » » » Գ. » » » 3 » հարիւրաւոր
- 3 ին 30, և 5 ին 500 նշանակութիւնը իրենց տեղա՞

կան նշանակարիւնէն է : Վնց հազար եօթն հարիւր ուրը
կը գրուի 6708

աասնաւորին տեղ զրօ զրուած է :

Նաև քսանը հինգ հազար վեց հարիւր եօթանու
տուը մէկը կը գրուի 23674

Երեք հարիւր քսանը չորս հազար քսանը կը գրուի
324 020

Ուստի նաև դնենք հոս իւրաքանչիւր կարգի
Թուանշանները .

Ա. կարգի բուց		Գ. կարգի բուց	
բուանշանները		բուանշանները	
մէկ	1	հարիւր	100
երկու	2	երկու հարիւր	200
երեք	3	երեք հարիւր	300
չորս	4	չորս հարիւր	400
հինգ	5	հինգ հարիւր	500
վեց	6	վեց հարիւր	600
եօթն	7	եօթն հարիւր	700
ութ	8	ութ հարիւր	800
ինն	9	ինն հարիւր	900
Բ. կարգի բուց		Ծ. կարգի բուց	
բուանշանները		բուանշանները	
տասն	10	հազար	1000
քսան	20	երկու հազար	2000
երեսուն	30	երեք հազար	3000
քառասուն	40	չորս հազար	4000
չիտուն	50	հինգ հազար	5000
վարսուն	60	վեց հազար	6000
եօթնասուն	70	եօթն հազար	7000
ութասուն	80	ութ հազար	8000
իննասուն	90	ինն հազար	9000

Յոյանի կը տեսնուի որ իւրաքանչիւր թուանշան
կարգի մը նշանակութիւնը ցըցունելու համար նոյն
կարգին յարմար տեղը դրուած է՝ անկէ ատորին
պակաս եղած կարգերուն տեղ զրօներ դրուելով :

22. Ասիէ առաջ (Թ. 15) դրուած դասակար
գութեանց աղիւսակին վրայ աղէկ կը տեսնուի իւ
րաքանչիւր դասի վերաբերեալ կարգերուն անդե
րը , որով զիւրաւ կը հասկցուի միայն տասն թուա
նշանով ամէն թիւ գրելու եղանակը :

Եթէ երեք թուանշանով գրուած թիւ մը կար
դալը աղէկ սովորինք , շատ թուանշանով գրուած
թիւ մ'ալ դիւրութեամբ կրնանք կարդալ և ըս
ուած թիւ մ'ալ գրել :

23. Ծառ թուանշանով դրուած թիւ մը կար
դալու համար , պէտք է

1° « Աջէն դէպ 'ի ձախը երեք թուանշանով
հատուածներու դատել » :

2° « Աջ կողմի աւաջին հատուածին՝ միաւոր ,
երկարգին՝ հազար , երրորդին՝ միլիօն , երկիլիօն ,
. հնգիլիօն և այլն ըսելով ձախ կողմին վեր
ջի հատուածին դասի միութեան անունը որոշել :
Վերջի հատուածը կրնայ ըլլալ որ մէկ կամ երկու
թուանշան ունենայ » :

3° « Ձախ կողմին սիսեալ ամէն մէկ հատուա
ծը առանձին եղածի պէս կարդալ՝ յարելով իրեն
վերաբերեալ դասի անունը » :

4° « Եթէ մէկ հատուածին երեք թուանշաններն
ալ զրօներ ըլլան , նոյն հատուածին վերաբերեալ
դասի միութեան անունը լրութեամբ անցնիլ , և
անմիջապէս յաջորդ հատուածը կարդալ » :

Եւ որպէս զի դասերու միաւորաց անունները

չառով որոշուին, աջ կողմի առաջին հատուածը թողլով՝ երկրորդ հատուածին միաւորին վրայ դրօ մը, երրորդ հատուածին միաւորին վրայ 1, չորրորդ հատուածին միաւորին վրայ 2, հինգերորդ, վեցերորդ և այլն հատուածներուն միաւորաց վրայ 3, 4, և այլն դնելու է: Չրօն կը կարգացուի հազար, 1 ը՛ միլիօն, 2 ը՛ երկիլիօն, 3 ը՛ երկիլիօն 5 և այլն: Օրինակ՝

$$\begin{matrix} & 4 & 3 & 2 & 1 & 0 \\ & 5, & 675, & 000, & 670, & 050, & 067 \end{matrix}$$

Աը կարգացուի 5 քառիլիօն, 675 երկիլիօն, 670 միլիօն, 50 հազար, 67.

893, 207

Աը կարգացուի 893 հազար, 207:

Արնանք կարգաւ նաև այս թիւը.

89320 տասնաւոր և 7 միաւոր. կա՛մ 8932 ևս րիւրաւոր և 7 միաւոր. կա՛մ 893 հազարաւոր, 2 հարիւրաւոր և 7 միաւոր. կա՛մ 89 տասն հազարաւոր, 3 հազարաւոր, 2 հարիւրաւոր և 7 միաւոր. կա՛մ 8 հարիւր հազարաւոր, 9 տասն հազարաւոր, 3 հազարաւոր, 2 հարիւրաւոր և 7 միաւոր:

Խ Ն Դ Ի Բ

16. Արդալու է հետևեալ թիւերը.

4 183	29 574	4338 432	440 010 001
2 576	49 625	2 005 928	205 630 007
3 465	128 836	3 080 271	207 005 705
49 327	625 435	43 025 004	470 000 007

24. Ըստած թիւ մը թուանշանով գրելու հար պէտք է՝

1° «Նախ՝ բարձրագոյն դասը գրել իր մեծագոյն կարգէն սկսեալ, ետքը՝ աջ կողմը իրմէ անմիջապէս վար եղած դասը, և շարունակել մինչև միաւորի դասը»:

2° «Եթէ դասի մը մէկ կարգը կամ երկու կարգը սխալաւ ըլլան, անոնց տեղը դրօ դնել. եթէ ամբողջ դաս մը սխալաւ ըլլայ, տեղն երեք դրօ դնել»:

3° «Դասերն իրարմէ մէյմէկ քիչ բաց գրել»:

Այսպէս՝

Երեք հազար ուր հարիւր տասնը վեց	3 816
Քստասուն հազար հինգ հարիւր	40 500
Հարիւր հազար չորս հարիւր հինգ	100 405
Երեք միլիօն վարսուն	3 000 060
Չորս հարիւր միլիօն երեք հազար	400 003 000
Քսան երկիլիօն քսան հազար ուրը	20 000 020 008

Խ Ն Դ Ի Բ

99

17. Գրելու է հետևեալ թիւերը թուանշանով. Երեք հարիւր քստասունը հինգ: — Երկու հազար: — Տասնը չորս հազար արսունը ինը: — Վեց միլիոյ վեց հազար վեց: — Երկու միլիօն: — Քսանը հինգ երկիլիօն: — Քստասունը հինգ երկիլիօն տասնը վեց միլիօն ուրը: — Երեք քստիլիօն, հինգ միլիօն, երեք հազար քսանը հինգ:

25. Մէկին ու՛ջ կազմը գրօնելով գրուած թիւերը հասարակաց միտրիւնք կըսուին:

Ինչպէս՝ 10, 100, 1000, 100000 ևն. թիւերը.

26. Սովորութիւն է նաև (Թ. 19) վեց թուանշանը դաս մը համարելով գրելը և կարգաւ. այսինքն խրաքանչիւր դաս սկստի ունենայ միաւոր,

տասնաւոր , հարիւրաւոր , հազարաւոր , տասն հազարաւոր , հարիւր հազարաւոր կարգի թիւեր , որով հետեւեալ օրինակը կը կարգացուի .

⁰ 367, ³001, ⁰034, ²567, ⁰305, ¹671, ⁰565, 001

367 հազար 1 երկիսուն , 34 հազար հինգ հարիւր վաթսուներեք երկիսուն , 305 հազար 671 միլիոն , 565 հազար 1 :

Բայց երեք կարգը դաս մը համարելով ըսեն ու կարգաւ հիմնայ աւելի սովորական է : Վերի օրինակը ըստ սովորութեան պիտի կարգացուի .

⁶ 367, ⁵001, ⁴034, ³567, ²305, ¹671, ⁰565, 001

367 միլիոն , 1 հեզիլիոն , 34 քառիլիոն , 567 երկիլիոն , 305 երկիլիոն , 671 միլիոն , 565 հազար 1 :

27*. Բանաւոր և գրաւոր թուուման գրութեան կը հետեւի հետեւեալ դիտաւոր սկզբունքը .

« Կարգի մը միութիւնը նոյն կարգէն ստորին եղած բոլոր կարգերուն մեծագոյն թիւերուն հաւաքումէն ալ մեծ է » : Ասան դի , կարգի մը թիւը իննէն աւելի չըլլալով , բոլոր կարգերուն մեծագոյն թուոյ հաւաքումը 9 եր կըլլայ , որ տակաւին փոքր է ասոնցմէ անմիջապէս վեր եղած կարգի միութեանէն : Ինչպէս՝ 99 է 1 աւելի է 100 , նմանապէս 999 է 1 աւելի է 1000 , ևայլն : Հոս 99՝ տասնաւոր և միաւոր կարգաց մեծագոյն թուոյ հաւաքումն է , որ 100 է 1 ի չափ փոքր է : Նոյնպէս 999՝ հարիւրաւոր , տասնաւոր և միաւոր կարգաց մեծագոյն թուոյ հաւաքումն է , որ 1000 է 1 ի չափ փոքր է :

28. « Իւրաքանչիւր թուանշան աջ կողմէն քաներորդ սր է , սյնքսներորդ կարգի թիւ է (Թ. 21) ինչպէս՝ 7816 ին մէջ 7 հազարաւորը՝ չորրորդ . 8 հարիւրաւորը՝ երրորդ , 1 տասնաւորը՝ երկրորդ , 6 միաւորը՝ առաջին կարգի թիւեր են : Ուստի թուանշանով գրուած թուոյ մը աջ կողմը դրօներ դնելով նոյն թուանշանները մէկ , երկու կամ երեք ևայլն թուանշան աւելի ձախակողմ կերթան և հետեւապէս աւելի բարձրագոյն կարգի թիւեր կը նշանակեն , սյսինքն իրենց նշանակութիւնը տասնապատիկ , հարիւրապատիկ , հազարապատիկ , ևայլն կաւելնան : Ուրեմն թուանշանով գրուած թիւ մը 10 ուլ , 100 ուլ , 1000 ուլ , ևայլն ուլ բաղմաստակերու համար նոյն թուոյն աջ կողմը մէկ , երկու , երեք ևայլն դրօներ դնելու է : 148 ը 1000 ուլ կը բաղմաստակի երբ գրենք 148000 , նմանապէս 10 ուլ կը բաղմաստակի երբ գրենք 1480 : Այս իրաւամբ կրօուի որ՝ թուանշաններուն աջ կողմը դրօ դնելով նոյնին նշանակութիւնը տասնապատիկ կաւելնայ :

29. Փոխադարձաբար թուանշանով գրուած թուոյ մը աջ կողմէն մէկ , երկու ևայլն դրօներ պահպանելով նոյն թուոյն թուանշանները մէկ , երկու , երեք ևայլն թուանշան դէպ յ՝աջակողմ կուգան և աւելի վար կարգի թիւեր կիմացընեն : Ուրեմն թիւ մը 10 ուլ , 100 ուլ , 1000 ուլ , ևայլն ուլ բաժնելու համար նոյն թուոյն աջ կողմէն մէկ , երկու , երեք ևայլն դրօ կամ թուանշան զատելու է , ինչպէս՝

640 000 ը	10 ուլ բաժնելով կըլլայ	64000
640 000 ը	100 »	6400
640 000 ը	1000 »	640
640 000 ը	10000 »	64

Նիւնասպէս

34 567 ը	10 ուլ բաժներով կըլայ	3456,7	Ա.
34 567 ը	100 »	345,67	Բ.
34 567 ը	1000 »	34,567	Գ.
34 567 ը	10000 »	3,4567	Դ.
345 67 ը	100000 »	0,34567	Ե.

Ա. Քանորդը կը կարգացուի 3456 ամբողջ 7 տասնորդ, Բ. Քանորդը կը կարգացուի 345 ամբողջ 67 հարիւրորդ, Գ. Քանորդը կը կարգացուի 34 ամբողջ 567 հազարորդ, Դ. Քանորդը կը կարգացուի 3 ամբողջ 4567 տասն հազարորդ, Ե. Քանորդն ալ կը կարգացուի 34567 հարիւր հազարորդ : Այս կը տարները տասնհարանիս կտտրակ կըսուին, որ ամբողջ միութեան տասնորդ, հարիւրորդ, հազարորդ եւ այլն մասին մէկը կամ մէկ քանին կ'ստացնեն :

Խ Ն Դ Ի Ր Ք

18. Գրեւ՝

Խօրն հարիւր չորս միջիօն հինգ հազար վեց :

Պ. 704 005 006

Տասներկու երկիօն հազար քսանք վեց միջիօն տասներկու :

Պ. 12 000 126 000 012 :

Վեց կարգը մէկ դաս հասարկելով, տասն և հինգ երկիօն, հազար ութ հարիւր վեց միջիօն, երեք հարիւր ութ :

Պ. 15 001 806 000 308 :

19. Կարգա՛լ՝

3006 :

Պ. Երեք հազար վեց :

4 005 321 425 :

Պ. Չորս երկիօն, հինգ միջիօն, երեք հարիւր քսանք մէկ հազար, չորս հարիւր քսանըհինգ :

1 230 001 432 178, վեց կարգը մէկ դաս հասարկելով :

Պ. Մէկ երկիօն, 230 հազար 1 միջիօն, 432 հազար 178 :

20. 125, 37, 1564, 50, թիւերը 10 անգամ մեծցուր :

Պ. 1250 . 370 . 15640 . 500 :

21. Նոյն թիւերը 100 ուլ և 1000 ուլ քազմասպասկէ :

Պ. 12500 . 3700 . 156400 . 5000 :

125000 . 37000 . 1564000 . 50000 :

22. Նոյն թիւերը 10 ուլ քաժնէ :

Պ. 12, 5 . 3, 7 . 156, 4 . 5 :

23. Նոյն թիւերը 100 ուլ քաժնէ :

Պ. 1, 25 . 0, 37 . 15, 64 . 0, 50 :

24. Գրեւու է տասներկու վեց տասնորդ :

Պ. 12, 6 :

» վարսուներեք տասնըհինգ հարիւրորդ :

Պ. 63, 15 :

» Հարիւր քսան երեք հազարորդ :

Պ. 0, 123 :

» Քսանք հինգ տասնորդ :

Պ. 2, 5 :

» Երեք հարիւր վարսուերը չորս հարիւրորդ :

Պ. 3, 64 :

» Հինգ հարիւր տասնըվեց միութեան :

Պ. 516 :

» Հինգ հարիւր տասնըվեց տասն :

Պ. 5160

» Հինգ հարիւր տասնըվեց հարիւր :

Պ. 51600 :

» Հինգ հարիւր տասնըվեց հազար :

Պ. 516000 :

25. 367003 ը քա՞նի տասը կընէ, քա՞նի հարիւր, քա՞նի հազար, քա՞նի տասն հազար և այլն կընէ :

Պ. 36700 տասը և 5 միութիւն : 3670 հարիւր և 5 միութիւն : 367 հազար և 5 միութիւն : 36 տասն հազար՝ 7 հազար և 5 միութիւն : 3 հարիւր հազար՝ 6 տասն հազար՝ 7 հազար և 5 միութիւն կընէ :

26*. 21 թիւը 1 էն սխաւայ երբ բուանշանով գրենք կարգաւ, քա՞նի 1, քա՞նի 2, քա՞նի 3 և այլն և քա՞նի գրօ պիտի գրենք :

Պ. Տասններեք 1, յոթ 2, և միւս բուանշաններէն աչ երկերկու հատ պիտի գրենք :

27*. 125 թիւը 1 էն սխաւայ բուանշանով գրա՞տ ա տենելիս, խրաքանչիւր բուանշանէն քա՞նական հատ պիտի գործա՞մենք :

Պ. 59 հատ 1. 29 հատ 2. 23 ական հատ 3, 4, 5. և մնացեալներէն 22 ական հատ :

28*. 18 ը թիւը 1 էն սխաւայ գրելու համար քա՞նի բուանշան պիտի գործա՞մենք :

Պ. 27 բուանշան :

29*. 25 թիւը 1 էն սխաւայ գրենք, Վերջի 5 ը քա՞ներորդ բուանշանն է :

Պ. 41 երրորդ բուանշանն է :

30*. Թիւերը 1 էն սխաւայ կարգաւ գրենք, 21584 երորդ բուանշանը ո՞ր բունյն, ո՞ր կարգին կը պատկանի :

Պ. 4674 բունյն 7 տասնաւորին կը պատկանի :

31*. Գտնաւորն է թէ միևյն. 9 ը քա՞նի բուանշանով կը գրուի, միևյն. 99 ը քա՞նի բուանշանով, միևյն.

999 ը քա՞նի բուանշանով և այլն :

Պ. Թիւը 9 ը 9 բուանշանով կը գրուի :

» 99 » 189 » » » »

» 999 » 2889 » » » »

» 9999 » 38889 » » » »

և այլն, և այլն :

32*. 1 էն սխաւայ միևյն. 30 գրելու համար քա՞նի 6 պիտի գործա՞մենք :

Պ. 3 հատ :

33*. 1 էն միևյն. 30 գրելու համար շնոյ ավանք քա՞նի բուանշան պիտի գործա՞մուին :

Պ. 51 բուանշան :

34*. 1 էն միևյն. 30 գրելու համար, քա՞նի 1, 2, 3 և այլն պիտի գործա՞մուին :

Պ. 13 ական հատ 1, 2 : 4 հատ 3 և մնացա՞մենք շնոյ 3 ական հատ :

35*. 1 էն միևյն. 564 գրելու համար, ավանք քա՞նի բուանշան պիտի գործա՞մուին :

Պ. 1584 բուանշան :

36*. 1 էն միևյն. 564 գրելու համար, քա՞նի 1, 2, 3, և այլն պիտի գործա՞մուին :

Պ. 217 ական հատ 1, 2, 3, 4 : 181 հատ 5, 111 հատ 6 : և մնացա՞մենք 106 ական հատ :

37. 567000 թիւը քա՞նի միւսոր է, քա՞նի տասնաւոր, քա՞նի հարիւրաւոր, քա՞նի հազարաւոր է :

Պ. 567000 միւսոր է, 56700 տասնաւոր, 5670 հարիւրաւոր և 567 հազարաւոր է :

37. 567000 ը քա՞նի տասնորդ, քա՞նի հարիւրորդ և քա՞նի հազարորդ է :

Պ. 5670000 տասնորդ, 56700000 հարիւրորդ և 567000000 հազարորդ է :

29. 3567452890 թիւը 10 ով, 100 ով, 1000 ով, 10000 ով թածկերու է :

ա. 356745289 : 35674528,90 : 3567452,890 : 356745,2890 :

40. 5, 67569 թ թագնապատկերու է 10 ով, 100 ով, 1000 ով, 10000 ով և այլն :

ա. 56,7569 : 567,569 : 5675,69 : 56756,9 : 567569 :

3. Թիւերը ո՞րչափ են : Ի՞նչ է թուումը. և քանի՞ տեսակ կըլլայ : 9. Ի՞նչ է բանաւոր թուումը : 10. Առաջին կարգի միութիւնը ո՞րն է, և թիւերը որո՞ւք են և քանի՞ հատ են : 11. Երկրորդ կարգի միութիւնը ո՞րն է և ի՞նչ կըստի, թիւերը ո՞րն են և քանի՞ հատ են : Երկու յաջորդական տասնաւորաց մէջ գտնուած թիւերը ի՞նչպէս կ'ըստին : 12. Երրորդ կարգի միութիւնը ո՞րն է թիւերը ո՞րն են : Երկու յաջորդական հարիւրաւորաց մէջ գտնուած թիւերը ի՞նչպէս կ'ըստին : 13. Չորրորդ կարգի միութիւնը ո՞րն է, թիւերը ո՞րն են : Հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութներորդ, և յ. կարգի միութիւններն ո՞րն են, թիւերը ո՞րն են և քանի հատ են : Միւսնոյն կարգի երկու յաջորդական թուոց մէջ գտնուած թիւերը ի՞նչպէս կըստին :

14. Դասն ի՞նչ է, իւրաքանչիւր դաս քանի՞ կարգի թիւ է կը բաղկանայ, Ա, Բ, Գ, Դ, և Ն. դասի թիւերն ո՞րն են : Հաղարջն բարձր դասի միութեան անուններն ի՞նչպէս յիշուած են :

15. Բանաւոր թուուման գրութեան կիսերն ո՞րն են. ինչո՞ւ մեր գործածած թուաբանութեանը Տասնորդական թուաբանութիւն կ'ըստի : Երրանի դասն ի՞նչ է : Դասակարգութեան աղիւսակ մը շինէ : 16. Թիւերն ի՞նչպէս ընել սովորութիւն եղած է :

17. Միւսնոյն վեր եղած թուոց քանի՞ երրորդ դասի թիւ ըլլաւ ի՞նչպէս կը հասկցօի. քանի երրորդ կարգ ըլլաւ ի՞նչպէս հասկնալու է. օրինակով հասկցօր : 18. Կարգի մը քաներրորդ ըլլալը գիտնալով դասի անունը և նոյն դասին օր կարգի սկիւբ ի՞նչպէս որոշելու է : Օրինակով հասկցօր : 19. Վեց կարգը միկ դաս չի՞ կրնար համարուի. սոց աճա՞ Ա, Բ, Գ, և Ն. զասերուն կարգերը որո՞նք են :

20. Գրաւոր թուումն ո՞րն է : 21. Քանի՞ թուանշանով անն թիւ կարելի է գրել, և գրելու նշանակը ի՞նչ սկզբան վը ըլլայ հիմնուած է : Այդ սկզբունքներն ըսէ : Այդ սկզբունքներն ի՞նչ կը հետևի. Ա. Բ. Գ. Դ. և Ն. կարգի թիւերն իմացը. նող թուանշաններն ո՞րն են և նաև ըսէ թուանշաններով գրուած թուոց մը աջ կողմէն սկսելու իւրաքանչիւր արժէքը : 22. Թուանշաններով գրուած անն թիւ կարդալու և անն թիւ թուանշանով գրելու համար ի՞նչ գիտնալ պէտք է : 23. Դաս թուանշանով գրուած թիւ մը կարդալու կանոնն ի՞նչ է : 24. Ըսուած թիւ մը ի՞նչպէս գրելու է թուանշանով :

26. Թիւ կարդալու և գրելու երկրորդ սճը ո՞րն է : Այս սճերն ո՞րն աւելի սովորական է, օրինակ մը տօր և երկու. ա. ճով ալ կարդա՛ և անոնց տարբերութիւնը բացատրէ :

27. Թուուման գրութեան ի՞նչ գլխաւոր սկզբունք կը հետևի : 28. Թուանշանով գրուած թուոց մը իւրաքանչիւր թուանշանին քանն՞ որորդ կարգի թիւ ըլլալը ի՞նչպէս կը հասկցուի : Թուանշանով գրուած թիւ մը 10 ով, 100 ով, 1000 ով և Ն բազմապատկելու համար ի՞նչ ընելու է :

29. Դաս թուանշանով գրուած թիւ մը 10 ով, 100 ով, 1000 ով և Ն ով բաժնելու համար ի՞նչ ընելու է : Տասնորդական կոտորակն ի՞նչ է :



Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Բ .

ՀԱՇՈՒԲ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ԹՈՒՈՏ

30. Թուոց միայ գործողութիւններ ընելով ու՞րիչ նոր թիւեր յառաջ բերելը հաշուի կըսուի :

31. Թուոց միայ միայն երկու կերպ գործողութիւն կըլլայ, աւելցնելու և քանկեցնելու, ո՞րոցմէ շատ տեսակ հաշիւներ յառաջ կուգան, բայց անոնց չորսը հիմնական գործողութիւնք կ'ըսուին, որք են Ֆուելումն, Բարձումն, Թագնապատկեր քիւն, Բաժանումն : Ասոնցմէ երկուքը՝ Ֆուելումն և

Յաղմուտատուութիւնը աւելցնելու գործողութիւն են . և միւս երկուքը՝ Բարձուժը և Բաժանուժը պահպանելու գործողութիւն են : Ասոնք հիմնական կըսուին , վասն զի ուրիշ ամեն տեսակ հաշիւները այս գործողութիւններովը կըլլան :

32. Ամեն տեսակ հաշիւ ունի առանձինն :

1. Մահման , որ հաշւոյն նպատակը կիմոցնէ :

2. Կանոն , որ հաշւոյ մը նպատակին հասնելու համար հաշւոյն յատուկ եղած կերպերը կը սովորեցընէ :

3. Օրինակ , որ է կոմունին գործողութիւնը .

4. Հաւաստիք կամ ապացոյց , որով յայտնի կըլլայ հաշւոյ մը , կանոնի մը կամ սկզբան մը ճշմարիտ ըլլալը :

5. Գործաձուրթիւն կամ կիրառութիւն , որ կը ցըցնէ թէ նոյն հաշիւը ի՞նչ դիպուածներու մէջ պէտք կըլլայ :

6. Փորձ , տարբեր կերպով գործողութիւն մ'է , որ առաջնոյն սխալ չըլլալը ստուգելու համար կը գործածուի : Բայց փորձ ըսածնիս ալ գործողութիւն մ'ըլլալով իր մէջ սխալ կրնայ պատահիլ , ուստի փորձը չէ թէ ճշմարտութեամբ այլ հաւանակաբար ուղի գործողութեան ստուգ ըլլալը կ'իմացընէ . այսու ամենայնիւ փորձին մէջի սխալը առաջին սխալին ճիշդ նմանը որատահիլը շատ հազուադէպ ըլլալուն հաւանականութիւնը ստուգութեան տեղ կրնայ բռնուիլ :

7. Տեսութիւն . սկզբունքներ են՝ որ ապացուցով ճշմարիտ ըլլալին կը հաստատուի , և որոյմէ կը հետեւին կանոնները :

8. Առաջարկութիւն կամ խնդիր , որ կանոնի մը

և կոմունայ վերաբերեալ հարցումներ են և ըսե՞ծուի կը պահանջեն :

9. Առաժ , իմքնին յայտնի ճշմարտութիւններ են , ապացուցով հաստատուելու պէտք չունին :

33. Առաժ են հետեւեալները և անոնց նմանները ,

Ա. « Ամբողջը իր մասէն մեծ է » :

Բ. « Ամբողջը կազմող բոլոր մասերն առնելով ամբողջը առած կըլլանք .

Գ. « Հաւասարներու վրայ հաւասարներ աւելցընելով և անոնցմէ հաւասարներ պահպանելով եղածները հաւասար կըլլան » :

Դ. « Եթէ երկու քանակութիւն միեւնոյն երրորդ քանակութեան մը հաւասար են , իրարու ալ հաւասար են » :

34. Թուարանտիկան գործողութիւնները համապատ նշաններով նշանակելու սովորութիւն եղած է :

+, Աւելի կը կարգացուի և թուոյ ձախ կողմը դրուելով , ուրիշ աւելի թուոյ վրայ աւելնալը կ'իմացընէ .

— , Պակաս կը կարգացուի , և թուոյ մը ձախ կողմը դրուելով , ուրիշ աւելի թուէ մը պակսիլը կը նշանակէ :

= Հաւասար կը կարգացուի , և երկու հաւասար թուոյ մէջ դրուելով , անոնց իրարու հաւասար ըլլալը կ'իմացնէ : Օրինակ՝

$25 + 18 - 35 = 8$. կը կարգացուի

25 աւելի 18 պակաս 35 հաւասար 8 , որ ըսել է 25 ին վրայ 18 սխիտ աւելնայ , որ կըլլայ 43 և ասիէ սխիտ պակսի 35 , որ կը մնայ 8 :

× , . , Բազմապատկելու կամ անգամ կամ հնչ

կը կարդայուի, որ երկու թուոց մէջ գրուելով աւանդ իրարմով բազմապատկելը կիմացնէ. ինչպէս՝ $7 \times 8 = 56$ կամ $7 \cdot 8 = 56$, կը կարդայուի 7 բազմապատկեալ 8 կամ 7 անգամ 8 կամ 7 հեղ 8 հաւասար 56:

\div , $:$, խաժանեալ կը կարդայուի, որ երկու թուոց մէջ գրուելով առաջինը ետքինով բաժանելի ըլլալը կիմացնէ. ինչպէս՝ $24 \div 8$ կամ $24 : 8 = 3$ կը կարդայուի 24 բաժանեալ 8 հաւասար 3, որ ըսել է 24ը 8 ուլ կամ 8 ի վրայ բաժնելով կամ 8 հաւասար կտոր ընելով կըլլայ 3: Վերագրեալ բացատրութիւնը նաև կը գրուի այսպէս՝ $24/8 = 3$, այս ալ կը կարդայուի 24 բաժանեալ 8, կամ 24 անթերող հաւասար 3, հաս 24 ը բաժանելի եւ 8ը բաժանող եւ 3ը քանորդ է. վերջի նշանով գրուածը կատորակ ալ կըսուի, եւ այն ատեն վրան գրուածը համարիչ եւ տակը գրուածը յայտարար կանուանեն, $\frac{24}{8}$ ինչ 24ը համարիչ եւ 8ը յայտարար է:

$$(3+6-2) 3 = \frac{(3+6-1) 9}{3}$$

այս բացատրութիւնը կը կարդայուի 3 աւելի 6 ազակաս 2 բազմապատկեալ 3՝ հաւասար 4 ասելի 6 ազակաս 1՝ բազմապատկեալ 9՝ բաժանեալ 3. եւ կը նշանակէ թէ 6ին վրայ 6 աւելցնելով գումարէն 2 ազակսեցնելով՝ Քաջածը որ է 9ը բազմապատկելու է 3 ուլ, որ կըլլայ 27, նմանապէս 4 ինչ վրայ 6 աւելցնելով եւ գումարէն 1 ազակսեցնելով՝ Քաջածը, որ է 9, 9 ուլ բազմապատկելով կըլլայ 81, առ ալ 3 ուլ բաժնելով կտաննանք 27՝ հաւասար առաջինին:

Վերի բացատրութիւնը հաւասարութիւն կըսուի, հաւասար նշանին ձախ կողմը գրուածը Ա. անդամ եւ աջ կողմը գրուածը Բ. անդամ հաւասարութեան կ'ըսուի:

$>$, Մեծքան, $<$ Փոքրքան կը կարդայուի. եւ է նշան անհասարարեան, մեծ թիւը բաց կողմը եւ փոքրը գոց կողմը կը գրուի: ինչպէս $12 > 5$ կը կարդայուի 12 մեծ քան 5 թիւք կամ $5 < 12$, 5 փոքր քան 12 թիւք, այսինքն $12 < 5$ է կամ $5 > 12$ է:

30. Հաշուել ըսելով ի՞նչ կը հասկցուի: 31. Թուոց վըրայ քանի՞ կերպ գործողութիւն կըլլայ: Հիմնական գործողութիւնները ո՞րն են: Ինչո՞ւ Հիմնական կըսուին: 32. Ի՞նչ է սահմանը: Ի՞նչ է կանոնը: Ի՞նչ է օրինակը: Հաւասարին կամ աւագոյցն ի՞նչ է: Գործողութիւնը կամ կիրառութիւնն ի՞նչ է: Փորձն ի՞նչ է: Տեսութիւնն ի՞նչ է: Առաջարկութիւնն կամ խնդիրն ի՞նչ է: Առածն ի՞նչ է:

33. Թուաբանական առածները ո՞րն են: 34. Թուաբանական նշանները զո՞րք: Յատեման նշանը ո՞րն է եւ ի՞նչպէս կը գործածուի: Բարձման նշանը ո՞րն է եւ ի՞նչպէս կը գործածուի: Բազմապատկութեան նշանները քանի՞ հատ են եւ ի՞նչպէս կը գործածուին: Բաժանման նշանները քանի՞ հատ են եւ ի՞նչպէս կը գործածուին: Կոտորակն ի՞նչ է, համարիչ եւ յայտարար բաժերը ի՞նչ կը նշանակեն: Հաւասարութեան եւ անհաւասարութեան նշանները ո՞րն են:

ՅԱՒԵԼՈՒՄՆ ԱՄԲՈՂՋ ԹՈՒՈՅ

35. « Երկու կամ աւելի համասեռ և միութիւննին հաւասար թիւեր մէկտեղ բերելով անոնց ամենուն հաւասար սրիշ թիւ մը գտնալու գործու զութեանը կրտուի Ֆաւորա՛ն :

Այն թիւերն որ իրարու վրայ ոչիտի աւելնան կրտուին գումարելի . գործողութենէն ետքը զըտնուածն ալ գումար :

$$5 + 6 + 7 = 18$$

Հոս 5 , 6 , 7 , թիւերը գումարելի են և 18ը՝ գումար :

36. Գումարելի թիւերը պէտք է համասեռ ըլլան , և միութիւննին ալ հաւասար . վասն զի անկարելի է գումարել երեք գտհեկան հինգ հոխային հետ : Գումարելի թուոց միութեան անունը պէտք չէ գիտնալ , բաւական է որ համասեռ ըլլան . 6 և 4 թիւերը գումարելով կը գտնունք գումար 10 , 6 ոչխար և 4 ոչխար՝ 10 ոչխար կընեն . 6 կանգուն և 4 կանգուն՝ 10 կանգուն կընեն . 6 ժամ և 4 ժամ՝ 10 ժամ կընեն , 6 հարիւրաւոր և 4 հարիւրաւոր նմանապէս 10 հարիւրաւոր կընեն : Ուստի միշտ գործողութեան մէջ գումարելիները վերացեալ թիւեր նկատելու է , և գումարը գտնուելէն ետքը միութեան անունը յայանելով , թիւը կըլլայ թանձրացեալ :

Սկզբունքներ որոց վրայ հիմնուած են ամբողջ բուոց յաւելումն կատենելոյ

37. Ա . Թուոց մը վրայ միաւոր թիւ մը աւելցնելու համար բաւական է միաւոր թուոյն բոլոր միութիւնները հետզհետէ միւս թուոյն վրայ աւելցնել (33 . Բ .) , ինչպէս . 5ին վրայ 4 աւելցնելու համար պէտք է 4ին միութիւնները հետզհետէ 5ին վրայ աւելցնելով ըսել 5՝ 1 ալ 6՝ 1 ալ 7՝ 1 ալ 8՝ 1 ալ 9 , ասոր վրայ թէոր 3 ալ աւելցուի , պէտք է ըսել նոյնպէս 9՝ 1 ալ 10՝ 1 ալ 11՝ 1 ալ 12 : Բայց այս ոճով մեծկակ թուոց գումարը շատ դժուար կամ անհնար ըլլալու չափ սաղտակալի է գտնալը , ուստի գոնէ միաւոր կամ միութուանչան թուոց գումարը վարժութեամբ սովորելու է :

Բ . Երկու կամ ալ աւելի բողմութուանչան թիւեր իրարու վրայ աւելցնելու համար , անոնք կընան նման կարգերու զտաուիլ , և նման կարգերը իրրե միութուանչան թիւեր իրարու վրայ աւելնալ (Թ . 36) , և բոլոր նման կարգերը իրարու վրայ աւելցնելով ամբողջ գումարելիներուն գումարը կը գտնուի (33 . Բ .) . ահա այն ըսկըղբանքը որոց վրայ հիմնուած է յաւելումն կանոնը :

Պէտք է աւելցնել իրարու վրայ 5462 , 2325 և 3789 թիւերը . Այս երեք թիւերուն իւրաքանչիւրը կընայ զատուիլ չորս նման միաւորներու , աւանաւորներու , հարիւրաւորներու և հազարաւորներու : Նախընթաց սկզբանը և (Թ . 36) նախելով իւրաքանչիւր կարգի թիւերն առանձինն իրա-

քու զրոյ պիտի աւելան , [գրելով] և միտորաց
կարգէն սկսելով

3462 Արեւմ 9' 5 ալ 14' 2 ալ 16 ,
2325 միաւորաց գումարն եղաւ 16 .
3789 այսինքն 1 տասնաւոր և 6 միաւոր,
11576 որք 6 միաւորը կը գրեմ միաւորաց տակը , և 1 տասնաւորը կաւելցնեմ տասնաւորաց զրոյ ըսելով 1' 8 ալ 9' 2 ալ 11' 6 ալ 17 , որ է տասնաւորաց գումարը , այսինքն 1 հարիւրաւոր և 7 տասնաւոր , 7 տասնաւորը կը գրեմ տասնաւորաց տակը և 1 հարիւրաւորը կ'աւելցնեմ հարիւրաւորաց վրայ ըսելով 1' 7 ալ 8' 3 ալ 11' 4 ալ 15 , որ է հարիւրաւորաց գումարը . այսինքն 1 հազարաւոր և 5 հարիւրաւոր , 5 հարիւրաւորը՝ հարիւրաւորաց տակը կը գրեմ և 1 հազարաւորը կաւելցնեմ հազարաւորաց վրայ ըսելով 1' 3 ալ 4' 2 ալ 6' 5 ալ 11 , որ է հազարաւորաց գումարը և սաի կը գրեմ հազարաւորաց տակը , որով կըլլայ ամբողջ գումարը 11576 :

Կանոնք յաւելնան անբողջ բոց

38. Պէտք է ,

Ս. « Միաթումանյան թուոց յաւելումը վարժութեանք զոյ ընել » :

Խ Ն Դ Ի Ր Ք

41. 1 ժան 2 ժան ալ քա՞նի ժան կընէ , 1' 2 ալ քա՞նի կընէ :

Պ. 3 :

42. Քայրդ 1 խնձոր տուա , կորը 3 խնձոր ալ

տուա , անկեր քանի խնձոր կորա : 1' 3 ալ քանի կընէ :
Պ. 4 :

43. Պետրոսը ժամիկ տակէն 1 տանձ գտաւ , 4 ալ Գրիգորը տուա : քա՞նի տանձ ունի :
Պ. 5 :

44. Մարիաւը կորոյմէն 1 կետաւ տուա , և մօր մէկ 7 կետաւ : Մարիաւը քա՞նի կետաւ ունի :
Պ. 8 .

45. Սենեկին մէկ կողմը 2 արոտ դրուած է , միւս կողմն ալ 2 արոտ դրուած է . սենեկին մէջ քանի արոտ կայ : 2' 2 ալ քա՞նի կընէ :
Պ. 4 :

46. Գիցուք բէ տղայ մը 2 խնձոր ունի , 3 ալ կորայրը տուա , անկեր քա՞նի կորա : 2' 3 ալ քա՞նի կընէ :
Պ. 5 :

47. Միւսակը ժամի մը տակէն 2 շագանակ գտաւ , 8 շագանակ ալ ուրիշ ժամի մը տակէն , անկեր քա՞նի կորա : 2' 8 ալ քա՞նի կընէ :
Պ. 10 :

48. Թառի մը ճիւղին վրայ 3 բոլուե կար , ուրիշ ճիւղի մը վրայ 8 բոլուե կար . երկու ճիւղին վրայ քա՞նի բոլուե կար : 3' 8 ալ քա՞նի կընէ :
Պ. 11 :

49. Դաս շսերու հասար 8 տղայ ոտքի վրայ կրան , ուրիշ 5 տղայ ալ անոց հետ կարդարու հասար կրան . անկեր քա՞նի տղայ կրան : 8' 5 ալ քա՞նի կընէ :
Պ. 13 :

50. Տիրակը հաւեոցէն 7 հաւկիր գտաւ , Սրշակը 8 հաւկիր . անկեր քա՞նի կընէ : 7' 8 ալ քա՞նի կընէ :
Պ. 15 :

51. Պարտէզին մէկ կողմը 9 նուռի ծառ կայ, և 6 ալ շեննի ծառ. սակերը քա՞նի ծառ է : 9՝ 6 ալ քաւնի՞ կընէ :

Պ. 15 :

52. Պրպանիդ մէկուն մէջ 10 կաղին ունիս, միւս գրպանոյ ալ 7 կաղին. սակերը քա՞նի կաղին կընէ : 10՝ 7 ալ քաւնի՞ կընէ :

Պ. 17 :

53. Սեղանի մը մէկ կողմը 4 աշտանակ կայ, միւս կողմը 9 աշտանակ. սակերը քա՞նի աշտանակ կընէ : 4՝ 9 ալ քաւնի՞ կընէ :

Պ. 13 :

54. Սարիւնիկը սակերոցին մէջ 5 գետաստղ դրաս. Զարուհին ալ 10 գետաստղ դրաս. սակերը քա՞նի կընէ :

Պ. 15 :

55. Լճակի մը մէջ 6 սագ մէկ կողմը կը շողան, 8 սագ ալ միւս կողմը. շճակին մէջ քա՞նի սագ կայ : 6՝ 8 ալ քանի՞ կընէ :

Պ. 14 :

56. Խանութրպան մը մէկուն 7 կացին ծախեց, ուրիշի մը 6 կացին. սակերը քա՞նի կացին ծախեց : 7՝ 6 ալ քաւնի՞ կընէ :

Պ. 13 :

57. Քումարերու է 4, 6, 7, 3 թիւերը :

Պարժոյրթիւն. 4՝ 6 ալ 10՝ 7 ալ 17՝ 3 ալ 20 :

58. Քումարերու է 5, 5, 8, 7, 6 թիւերը :

Պարժոյրթիւն. 5՝ 5 ալ 10՝ 8 ալ 18՝ 7 ալ 25՝ 6 ալ 31 :

59. Քումարերու է, 8, 3, 5, 4, 9, 7, 1, 2 թիւերը :

Պարժոյրթիւն. 8՝ 3 ալ 11՝ 5 ալ 16՝ 4 ալ 20՝

9 ալ 29՝ 7 ալ 36՝ 1 ալ 37՝ 2 ալ 39 :

60. Հետևեալ յաւերակները կատարելու է :

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ
5	4	7	2	7	6
6	6	9	1	1	4
7	3	8	3	9	5
8	3	6	4	2	3
9	1	4	5	8	7

Քումար

Պ. Ա. Քումար 35 : Բ. Քումար 17 : Գ. Քումար 34 : Դ. Քումար 15 : Ե. Քումար 27 : Զ. Քումար 25 :

Բ. « Երբ գումարելիները բազմաթուանշան ըլլան զանոնք իրարու տակ գրել (կամ «գրուած համարել») անանկ որ միւսնոյն կարգի ճիշտերը ճիշտ իրարու տակ գալով մէյլէ միւսնակ ձևայնեն, գումարելիներուն տակէն գիծ մը քաշել, որ լգումարը գումարելիներէն զատուի, ետքը աջ կողմէն սկսեալ միաւորները իրարու վրայ աւելցնել, և գումարին միաւորը գրել «միաւորաց տակը և տասնաւորը միտք սրահել «(ձեռք . . . կայ ըսելով) տասնաւորաց վրայ աւելցնելու համար : Նոյնպէս տասնաւորները իրարու վրայ աւելցնել, ասոնց գումարին միաւորը «գրել տասնաւորաց սիւնակին տակ և տասնաւորը «ձախ կողմի հարիւրաւորաց վրայ աւելցնելով շարունակել գործողութիւնը մինչև ձախ կողմի սրարձրագոյն կարգը, և ասոնց գումարը ամբողջ «իր տակը գրել, այս կերպով գտնուած թիւն է սպահանջեալ գումարը » :

Գ. « Գումարելիները մէկ տողի մէջ գրելով

«ալ կրնայ յաւելուիլ կատարուիլ , որոյ համար սպէտք է միաւորներուն դումարին միաւորը գրեւ «և տասնաւորը (եթէ կայ) տասնաւորաց վրայ «աւելցնել , ասոնց ալ դումարին միաւորը գրեւ «առաջնոյն ձախ կողմը և տասնաւորը (եթէ կայ) «հարիւրաւորներուն վրայ աւելցնելով շարունակել «գործողութիւնը մինչև բարձր կարգը» :

Օրինակ՝ դումարելու է 5678 . 9054 . 315 . 26 , 786 թիւերը .

1^o Առաջարկեալ թիւերը կը գրեմ իրարու տակ անանկ սր միաւորները իրարու տակ , տասնաւորները իրարու տակ , հարիւրաւորները իրարու տակ , և այլնն գաւով . միւսնոյն կարգի թիւերը մէյակի սիւնակ ձևացնեն :

2^o Ասոնց տակէն կը քաշեմ գլծ մը . որպէս զի տակը դումարը գրեմ . ինչպէս ,

5678	Գումարելը
9054	
315	
26	
786	
15859 . Գումար	

3^o Ալ կողմի առաջին թուանշաններէն՝ այսինքն միաւորներէն սկսեալ կըսեմ 6՝ 6 ալ 12՝ 5 ալ 17՝ 3 ալ 21՝ 8 ալ 29 , այն է 2 տասնաւոր և 9 միաւոր , 9 միաւորը միաւորաց տակը կըգրեմ և 2 տասնաւորը (ձեռք 2 կայ ըսելով) տասնաւորաց վրայ կաւելցնեմ 2՝ 8 ալ 10՝ 2 ալ 12՝ 1 ալ 13՝ 5 ալ 18՝ 7 ալ 25 , ասոր ալ 5 միաւորը կը գրեմ տասնաւորաց տակ և 2 տասնաւորը (ձեռք 2 կայ ըսելով) հարիւրաւորաց վրայ կաւելցնեմ 2՝ 7 ալ 9՝ 3 ալ

12՝ 6 ալ 18 . ասոր ալ 8 միաւորը հարիւրաւորաց տակ գրելով և 1 տասնաւորը (ձեռք 1 կայ ըսելով) հազարաւորաց վրայ կաւելցնեմ 1՝ 9 ալ 10՝ 5 ալ 15 , սա կը գրեմ ամբողջ հազարաւորաց տակ , որով ամբողջ դումարն եղաւ 15859 :

Գումարելիները մէկ տողի մէջ գրելով ալ յիշեալ դումարը կը գտնուի .

$$5678 + 9054 + 315 + 26 + 786 = 15859$$

39, Արագոյց . Յաւելման կանոնը ճիշտ իր սահմանին համեմատ է : Յիրաւի առաջարկեալ թուոց , այսինքն դումարելիներուն բոլոր պարզ միաւորները . տասնաւորները , հարիւրաւորները և այլն պարունակելով նոյն թուոց բոլոր միութիւնները պիտի պարունակէ (Թ. 33 . Բ .) :

Իւրաքանչիւր կարգի 10 միութիւն իրմէ անմիջապէս բարձր կարգի 1 միութեան հաւասար ըլլալով , իւրաքանչիւր կարգաց դումարին տասնաւորը (ձեռք կայ ըսելով) անմիջապէս բարձր կարգին վրայ կաւելման և ճիշդ ասոր համար ալ դումարելիները աջ կողմէն սկսելով դումարել պարտաւորած է , որ հետզհետէ իւրաքանչիւր կարգաց դումարին տասնաւորները ձախ կողմի կարգերուն վրայ աւելման . վասն զի , եթէ ձախ կողմէն սկսուի դումարել . յառաջ եկած տասնաւորները ձախ կողմիններուն վրայ աւելցնելու համար , կամ արդէն գտնուած դումարը աւելելով և ասանաւորը վերան աւելցնելով նորէն գրելու . կամ տակը գրելով դարձեալ դումարելու է : Եւ եթէ իւրաքանչիւր կարգերու դումարը 9 էն աւելի չըլլայ , ամեն կողմէն ալ կրնայ սկսուիլ դումարել :

40. Տեսութիւն . « Գումարելի թուոց շարքը փոխելով դումարն անփոփոխ կը մնայ : » Վասն զի , դումարելի թուոց շարքը փոխելով անոնց խրաքան չխւրին սլարունակած միութիւնները ո՛չ կաւելնան և ո՛չ կը սլակին , ուստի նոյն միութեանց սակնը մէկէն սլարունակող թիւը , որ դումարելի թուոց դումարն է , անփոփոխ կը մնայ :

$$47+56+24=56+47+24=24+56+47=127$$

41. Փորձք Ֆաւերնակ . Ա . « Պէտք է գործողութիւնը անգամ մ'աւ ընել , թէ որ առաջին անգամ վարէն վեր դումարած ենք , փորձը ըրած աւտեննիս վերէն վար դումարելու ենք . եթէ երկու դումարներն իրարու հաւասար ըլլան . գործողութիւնը ուղիւ է : »

Բ . « Գումարելիներուն մէկը 'դուրս ձգել , ու միւսները միայն դումարել , այս դումարին վրայ աւելցնել դուրս ձգուած դումարելին , եթէ առջի դումարն ելնէ գործողութիւնը ուղիւ է : »

ԽՆԴԻՐ . Երկուշարթի օրը 3628 զինուոր անցաւ , երեքշարթի 2965 , չորեքշարթի 3475 . հինգշարթի 2876 , ուրբաթ 1984 , շաբաթ 3257 , կիրակի 4239 : Բոլոր շարթուան մէջ ո՞րչափ զինուոր անցաւ .

Լուծումն : Յոյսնի է որ առաջարկեալ եօթն թուոց դումարը կամ հաւարումը կը վնասուի :

	ՓՈՐՁ Ա .	ՓՈՐՁ Բ .
Գործարարներ	3628	2965
	2965	3475
	3475	2876
	2876	1984
	1984	3257
	3257	4239
	4239	18796
<hr/>	22424	3628 դուրս ձգուածը
		<hr/>
		22424 որ է հաս.

սար առջի դումարին , ուրեմն ընդ սակնը 22424 զինուոր անցած է բոլոր շարթուան մէջ :

42. Գործածարիւն Ֆաւերնակ : — Յաւելում պէտք կըլլայ երբ երկու կամ շատ մը համասեռ թուոց հաւարումը իրրե մէկ թիւ գտնուլ կը սլահանջաի : Տէս հեռակաւ խնդիրները :

Խ Ն Դ Ի Ր Ք

61. Քստրոցի մը մէջ երեք կարգ աշակերտ կայ . վերջի կարգը 39 աշակերտ է , միջինը 53 , և յարձրագոյն կարգը 45 . բոլորը քա՞նի աշակերտ է :

Պ . 137 :

62. Հօր մը և մօր մը տարիքը քա՞նի կըլլայ զատ զատ , որոնք չորս զուակ ունէին , սակց փոքրագոյնը 7 տարեկան է , Բ . ը սակէ 3 տարու մեծ . Գ . ը երկրորդը 2 տարու մեծ և Գ . ին տարիքը 5 տարեկ , հօրերուն տարիքը բոլոր տղայոց տարիքին չափ , և մօրերուն տարիքը սոչի երեք տղայոց տարիքին չափ :

Պ . Հօր տարիքը 44 , մօր տարիքը 29 :

63. Թագաւոր մը կը ստոր կըսէ 18 տարեկան էր , և 78 տարի քաղաւորարիւն ընկելով մեռաւ : Վրո՞

ճի՞ տարեկան էր մնում ստներ :

Պ. 96 տարեկան :

64. Գաղղիսացոց բազաւորութիւնը 420 բռանկանիկն սկսեց երեք մեծ ընտանիքէ , և այս երեք ընտանիքն ալ զատ զատ շատ մը բազաւորներ ունեցան :

Ա. Մերովիանք , որ 22 բազաւոր ունեցան և 331 տարի տևեց :

Բ. Կարդանան , որ 13 բազաւոր ունեցան և 236 տարի տևեց ,

Գ. Գարէրեանք , որ մինչև Լուդովիկոս ԺԳ. տևեց 806 տարի և 33 բազաւոր ունեցան : Սրդ կուզենք խնամալ ըէ Գաղղիացիք մինչև Լուդովիկոս ԺԳ. քանի բազաւոր ունեցան , և ամենը քա՞նի տարի տևեց :

Պ. Բնդ ամենը 68 բազաւոր ունեցան . և 1373 տարի տևեց :

65. Երկրիս մակերևոյրը 5 գլխաւոր մասերու կը բաժնուի . Եւրոպա , Ասիա , Աֆրիկէ , Ամերիկա և Ովկիանիա : Եւրոպան 300 000 000 ընակիչ ունի , Ասիան 600 000 000 , Ամերիկան 150 000 000 , Աֆրիկէն 120 000 000 , և Ովկիանիան 30 000 000 : Երկրիս բոլոր բազմամարդութիւնը ո՞րչափ է :

Պ. 1 200 000 000 ընակիչ :

66. Տան մը Ա. դատիկներ էլնկու հասար պէտք էր սանդուխի մը 15 աստիճաններէ սեցնիլ , սակէ Բ. ը կրբարու հասար պէտք էր 10 աստիճաններէ սեցնիլ , սակէ ալ Գ. ը 20 . սակէ ալ Դ. ը 19 . վերջապէս Դ. էն Ե. ը կրբարու հասար 18 : Կուզենք իմանալ որ քա՞ կէն մինչև հինգերորդ դատիկներ էլնկու հասար քա՞նի աստիճաններէ սեցնելու է :

Պ. 82 աստիճաններէ :

67. Քրականայի հինգ աստիճաններուն բազմամարդու

րիւնը ո՞րչափ է . գիտնարալ որ Մէյն աստիճանի մէջ 1194607 ընակիչ կայ , Հիւսիսային աստիճանի մէջ 1025292 ընակիչ , իսկ աստիճանի մէջ 500831 ընակիչ կայ , ստորին Մէյն աստիճանի մէջ 737301 ընակիչ , վերջապէս Պա- իլիէի մէջ 560113 ընակիչ :

Պ. 4018344 ընակիչ :

68. Մէկը 3400 դուրուզ դերմակին պարտք ունէր , 2650 դուրուզ սակերիլին , 4560 դրջ զանազան մարդոց բոլոր պարտքը քա՞նի դրջ կընէ :

Պ. 10610 դուրուզ :

69. Պարտեզի մը Տաւերուն գումարը քա՞նի է , ուր կայ 375 խնձորնիկ , 289 տանձի , 387 դեղձի , 425 կետախ Տաւ . և 126 ալ կոնկի :

Պ. 1602 Տաւ :

70. Մարդուն մէկը 1827 ին Տեկր է , ո՞ր բռանկանին 42 տարու երաւ :

Պ. 1869 :

71. Ճանրոդ մը առաջին օրը քաւեց 18 մղոն , Բ. օրը 15 մղոն , Գ. օրը 14 մղոն , Դ. օրը 16 մղոն : Զորս օրուան մէջ քա՞նի մղոն զնաց :

Պ. 63 մղոն :

72. Բանուր մը 36 դանկան ստաւ , ուրիշ բանուր մը սակէ 16 դանկան աւելի և կրորդ բանուր մ'ալ ստեց երկուքին շափ ստաւ : Արչա՞փ առին զատ զատ և ամենը :

Պ. Ա. ը 36 . Բ. ը 52 . Գ. ը 88 . ամենքը 176 :

73. Յունկար ամիսը 31 օր է , Փետրուարը 28 օր , Մարտը 31 օր , Ապրիլ 30 օր , Մայիս 31 օր , Յունիս 30 օր , Յուլիս 31 օր , Օգոստոս 31 օր , Սեպտեմբեր 30 օր , Հոկտեմբեր 31 օր , Նոյեմբեր 30 օր , Դեկտեմբեր 31 օր : Բոլոր տարին քա՞նի օր է :

Պ. 365 օր :

74. Գործատու մը 11 օրուան մէջ 75 կանգուն տեղ շանկեցաւ և վաստակեցաւ 425 դուրոյ, ետքը 5 օրուան մէջ 42 կանգուն տեղ շանկեցաւ և վաստակեցաւ 286 դուրոյ, դարձեալ 15 օրուան մէջ 125 կանգուն տեղ շանկեցաւ և վաստակեցաւ 850 : Կուզենք խնամադրել քա՞նի օր , և քա՞նի կանգուն շանկեցաւ և քա՞նի որչափ վաստակեցաւ :

Պ. 31 օր , 242 կանգուն , 4561 դուրոյ :

75. Մարդու մէկը 300 տիրեւ յորակ , 50 տիրեւ աճուխի փոշի և 50 տիրեւ ճճուկի իրար խառնեց ընդանօրի վաստոյ շինելու համար : Քրչափ վաստոյ ունեցաւ :

Պ. 400 տիրեւ :

76. Պարս ճոցի տասն շանկեցան . առաջինը շանկը էր 3257 որչ . երկրորդը տակէ 1857 որչ տակի , և երրորդը երկրորդէն 567 որչ տակի և չորրորդն ալ երրորդէն 2465 որչ տակի : Զատ զատ քա՞նական որչ շանկա՞ւ են , և ամենքը ո՞րչափ :

Պ. Ա. ը 3257 որչ . Բ. ը 5114 որչ . Գ. ը 5681 որչ . Դ. ը 8146 որչ , և ամենը 22198 դուրոյ :

77. Սըտարակ մը յարձր է երկրորդէ մը 27 ոտք , սա ալ երրորդէ մը 50 ոտք , սա ալ չորրորդէ մը 100 ոտք . առաջին աշտարակը չորրորդէն քա՞նի ոտք յարձր է :

Պ. 177 ոտք :

78. Երեք երրարք իրենց հօրը յատանգործներ հեռուեալ կերպով յաճենցին , անդրա՛խկը ընդունեց 278 ոսկի . Բ. ը ընդունեց անկէ 122 ոսկի տակի և Գ. ը ընդունեց Բ. էն 200 ոսկի տակի : Ժառանգործներ ո՞րչափ էր և ամեն մէկը ո՞րչափ ընդունեց :

Պ. Բ. ը ընդունեց 400 և Գ. ը 600 : Ժառանգործ իսկն էր 1278 ոսկի :

79. Տուե մը առնուած էր 125768 դանկակնի . կառուածագրի և ուրիշ ծախքեր կրած էր առնուած ատենը 15625 որչ . ետքորտեսան համար վճարուած էր 35748 : Սրտ քա՞նի դուրոյի ծախելու է որ , միշտուդիս 18500 որչ և ուրիշ ծախքերու համար 2560 որչ վճարուելէն ետքը 58700 որչ վաստակ մնաց :

Պ. 256901 որչ :

80. Ինը անխներ գետինը ձգուած են , որոց առաջինը 18 քայլ անդին է կեցած տեղիս , Բ. ը անկէ 18 քայլ անդի անդին , Գ. ը Բ. էն 18 քայլ անդին և յորտրն այսպէս իրարմէ 18 անիս քայլ անդին . սրտ մէկիկ մէկիկ ամէնքն ալ կեցած տեղին մէջ յողմը դենը համար քա՞նի քայլ ճամբայ պիտի քալեմ .

Պ. 1620 քայլ :

Ժառանգործիս : — Յաւելման փորձերը տրոջն (Թ. 41) առանդուեցան , ըստ աստիկն զատ ուրիշներ ալ կան , որոց երկուքը հետեւեալներն են .

ՓՈՐՁ Գ .

547	Նախ ճախ կողմի վերջի գաւազանը
312	որ է հարիւրաւոր , գումարեցի և է
405	զաւ 12 , հանեցի տակի 12 էն բան չի
1264	մնաց , ետքը տասնաւորները գումարեցի
010	ընդու 5՝ հանեցի տակի 6 էն մը
	նայ 1 , զոր գրեցի 6 ին տակը , և ետքը միւսոր
	ները գումարեցի եզաւ 14՝ հանեցի 14 էն , բան չի
	մնաց , ուստի գործողութիւնն ուղիւ է : Աստ
	բարձմամբ փորձ կըսուի և իր հաւաստիքը փորձն


ընեւու կերպէն յոյսնի է :

ՓՈՐՁ Գ .

$$\begin{array}{r} 638 \\ 786 \\ 943 \\ \hline 2369 \end{array} \quad \begin{array}{l} / 2 \\ \\ 2 \end{array}$$
 Ըսի 6' 3 ալ 9' 9ը ելնէ բան չի
 մնար , 8' 7 ալ 15' 9ը ելնէ կը
 մնայ 2' 4 ալ 6' 5 ալ 11' 9ը
 ելնէ կը մնայ 2 . դրեցի 2ը դծի
 մը ծայրը , և նաև ըսի գումարին մէջի թիւերն
 առնելով 2' 3 ալ 5' 6 ալ 11' 9ը ելնէ կը մնայ 2 ,
 սա ալ դրեցի դծին միւս ծայրը և տեսայ որ երկու
 մնացորդն ալ 2 է , ուրեմն գործողութիւնը ուղիւ
 է : Թէ գումարելիներուն և թէ գումարին մէջ 9
 թուանշանները չառի , վասն զի անոնք արդէն 9 են
 և 9 հանելով մնացորդ չըլլար :

Ասոր ալ 9 ով փորձ կըսուի . և ապացոյցը վեր .
 2ը պիտի աւանդուի .

35 . Ի՞նչ է յաւելումը : Յաւելման մէջ քանի՞ տեսակ թիւ
 կայ և ի՞նչ կըսուին : 36 . Գումարելիները ի՞նչ յատկութիւններ
 ունենալու են և ինչո՞ւ համար : Ի՞նչ կը հետևի ասոյէ : 37 . Յա-
 վելման կանոնի սկզբունքները ըսէ՛ : Միաթուանշան թուոց յա-
 վելումը ի՞նչպէս ընելու է : Բազմաթուանշան թուոց յաւելումը
 ի՞նչ սկզբան վրայ հիմնուած է : Եւ ի՞նչպէս ընելու է : 38 . Յա-
 վելման կանոնները ըսէ՛ . և օրինակի մը վրայ բացատրէ : 39 . Յա-
 վելման կանոնին ապացոյցը տու՛ր : 40 . Յաւելման վրայ ի՞նչ
 տեխնիկան կայ . 41 . Յաւելման Ա . փորձն ի՞նչպէս կըլայ :
 Բ . փորձն ի՞նչ է : 42 Յաւելման գործողութիւնը ե՞րբ պէտք
 կըլլայ : Յաւելման Գ . փորձը ո՞րն է և ի՞նչ կըսուի : Դ .
 փորձը ո՞րն է և ի՞նչ կըսուի :



ՅՕԴՈՒԱՄ Բ .

ԲԱՐՁՈՒՄՆ ԱՄԲՈՂՋ ԹՈՒՈՑ

43. « Եւ ըսուած թուէ մը փոքր ըսուած թիւ
 մը հանելով մնացորդ ըսուած թիւը գտնալու դոր-
 ծողութեանը կըսուի Բարձումն :

Մնացորդը նաև կըսուի տարրերային և առա-
 շերտային :

25 - 12 = 13

Հոս 25 մեծ թիւ է և 12 փոքր թիւ և 13 մնա-
 ցորդ , որոյ տարրերային կամ առաւելորդային ալ
 կըսուի :

Բարձումը յաւելման հակառակ գործողութիւնն
 է , երկու թուոց գումարը և անոնց մէկը զիտնա-
 լով : պիտի գտնանք միւսը : Բարձման մէջ երկու
 թուոց գումարն է մեծ թիւը , ծանօթ գումարելին
 է փոքր թիւը , և միւս գումարելին ալ է տարբե-
 րութիւնը : Ինչպէս՝

9+7=16 և 16-7=9 կամ 16-9=7

Առաջինը յաւելում է . ուր 9 և 7 թիւերը
 գումարելի են և 16ը գումար . իսկ երկրորդը բար-
 ձում է , ուր 16ը մեծ թիւ և 7ը փոքր թիւ է և
 9 ալ տարբերութիւն : Նոյնպէս երրորդն ալ բար-
 ձում է , ուր դարձեալ 16ը մեծ թիւ է , 9ը փո-
 քրը թիւ և 7ը տարբերութիւն : Երկու թուոց
 տարբերութիւնը գտնուած ատեն պէտք չէ որ
 նոյն թուոց ինչ բանի համարանք ըլլալը զխոյոտի ,
 բաւական է որ անոնք համասեռ ըլլան : 12 էն 4
 հանելով կը մնայ 8 , 12 տունէն 4 տուն սրակսեցը-
 նելով կը մնայ 8 տուն , 12 կանգունէն 4 կանգուն

Հանելով կը մնայ 8 կանգուն , 12 հարիւրաւորէն 4 հարիւրաւոր հանելով նաև կը մնայ 8 հարիւրաւոր . ուստի բարձում ըրած առեւնիս մեծ և փոքր թիւերը պէտք է վերացեալ թիւեր նկատուի :

Երկու թուոց տարբերութիւնը հաւասար է այն թուոյն , որ փոքրին վրայ աւելցնելով մեծին հաւասար կըլլայ . ուստի միտթուանչան թուոց գումարը երբոր ըս գիտենք անոնց տարբերութիւնն ալ շուտով կրնանք գտնալ , 5 և 7 թուոց գումարն է 12 . ուստի 12 ին և 5 ին տարբերութիւնն ալ է 7 :

44. Աւելի նշանով եղած թիւերը դրական քանակութիւնք կըսուին , և պակաս նշանով եղածներն ալ քանակութիւնք : Եւ ամեն թիւ կամ դրական քանակութիւն պիտի ըլլայ կամ բացասական . ուստի ամեն թիւ կամ առիկի նշան պիտի ունենայ կամ պակաս նշան . և այն դրական թիւերն երբ մինակ կամ ձախ կողմը ուրիշներէն առաջ դրուած են՝ իրենց ձախ կողմը + նշանը յայտնի չի դրուիր զօրութեամբ կը հասկցուի :

$$425 - 64 = 61$$

Ատնց նշանները յայտնի դնելով կըլլայ ,
+ 125 - 64 = + 61

45. Սկզբունքներ որոց վրայ հիմնուած են Բարոման կանոնիկ տեսական մասերը .

1^o . « Եթէ երկու թիւեր հաւասար թուով մասերու զատենք , անանկ որ մեծ թուոյն մասերը փոքր թուոյն մասերէն մեծ ըլլան , այս մասանց տարբերութեանց գումարը նոյն երկու թուոց տարբերութեանը հաւասար է : »

Օրինակ 14 թիւը զատենք երկու մասերու 9 և 5 , 10 թիւն ալ նմանապէս զատենք երկու մասե-

րու 6 և 4 . 9 ին և 6 ին տարբերութիւնն է 3 , 5 ին և 4 ին տարբերութիւնն է 1 , ուստի այս տարբերութեանց գումարն է 3+1=4 որ է հաւասար 14 ին և 10 ին տարբերութեանը :

2^o . « Երկու թուոց տարբերութիւնը չի փոխուիր երբ զանոնք հաստարանէս աւելցնենք : »

Այս երկու սկզբունքները այնչափ պարզ են որ զանոնք բացատրելու պէտք չի կայ :

Բազմաթուանչան թուոց իւ բաքանչիւր թուանչան մէյակի կարգի թիւ ցուցնելով փոքր թուոյն իւրաքանչիւր կարգի թուանչանները մեծ թուոյն իրենց նման կարգի թուանչաններէն հանելով նոյն երկու թուոց ընդհանուր տարբերութիւնը յառաջ կուգայ , որով բարձման համար հետեւեալ կանոնները կ'աւանդենք :

46. Կանոնք բարձման .
Ա . Փոքր թիւը միաւոր կամ միաքուսանչան թիւ :
« Պէտք է փոքր թուոյն միութիւնները մեծ թիւէն « ետեւէ ետեւ հանել , ինչպէս 5ը 14 էն հանելու « համար կըսեմ , 14 էն 1 ելնէ կը մնայ 13՝ ասկէ « ալ 1 ելնէ կը մնայ 12՝ ասկէ ալ 1 ելնէ կը մնայ « 11՝ ասկէ ալ 1 ելնէ կը մնայ 10՝ ասկէ ալ 1 ելնէ « կը մնայ 9 , ասանկ 5ին բոլոր միութիւնները հետ « ըզհեալ 14 էն հանելով մնայ 9 : Բայց երբ փոքր « թիւը մեծիակ ըլլայ , այս կերպով բարձումն ընելը « շատ գծուար և զրեթէ անկարելի է , ուստի մի « աւոր թուոց տարբերութիւնը վարժութեամբ « սովորելն ետքը բազմաթուանչան թուոց տարբե- « ժրութիւնը զխրութեամբ կրնայ գանուիլ երբ « անոնց նման կարգերու բարձումը զատ զատ « ըլլայ : »

81. Սկզբնիս վրայ գաւար մը կար, տղայ մը գայն ձգեց կտորեց, սեղանիս վրայ քանի՞ գաւար մնաց: 1 և 1 կըէ ի՞նչ կը մնայ: Պ. Ուրից:

82. Իրարու քով 2 արու դրուստ էր: Միւրսակը արտոյիս մէկը վար ձգեց. վար յիկիստ քանի՞ արու մնաց: Պ. 1 արու:

83. 5 տղայք դաս ըսելու եկան, 2 ը դիտցան դասերիս ու սեղերիս դարձան, դաս չը դիտցող քանի՞ տղայ մնաց: 5 և 2 կըէ քանի՞ կը մնայ: Պ. 3:

84. Սկզբնի մը վրայ 8 ըրի գաւար կայ, սնունց 3ը գլխի վար դրուստ է. քանի՞ն շխտակ է: 8 և 3 կըէ քանի՞ կը մնայ: Պ. 5:

85. 10 հաւ գարի կուտէիս, տղայ մը սնունց 4ը մաստոց. քանի՞ հաւ մնաց: 10 և 4 կըէ քանի՞ կը մնայ: Պ. 6:

86. Զարուհիս 12 զեղասնոյ ունէր. 7 հատը իր բոլորն առաւ. քանի՞ մնաց: 12 և 7 հանկոյլ քանի՞ կը մնայ: Պ. 5:

87. Ծատիկ վրայ 15 տակն կար. 8 ը սգոյիկ եղբայրս բրցուց. քանի՞ հաւ մնաց: 15 և 8 ը կըէ քանի՞ կը մնայ: Պ. 7:

88. Կատք մը հատած 9 տղայ կերպայիս, սնունց 4 ը դուրս վրտառեցանէ. կատքը քանի՞ տղայ մնաց: 9 և 4 կըէ ի՞նչ կը մնայ: Պ. 5:

89. 14 հացիկ մէջ 6 ը սն էր, քանի՞ հացը սպիտակ էր: 14 և 6 կըէ ի՞նչ կը մնայ: Պ. 8:

90. 16 սնձանց մէջ 7ը կիս էր. քանի՞ն էրիկ մարդ էր: 16 և 7 կըէ ի՞նչ կը մնայ: Պ. 9:

Բ. Փոքր բիշ քաղնարուանսն. «Պէտք է «փոքր թիւը մեծ թուոյն տակը գրել (կամ գրուած համարել), ասոնց տակէն գիծ մը քաշել «և սխիլ փոքր թուոյն միտուրը մեծ թուոյն միտուրէն, ասանուորը ասանուորէն, հարիւրուորը «հարիւրուորէն և այլն հանել. և ասանկ շարունակ «կել մինչև փոքր թուոյն ամեն կարգերն ալ մեծ «թուոյն իր նման կարգերէն ելնեն, և խորաքօնչխոր «կարգին մնացորդը իր տակը գրել, բոլորը մէկ «կանց կըլլան սահանջեալ ընդհանուր մնացորդը»: (45 Գ. սկզբունք):

«Եթէ փոքր թուոյն մէկ կարգը մեծ թուոյն «մէջի իր նման կարգին հաւասար ըլլալով մնացորդ «չի թողու նոյն կարգին տակը տարբերութեան «համար զրօ գրել»:

«Եւ թէ որ փոքր թուոյն մէկ կարգը մեծ թուոյն իր նման կարգէն մեծ ըլլայ, մեծ թուոյն «ձախ կողմի կարգէն 1 մը առնել իր վրայ 10 աւ «ւելի և ձախ կողմինը 1 ստիպան համարելով ընել «գործողութիւնը: Եթէ ստիպան եղած կարգին «ձախ կողմինները զրօ ըլլան գրօներէն անդին եւ «ղած նշանական թուանշանէն 1 մը առնելով զրօ «ներքն տարւ և ասոնցմէ ալ 1 առնելով և իւ «րարու տարւով մինչև մեծ թուոյն ստիպան եղած «կարգը բերել, այն ատեն գրօներէն անդին եղած «թուանշանը 1 ստիպան, գրօները 9 եր կըլլան և «ստիպան եղած կարգն ալ 10 աւելի»:

«Այս վերջի ստորագոյնին մէջ, այսինքն, փոքր «թուոյն մէկ կարգը մեծ թուոյն իր նման կարգէն «մեծ եղած ատեն, կրնանք նաև մեծ թուոյն ստիպան «եղած կարգը 10 աւելի, և փոքր թուոյն մեծ եղած

« կարգին ճախ կողմինը 1 աւելի համարելով ընել
« գործողութիւնը . որով փոքր և մեծ թուոյ միւ-
« նոյն կարգերը հաւասար չափով աւելցած կըլլան .
« (45 . Բ . սկզբունք) » :

Օրինակ . եթէ 25478 էն հանել պէտք ըլլայ
12435 ը , փոքր թիւը մեծ թուոյն տակ գրելով
կըսեմ ,

25478 8 էն 5 ելնէ կը մնայ 3' կը գրեմ 3

12435 այն կարգին տակը , այսինքն միաւո-

13043 րաց տակը , 7 էն 3 ելնէ կը մնայ 4'

դր կը գրեմ տասնաւորաց տակը , նոյնպէս 4 էն
4 ելնէ լսան շի մնար կամ կը մնայ 0' կը գրեմ հա-
րիւրաւորաց տակը դրօ , 5 էն 2 ելնէ կը մնայ 3'
աս ալ կը գրեմ հազարաւորաց տակը , և 2 էն 1
ելնէ կը մնայ 1' աս ալ կը գրեմ տասնհազարաւո-
րաց տակ և որով ընդհանուր մնացորդնիս եղաւ
13043 :

Նմանապէս եթէ 3004532 էն հանել պէտք ըլլայ
1657258 թիւը , փոքր թիւը մեծ թուոյն տակ դը-
րելով կըսեմ

3004532 2 էն 8 չելնէր , 12 էն ելնէ կը մնայ

1657258 4' կը գրեմ միաւոր տարբերութեան

1347274 մէջ . և մեծ թուոյ 3 տասնաւո-

րը 1 սրահաս , այսինքն , 2 համարելով կը շարու-
նակեմ 12 էն 5 ելնէ կը մնայ 7' կը գրեմ տաս-
նաւոր տարբերութեան մէջ , մեծ թուոյն 5 հարիւ-
րաւորը 4 համարելով կըսեմ 4 էն 2 ելնէ կը մնայ
2' կը գրեմ հարիւրաւոր , 14 էն 7 ելնէ կը մնայ 7'
կը գրեմ հազարաւոր , 9 էն 5 ելնէ կը մնայ 4' կը
գրեմ տասն հազարաւոր , 9 էն 6 ելնէ կը մնայ 3'
կը գրեմ հարիւրհազարաւոր , 2 էն 1 ելնէ կը մնայ

1' կը գրեմ միլիոնաւոր . որով բոլոր մնացորդնիս
ալ կըլլայ 1347274 :

Յիշեալ գործողութիւնը կընեմք նաև հետևեալ
կերպով ալ ,

12 էն 8 ելնէ կը մնայ 4 . ձեռք կայ 1' 5 ալ 6'
13 էն ելնէ կը մնայ 7 , ձեռք կայ 1' 2 ալ 3' 5 էն
ելնէ կը մնայ 2 , նոյնպէս 7ը 14 էն ելնէ կը մնայ
7 , ձեռք կայ 1' 5 ալ 6' 10 էն ելնէ կը մնայ 4 ,
ձեռք կայ 1' 6 ալ 7' 10 էն ելնէ կը մնայ 3 , ձեռք
կայ 1' 1 ալ 2' 3 էն ելնէ կը մնայ 1 , որով գը-
տանք ճիշդ վերի մնացորդը :

Գ . Մեք և փոքր թիւերը մէկ տողի մէջ գրելով
ընել քարճուսը : « Պէտք է գրել առաջ մեծ թիւը
« և ետքը սրահաս նշան մը և սակէ ետքն ալ փո-
« քրը թիւը , հաւասար նշանն մը ետքն ալ տար-
« րբերութիւնը . միշտ միևնոյն կարգի թիւերը
« իրարմէ հանելով : » Ինչպէս

206082 — 176795 = 29287

49. Կարացոյց . Կանոնը սահմանին համեմատ
է , յիսան զի փոքր թուոյն ամեն մէկ կարգե-
րը մեծ թուոյն իր նման կարգերէն հանելով ամ-
բողջ փոքր թիւը մեծ թիւէն հանած կըլլանք ,
(93 . Բ .) : Ասանկ նման կարգերը իրարմէ հա-
նելով գործողութիւնը շատ կը դիւրիննայ : Յայտ-
նի է որ ամեն թուանշան իր աջ կողմի գրուած
թուանշանին միութեանէն տասն անգամ աւելի միու-
թիւն ունի (21 . Ա .) . ուստի անոր համար երբ
փոքր թուոյն մէկ կարգը մեծ թուոյն իր նման
կարգէն մեծ ըլլայ . մեծ թուոյն սրահաս եղած
կարգին ճախ կողմինէն 1 մը առնելով իր վրայ 10

աւելի կը համարեմք և ետքը նոյն ձախ կողմինը 1 սրահաս համարելով կընենք գործողութիւնը, որ նոյն է երբ փոխանակ մեծ թուոյն ձախ կողմինը 1 սրահաս համարելու, փոքր թուոյն ձախ կողմինը 1 աւելի համարենք, վասն զի մեծ թիւը և փոքր թիւը միևնոյն թուով աւելցնելով տարբերութիւնն անփոփոխ կը մնայ, կամ նոյն է մեծ թիւէն 1 սրահսեցնելու տեղ փոքր թիւը 1 ի չտալ աւելցնելը :

Բարձունն աջ կողմէն կսկսիմք և ո՛չ ձախ կողմէն, վասն զի թէ որ փոքր թուոյն մէկ կարգը մեծ թուոյն իր նման կարգէն մեծ ըլլայ, այն աւտեն մեծ թուոյն սրահաս եղած կարգին ձախ կողմինէն 1 մը առնելով և իր վրայ 10 աւելի համարելով կընենք գործողութիւնը, որ թէ որ ձախ կողմէն սկսած ըլլամք. ձախ կողմիններուն մնացորդը արդէն գրուած ըլլալով՝ չըպիտի կրնամք ձախ կողմինէն 1 մը առնելով իր վրայ 10 աւելի համարել. կամ եթէ առնուի ալ, այն ատեն պէտք է մնացորդն տարելով նորէն գրել, ուստի այս կրկին գործողութեանը չի հանդիպելու համար աջ կողմէն կսկսիմք և ոչ ձախ կողմէն :

Եւ թէ որ փոքր թուոյն ամեն կարգերն ալ մեծ թուոյն իրենց նման կարգերէն պզտիկ ըլլան, այն ատեն բարձունն ամեն կողմէն ալ կրնանք ըսկըսիլ, այսինքն ձախ կողմէն, մէջտեղերէն և ըն : Փոքր թուոյն խրաքանչիւր կարգի թիւերը 9 էն մեծ չեն կրնար ըլլալ, անոր համար մեծ թուոյն սրահաս եղած կարգերուն վրայ 10 ը կաւելցնեմք, ուրիշ կրնայ հանուիլ փոքր թիւը, թիւ և մեծ թուոյն նման կարգը դրօ ըլլայ : Եւ մեծ թուոյն սրահաս կարգերուն վրայ 20, 30, և այլն թիւեր

աւելցնելու պէտք չի կայ, վասն զի մասնաւոր մը նացորդները, այսինքն խրաքանչիւր կարգի մնացորդները միաթուանշան են :

ՔՏ. Փորձք թարման . —

Ա. « Մնացորդը փոքր թուոյն վրայ աւելցնելով և թէ որ գումարը մեծ թուոյն հաւասար ըլլայ գործողութիւնը ուղիղ է (43) » :

Բ. « Տարբերութիւնը մեծ թիւէն հանելով եթէ մնացորդը փոքր թուոյն հաւասար ըլլայ գործողութիւնը ուղիղ է (43) » :

Օրինակ . Մարդու մը տարեկան եկամուտն էր 256708 դր. և իր տարեկան ծախքը 195895 դր. մուտքէն ո՞րչափ կաւելնայ :

ԲԱՐՁՈՒՄՆ

256708	մեծ թիւ
195895	փոքր թիւ
<hr/>	
60813	մնացորդ

ՓՈՐՉ ՅԱՒԵԼՄԱՄԲ

195895	փոքր թիւ
60813	մնացորդ
<hr/>	
256708	մեծ թիւ

ՓՈՐՉ ԲԱՐՁՄԱՄԲ

256708	մեծ թիւ
60813	մնացորդ
<hr/>	
195895	փոքր թիւ

Գործնականին մէջ պէտք չէ փորձը այսպէս զատ սեղի մէջ ընել, այլ նոյն խի բարձման գործողութեան վրայ առանց նորէն բան մը դրելու : Յաւելում ընելով նայելու է որ մասնաւոր գումարները մեծ թուոյն մէջ իր նման կարգի թուանշաններուն հաւասար ըլլան : Նոյնպէս բարձմամբ փորձին մէջ ալ նայելու է որ մը

նայորդին և մեծ թուոյն տարբերութիւնները փոքր թուոյն իրենց նման կարգի թուանշաններուն հաւասար ըլլան :

49. Գործաժողովի քարանուշակ . Երբ կը պահանջուին երկու թուոյ տարբերութիւնը , թուոյ մը ուրիշ թուէ մը ունեցած առաւելութիւնը , կամ թիւ մը ուրիշ թուէ մը պակասեցնել , գիտնալով երկու թուոյ գումարք և մէկ թիւը՝ գտնալ միւս թիւը . և այլն . այս ամեն դիտումներուն մէջ միշտ երկու թուոյ սղտիմը մեծէն հանելու է :

ԽՆԴԻՐՔ ԲԱՐՁՄԱՆ ԱՄԲՈՂՁ ԹՈՒՈՑ

- 91 . Մէկը 678916 որդ . պարտք ունէր . 55716 որուոչ տուա . քանի՞ որուչ պարտքը մնաց :
Պ . 623200 որուչ :
- 92 . Մեկն Նարոչէոն 1769 ին ժնաւ և 1821 ին մտաւ , ո՞րչափ ապրեցաւ .
Պ . 52 տարի :
- 93 . 6650 զիւնորէ քարկացնալ քանակ մը պատնէ քաղով մէջ 1096 հոգի կորսնցոց . ո՞րչափ զիւնոր մնաց :
Պ . 5554 զիւնոր :
- 94 . 76954 ը 32549 էն ո՞րչափ մեծ է :
Պ . 44405 :
- 95 . Մէկը առուտորի կսկսի 4256 որդ . դրանա գրչտով . տարիէ մը կտքը հաշիւ ընելով կը գտնայ որ իր դրանագրոսիք 8978 որդ . կաւծ է . ո՞րչափ վաստակ ըրաւ է :
Պ . 4722 որդ :
- 96 . Մէկու մը տարեկան կկտնուան է 465000 ,

ճախքն է 350000 . տարին ո՞րչափ կը խնայէ :
Պ . 445000 :

97 . Մարդ մը երեք տեղ ստեղծիք ունէր և երեք պարտք : Ա . ստեղծիքն էր 5678 որդ . Բ . ը 9516 որդ . Գ . ը 4504 որդ . և իր քովն ալ կար պատրաստ դրամ 4000 որդ : Ա . պարտքն էր 3000 որդ . Բ . պարտքն էր 2563 որդ . Գ . ը 1565 որդ . մարտն սեպհական ունեցածը քանի՞ որդ . կըլլայ :
Պ . 46570 որդ :

98 . Երկու բուոց տարբերութիւնն է 964 որդ . մեկ բիւր 2548 է . փոքր բիւր քանի՞ է :
Պ . 4584 . :

99 . Վաճառք մը 18905 որդի ստեղծաւ էր . ճախուցաւ 16728 որդի . քանի՞ որդ . վնաս կաւ :
Պ . 2177 որդ :

100 . Մէկը մտաւ ստեղծ 216795 որդ . սասցուածք և 164705 որդի պարտք կը բարու . զուտ ըստացուածքը ո՞րչափ է :
Պ . 52090 որդ .

101 . Մէկը ստեղծ մը մէջ այլապէս անգամ կը վաստակի 6500 , 3456 , 2348 և 364 որդ և ճախք կընէ 589 . 316 , 4268 : Քանի՞ է վաստակը և քանի՞ է ճախքը , և ստեղ տարբերութիւնը ո՞րչափ :
Պ . վաստակն է 42668 , ճախքն է 5173 , և ստեղ տարբերութիւնը 7495 :

102 . Մէկը՝ որ 34564 որդ ունէր , 5678 որուչ անգամ մը ճախք ըրաւ , 4216 որդն ալ անգամ մը . 6475 որդ ալ ուրիշ անգամ մը , քանի՞ որդ մնաց իր քովը :
Պ . 48195 որդ :

103 . Փարիզի քաղմանադատիւնը 1300 ին

125000 Լր, 1800 ին 732800, իսկ 1841 ին 935261:
Արդ Կուզենք ինսնուր թէ Փարիզի բնակչաց թիւը 1300
Էն մինչև 1800 ո՞րչափ անկցամ է, և 1800 էն մինչև
1841 ո՞րչափ:

Պ. 607800 և 202461:

104. Իտալու է թիւ մը որ մե՛ք ըրրայ այնչափ
2601 էն, որչափ որ ասի մե՛ք է 1358 էն:

Պ. 3844:

105. Պաւստու է հետեւուր տարրերութեանց տար-
րերութիւնները. 125003—9567 և 238000—175614:

Պ. 53050:

106. Ս. Պրիզոր Լուսաւորիչ Քրիստոսի 300
բուսականին Հայրապետ կրաւ Հայոց ազգին, անկի
մինչև 1875 քանի՞ տարի է:

Պ. 1575 տարի:

107. Ռուսիկեանց բազաւորութիւնը վերջացաւ
1375 ին, անկի մինչև 1875 քանի՞ տարի է:

Պ. 500 տարի:

108. Քելիզը, որ աստեղաց շարժման օրէկըր
գտաւ, ծնաւ 1571 ին և մեռաւ 1631 ին: Նէվտոն
որ բնորոշակեց գաւտնք, ծնաւ 1642 ին և մեռաւ
1727 ին. իւրաքանչիւրը քանակա՞ն տարի ապրեցան:

Պ. Քելիզը 60 տարի. Նէվտոն 85 տարի:

109. Միւրչև 1875 պիտի ըրրայ շոգեշարժ մեքենա-
չին գիւտը 176 տարի, տպագրութեան գիւտը 435
տարի՝ վառօդի գիւտը 519 տարի և քղրի գիւտը 634
տարի. այս գիւտերը ո՞ր բուսականներուն կը հանդի-
պին:

Պ. Շոգեշարժ մեքենային գիւտը 1699 ին: տպագ-
րութեան գիւտը 1440 ին, վառօդի գիւտը 1356 ին,
քղրի գիւտը 1241 ին:

110. Քրիստոսիտր Գրոյմպու ճննովացի նաւապե-
տը Ամերիկոյ ցաւաքը գտաւ 1497 ին, մինչև 1875
քանի՞ տարի է: Պ. 378 տարի:

111. Երկիրս իր հետակաւն կրամ աստեր արեգա-
կէն ունեցամ հետաւորութիւնն է 83 025 772 մըն, և
իր մերձակէտը կրամ աստեր անեցամ հետաւորութիւնն
է 82 310 596 մըն. ի՞նչ է տարրերութիւնը:

Պ. 715 176 մըն:

112. Երկրիս հասարակամիւ տրամագիծն է 6888
մըն, բնւոյսիւնն է 6865 մըն. ի՞նչ է ասոնց տար-
րերութիւնը: Պ. 23 մըն:

113. Այն գիտաւորն որ 1835 ին երեցաւ, 76
տարի անտեսանելի էր, ասաչին երևումը ե՞րբ էր, և
մէկ մ'ալ երբ պիտի երևի:

Պ. Ասաչին երևումը 1759 ին էր, 1911 ին անգամ
մ'ալ պիտի երևի:

114. Ասաչին շայնութեան աստիճանը 110 577
մերր է, վերջինը՝ 111 690 մերր: ի՞նչ է հասարա-
կամէն դէպ 'ի բնւոն անումը: Պ. 1113 մերր:

115. Մե՛քն Եւրօշէսն 1821 ին մեռաւ 52 տա-
րեկան. ո՞ր բուսականին ծնաւ: Պ. 1769 ին:

116. Ամերիկայ գտնուելէն մինչև 1875 տարի՞ն՝
378 տարի է. Քրիստոսիտր Գրոյմպու ո՞ր բուսականին
գտաւ: Պ. 1497 ին:

117. Փարի՛ն Սուրբան Մէհմէտ Բ. Կոստանդնու-
պօլիսը աւաւ Յունաց մեքենայի Քրիստոսի 1453 բուս-
ականին, մինչև 1875 քանի՞ տարի է: Պ. 422:

118. Մէկը ծնաւ 1789 ին և մեռաւ 1875 ին.
քանի՞ տարու էր մեռամ աստեր: Պ. 86:

119. Երկրիս ամենէն բարձր շեռը Ասիոյ Հիմա-
լայա շերանց մէջ Տափարակիրի շեռն է, որոյ բարձ-

5672 ին թուարանական լրումն է 4328
 16743 ին " " " 83255

52*. Տեսութիւն Գ. «Փոքր թուոյն թուարանոյ
 կան լրումը մեծ թուոյն վրայ աւելցնելով գումարը
 կըլլայ հաւասար մնացորդին և աւելի այն հաւաքա-
 ծոյ միութիւնը, յորմէ փոքր թիւը պակսեցնելով
 իր թուարանական լրումը գտնուած էր՝ ուստի
 այս հաւաքածոյ միութիւնը յիշեալ գումարէն պակ-
 սեցնելով կը գտնուի մեծ և փոքր թուոյ մնացորդը:»
 2364—1678=886 և թուար. լրումն 1678 ի=8322

ուստի 2364+8322=10836—10000=886

Վասն զի երբ մեծ թիւէն շի պակսեցնելով փո-
 քոր թիւը՝ իր թուարանական լրումը մեծ թուոյն
 վրայ կաւելնայ, գումարը կըլլայ մնացորդը և ա-
 ւելի այն հաւաքածոյ միութիւնը, յորմէ փոքր թի-
 ւը հանելով թուարանական լրումը գտնուած էր,
 արդ պէտք է նոյն հաւաքածոյ միութիւնը գումար-
 րէն պակսեցնել, որ ճիշդ պահանջեալ մնացորդը
 յառաջ գայ:

53*. Երբոր քանի մը թիւերու գումար կը պա-
 հանջուի հանել ուրիշ քանի մը թիւերու գումարէն,
 ալիտք է բառնալի թուոյ թուարանական լրումները
 գումարելի թուոյ վրայ աւելցնել և գումարէն պա-
 կաս համարել այն հաւաքածոյ միութիւնները, յո-
 րոյ հանելով բառնալի թիւերը իրենց թուարա-
 նական լրումը յառաջ եկած էր, Օրինակ. 1567,
 3498 և 2569 թուոյ գումարէն պակսեցնելու է 2345,
 1234, 1453 թուոյ գումարը:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Գումարելի	{ 1567	1567
Թիւք	{ 3498	3498
	{ 2569	2569

Գնի գնդի քույ 7634

Բառնալի	{ 2345	իր թուար. լրումը	7635
Թիւք	{ 1234	" " "	8766
	{ 1453	" " "	8547

Գնի. բունի. քույ 5032

Իրենց տարբերութիւնը 2602 2602

Թուարանական լրումը գտնուած գումարին մէ-
 ջէն պակսեցուցինք միայն վերջի 3 ձեռքը, այսինքն,
 30,000 ը. որովհետև երեք 10,000 է բառնալի թի-
 ւեր հանելով գտնուած էր իրենց թուարանական
 լրումը:

54*. Ս,մեն թիւ + կամ — նշան կունենայ
 (44) այսինքն կամ դրական կըլլայ կամ բացասա-
 կան, այս նկատմամբ թուոյ յաւելումը կը կատար-
 ուի երբ գումարելիները իրենց բուն նշաններովը
 իրարու քով զրուին, և ետքը ամփոփուին, այսինքն,
 + նշանով եղածները զատ և — նշանով եղածնե-
 րը զատ գումարուին, և փոքրը մեծէն հանելով մը-
 նացորդը մեծ թուոյն նշանովը դրուի: Ինչպէս՝
 +16, —25, —18, +49, +56, +75, —106
 թիւերուն գումարը կըլլայ

16—25—18+49+56+75—106

որք ամփոփուելով կըլլան
 16+49+56+75—25—18—106=196—149=47
 հաս + նշան ունեցողները իրարու քով դնելով և
 զատ գումարելով գտնուեցաւ 196, և — նշանի

ունեցողներն ալ զատ գումարելով գտնուեցաւ 149 ,
և 149 ը 196 էն հանելով յառաջ եկաւ 47 , և մեծ
թուոյն նշանը + ըլլալով մնացորդն ալ գրահան է :

Նաև գրահան և բացասական թուոց բարձումը
կըլլայ բառնալի թուոց նշանները փոխելով միւս-
ներուն քով գրելով և ետքը զանոնք ամխափելով :
Վասն զի ,

Օրինակ . Պետրոսէն 546 զրչ առնելիք ունինք ,
340 զրչը վճարեց , քանի՞ զրչ մնաց առնելիքնիս :
Հոս 546 ը + նշան ունի , ինչպէս նաև 340 ալ +
նշան ունի . ուստի մնացած առնելիքնիս գտնալու
համար պիտի գրենք 546—340=206 , բառնալի
340 թուոյն + նշանը — ի փոխելով գրեցինք 546
ին քով և որով բարձումը կատարեցաւ :

Բայց երբոր Պետրոսը 340 զրչ վճարած ատենը
ըսած ըլլայ որ անոր մէջէն 20 զրչը ծանօթ աղբա-
տի մը վճարուի , ան ատեն մեզի վճարածը կըլլայ
340—20 , արդ մնացած առնելիքնիս գտնալու հա-
մար պիտի գրենք նախ 546—(340—20) և երբոր
բառնալի քանակութեան փակագիծը վերցնենք պի-
տի գրենք ան ատենը 546—340+20=546+20—340
=566—340=226 որ է պատասխանը :

Հոս կը տեսնենք որ փակագիծ է մը առաջ երբ
— նշան կը գտնուի , որ բարձում կը ցուցնէ , փա-
կագիծը վերցուած ատեն իր մէջը եղած թուոց
նշանները փոխելով գրելու է :

Նաև +46 , —16 , +64 , +125 թուոց գու-
մարէն հանելու է —67 , +105 , +78 , —95 ,
—20 թուոց գումարը :

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

$$46-16+64+125 - (-67+105+78-95-20) =$$
$$46-16+64+125+67-105-78+95+20 =$$
$$46+64+125+67+95+20-16-105-78 =$$
$$417-199=218$$

43 . Ի՞նչ է բարձումը : Մնացորդ ուրիշ ի՞նչ անուն կու-
նենայ : Բարձման մէջ քանի՞ գլխաւոր թիւ կայ : Օրինակի վրայ
ցցուր դիտաւոր թիւերը : Բարձում և յաւելում իրարու հետ
ի՞նչպէս կը բաղադրուին : 44 . Գրահան և բացասական քանակու-
թիւնները որո՞նք են : 45 . Ըսէ՛ այն սկզբունքները , որոյ վրայ
հիմնուած է՞ն բարձման կանոնները :


46 . Բարձման կանոնները բացատրէ՛ : Փոքր թիւը միաթը-
ւանշան և մեծ թիւը անկէ տասնէն քիչ աւելի եղած ատենը բար-
ձումն ի՞նչպէս ընելու է : Բաղմաթուանշան թուոց բարձումն ի՞նչ-
պէս ընելու է : Փոքր թուոյն մէկ կարգը երբ մեծ թուոյն իր
նման կարգէն մեծ ըլլայ . բարձումն ի՞նչպէս ընելու է : Փոքր
թուոյն մէկ կարգը երբ մեծ թուոյն իր նման կարգէն մեծ ըլլայ
բարձումն ի՞նչպէս ընելու է և քանի՞ կերպով կըլլայ : Օրինակի
վրայ բացատրէ : Մէկ տողի մէջ գրելով ի՞նչպէս քնելու է բար-
ձումը . օրինակով հասկցուր :

47 . Բարձման ամէն կանոններուն ալ սպասցոյցը ըսէ :

48 . Բարձման փորձը ի՞նչպէս կըլլայ և քանի՞ կերպով :
Օրինակով հասկցուր : 49 . Բարձման զործածութիւնը ե՞րբ կը
պատահի : 50 . Բարձման Ա . Բ տեսութիւնները և ասոնց հետև-
ութիւնները ըսէ : 51 . Թուարանական լրումն ի՞նչ է և ինչպէս կը
գտնուի : 52 . Բարձման Գ . տեսութիւնն ի՞նչ է և ի՞նչպէս կը
կատարուեն այս տեսութիւնները :

53 . Քանի մը թուոց գումարը ուրիշ քանի մը թուոց գու-
մարէն ի՞նչպէս կը հանեն , և քանի՞ կերպով :

54 . Թուոց բարձումը և յաւելումը + կամ — նշաննե-
րու միջոցու ի՞նչպէս կընեն .



ՅՕԴՈՒԱԾ Դ.

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԹՈՒՈՅ

55. « Թուայ մը մէջ գտնուած միութիւններն, « բուն չափ ուրիշ թիւ մը առնելով երրորդ թիւ « մը յառաջ բերելու գործողութեանը կըսուի Բազ- « մապատկոյթիւն » :

Այն թիւը՝ որ ուրիշ թուայ մը միութիւններուն չափ պիտի առնուի, կըսուի բազմապատկիչի :

Եւ այն թիւը՝ որոյ միութիւններուն չափ բազ- մապատկելին պիտի առնուի, կըսուի բազմապատկող :

Գործողութենէն ետքը գտնուածն ալ արտադ- րեալ կըսուի :

Բազմապատկելին և բազմապատկողը արտադրող ալ կըսուին, վասն զի արտադրեալը յառաջ կը բերեն :

56. Բազմապատկութիւնը յաւելման համառո- տութիւնն է, վասն զի բազմապատկելին՝ բազմա- պատկողին միութիւններուն չափ առնել ըսելը՝ բազմապատկելին բազմապատկողին միութիւններուն չափ գումարելի ընելով անոնց գումարը գտնու- ըսել է. օրինակ՝ 5 գիրք 7 տկան դրչն քանի՞ դրչ կընէ. յայտնի է որ հաս 5 հատ 7 դրչ իրարու վրայ պետի աւելցնենք, այսինքն .

$$\begin{array}{r}
 7 \\
 7 \\
 7 \\
 7 \\
 7 \\
 \hline
 35
 \end{array}$$

գտնուած գումարը, որ է 35 բազմապատկեան մէջ արտադրեալ կըսուի :

Ուստի բազմապատկութիւնը « հաւասար գումար- րելիներուն գումարը գտնուող գործողութիւնն է » :

Հաւասար գումարելիները թէ որ քիչ ըլլան, անոնց գումարը կամ արտադրեալը յաւելմամբ պի- տի կրնանք գտնուի. բայց երրորդ շատ ըլլան, ան տան յաւելմամբ շատ երկար և դրեթէ ամեն դիպուածներու մէջ անտանելի պիտի ըլլայ, ուստի համառօտ կերպ մը պէտք է, և այս է բազմապատ- կութեան կանոնը :

Արտադրողաց մէջէն արտադրեալին համասեռ- թիւը բազմապատկելի է և միւսը բազմապատկող . ինչպէս՝ վերի օրինակին մէջ 7 դրչն է բազմա- պատկելի, որ համասեռ է արտադրեալ 35 դրչին, և միւս 5 է բազմապատկող, որովհետեւ միայն զը- ցուց թէ 7 դրչը բանի՞ անգամ իրարու վրայ պիտի աւելնայ :

Եթէ առաջարկեալ խնդիրն ըլլայ . 1 դրչով 5 գիրք տանուելով, 7 դրչով քանի՞ գիրք կրնայ առ- նուիլ : Ան տան, որովհետեւ արտադրեալ 35 ը գրքի համարն է, ուստի 5 գիրքն է բազմապատ- կելի և 7 է բազմապատկող, 5 գիրքը 7 անգամ ի- րարու վրայ գումարուիլը ցուցնելուն համար :

Ա. Խնդրոյն գործողութիւնն յաւելմամբ

$$7+7+7+7+7=35$$

Բ. Խնդրոյն գործողութիւնն յաւելմամբ

$$5+5+5+5+5=35$$

Հոս յայտնի կը տեսնուի որ $7 \times 5 = 5 \times 7 = 35$ է այսինքն արտադրողներուն որն որ բազմապատկելի ընենք . արտադրեալը չի փոխուիլ, բայց խնդիրը պէտք է որ վերացեալ մտածենք :

Արտադրեալը արտադրողաց բազմապատկիչ կըս-

ուի : Վերի օրինակին մէջ 33 բազմապատիկ է 7ին
և 5ին :

ՃԶ. Տեսարիւն Ա. «Երկու արտադրողաց կար-
գը փոխելով արտադրեալը չի փոխուիր» :

Ինչպէս $7 \times 5 = 35$ և $5 \times 7 = 35$, այսինքն
 $7 \times 5 = 5 \times 7$

Վասն զի, 7 բազմապատկեալ 5 ըսել է 7 ը 5
անգամ՝ աւնուած այսինքն $7 \times 5 = 7 + 7 + 7 + 7 + 7$
և ուրիշ կողմանէ 7 բազմապատկեալ 5 ուրիշ բան
չէ, բայց եթէ 7 ին ամէն մէկ միութիւնները 5 ուլ
բազմապատկուած, ուստի 7 ը իր միութիւններուն
զատելով կունենամք $1 + 1 + 1 + 1 + 1 + 1 + 1$

ասանց ամէն մէկը 5 ուլ բազմապատկելով կըլլայ
 $5 + 5 + 5 + 5 + 5 + 5 + 5$

որ ըսել է 5 բազմապատկեալ 7, այսինքն, 5 ը 7
անգամ՝ աւնուած և ուստի

$7 + 7 + 7 + 7 + 7 = 5 + 5 + 5 + 5 + 5 + 5 + 5$ այսինքն
 $7 \times 5 = 5 \times 7$ է :

Ասի ուրիշ կերպով մ'ալ կրնանք հաստատել.
 7×5 ըսել է 7 ը 5 անգամ՝ իրարու վրայ գումար-
ուած, և թէ որ 5 հաս 7 ալ իր միութիւններուն
զատենք կունենանք հետեւեալ աղիւստիլը որ 5 տու-

- 7 = $1 + 1 + 1 + 1 + 1 + 1 + 1$ զէ բաղկացեալ է, իւ-
- 7 = $1 + 1 + 1 + 1 + 1 + 1 + 1$ բարանչիւր տողին մէջ
- 7 = $1 + 1 + 1 + 1 + 1 + 1 + 1$ 7 միութիւն ըլլալով,
- 7 = $1 + 1 + 1 + 1 + 1 + 1 + 1$ միանգամայն 7 սի-
- 7 = $1 + 1 + 1 + 1 + 1 + 1 + 1$ նակէ բաղկացեալ է,

33 իւրարանչիւր սիւնակին մէջ 5 միութիւն ըլ-
լալով, ըսել է որ այս միւնոյն աղիւստիլը կը պարու-
նակէ 7×5 միութիւններ, և 5×7 միութիւններ,
այսինքն $7 \times 5 = 5 \times 7$, ինչպէս որ հաստատուելու էր

Տեսարիւն Բ*. «Շատ մը արտադրողներու ար-
տադրեալ անփոփոխ կը մնայ եթէ արտադրողաց
կարգը փոխենք» : Ինչպէս՝

$$\begin{matrix} \text{Ա} & & \text{Բ} & & \text{Գ} & & \text{Դ} \\ 7 \times 5 \times 2 = & 2 \times 7 \times 5 = & 5 \times 2 \times 7 = & 5 \times 7 \times 2 = \end{matrix}$$

$$\begin{matrix} & & \text{Ե} & & \text{Զ} \\ & & 7 \times 2 \times 5 = & 2 \times 5 \times 7 \end{matrix}$$

վասն զի, 7×5 ը իրրև մէկ թիւ համարելով կըր-
նանք սուտջ ետքը դնել, որով կըլլայ Բ. ը, նոյն-
պէս Բ. ին մէջ 2×7 մէկ թիւ համարելով և 5 էն
ետքը դնելով կունենանք Գ. ը, և նոյնպէս Ա. ին
մէջի 7×5 ին մէջ փոփոխութիւն ընելով կըլլայ Դ.
ը, և Բ. ին ու Գ. ին սուջի երկու թիւերուն մէջ
փոփոխութիւն ընելով կըլլայ Ե. և Զ:

Տեսարիւն Գ. «Թուոյ մը ուրիշ թուով մը ար-
տադրեալը, նոյն թուոյն արտադրողներովը բազմա-
պատկութենէն ելած արտադրեալին հաւասար է» :

$$5 \times 6 = 5 \times 2 \times 3 = 30$$

վասն զի $5 \times 6 = 5 + 5 + 5 + 5 + 5 + 5 = 30$
և $5 \times 2 \times 3 = 5 + 5, + 5 + 5, + 5 + 5 = 30$
որ երկուքն ալ միւնոյն բանը ըսել են, ինչպէս որ
հաստատուելու էր .

$$նմանապէս 5 \times 20 = 5 \times 2 \times 10 = 100$$

Տեսարիւն Դ. «Արտադրողաց մէկը 1 եղած ա-
տեն, արտադրեալը միւս արտադրողին հաւասար
կըլլայ, և արտադրողաց մէկը զրո եղած ատեն,
արտադրեալն ալ զրո կըլլայ» : Այսինքն,
 1×5 կամ $5 \times 1 = 5$ և 0×5 կամ $5 \times 0 = 0$
վասն զի, արտադրողաց մէկուն միութիւններուն
չափ աւնելով միւս արտադրողը կը գտնուի արտա-
դրեալը, արդ արտադրողաց մէկը 1 եղած ատեն՝

միւս արտադրողը կամ 1 անգամ պիտի առնուի , կամ միւս արտադրողին միութիւններուն չափ 1 պիտի առնուի , որ ըսել է արտադրեալը հաւասար պիտի ըլլայ միւս արտադրողին : Նմանապէս արտադրողաց մէկը զրօ եղած ատեն , միւս արտադրողին միութիւններուն չափ զրօ պիտի առնուի , կամ միւս արտադրողը չի պիտի առնուի , որ ըսել է արտադրեալը զրօ պիտի ըլլայ : Ինչպէս որ հաստատուելու էր :

58. Կանոնը բազմապատկութեան :

Ա. Արտադրողները միարուանքով : « Մէկուն մէջ գտնուած միութիւններուն չափ միւս թիւը իրարու վրայ աւելցնելով կը գտնուի ստոնց արտադրեալը » բայց այս երկար գործողութիւն մ'ըլլալով պէտք է միաթուանչան թուոց արտադրեալը մտքերնիս սրահած ըլլանք սերտելով հետեւեալ ազխասակին մէջէն , որպէս հնարողը Պիթագորաս փիլիսոփան ըլլալով իր անուամբը Պիւրագորեան աղիւսակ կըսուի . որ կը շինուի այսպէս :

Նախ՝ պէտք է տղի մը մէջ դրել 1 էն մինչև 9 միւսոր թիւերը , ետքը՝ ասոնք իրենց վրայ աւելցնելով դրել իրենց տակը , որ կըլլայ Բ. տող մը , և կը ստորունակի առջիններուն 2 անգամը , ասոնք ալ իրենց վրայիններուն վրայ աւելցնելով կըլլայ Գ. տող մը , որ կը ստորունակի առջիններուն 3 անգամ մը , ասանկ շարունակել մինչև Թ. տողը , որ առաջին տողին մէջ գրուածներուն 9 անգամը կը ստորունակի :

ԱՂԻԻՍԱԿ ՊԻԻԹԱԳՈՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9
2	4	6	8	10	12	14	16	18
3	6	9	12	15	18	21	24	27
4	8	12	16	20	24	28	32	36
5	10	15	20	25	30	35	40	45
6	12	18	24	30	36	42	48	54
7	14	21	28	35	42	49	56	63
8	16	24	32	40	48	56	64	72
9	18	27	36	45	54	63	72	81

Այս աղիւսակս ինը տող և ինն ալ գաւազան ունի , և շինուելու կերպէն կը հասկցուի , որ բոլոր միաթուանչան թուոց արտադրեալը կը ստորունակի :

Արտադրողաց մէկը Ա. տողին մէջ գտնալու է , միւսը ճախ կողմի Ա. գաւազանին մէջ , մէկ արտադրողին տակովը և միւսին ուղղութեամբը դրուած է արտադրեալը : Ինչպէս՝ 5 անգամ 7 ին արտադրեալը կը գտնամք 5 երորդ տողին մէջ 7 ին տակը , որ է 35 :

Ի Ն Գ Ի Բ Բ

ևր քանի՞ քոչուսն է : 2 հեղ 1 քանի՞ կընէ : Պ. 2 :

122 . 3 Տրայ քանի՞ գիրք ունին , երբ ամեն մէկը 2 սահանջ գիրք ունենայ , 3 հեղ 2 քանի՞ կընէ : Պ . 6 .

123 . 4 հեղ 3 սահանջ տանձ ուտելով , ամենը քանի՞ տանձ կերտած կըլլան : 4 հեղ 3 քանի՞ կընէ : Պ . 12 :

124 . 7 գիրք ունիս , ամեն մէկուն մէջ 5 սահանջ սրտակեր կայ . ամենը քանի՞ սրտակեր կընէ : 7 հեղ 5 քանի՞ կընէ : Պ . 35 :

125 . Պետրոսը այսօր 8 անգամ խնդաց . և ամեն մէկ անգամին վարսետը 4 յանդիսանութիւն շրտաւ . Պետրոսը ընդ ամենը քանի՞ յանդիսանութիւն շտեց : 8 հեղ 4 քանի՞ կընէ : Պ . 32 :

126 . Տիրանը այս շաբաթ 6 անգամ սրտեղև առաւ վարսետէն 9 սահանջ շաբաթ . ամենը քանի՞ շաբաթ առաւ : 6 հեղ 9 քանի՞ կընէ : Պ . 54 :

127 . Միհրանը օրը 5 ժամ կաշխատի , մէկ շաբաթուան , այսինքն 6 օրուան մէջ քանի՞ ժամ կաշխատի : 5 հեղ 6 քանի՞ կընէ : Պ . 30 :

128 . Կուսն 8 ժամ ունիւք , ամեն մէկուն վրայ 7 կուտ կայ . ամենը քանի՞ կուտ է : 8 հեղ 7 քանի՞ կընէ : Պ . 56 :

129 . Տրայ մը 7 վահուսկ ունէր , և ամեն մէկուն մէջ 9 սահանջ քոչուսն կար . ո՞րչափ քոչուսն ունէր : 7 հեղ 9 քանի՞ կընէ : Պ . 63 :

130 . Երուսանդը 9 հեղ առաւտուր շրտաւ , և իրաւ քանիչարէն 9 սահանջ որչ վաստկեցաւ . ընդ ամենը քանի՞ դարուչ վաստկեցաւ : 9 հեղ 9 քանի՞ կընէ : Պ . 81 ,

Բ . Բազմարուանչան բիւ մը միարուանչանով շաղ-

մատարակը : « Պէտք է միաթուանչան թիւը բազմաթուանչանին տակը կամ քովը գրել , և բազմաթուանչանին տը կողմէն կամ միաւորէն սխեալ ամէն մէկ կարգը ետեւէ ետեւ բազմաթուանչան միաթուանչանով . միշտ արտադրեալին միաւորները գրել , և տասնաւորներն ալ (թէ սր կայ) յաջորդ արտադրեալին վրայ աւելցնել և վերջի արտադրեալն ամբողջ գրել » :

Օրինակ՝ 2569 ը բազմաթուանչան 7 ուլ :

Այլ գրեմ՝ 7 բազմաթուանչան 2569 բազմաթուանչանին տակը կամ քովը

$$\begin{array}{r} 2569 \\ \times 7 \\ \hline 17983 \end{array}$$

Եւ կտեսնես նախ 7 բազմաթուանչանով բազմաթուանչանին 9 միաւորը բազմաթուանչան . ըսելով 7 անգամ 9՝ 63 , կը գրեմ 3 միաւորը և 6 տասնաւորը միտքս կը պահեմ (ձեռք կայ 6 ըսելով) , ետքը 7 բազմաթուանչանով բազմաթուանչանին 6 տասնաւորը կը բազմաթուանչան , ըսելով 7 անգամ 6՝ 42՝ 6 ալ (կամ 6 ձեռք ալ) 48 , կը գրեմ 8 և կըսեմ՝ ձեռք կայ 4 , նոյնպէս կըսեմ՝ 7 անգամ 3՝ 33՝ 4 ալ 39 , կը գրեմ 9 և կըսեմ՝ ձեռք կայ 3 , դարձեալ կըսեմ՝ 7 անգամ 2՝ 14՝ 3 ալ 17 . ստի վերջի արտադրեալն ըլլալով կը գրեմ ամբողջ 17 , սրով կըլլայ ամբողջ արտադրեալնիս 17983 :

Ստորոգյց . - Կանոնը ճիշտ սահմանին համեմատ է , վասն զի բազմաթուանչանին մէջի միաթիւններու չափ առինք բազմաթուանչանին , այսինքն 7 հատ 2569 առինք ամէն մէկ կարգը 7 ուլ բազմաթուանչանով (33 . Բ) :

131 . Մէկ կանգուն կերպասը 9 զրշ է, 2516 կանգունը քանի՞ զրշ կրնէ : Պ . 22644 զրշ :

132 . Գործատու մը առնալ 578 զրշ կը վստակէր . 9 տնտեսան մէջ ո՞րչափ կը վստակի : Պ . 5202 :

133 . Մարդ մը կտակ ըրաւ որ խը տղոց ամեն մէկը 25676 զրշ ընդունի , աղջկանց ամեն մէկը 22375 զրշ . իր եղբորդոց ամեն մէկը 18597 զրշ . իր քեւորդոց ամեն մէկը 15684 զրշ . 8 տղայ ունէր . 5 աղջիկ . 6 եղբորդոցի և 4 քեւորդոցի . Մարդուն ժառանգութիւնը ո՞րչափ էր : Պ . 491604 :

134 . Գործատու մը օրը 12 կանգուն գործ կը քանի , որոյ ամեն մէկ կանգունը կարժէ 8 ֆրանք : Մէկ շաբաթուան , այսինքն 6 օրուան մէջ ո՞րչափ կը վստակի : Պ . 576 ֆրանք :

135 . Բրնճական ըստը մէկ վայրկեան մէջ 4210980 փարսախս հետաւորութիւն կերրայ . 8 վայրկեանի մէջ ո՞րչափ կերրայ : Պ . 33687840 փարսախս :

136 . Իրկու տարեանը միևնոյն ժամանակի մէջ Փարիզէն կը մեկնին Պորտօ կրթալու համար . մէկը մէկ ժամու մէջ 11 հազարամկեր և միւս 8 հազարամկեր կերրայ . 15 ժամու մէջ իրարմէ ունեցած հետաւորութիւնին ո՞րչափ կըրրայ : Պ . 45 հզարեր :

137 . Մէկը տարին 15678 զրշ վստակ , 12324 զրտը ճախք ունէր , 5 տարիէն ետքը ո՞րչափ ստակ աւելցուցած է : Պ . 16770 զրշ :

138 . Մէկը տարին 25690 զրշ կը շահէր , 9 տարուան մէջ ո՞րչափ շահեցաւ : Պ . 231210 զրշ :

139 . Մէկ ժամը 3600 երկվայրկեան է , 8 ժամը քանի՞ երկվայրկեան կրնէ : Պ . 28800 :

140 . Հետեւեալ բազմապատկութիւնները կտարնուու է :

36425375 × 6 ,

425367 × 5 ,

45324756 × 8 ,

425789 × 7 ,

Գ . Թիւ մը հասարակաց միտրեամբ բազմապատկել . - « Պէտք է հաւարածոյ միութեան գրօները նոյն թուոյն աջ կողմը գրել » . (28) :

56 × 10 = 560 , 645 × 100 = 64500 , 37 × 1000 = 37 000 , 925 × 10 000 = 9 250 000

Վ . ամեն զի 1 ով բազմապատկելով թիւ մը . արտադրեալը նոյն թուոյն հաստար կըլլայ , և հետեւապէս 10 ով , 100 ով , 1000 ով և այլն , բազմապատկելու համար ալ բազմապատկելին աջ կողմը միայն բազմապատկողին գրօները դնելու է :

Դ . Թիւ մը բուանշանի մը տակէն գրօներ ունեցող բազմապատկել . - « Պէտք է բազմապատկելին միայն թուանշանով բազմապատկել և գրօները աջ կողմը դնել , երան է արտադրեալը » : Ինչպէս՝

564	716	616
400	50	7000
225600	35800	4312000

Այսպէս . - Վ . ամեն զի , թուանշանէ մը ետքը գրօներ ունեցող թիւերը , թուանշան մը հաւարածոյ միութեամբ բազմապատկուած թիւեր են , ուստի նախ թուանշանով և ետքը հաւարածոյ միութեամբ բազմապատկելու է , որ գրօները արտադրեալին աջ կողմը դնելով կըլլայ , (57 . Գ տեսու թիւն 28) :

Խ Ն Դ Ի Ր Գ :

141 : Հետևեալ թագնապատկերիւնները կատարե-
լու է ,

$$457 \times 100 , \quad 3237 \times 1000 : \quad 47678 \times 10000 : \\ 168354 \times 100000 :$$

142 . 256 յանը քանի՞ երկխայրկեան կընէ :
Պ . 921600 :

143 . 3548 քէսէն քանի՞ որը կընէ :
Պ . 1774000 ,

144 . 27816 որը քանի՞ յարայ կընէ :
Պ , 4112640 :

145 . 345 ամիսը քանի՞ օր կընէ : Պ . 10350 :

146 . 645 րեալը քանի՞ որը կընէ :
Պ . 64,500-000 :

147 . 375 կանգուն շինուած քրը քանի՞ որը կընէ ,
կանգունը 500 որընէ : Պ . 187500 .

148 . 345 խանրար շաքարը քանի՞ կընէ , խան-
րարը 300 էն : Պ : 103500 :

149 . 34 քիչոկրամը քանի՞ կրամ կընէ :

150 . 756 քիչովերը քանի՞ մերը կընէ :

Ե . Արտադրողներուն երկուքն ալ թագնապատկերն
ընելով թագնապատկերիւնն տակը գրելէն թագ-
նապատկերիւնն ամէն մէկ կարգով կամ իւրաքանչիւր
թուանշանով թագնապատկերիւնն թագնապատկել , նախ
միաւորով , ետքը տասնաւորով , և ետքը հարիւրա-
ւորով կայն , իւրաքանչիւր կարգի արտադրեալ
զատ տողի մէջ գրելով , որոնք կըլլան մէյմէկ մաս-
նաւոր արտադրեալներ , և ասոնց գումարը կըլլայ
ընդհանուր արտադրեալ , և միշտ գիտել որ մաս-

նաւոր արտադրեալներուն առաջին թուանշանները
թագնապատկերիւնն իր կարգին տակովը կամ իր կար-
գին համեմատ տեղը գրուի » :

Օրինակ՝ 6789 թիւը 375 ով թագնապատկերու-
համար , կը գրեմ՝ 375ը 6789 ին տակը և կը քու-
շեմ գիծ մը

6789	թագնապատկերի
375	թագնապատկոյ
<hr/>	
33945	Ա. մասնաւոր արտադրեալ
47523	Բ. » »
20367	Գ. » »
<hr/>	
2543875	ընդհանուր արտադրեալ

եալը աջ կողմէն սիւսեալ , նախ՝ թագնապատկերիւնն
3 միաւորով կը թագնապատկեմ թագնապատկերիւնն ,
որով կուենեամ՝ Ա. մասնաւոր արտադրեալ 33945 ,
եալը 7 տասնաւորով կը թագնապատկեմ թագնա-
պատկերիւնն , որիէ ալ կուենեամ՝ Բ. մասնաւոր ար-
տադրեալ 47523 տասնաւոր , ասոր առաջին թուա-
նշանը որ է 3 , թագնապատկերիւնն 7 տասնաւորին կամ
Ա. մասնաւոր արտադրեալին տասնաւորին տակը
կը գրեմ , նոյնպէս թագնապատկերիւնն 3 հարիւրաւո-
րով կը թագնապատկեմ թագնապատկերիւնն , և կու-
նենեամ՝ Գ. մասնաւոր արտադրեալ 20367 հարիւ-
րաւոր , որոյ առաջին 7 թուանշանը մասնաւոր ար-
տադրեալի հարիւրաւորներուն տակը կը գրեմ , և
կը գումարեմ մասնաւոր արտադրեալները և կու-
նենեամ ընդհանուր արտադրեալ 2 543 875 : Եթէ
թագնապատկերիւնն մէջ դրօնքը ըլլան , միշտ նշանա-
կան թուանշանով թագնապատկերու է և նոյնը է
որ թագնապատկերիւնն միաւորին արտադրեալները
թագնապատկերիւնն կարգերուն տակը կամ անոնց

յարմար տեղը դրուին : Ինչպէս՝

23456
6005

117280
140736

140853280

տար ստաշին քուսնչանք հազարատրի արտադրեալ ըրարուև հազարատրաց տա-
կը գրուած է :

Թէ բազմապատկելին և թէ բազմապատկողը եթէ աջ կողմերնին զրօներ ունենան , միայն նշանական թուանշաններուն վրայ ընկելով զործողութիւնը , զրօներն արտադրեալին աջ կողմն սանելու է » : Օրինակ՝

359 000
450 000

1795
1436

161 550 000 000

Բազմապատկելին և բազմապատկողին աջ կողմն եթէ զրօ գտնուելուն , արտադրեալին աջ կողմն ալ եթէ զրօ դրինք :

Սյրացոյց . - Բազմապատկողին ամէն մէկ կարգով բազմապատկելին բազմապատկելով և անոնց գումարն սանելով ամբողջ բազմապատկողով բազմապատկելին բազմապատկուած կըլլայ . (83 . Բ) : Եւ խրաբանչիւր մասնաւոր արտադրեալ իրենց կարգին համեմատ տեղ գրուած ըլլալուն պատճառն ալ յայտնի է , տասնաւորի արտադրեալը տասնաւորաց տակէն սկսեալ կը գրուի , հարիւրաւորի արտադրեալը հարիւրաւորաց տակէն սկսեալ կը գրուի և այլն :

Բազմապատկելին և բազմապատկողին աջ կողմն զրօները արտադրեալին աջ կողմը կը գրուին , վտան դի , ինչպէս վերի օրինակին մէջ տեսանք 359 000 ը 450 000 տլ բազմապատկած ստեննիս , կրնանք համարել $450000 = 45 \times 10000$ և $359000 = 359 \times 1000$, ուստի $359000 \times 450000 = 359 \times 45 \times 10000 \times 1000$ և ուստի $359 \times 45 \times 10\ 000\ 000 = 161\ 550\ 000\ 000$ (57 տեսութիւն Գ .) :

Բազմապատկողին որ և իցէ մէկ կարգէն կրնանք սխիլ բազմապատկելին բազմապատկել , ըսոյց միշտ զիտեղու է որ բազմապատկողին ինչ և իցէ մէկ կարգի թուանշանով բազմապատկելին միաւորին արտադրեալը բազմապատկողին կարգին համեմատ տեղը գրուի : Ինչպէս վերի օրինակը

6789
375

47523
33945
20367

2545875

որովհետև գումարելիներուն շարքը փոխելով գումարն անփոփոխ կը մնայ (40) :

Սյուստ ամենայնիւ սովորութիւն է կանոնին համեմատ միշտ բազմապատկողին միաւորէն սկսեալ բազմապատկել բազմապատկելին :

Խ Ն Գ Ի Բ Բ

151 . Հետևեալ բազմապատկարիւնները կատարելու է ,

27316×42 : 125375×264 : 387469×5789 :
 3148769×18725 : 581400×4120 : 7805×67000 ,

152. Այլուսի դէզ մը կայ, որուն շանքին մէջ
դրուած է 75, Երկայնութեան մէջ դրուած է 145, և
բարձրութեան մէջ 216: Ա՞րչափ ևն բարձր աղիւսները:
Պ. 2349000:

153. Գործարարի մը աւարչէքն է 47 որը . 125
օրականը քանի՞ որը կընէ, Պ. 5875 որը:

154: Աշխատատար մը տարին կը վստակէր 12500
որը . և օրը Տախք կընէր ընդ ամենը իրարու վրայ
21 որը . տարին 335 օր հաշուելով . քանի՞ որը կրնայ
աւելցնել: Պ. 4835 որը:

155. 15 Տրար չուխա անիւքը խրաքանչիւր Տր-
րարը 75 մերրօ է, և խրաքանչիւր մերրօն 25 ֆը-
րանք է, և մէկ ֆրանքը 6 որչէն հաշուելով, ընդ
ամենը քանի՞ որը կընէ: Պ. 468750 որը:

156. Մէկը 21 Տրար չուխա առաւ խրաքանչի-
ւրը 85 մերրօ . մերրօն 18 ֆրանքէն և ֆրանքը 6
որչէն: Ծախսեց ամէնքն 'ի միասին 1500 ոսկոյ . մէկ
ոսկին 23 ֆրանք հաշուելով, քանի՞ որը վստակեցաւ:
Պ. 44220 որը:

157. Վիենի վաճառական մը 156 տակառ գինի
առաւ, տակառը 125 հօխա . խրաքանչիւրին հաւար
վճարեց 640 որը . հարը Տախսեց հօխան 6 որը: Քանի՞
որը վստակեցաւ: Պ. 47460:

158, Քարդու մը հարցունցաւ թէ տարեկան Լիւ-
մուտը ո՞րչափ է, պատասխանեց թէ որ 1700 որը ա-
ւելի Լիւմուտ ունենայի, ամիսը 975 որը Տախք կըր-
նայի ընել: Ա՞րչափ է Լիւմուտը: Պ. 10000 որը:

159. Մէկը 364 մերր կերպաս առաւ: մերրը 8
ֆրանքի . և 25 Տրար չուխա, Տրարը 125 մերր . և
մերրը 15 ֆրանքէն . և 48 Տրար քաղվիր: Տրարը
85 մերր . և մերրը 25 ֆրանք, և ֆրանքը 5 որչէն .

անոնց գինը վճարելէն հարը մարդուն քովը 56725
որը մնաց: Առաջ քանի որը ունէր:
Պ. 815660 որը:

160. Վաճառական մը Տախսեց 45 տակառ շաքար
խրաքանչիւրը 167 փիօխալ, փիօկրանը 2 ֆրանքէն
և ֆրանքը 5 որչէն . տեղը առաւ 555 Տրար ամելիքա
[Տրարը 4 մէճխտիլէն և մէկ մէճխտիլէն 23 որչէն:
Ա՞րչափ ունելիքը մնաց: Պ. 24090:

59*. Տեսարիւն Ե. - « Բազմապատկողին ինչ
և իցէ կարգի մը մէկ միութեամբ բազմապատկե-
լիին արտադրեալը՝ անիչ սղտի կարգերու թիւերո-
վը նոյն բազմապատկելիին մասնաւոր արտադրելոց
գումարէն մեծ է: Վասն զի, բազմապատկողին
ինչ և իցէ մէկ կարգին միութեամբ անիչ սղտի կար-
գերու թուոց (թէև ամենքն ալ 9 եր ըլլան) գու-
մարէն դոնէ մէկ աւելի ըլլալով (27), բազմապատ-
կողին նոյն կարգի միութեամբ արտադրեալն ալ իր-
մէ անմիջապէս վտրբ եղած կարգերուն թուով ար-
տադրեալէն մեծ է: Ինչպէս որ հաստատելու էր:
Այս տեսութենէն կը հետեի,

1°. Թիւ մը բազմաթուանշան թուով մը բազմա-
պատկելու առեն ետեւէ ետև շինուած մասնաւոր
արտադրելոց ամէն մէկը նախնիթայ մասնաւոր ար-
տադրելոց գումարէն մեծ է:

2°. Թուոց մը բազմաթուանշան թուով մը ար-
տադրեալը կը սղտունակէ, բազմապատկողին մե-
ծագոյն կարգի թուովը բազմապատկելիին արտա-
դրեալը և բազմապատկողին մեծագոյն կարգի մէկ
միութեամբ բազմապատկելիին արտադրեալէն սղտի
թիւ մը:

Տեսարիւն 2*. « Երկու արտադրողներու արտադրեալը կամ արտադրողներուն մէջ գտնուած թււանշաններուն համրանքէն մէկ պակաս թուանշան կունենայ, և կամ անոնց թուանշաններուն չափ » : Վասն զի ,

1°. Երկու արտադրողներու արտադրեալ ան առտէն կըլլայ ամենափոքր, երբ արտադրողներն ըլլան 1 ին ետեւէն գրօներով գրուած թիւեր, որոց արտադրեալը պիտի ըլլայ հարկաւ 1 մը ետեւէն արտադրողներուն գրօներուն չափի դրօ ունեցող թիւ մը (58 . Գ.) . ուրեմն պիտի ստանանակէ արտադրողներուն մէջ գտնուած թուանշաններէն մէկ պակաս թուանշան :

2°. Երկու թուոց արտադրեալը ամենամեծ կըլլայ, երբ արտադրողներուն թուանշաններն ըլլան 9 եր, որոց արտադրեալը փոքր է տակաւին երբ միայն բազմապատկողը 1 ին ետեւէն արտադրողաց մէկուն թուանշաններուն չափի դրօներ ունեցող թիւ մը ըլլայ, արդ այս վերջնոյն արտադրեալը պիտի ստանանակէ արտադրողաց թուանշաններուն չափի թուանշան, ուստի աւելի մեծ իրաւամբ երկու թուոց արտադրեալը առ առաւելն իրենց թուանշաններուն չափի թուանշան կը ստանանակէ :

Տեսարիւն 3*. « Ընդհանրապէս շատ մը արտադրողաց արտադրեալը կը ստանանակէ առ նուազն արտադրողներուն թուանշաններուն համրանքէն, արտադրողաց թիւէն 1 պակասի չափի պակաս թււանշան, և առ առաւելն արտադրողաց թուանշաններուն չափի : Այսինքն, հինգ . վեց, չորս թուանշաններ ունեցող արտադրողաց արտադրեալը կը ստանանակէ առնուազն $5+6+4 = (3 - 1) = 15$

— 2 = 13 թուանշան . և առ առաւելն $5+6+4 = 15$ թուանշան » : Վասն զի ,

1°. Շատ մը արտադրողաց արտադրեալ ան առտէն ամենափոքր կըլլայ կամ ամենաբիչ թուանշան կը ստանանակէ . երբ արտադրողները 1 ին ետեւէն գրօներով գրուած թիւեր ըլլան, որոց արտադրեալը պիտի ըլլայ 1 մը և ետեւէն արտադրողներուն մէջ գտնուած, գրօներուն չափի դրօ ունեցող թիւ մը (58 . Գ.) որոց թուանշաններուն համրանքն է արտադրողաց թիւէն մէկ պակասի չափի պակաս :

2°. Շատ մը արտադրողաց արտադրեալ ան առտէն ամենամեծ կըլլայ, երբ արտադրողաց թուանշաններն ըլլան 9 եր, որոց արտադրեալը փոքր է տակաւին երբ արտադրողաց մէկուն թուանշանները 9 եր մնալով միւս արտադրողները 1 ին ետեւէն իրենց թուանշաններուն չափի դրօ ունեցող թիւեր ըլլան, որոց արտադրեալը առաջինէն մեծ ըլլալով հանդերձ պիտի ստանանակէ արտադրողներուն թւուանշաններուն չափի թուանշան :

Տեսարիւն 4. « Բանի մը թուոց գումարը թրււով մը բազմապատկելու համար, բաւական է որ գումարելիները զատ զատ բազմապատկուի » : Վասն զի ,

Թիւ մը բազմապատկելը, նոյն թուոցն ամէն մէկ միութիւնները զատ զատ բազմապատկողով բազմապատկել կը նշանակէ, ուստի ամէն առտէն բազմապատկելի թիւերը կրնան համարուիլ նոյն թուոցն չափի գումարելի 1 երու գումարներ . կամ որ նոյն է քանի մը գումարելիներու գումարներ . արդ գումարն կամ գումարելիները բազմապատկելը մի և նոյն արդիւնքը կունենայ : Ինչպէս՝

$$(3+4+9) 2 = 3 \times 2 + 4 \times 2 + 9 \times 2 = 6 + 8 + 18 = 16 \times 2 = 32$$

կամ $(8-3+4) 5 = 8 \times 5 - 3 \times 5 + 4 \times 5 = 40 - 15 + 20 = 9 \times 5 = 45$

Ուստի անդրադարձաբար « շատ մը թիւեր միւս նոյն բազմապատկելով բազմապատկելու տեղ կրնայ անոնց գումարը նոյն բազմապատկելով բազմապատկուիլ » : Ինչպէս՝

$$8 \times 5 + 7 \times 5 + 12 \times 5 = (8+7+12) 5 = 40 + 35 + 60 = 27 \times 5 = 135$$

Տեսարիւն Թ* . « Ղրական թիւ մը զրական թիւով մը բազմապատկելով արտադրեալը կըլլայ զրական , բացասական թիւ մը զրական թիւով մը բազմապատկելով արտադրեալը կըլլայ բացասական . զրական թիւ մը բացասական թիւով մը բազմապատկելով արտադրեալը կըլլայ բացասական . բացասական թիւ մը բացասական թիւով մը բազմապատկելով արտադրեալը կըլլայ զրական » : Վասն զի՝

Ղրական թիւով ուրիշ թիւ մը բազմապատկելով . բազմապատկողին միութիւններուն չափ բազմապատկելին առնելով գումարել կը նշանակէ , ուստի՝

$$+ 5 \times + 4 = + 20 \text{ և } - 5 \times + 4 = - 20$$

նմանապէս բացասական թիւով ուրիշ թիւ մը բազմապատկելը , բազմապատկողին միութիւններուն չափ բազմապատկելին գումարելով՝ գումարը ուրիշ թիւէ մը բարձուսն ընել կը նշանակէ , և որովհետեւ բարձուն մէջ բառնալի քանակութեան նշանը միութեւ պետք է + ը - ի և - ը + ի (54) , ուստի՝

$$+ 5 \times - 4 = - 20 \text{ և } - 5 \times - 4 = + 20 . \text{ և}$$

ուստի՝

$$+ \times + = + , - \times + = - , + \times - = - , - \times - = +$$

Հետևութիւն . Ը . և Թ . տեսութիւններէն կը հետևի որ՝ իրարու քով դրուած շատ մը զրական և բացասական թիւեր ուրիշ զրական և բացասական թիւերով բազմապատկելու համար բազմապատկողին ամէն մէկ թիւերով բազմապատկելիին իւրաքանչիւր թիւերը զատ զատ բազմապատկելու է նշանայ կանոնին համեմատ , և զանոնք իրենց նշաններովը իրարու քով գրելու և ետքը ամփոփելու է (54) : Ինչպէս՝

$$\left. \begin{array}{r} 9 + 7 - 4 \\ 8 - 5 \end{array} \right\} = 36$$

$$8 \times 9 + 8 \times 7 - 8 \times 4 - 5 \times 9 - 5 \times 7 + 5 \times 4 = 72 + 56 - 32 - 45 - 35 + 20 = 148 - 112 = 36$$

60 . Բազմապատկութեան մէջ երբոր արտադրողներն իրարու հաւասար ըլլան , գործողութիւնը ինքնապատկարիւն և արդիւնքը ինքնապատկուող կամ կարգարիւն և հաւասար արտադրողն ալ արմատ կամ ինքնապատկելի կըսուի : Ինչպէս՝

$$5 \times 5 = 25 , \text{ կըսուի թէ } 5 \text{ ին երկրորդ կարգարիւնը կամ երկրորդ աստիճանի ինքնապատկուողը } 25 \text{ է :}$$

$$5 \times 5 \times 5 = 125 , \text{ կըսուի թէ } 5 \text{ ին երրորդ կարգարիւնը կամ երրորդ աստիճանի ինքնապատկուողը } 125 \text{ է :}$$

$$5 \times 5 \times 5 \times 5 = 625 , \text{ կըսուի թէ } 5 \text{ ին չորրորդ կարգարիւնը կամ չորրորդ աստիճանի ինքնապատկուողը } 625 \text{ է . և այլն :}$$

Երկրորդ կարողութեան նաև կըսուի քառապատկ

և երրորդ կարողութեան՝ խորանարդ : Վերոյգրեալ օրինակներուն մէջ 5 ին քառակուսին է 25 և խորանարդը 125 : Նոյն օրինակներուն մէջ 5 է արմատ կամ ինքնապատկիցի :

61. Թիւ մը այս ինչ աստիճանի ինքնապատկելի բնույթը ցըցունելու համար, նոյն թիւը փոխանակ իրարու քով բազմապատկութեան նշաններով շատ անգամ գրելու, միայն մէկ անգամ գրելու և իր աջ կողմը քիչ մը վերով սլզտի թուանշանով կարողութիւն աստիճանը գնելու է, այս սլզտի թուանշանին կըսուի ցուցիչ կամ վերածող, ինչպէս՝ $7 \times 7 = 7^2$ կը կարգացուի 7 ը երկու, որ բսել է 7 ին քառակուսին կամ երկրորդ կարողութիւնը : $7 \times 7 \times 7 = 7^3$ կը կարգացուի 7 ը երեք, որ բսել է 7 ին խորանարդը կամ երրորդ կարողութիւնը : $7 \times 7 \times 7 \times 7 = 7^4$ կը կարգացուի 7 ը չորս, որ բսել է 7 ին չորրորդ կարողութիւնը :

2, 3, 4 թիւերը ցուցիչ կամ վերածող կըսուին : Թուոյ մը այս ինչերրորդ արմատը երբ նշանակել ուզուի, կը գործածուի հետեւեալ նշանը $\sqrt{\quad}$, որ կըսուի արմատական նշան :

$\sqrt{25} = 5$ կը կարգացուի 25 ին երկրորդ կամ քառակուսի արմատը հաւասար 5 :

$\sqrt[5]{64} = 4$ կը կարգացուի 64 ին երրորդ կամ խորանարդ արմատը հաւասար 4, այսինքն 4 ը երեք անգամ ինքիրմով բազմապատկելով 64 կըլայ :

$\sqrt[4]{256} = 4$ կը կարգացուի 256 ին չորրորդ արմատը հաւասար 4 : Արմատական նշանին բաց տեղին մէջ դրուած փոքր թիւերը կըսուին արմատա-

կան ցուցիչ կամ վերածող, որ կը ցուցնեն թէ արմատական նշանին տակը դրուած թուոյն բաներորդ արմատը սլտի գտնուի :

62. Փորձք Բազմապատկութեան :

Ա. « Բազմապատկելին բազմապատկող և բազմապատկողը բազմապատկելի ընելով եթէ միևնոյն արտադրեալն ունենանք, գործողութիւնը ուղիղ է » : Վասն զի, արտադրողոց կարգը փոխելով արտադրեալը չի փոխուիր (57), Օրինակ՝

	ՓՈՐՁ Ա.	ՓՈՐՁ Բ.
5845	375	4
375	5845	6
<hr/>	<hr/>	<hr/>
29225	1875	
40915	1500	
17535	3000	
<hr/>	<hr/>	
2191875	1875	
	<hr/>	
	2191875	

Բ. « Բազմապատկելին թուանշանները գումարելով 9 երբ դուրս ձգելու է մնացորդը գրելու է գըծին մէջտեղը, նմանապէս բազմապատկողին թուանշանները գումարելով և 9 երբ դուրս ձգելով մնացորդը գրելու է առջինին դիմացը. այս երկու մնացորդոց արտադրեալէն ալ 9 երբ դուրս ձգելով մնացորդը գրելու է նոյն գծին ծայրը, արտադրեալին թուանշաններուն գումարէն ալ 9 երբ դուրս ձգելով մնացորդը եթէ գծին ծայրի մնացորդին հաւասար ըլայ գործողութիւնը ուղիղ է » :

Այս փորձին Գով փորձ կըսուի Ըոր փոստահու-
թեան արժանի չէ և ապացոյցը ետքը պիտի տըր-
ուի :

Վերի օրինակին մէջ կըսեմ , նախ բազմա-
պատկելին առնելով , 5' 8 ալ 13' 9ը երնէ կը մը-
նայ 4' 4 ալ 8' 5 ալ 13' 9 երնէ կը մնայ 4 , կը
գրեմ 4 գծին մէջտեղը յիւան . ետքը բազմապատ-
կողն առնելով 3' 7 ալ 10' 9ը երնէ կը մնայ 1' 5
ալ 6 , կը գրեմ 6ը գծին մէջտեղը առջինին ղի-
մայը և կը բազմապատկեմ անով , $4 \times 6 = 24$ 9 երը
երնէ կը մնայ 6' կը գրեմ 6ը գծին վերի ծայրը ,
և ետքը արտագրեալն առնելով ' 2' 1 ալ 3' (9երը
չեմ առներ) 1 ալ 4' 8 ալ 12' 9ը երնէ կը մնայ 3'
7 ալ 10' 9ը երնէ կը մնայ 1' 5 ալ 6 , կը գրեմ
6ը գծին վարի ծայրը և կը տեսնամ որ միւս մնա-
ցորդին հաւասար է , ուրեմն գործողութիւնը ուղիղ
է :

63. Համառօտ կանոնք բազմապատկութեան :

Ա. « Եթէ բազմապատկողին մէջ անանկ երկու
թուանչան գտնուի իրարու քով , որ երկուքը մէկ
տեղ առնուած նոյն բազմապատկողին մէջ գտնուած
ուրիշ թուանչանի մը ճիշդ քանի մը անգամն են ,
ան ատեն գործողութիւնը քիչ մը կընայ ղիւրա-
նալ : Փոխանակ նոյն երկու թուանչանով զատ զատ
բազմապատկելին բազմապատկելու , միւս թուանչ-
անին արտագրեալը բազմապատկելու է անանկ
թուով մը , որով միւս թուանչանը բազմապատկե-
լով յիշեալ իրարու քով եղած երկու թուանչան-
ներով նշանակեալ թիւը յառաջ կը բերէ » :

Օրինակ .

2568	Հոս 357 բազմապատկողին մէջ	35 = 5
357	$\times 7$ է , ուստի նախ բազմապատկելին 7	
17976	ով կը բազմապատկենք և ետքը փոխա-	
89880	նակ 350 ին 5 տասնաւորով և 3 հարիւ-	
916776	բազմապատկելու , բազմապատկելին 7 ով արտա-	
	գրեալին , այսինքն , 17976 ին 5 անգամը կ'առնենք	
	և արտագրեալը , որ է 89880 , իրբև տասնաւոր	
	երկրորդ մասնաւոր արտագրեալ կը գրենք , վասն	
	ղի $7 \times 50 = 350$ է :	

Բ. « Թիւ մը 9 ով 99 ով 999 ով և այլն . այսոյն
9 երով գրուած թուով մը բազմապատկելու համար
բազմապատկելին աջ կողմը մէկ , երկու , երեք են .
զրօներ դնելով , բազմապատկելին մէջէն հանելու է » :

Ինչպէս՝

675×9999	1264×999
6750 000	1 264000
6749 325	1 262736

Վասն զի , զրօներ դնելով 1 անգամ աւելի բազմա-
պատկուած կըլլայ բազմապատկելին . ուստի մէկ
անգամը մէջէն հանելու է :

« Նմանապէս 8 ով , 98 ով , 998 ով և այլն . այս-
պէս վերջի թուանչանը 8 և միւս թուանչանները
9 եր եղած թուով մը ինչ և իցէ թիւ մը բազմա-
պատկելու համար , բազմապատկելին աջ կողմը
մէկ , երկու , երեք և այլն զրօներ դնելով բազմա-
պատկելին 2 անգամը մէջէն հանելու է » :

Ինչպէս՝

$$\begin{array}{r} 6756 \times 98 \\ 675600 \\ \hline 662088 \end{array}$$

$$\begin{array}{r} 1235 \times 998 \\ 1235000 \\ \hline 1232530 \end{array}$$

«Նմանապէս թիւ մը 7 ուլ, 97 ուլ, 996 ուլ, 9993 ուլ և այլն բաղմաստակելու համար բազմապատկելին աջ կողմը մէկ, երկու, երեք և այլն դրօններ դնելով բաղմաստակելին 3, 4, 5 և այլն անդամը հանելու է անկէ »:

$$\begin{array}{r} 456 \times 996 \\ 456000 \\ \hline 454176 \end{array}$$

$$\begin{array}{r} 6725 \times 95 \\ 672500 \\ \hline 638875 \end{array}$$

Նաև թիւ մը 499 ուլ. 39 ուլ, 6999 ուլ և այլն բաղմաստակելու համար, բաղմաստակելին նախ բաղմաստակելու է բաղմաստակողին 1 աւելիով և աջ կողմը երկու, երեք, չորս և այլն դրօններով բաղմաստակելին մէկ անգամը մէջէն հանելու է, եթէ բաղմաստակողին վերջի թուանշանը 8, 7, 6 և այլն ըլլայ, բաղմաստակելին 2, 3, 4 և այլն անգամը հանելու է »: Ինչպէս՝

$$\begin{array}{r} 348 \times 39 \\ 13920 \\ \hline 13572 \end{array}$$

$$\begin{array}{r} 645 \times 499 \\ 322500 \\ \hline 321855 \end{array}$$

$$\begin{array}{r} 768 \times 3997 \\ 4608000 \\ \hline 4605696 \end{array}$$

Գ. «Թիւ մը 11 ուլ, 101 ուլ, 1001 ուլ և այլն բաղմաստակելու համար, բաղմաստակելին աջ կողմը մէկ, երկու, երեք և այլն դրօններ դնելով բաղմաստակելին վրան աւելցնելու է:

$$\begin{array}{r} 64 \times 11 \\ 640 \\ \hline 704 \end{array} \quad \begin{array}{r} 753 \times 101 \\ 75300 \\ \hline 76053 \end{array} \quad \begin{array}{r} 8456 \times 1001 \\ 8456000 \\ \hline 8464456 \end{array} \quad \begin{array}{r} 56 \times 301 \\ 16800 \\ \hline 16856 \end{array}$$

64. Գ. «Բաղմաստակելու համար բաղմաստակողին մէկ մասնաւոր արտադրեալը առանց դրելու կրնանք մտօր աւելցնելով միւս մասնաւոր արտադրելոյ վերայ, դրանք ընդհանուր արտադրեալը, ըստ միշտ լուս յաղթութիւն ընելու է դուժարելի թուոյ տեղական նշանակութեանց »:

$$\begin{array}{r} 48724 \\ \times 645 \\ \hline 292344 \\ 194896 \\ \hline 31426980 \end{array}$$

Նախ 6 հարիւրաւորով և 4 տասնաւորով մասնաւոր արտադրեալները գրեցի և ետքը 5 միւսերով սկսայ բաղմաստակել $5 \times 4 = 20$, 0 գրեցի ընդհանուր արտադրեալին միւսերին տեղ և ըսի ձեռք կայ 2. և $5 \times 2 = 10$ ՝ 2 աւ 12՝ 6 աւ 18, գրեցի 8 տասնաւոր ընդհանուր արտադրեալին մէջ և ըսի ձեռք կայ 1, $5 \times 7 = 35$ ՝ 1 աւ 36՝ 4 աւ 40՝ 9 աւ 49, գրեցի 9 հարիւրաւոր ընդհանուր արտադրեալին մէջ և ըսի ձեռք կայ 4, $5 \times 8 = 40$ ՝ 4 աւ 44՝ 4 աւ 48՝ 8 աւ 56՝ գրեցի 6 հարիւրաւոր ընդհանուր արտադրեալին մէջ և ըսի ձեռք կայ 5, $5 \times 4 = 20$ ՝ 5 աւ 25՝ 3 աւ 28՝ 4 աւ 32, գրեցի 2 տասն հարիւրաւոր ընդհանուր արտադրեալին մէջ և ըսի ձեռք կայ 3, սախ աւելցնելով արդէն դրուած մասնաւոր արտադրելոյ իր յարմար կարգի թուոյ վրայ, գտայ ամբողջ ընդհանուր արտադրեալ 31 426 980:

$$\begin{array}{r} 67308 \\ \times 6078 \\ \hline 538464 \\ 471156 \\ \hline 409098024 \end{array}$$

Հոս աւ բաղմաստակողին 8 միւսերով և 7 տասնաւորով մասնաւոր արտադրեալները նախ գտայ, և 6 հարիւրաւորով մասնաւոր արտադրեալը առանց գրելու մըտօր

ուելցնելով գտայ ընդհանուր արտադրեալ
409 098 024 :

Նոյնպէս կը բազմապատկեմ հետեւեալներն ալ		
645	86705	75624
×18	2108	8015
<hr/>	<hr/>	<hr/>
11610	173410	604992
	<hr/>	<hr/>
	182774140	606126360

65. Ե. «Եթէ բազմապատկութեան գործողութիւնը շատով ընելու ազիկ վարժուած է մէկը կրնայ երկու բազմաթուանչան թուոց բազմապատկութիւնը այնպիսի կերպով մը ընել, որ թէպէտ ընդհանուր կանոնին չափ գործողութիւն ունի, բայց գործողութեան մեծ մասը առանց գրելու մտք կատարուելով աւելի համառօտ կերեայ » : Զորթինակ՝

5678 կըսեմ $5 \times 8 = 40$, կը գրեմ միւսոր
 ×75 0՝ ձեռք կայ 4. $5 \times 7 = 35$ ՝ 4 ալ 39,
 425850 $7 \times 8 = 56$ ՝ 39 ալ 95, կը գրեմ տասնուոր
 նասոր 5՝ ձեռք կայ 9, $5 \times 6 = 30$ ՝
 9 ալ 39. $7 \times 7 = 49$ ՝ 39 ալ 88, կը գրեմ հարիւրուոր
 բուոր 8՝ ձեռք կայ 8, $5 \times 5 = 25$ ՝ 8 ալ 33, $7 \times 6 = 42$ ՝
 33 ալ 75, կը գրեմ հազարուոր 5՝ ձեռք
 կայ 7, $7 \times 5 = 35$ ՝ 7 ալ 42, կը գրեմ տասնհազարուոր
 42, որով կըլլայ ընդհանուր արտադրեալ
 425 850 :

4567 կըսեմ $5 \times 7 = 35$, կը գրեմ միւսոր
 475 5՝ ձեռք կայ 3, $5 \times 6 = 30$ ՝ 3 ալ 33,
 2169325 $7 \times 7 = 49$ ՝ 33 ալ 82, կը գրեմ տասնուոր
 նուոր 2՝ ձեռք կայ 8, $5 \times 5 = 25$ ՝
 8 ալ 33, $7 \times 6 = 42$ ՝ 33 ալ 75, $4 \times 7 = 28$ ՝ 75
 ալ 103, կը գրեմ հարիւրուոր 3՝ ձեռք կայ 10,

$5 \times 4 = 20$ ՝ 10 ալ 30, $7 \times 5 = 35$ ՝ 30 ալ 65,
 $4 \times 6 = 24$ ՝ 65 ալ 89, կը գրեմ հազարուոր 9՝
 ձեռք կայ 8, $7 \times 4 = 28$ ՝ 8 ալ 36, $4 \times 5 = 20$ ՝
 36 ալ 56, կը գրեմ տասն հազարուոր 6՝ ձեռք կայ
 5, $4 \times 4 = 16$ ՝ 5 ալ 21, կը գրեմ հարիւր հազարուոր
 21, որով ամբողջ ընդհանուր արտադրեալ
 նիս կըլլայ 2 169 325 :

65748	կըսեմ $7 \times 8 = 56$, կը գրեմ միւսոր
4567	6՝ ձեռք կայ 5, $7 \times 4 = 28$ ՝
<hr/>	5 ալ 33, $6 \times 8 = 48$ ՝ 33 ալ 81,
300274116	կը գրեմ տասնուոր 1՝ ձեռք կայ 8,
	$7 \times 7 = 49$ ՝ 8 ալ 57, $6 \times 4 = 24$ ՝ 57 ալ 81,
	$5 \times 8 = 40$ ՝ 81 ալ 121, կը գրեմ հարիւրուոր 1՝
	ձեռք կայ 12, $7 \times 5 = 35$ ՝ 12 ալ 47, $6 \times 7 = 42$ ՝
	47 ալ 89, $5 \times 4 = 20$ ՝ 89 ալ 109, $4 \times 8 = 32$ ՝
	109 ալ 141, կը գրեմ հազարուոր 1՝ ձեռք կայ
	14, $7 \times 6 = 42$ ՝ 14 ալ 56, $6 \times 5 = 30$ ՝ 56 ալ 86,
	$5 \times 7 = 35$ ՝ 86 ալ 121, $4 \times 4 = 16$ ՝ 121 ալ 137,
	կը գրեմ 7 տասն հազարուոր՝ ձեռք կայ 13, $6 \times 6 = 36$ ՝
	13 ալ 49, $5 \times 5 = 25$ ՝ 49 ալ 74, $4 \times 7 = 28$ ՝
	74 ալ 102, կը գրեմ հարիւր հազարուոր 2՝
	ձեռք կայ 10, $5 \times 6 = 30$ ՝ 10 ալ 40, $4 \times 5 = 20$ ՝
	40 ալ 60, կը գրեմ միլիոնուոր 0՝ ձեռք կայ 6,
	$4 \times 6 = 24$ ՝ 6 ալ 30, կը գրեմ տասն միլիոնուոր
	30, որով կըլլայ ամբողջ ընդհանուր արտադրեալ 300 271 116 :

Այս գործողութիւնը՝ ինչպէս որ տեսնուեցաւ, մտայ բնու է քան թէ զիւրութիւն, ուստի միայն անոնք կ'ընան, որոնք բազմապատկութիւն և մտք յաւելումն ընելու շատ վարժ են :

66. 2. «Քանի՞ մը բազմապատկութեանց արտադրելոց գումարը կրնանք մէկ անգամէն գտնաւ դործողութեան մեծ մասը առանց գրելու մտօր կատարելով »: Օրինակ՝ առաջարկուած ըլլայ թէ 78 հօխա խոնկէ 12 դրէն, 164 հօխա շարար 8 դրէն, 325 հօխա մօմ 22 դրէն, ամէնը քա՞նի դրէ կընէ:

Գործող. 78 հիւ խոնկէ
 12 դարուչէն
 164 հիւ շարար
 8 դարուչէն
 325 հիւ մօմ
 22 դարուչէն
 9398

Կրեւմ $2 \times 8 = 16$, $8 \times 4 = 32$, 16 ալ 48, $2 \times 5 = 10$, 48 ալ 58, գրեցի 8՝ ձեռք կայ 5, $2 \times 7 = 14$, 5 ալ 19, $1 \times 8 = 8$, 19 ալ 27, $8 \times 6 = 48$, 27 ալ 75, $2 \times 2 = 4$, 75 ալ 79, $2 \times 5 = 10$, 79 ալ 89, գրեցի տասնուոր 9՝ ձեռք կայ 8, $1 \times 7 = 7$, 8 ալ 15, $8 \times 1 = 8$, 15 ալ 23, $2 \times 3 = 6$, 23 ալ 29, $2 \times 2 = 4$, 29 ալ 33, գրեցի հարիւրաւոր 3՝ ձեռք կայ 3, $2 \times 3 = 6$, 3 ալ 9, գրեցի հարիւրաւոր 9, որով եղաւ արտադրելոց գումարը 9398:

Գործող առաջարկուած ըլլայ 338 Օսմանեան հարիւրնոց ոսկի 126 դրէն, 267 ֆօլ 112 դրէն, 168 լիւրա սթերլին 135 դրէն, ամէնը քա՞նի դրէ կընէ:

338 ոսկի հրնց
 126 դրէն
 267 ֆօլ
 112 դրէն
 168 լիւրա սթերլին
 135 դրէն
 97692

Կրեւմ $6 \times 8 = 48$, $2 \times 7 = 14$, 48 ալ 62, $5 \times 8 = 40$, 62 ալ 102, կը գրեւմ միաւոր 2՝ ձեռք կայ 10, $6 \times 5 = 30$, 10 ալ 40, $2 \times 8 = 16$, 40 ալ 56, $2 \times 6 = 12$, 56 ալ 68, $1 \times 7 = 7$, 68 ալ 75,

$5 \times 6 = 30$, 75 ալ 105, $3 \times 8 = 24$, 105 ալ 129, կը գրեւմ տասնուոր 9՝ ձեռք կայ 12, $6 \times 3 = 18$, 12 ալ 30, $2 \times 5 = 10$, 30 ալ 40, $1 \times 8 = 8$, 40 ալ 48, $2 \times 2 + 1 \times 6 + 1 \times 7 = 17$, 48 ալ 65, $5 \times 1 + 3 \times 6 + 1 \times 8 = 31$, 65 ալ 96, կը գրեւմ հարիւրաւոր 6՝ ձեռք կայ 9, $2 \times 3 + 1 \times 5 + 1 \times 2 + 1 \times 6 + 3 \times 1 + 1 \times 6 + 9 = 37$, կը գրեւմ հարիւրաւոր 7՝ ձեռք կայ 3, $1 \times 3 + 1 \times 2 + 1 \times 1 + 3 = 9$, կը գրեւմ 9, որով կըլլայ ընդհանուր արտադրելոց գումարը 97692 դրէ:

67. Գործաճութիւն Բազմապատկութեան:

Ս. մտալ թուոց բազմապատկութիւնը պէտք ըլլալու ամեն զխաւածներն ալ թուոց մը այս ինչ անգամն պահելն ըլլալով՝ միշտ հետեւութիւնը կամ արդիւնը տրուած թիւերէն մեծ կըլլայ: Ս. յս զխաւածներուն զլսաւորներն են:

Ա. Մեծ չափերը իրենց ստորաբաժանմանը վերածել:

(Մեծ չափի մը մանր բաժանմունքը Ստորաբաժանմունք կըսուի, 40 փարսն դրուչին ստորաբաժանումն է, 400 տրամը հօխային. 44 հօխան խանթարին ստորաբաժանմունքն են):

Կանոն. «Մեծ չափը ցուցնող թիւը բազմապատկելու է ստորաբաժանումով, զրուշը փարայի վերածելու համար 40 ով բազմապատկելու է, հօխան տրամի վերածելու համար 400 ով կըն »:

Խ Ն Ի Ի Բ Բ

161. 3564 դրէ քանի՞ փարայ կընէ,
 142560 փարայ:

162. 4674 հօխան քանի՞ տրամ կընէ :
 Պ . 1869600 տրամ :
163. 48 չէ.քիև քանի տրամ կընէ : (Վիտևարով
 որ մէկ չէ.քիև 4 խանրար է , մէկ խանրարը 44 հիւյ
 է , մէկ հօխան 400 տրամ . մէկ տրամը 4 տէնկ , մէկ
 տէնկը 4 կուտ կամ քուար . մէկ քուարը 4 ցորեն :)
 Պ . 3379200 տրամ .
164. 14 քուսկը քանի՞ ստակ կընէ : [Վիտևարով
 որ 1 դրի քուսկն է 500 որը , 1 դրը 40 փարսյ , 1
 փարսն 3 ստակ :]
 Պ . 840,000 ստակ :
165. 36 խանրար 42 հիւյ . 365 տրմ , 3 տէնկ ,
 2 քուար , 3 ցորենը՝ ամենը քանի՞ ցորեն կընէ :
 Պ . 41649019 ցորեն :
166. 125 քէսէ , 316 որը , 35 փարսյ , 2 սաւա-
 կը , ամենը քանի՞ ստակ կընէ :
 Պ . 7538027 :
167. 15 շիրսյ , 12 շիլիև : 10 քէնս , 3 փար-
 քիևկ , ամենը քանի՞ փարքիևկ կընէ : [Վիտևարով որ
 1 շիրսն 20 շիլիև է , 1 շիլիևը 12 քէնս , 1 քէնսը
 4 փարքիևկ :]
 Պ . 45049 փարքիևկ :
168. 36 ձողաչափ . 5 ոտնաչափ , 11 մատնա-
 չափ , 6 գժաչափ , 3 կէտ , ամենը քանի՞ կէտ կընէ :
 [Վիտևարով որ 1 ձողաչափը 6 ոտնաչափ է . 1 ոտ-
 նաչափը 12 գժաչափ , 1 գժաչափը 12 կէտ է :]
 Պ . 383547 կէտ :
169. 256 կանգուն , 18 մատր քանի՞ մատ կընէ :
 [Վիտևարով որ 1 կանգունը 24 մատ է :]
 Պ . 6162
170. 318 էնտագէ , 7 ուրուսյ , 1 կիրանը քա-
 նի՞ կիրան կընէ : [Վիտևարով որ 1 էնտագէն 8 ու-
 րուսյ է 1 ուրուսը 2 կիրան է :]
 Պ . 5103 կիրան :
171. 5 դար : 36 տարի , 11 ամիս , 24 օր , 16
 ժամ , 35 վայրկեան , 28 երկվայրկեան , ամենը քա-

- նի՞ երկվայրկեան կընէ : [Վիտևարով որ 1 դարը 100
 տարի է , 1 տարին 12 ամիս , 1 ամիսը 30 օր , 1
 օրը 24 ժամ , 1 ժամը 60 վայրկեան , 1 վայրկեանը
 60 երկվայրկեան :]
 Պ . 46 702 380 323 երկվայրկեան :
- Բ . Բանի մը միտթեան արժէքը գիտնալով ,
 նոյն բանէն այս ինչ թուով եղածին արժէքը դըտ-
 նալ : —
- Կանոն : — « Միտթեան արժէքը թուով
 բազմապատկելու է » :
172. Խանվիլիև մէկ հօխան 8 որը ըլլալով 36 հօ-
 խան քանի՞ որը կընէ .
 Պ . 288 որը :
173. Յաքարիև 1 խանրարը 236 որը ըլլալով 45
 խանրարը քանի՞ որը կընէ .
 Պ . 40620 որը :
- 174 Յաքարիև հօխան 9 որը ըլլալով 125 խանրար
 43 հօխան քանի՞ որը կընէ :
 Պ . 49887 որը :
175. Մէկ գժաչափ երկայնութիևն ունեցող ոսկի
 րևը մը 5 որը արժեղու ըլլայ : 5 ձողաչափ , 3 ոտնա-
 չափ 11 մատնաչափ 5 գժաչափ երկայնութիևն ունե-
 ցող ոսկի րևը քանի՞ որը կընէ :
 Պ . 24443 որը
176. Միտարքիև մէկ տրամը 3 որը ըլլալով : 3
 հօխա 316 տրամ մատարը քանի՞ որը կընէ :
 Պ . 4548 որը :
177. Մէկ գործատրիև միտնուսայ վարձքն է 457
 դրու , 125 գործատրիևը քանի՞ կըլլայ :
 Պ . 57425 որը :
178. Մարդու մը օրական ծախքը 4 որը ըլլայ .
 125 մարդուն 3 տարուան , 4 ամառուան . 5 օրուան
 ծախքը քանի՞ որը կընէ :
 Պ . 602500 որը :
179. Հիսուն մը օրը 25 որը կը վատոյի , 36 հիսուն

4 անտուան մէջ քանի՞ որչ կը վաւարկին : [Սշխատութեան ակադեմիա 26 օր է :]
Պ . 93600 որչ :

180 . Երեք հոգիէ բաղկացեալ շնորհաբանի մը ծախքը քանի՞ որչ կը ըլլայ 3 անտուան մէջ , երբ մէկ օրուան մէջ ծախք ունենայ այրը 8 որչ , կիւնը 5 որչ և տղան 3 որչ :
Պ . 1440 որչ :

181 . Բանակի մը 6 անտուան ծախքը քանի՞ որչ է , որ 12000 հոգիէ կը բաղկանայ , երբ մէկ զինուորիկ օրական ծախքը 3 որչ ըլլայ :
Պ . 6 480 000 որչ :

182 . Մէկ անգղիական շիբա սրկողիկը 112 որչ ըլլալով , 316 շիբան քանի՞ որչ կընէ :
Պ . 35 392 որչ :

183 . Տան մը մէկ անտուան վարձքը 256 որչ է , 1 տարուան , 5 անտուան վարձքը քանի՞ որչ կընէ :
Պ . 4352 որչ :

184 . Սրահարժ մը օրը 3 կանգուն պատ կը շինէ , 4 սրահարժ 2 շարքուան մէջ քանի՞ կանգուն պատ կը շինեն : [Սշխատութեան շարքը 6 օր է :]
Պ . 144 կանգուն :

185 . Զօրանոցի մը մէկ օրուան ծախքը 40000 որչ ըլլալով , 3 տարուան 4 անտուան 15 օրուան ծախքը քանի՞ կը ըլլայ :
Պ . 48 600 000 որչ :

186 . Երէ 1 որչով 5 տրամ բէշ կրեանք առնել . 75 որչով ո՞րչախ կրեանք առնել . Պ : 375 տրամ :

187 . Երէ 1 կենդիւնար կրկարը 50 հաշտարաւ չափ գորգիք ըլլայ , 8 կենդիւնար կրկարը ո՞րչախ կը ըլլայ :
Պ . 400 գործիք :

Գ . Տեղի մը կտրժ բանի մը մակերևոյթին տարածութիւնը գտնալ :

Կանոն . — « (Ուղղանկիւն քառանկիւնի ձևի մը)

Երկայնութիւնը լայնութեամբ բազմապատկելու է , սրտազրեան է տարածութիւնը » :

188 . Սենակի մը կրկայնութիւնը 7 կանգուն , շայնութիւնը 6 կանգուն , տարածութիւնը քանի՞ կանգուն է :
Պ . 42 քառակուսի կանգուն :

189 . Գալտի մը կրկայնութիւնն է 5678 կանգուն . շայնութիւնը 3567 կանգուն , տարածութիւնը քանի՞ կանգուն է :
Պ . 20 253 426 քակի կնգն :

190 . Պատուհանի մը բարձրութիւնն է 4 կանգուն , շայնութիւնը 3 կանգուն , տարածութիւնը քանի՞ կանգուն է :
Պ . 12 քակի կանգուն :

191 . Սենակի մը կրկայնութիւնը 15 կնտագէ , շայնութիւնը 9 կնտագէ է . տարածութիւնը քանի՞ կնտագէ կը ըլլայ :
435 քակի կնտագէ :

« Մարմնայ մը սրտաճակովութիւնը կամ ծաւալը գտնալու համար ալ սէտք է իրարմով բազմապատկել երկայնութիւնը , լայնութիւնը և բարձրութիւնը կամ խորութիւնը , սրտեք իրարու ուղղահայեաց ըլլալու են » :

192 . Իրարու վրայ շարուած աղիսի դէզ մը քանի՞ հատ կրան կը ըլլայ , երբ շայնութիւնը 25 , կրկայնութիւնը 42 և բարձրութիւնը 50 հատ համարի ,
Պ . 52500 :

193 . Պարկայ մը քանի՞ որչով կը շինուի , որ 3 կանգուն շայնութիւն , 250 կանգուն կրկայնութիւն , և 9 կանգուն բարձրութիւն ունի : և որոյ 1 խորանարդ կանգունը 25 որչով կրնայ շինուիլ :
Պ . 168750 որչով :

194 . Զրչոցի մը կրկայնութիւնն է 4 կանգուն , շայնութիւնը 4 կանգուն , բարձրութիւնը 5 կանգուն .

ըրեղիս Տաւարը քանի՞ կանգուն կըլլայ , և թէ որ 1
խորանարդ կանգուն միշտցին մէջ պարունակեալ շուրդ
591 հօխայ ըլլայ , յիշեալ ըրեղը քանի հօխայ շուր
կը պարունակէ : Պ . 47280 հօխա :

195 . Մարմարիտնի մը երկայնութիւնն է 4 կան-
գուն , շոյնութիւնը 3 կանգուն և հաստութիւնը 2
կանգուն . և թէ որ 1 խորանարդ կանգուն մարմարիտ-
նը 1677 հօխայ կըռէ , յիշեալ մարմարիտնին Տանրու-
րիւնը ո՞րչափ է : Պ . 40248 հօխայ :

196 . Սենեակի մը երկայնութիւնն է 8 կնտագէ ,
շոյնութիւնը 6 կնտագէ . կողմէք հասկեալ որ քանի՞
կնտագէ վախար պէտք է : և քանի զո՞ր կըլնէ . թէ որ
1 քառակուսի կնտագէ վախարը 6 զո՞ր արժէ :

Պ . 288 զո՞ր :

197 . Թափեալ երկարի կտոր մը քանի՞ հօխայ
կը կըռէ , որոյ նրկայնութիւնն է 2 կանգուն , շոյնու-
րիւնը 1 կանգուն և հաստութիւնը 1 կանգուն . զիտ-
նադով որ 1 խորանարդ րափեալ երկարը 4359 հօխայ
կը կըռէ : Պ . 8718 հօխա :

Գ . « Երբեմն միութեան արժէքը գտնաբու մէջ
բազմապատկութիւն :

Ասի ան տունն կը պատահի երբ գործողութեան
արդիւնքը կամ պատասխանը խնդրոյն պայմաննե-
րուն նայելով ծանօթ թիւերէն շատ ըլլալ պէտք է :

198 . Տուն մը 5 հոգի 12 օրէն կը շինեն . մկ
հոգին քանի՞ օրէն կը շինէ : Պ . 60 օրէն :

199 . Կործ մը 12 օրէն ղնցնելու համար 25 հո-
գի պէտք է , մկ օրէն ղնցնելու համար քանի՞ հոգի
պէտք է : Պ . 300 հոգի :

Ե . Գանաղան խնդիրներ :

200 . Մէկ ջանակեան հարիւրնոց ուկին 120 զո՞ր

ըլլալով 316 ուկին քանի՞ զո՞ր կըլնէ : Պ . 37920

201 . Բազմապատկելով հետզհետէ 48 ը 9 ուլ , 13
ուլ , 45 ուլ , 97 ուլ , ի՞նչ կըլլայ արտարեալը :

Պ . 24513840 :

202 . Մէկուն սանակունն է 540 ֆրանք . տարե-
կան հասարդ ո՞րչափ կըլլայ : Պ . 6480 ֆրանք :

203 . Գործաւոր մը շարքուն մը մէջ երէ 250
զո՞ր շահի : մկ տարուն կա՞ն 52 շարքուն մէջ
ո՞րչափ կը շահի : Պ . 43000 զո՞ր :

204 . Մարդ մը օրը Տախը կըլնէ կերակարի հա-
մար 12 դանկեան , տան վարձուց համար 10 դանկ-
կան . զբօսանաց համար 8 դանկեան . ճերմակեղէնի
համար 6 դանկեան , կուռ համար 5 դանկեան , ու-
ղորմութեան համար 4 դանկեան . հանդերձի համար 8
դանկեան . կողմէք հասկեալ որ տարեկան Տախը
ո՞րչափ է : (Տարին 365 օր է) : Պ . 49345 :

205 . Մարդու արեան երակը մկ երկխորիկնի
մէջ թէոր 65 անգամ զարնէ , 2 շարքուն 4 օրուն
5 Տանու և 25 վայրկեանի մէջ քանի՞ անգամ կը զար-
նէ : Պ . 4705925 :

206 . Տոյ մը 13 տարու 9 անու և 25 օրուն
է , տարիներուն էք համանը նե , սոյսինքն . 366 օր
ունին և միւս հասարակ տարիները 565 օր , 9
անոց 5ր ունին 31 օր , 3ր 30 օր և մկն ալ 29 օր
քանի՞ մանրերկրորդ կայ կենացը մէջ :

Պ . 436447200 մանրերկրորդ :

207 . Սրեզակնոյն տարին . 365 օր 5 Տան 48
վայրկեան և 49 երկխորիկեան է . ամենը քանի՞ երկ-
վայրկեան կըլնէ : Պ . 31536929 երկխորիկեան :

208 Քանի՞ ոտք կըերանայ շոյսը երկխորիկեանի
մը մէջ երէ երազութիւնն ըլլայ 926400 անգամ մե՞

մայնէն . որ երկխոյրկենի մը մէջ 1050 ոտք կրնայ
 կրրայ : Պ . 972720 000 ոտք :
 209 Լուսնին հեռաւորութիւնը երկրէս է 60 ան-
 գամ երկրիս շառախոյր : Երէ երկրիս շառախոյր
 6362370 մկրր ըլլայ , լուսնին երկրէս հեռաւորութիւ-
 նը քանի՞ մկրր կըլլայ : Պ . 381 742 200 մկրր :
 210 . Մէկը ունի 1 000 000 զրը , և կը գնէ 240
 արտավար մէսկելի գետին , արտավարը 600 զրշի ,
 70 արտավար մարգարտին՝ արտավարը 500 զրշի ,
 և 25 արտավար սպարակ՝ արտավարը 1000 զրշի .
 սրդ ո՞ր ջախի զրը կը մնայ քովը : Պ . 775000 զրշ :

55 . Ի՞նչ է բաղմապատկութիւնը : Բաղմապատկութեան մէջ
 քանի՞ գլխաւոր թիւ կայ : Ո՞րն է բաղմապատկելին . ո՞րն է
 բաղմապատկողը . ո՞րն է արտադրեալը : Արտադրողն ի՞նչ է :

56 . Բաղմապատկութիւնը յանձնան հետ ի՞նչ յարաբերու-
 թիւն ունի : Բաղմապատկելին ու բաղմապատկողը ինչպէս որոշե-
 լու է :

57 . Երկու արտադրողաց կարող փոխելով արտադրեալը չի
 փոխուիր , հաստատէ այս տեսութիւնը : Դատ մը արտադրողաց
 կարող փոխելով արտադրեալը չի փոխուելու տեսութիւնն ալ
 հաստատէ : Գ . Տեսութիւնն ալ ըսէ և հաստատէ :

58 . Բաղմապատկութեան կանոնները ո՞րն են : Ա . միաթուա-
 նշան թուոց արտադրեալը ի՞նչպէս կը դտնուի : Բաղմ. պատկու-
 թեան աղիտակին հեղինակը ո՞վ է : Ի՞նչպէս կը ընտրուի և ի՞նչպէս կը
 գործածուի : Բ . բաղմաթուանշան թիւ մը միաթուանշան թուով
 ի՞նչպէս բաղմապատկելու է , այս կանոնին ապացոյցը ըսէ : Գ .
 թիւ մը հաւաքածոյ միութեամբ ի՞նչպէս բաղմապատկելու է , հաս-
 տատէ այս կանոնը : Դ . թիւ մը թուանշանի մը ետեւն զրօներ
 ունեցող թուով մը ի՞նչպէս բաղմապատկելու է , հաստատէ այս
 կանոնը : Երկու բաղմաթուանշան թուոց արտադրեալը ի՞նչպէս
 դտնալու է , այս կանոնին ապացոյցը ըսէ :

59 . Ե . Տեսութիւնը ըսէ , ասոր երկու հետեւութիւններն ալ

ըսէ : Զ . Է . Ը . Տեսութիւնները ըսէ , նաև Թ . Տեսութիւնն
 ալ : Ը . և Թ . Տեսութեանց հետեւութիւններն ալ ըսէ :

60 . Ի՞նչ է ինքնապատկութիւնը , ինքնապատկեալ և կարո-
 դութիւն , արմատ և ինքնապատկելի . քառակուսի և խորա-
 նարդ ի՞նչ բաներու կըսուի :

61 . Վերածող կամ ցուցիչ ի՞նչ բանի կըսուի : 62 . Բաղ-
 մապատկութիւնը քանի՞ փորձ ունի : Սով փորձը ո՞րն է :

63 . Բաղմապատկութիւնը համառօտելու կանոնները ըսէ .
 Ա . Բ . Գ : 64 . Համառօտ բաղմապատկութեան Գ . կանոնը
 ըսէ : 65 . Ե . կանոնը ըսէ : 66 . Զ . կանոնը ըսէ : 67 . Բաղ-
 մապատկութիւնը գործածելու Ա . դիպուածը ո՞րն է , Բ . Գ . Դ :

ՅՅՊՈՒԱԾ Դ .

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԹՈՒՈՑ

68 . « Բաժանող ըսուած թիւ մը բաժանելի ըս-
 ուած թուոյ մը մէջ քանի անգամ պարունակելը
 նայելով քանորդ ըսուած թիւ մը դանալու գործու-
 ղութեանը կըսուի ԲԱԺԱՆՈՒՄՆ » :

Մէկ գիրքը 8 զրը ըլլալով՝ 32 զրշով քանի
 գիրք կառնուի :

Այս առաջարկութիւնը լուծելու համար 32
 զրշին մէջ նայելու է թէ 8 զրշը քանի անգամ կը
 պարունակի , որ կրնայ դանուիլ 32 զրշէն հետզհե-
 տէ 8 զրշ հանելով :

32	8 ը 32 էն 4 անգամ կարելի եղաւ հանել .
— 8	որով կըսուի թէ 8 ը 32 ին մէջ 4 անգամ
24	կայ , և ուստի 4 զիրք կրնայ առնուիլ :
— 8	Այդ հոս 8 է բաժանող , 32 է բաժանելի
16	և 4 է քանորդ . թէ որ 32 զրշին տեղ
— 8	35 զրշ ըլլար , սակէ հետզհետէ 4 ան-
8	դամ 8 հանելով կառելնար 3 զրշ , որուն
— 8	կըսուի մնացորդ , որ միշտ բաժանողէն
0	փորք պիտի ըլլայ : Այս հաշուին նայելով

կրնայ ըստիւ որ , « բաժանուել գործողութիւն մ'է , որով կրնայ գտնուիլ թէ բաժանող բաժանելէն կամ փոքր թիւը մեծ թիւէն քանի անգամ կարելի է հանել , մինչև որ մնացորդ չըլլայ կամ մնացորդը բաժանողէն կամ փոքր թիւէն սղոյիկ ըլլայ » : Սնոր համար նաև կըսուի թէ « բաժանուել տեսուի մը համարոտ բարձուս է » :

Եւ որովհետև 32 ին մէջ 8 և 4 անգամ կայ , ըսել է որ $4 \times 8 = 32$ է . ուստի 32 բաժանելին բազմապատկութեան մէջ արտադրեալ է , և 8 և 4 բաժանողը արտադրողաց մէկն է , և 4 քանորդն ալ միւս արտադրողն է : Սրգ կրնայ ըստիւ նաև որ , « արտադրեալը և արտադրողաց մէկը գիտնալով միւս արտադրողը գտնուել գործողութեանը կըսուի բաժանումն » : Եւ ստով յայտնի կը տեսնուի որ բաժանուել բազմապատկութեան փոխադարձ գործողութիւնն է :

69. Եթէ բաժանողը բաժանելիին համասեռ ըլլայ , քանորդը կը սուցնէ որ բաժանողը բաժանելիին մէջ քանի անգամ կը սարունակի կամ բաժանողը բաժանելիին քաներորդ մասն է . ինչպէս վերի օրինակին մէջ 4 ր կը սուցընէ որ 8 զրը 32 զրէն մէջ քանի անգամ կը սարունակի կամ 8 զրը 32 զրէն 4 երորդ մասն է , և անոր համար սոս թուոյն քանորդ ըսուած է : Սյս խնդրը յաւելումիւ ալ կրնայ լուծուիլ , բաժանող 8 զրը հետըզհետէ իրարու վրայ աւելցնելով , մինչև որ 32 բաժանելիին հաւասար ըլլայ , որ 4 անգամ աւելնալով կրնայ ըլլալ , ան ատեն կրնայ ըսուիլ նաև

որ « բաժանողը քանի անգամ հետըզհետէ իր վրայ աւելցնելով բաժանելիին հաւասար կամ անոր մէջ սարունակեալ բաժանողին մեծագոյն բազմապատկին ըլլալը գտնուել գործողութիւնն է բաժանուելը :

Եթէ բաժանողը տարասեռ ըլլայ բաժանելիին , ան ատեն քանորդը բաժանելիին համասեռ ըլլալով անոր հաւասար կտորներէն մէկն է , որ բաժանողին միւս թիւներուն չտի բաժանելին հաւասար կտորներ ընելով կը գտնուի . ինչպէս՝ 36 զրը 9 հոգիի սլտի բաժնուի , կամ 9 հաւասար կտոր սլտի ըլլայ : Հոս իրաւակն 36 զրէն 9 ական հոգի սլտի սեցնելով քանորդն անկարելի է գտնալ (7) . բայց ուրիշ կերպով մտածելով կըսուի որ , 36 զրէն Ա. անգամ 9 զրը հանելով իւրաքանչիւր մարդու մէջ մէկ զրը տալու է , Բ. անգամ 9 զրը հանելով իւրաքանչիւր մարդու մէջ մէկ զրը տալու է , ասանկ 36 զրէն հետըզհետէ 9 ական զրը հանելու է , մինչև որ համար . և կը տեսնուի որ 4 անգամ միայն կրնայ հանուիլ . ուստի կըսուի որ 36 ին 9 հաւասար կտորներէն մէկը 4 է : Սյս խնդրոյն մէջ բաժանողըն ու բաժանելին թէպէտև տարասեռ են , բայց դարձեալ բաժանողը բաժանելիին մէջ քանի անգամ սարունակիլը նայելով գտնուեցաւ քանորդը : Ուստի բաժանողը թէ համասեռ ըլլայ և թէ տարասեռ բաժանելիին , միշտ բաժանողը բաժանելիին մէջ քանի անգամ սարունակիլը նայելու գործողութիւնն է բաժանուելը :

Սյսու ամենայնիւ ընդհանուր կանոն է որ թիւերը վերացեալ կերպով մտածուին իրենց վրայ գործողութիւն կատարուած ատենը :

70. Յայտնի է որ եթէ բաժանողը 1 ըլլայ ,

քանորդը բաժանելին հաւասար կըլլայ, վասն զի 1 ը ոչ կը բաղմապատկէ և ոչ կը բաժնէ: Աթէ բաժանողը բաժանելին հաւասար ըլլայ, քանորդը մէկ կըլլայ:

Չ1. Սկզբունքներ, որոց վրայ հիմնուած են բաժանանս կանոնները:

Ա. « Բաժանողը բաժանելին հետոյհետէ հանելով քանորդը կրնայ դտնուիլ, ինչպէս որ տեսնուեցաւ վերի օրինակներուն մէջ:

Բայց սակն ատեն այս կերպով բաժանողը մէյ-մէկ անգամ հետոյհետէ բաժանելին հանելով բաժանուիլը կատարելը չտիրազանց տաղտկալի կըլլայ մասնաւանդ երբ քանորդը բաղմաթուանչան է: Ուստի պէտք է այս պարզ ոճը համառօտող սկզբունքի մը հետեիլ բաժանուիլը զխրութեամբ կատարելու համար »:

Բ. « Բաժանուիլը բաղմապատկութեան վտխազարձ գործողութիւնն ըլլալով՝ բաժանելին հաւասար է քանորդով բաժանողին արտադրեալին և աւելի մնացորդը, եթէ կայ »:

Ինչպէս 32 ին մէջ 6 ը 5 կայ 2 կաւեւնայ, ուստի $32 = 6 \times 5 + 2$:

Արդ եթէ բաժանողն ու քանորդը միաթուանչան պատահին, « բաժանողը բաժանելին մէջ քանի անգամ արտունուիլը բաղմապատկութեան աղիւսակէն կրնայ դտնուիլ, կամ աւելի աղէկ վարժութեամբ սովրած ըլլալու է »: Գիտնալու է որ 8 ը 40 ին մէջ 5 կայ, 6 ը 38 ին մէջ 6 կայ 2 կաւեւնայ, 7 ը 45 ին մէջ 6 կայ 3 կաւեւնայ, նմանապէս 4 ը 25 ին մէջ 6 կայ 1 կաւեւնայ, 19 ին մէջ 4 կայ 3 կաւեւնայ և 36 ին մէջ 9 ը կայ: Նմանա-

պէս 9 ը 62 ին մէջ 6 կայ 8 կաւեւնայ, 80 ին մէջ 8 կայ 8 կաւեւնայ և 81 ին մէջ 9 կայ:

Գ. Իսկ եթէ քանորդը բաղմաթուանչան թիւ պատահի, ան ատեն « բաժանելին դանաղան մասնաւոր բաժանելիներու զտտելով քանորդին սակն մէկ կարգի թուանչանները կրնան դտնուիլ. վասն զի բաժանելին հաւասար է քանորդին սակն մէկ կարգերովը բաժանողը բաղմապատկելով յառաջ եկած մասնաւոր արտադրեալներուն գումարին, և այդ մասնաւոր արտադրեալները կըլլան պահանջեալ մասնաւոր բաժանելիները »: Ինչպէս՝ $649 \times 4 = 2596$ ըլլալով հետեւապէս $2596 \div 4 = 649$ և $2596 = 600 \times 4 + 40 \times 4 + 9 \times 4$, այսինքն, $2596 = 2400 + 160 + 36$:

Հաս 2400 է Ա. մասնաւոր բաժանելի, որիէ քանորդին հարիւրաւորը կեւնէ:

Հաս 160 է Բ. մասնաւոր բաժանելի, որիէ քանորդին տասնաւորը կեւնէ:

Հաս 36 է Գ. մասնաւոր բաժանելի, որիէ քանորդին միւսւորը կեւնէ:

Արդ գտնալու է սկզբունք մը, որով կարելի ըլլայ բաժանելին զտտել մասնաւոր բաժանելիներու, քանորդին իւրաքանչիւր կարգի թուանչանները զատ զխրութեամբ որոշելու համար: Ինչպէս 2596 բաժանելին, եթէ 2400, 160 և 36 մասնաւոր բաժանելիներու զտտուի, քանորդին թուանչանները զխրութեամբ կը դտնուին. վասն զի, 24 հարիւրաւորին 4 ու բաժանման քանորդն է 6 հարիւրաւոր, և 16 տասնաւորին 4 ու բաժանման քանորդն է 4 տասնաւոր և 36 միւսւորին 4 ու բաժանման քա-

նորդն է 9 միաւոր, որով յառաջ կուգայ 649 բա-
նորդը : Այսպէս՝

$$2400 \div 4 = 600$$

$$160 \div 4 = 40$$

$$36 \div 4 = 9$$

$$\hline 2596 \div 4 = 649$$

Այս ցուցակէն յայտնի կը տեսնուի որ փոքրա-
գոյն մասնաւոր բաժանելիներուն տասնաւորները
միւս մասնաւոր բաժանելիներուն թուանշաններուն
վրայ աւելցած են, միայն մեծագոյն մասնաւոր
բաժանելին ազատ կը մնայ, որուն վրայ աւելցած
են նաև ստորին մասնաւոր բաժանելիներուն տաս-
նաւորները, որք որչափ ալ մեծ ըլլան՝ մեծագոյն
բանորդը 1 ի չափ կարող չեն աւելցնել, այսինքն,
այդ պատճառաւ Ա. մասնաւոր բաժանելին իր մէջ
նայն կարգի միութեան 1 ի չափ աւելի չի սրարու-
նակէր գրաժանողը (27), սրակաս ալ չի սրարուա-
կէր, վրան դի, Ա. մասնաւոր բանորդով բաժանո-
ղին արտադրեալը սրարունակելէն զատ միւս մաս-
նաւոր բաժանելիներուն տասնաւորներն ալ կը սր-
րունակէ : Ուստի Ա. մասնաւոր բաժանելին կըլլայ
բաժանողին թուանշաններուն չափ բաժանելին
ձախ կողմի թուանշանները, կամ՝ այսչափը բաժա-
նողին փոքր եղած տակնը, մէկ թուանշան աւելի.
ասիկէ ելած բանորդով բաժանողին արտադրեալը
Ա. մասնաւոր բաժանելին հանելով և մնացորդին
քով բաժանելին յաջորդ թուանշանը աւնելով
կըլլայ Բ. մասնաւոր բաժանելի, տակի ալ Բ. մաս-
նաւոր բանորդով բաժանելին արտադրեալը հանե-
լով և մնացորդին քով բաժանելին յաջորդ թուա-
նշանը աւնելով կըլլայ Գ. մասնաւոր բաժանելի,
ասանկ հետզհետէ :

Այս կերպով նշանակեալ մասնաւոր բաժանելի-
ները՝ իրենց վրայ աւելցած ունենալուն համար
աւելի ստորին մասնաւոր բաժանելիներուն տասնա-
ւորները՝ միացեալ մասնաւոր բաժանելիներ են, և
մասնաւոր քանորդներով բաժանողին արտադրեալ-
ներն են ճիշտ մասնաւոր բաժանելիները, բայց ա-
ռաջին անգամ բաժանելին ու բաժանողը միայն
ունենալով նախապէս սրաչեալ մասնաւոր բաժանե-
լիներն ասոնք կը համարուին, անոր համար ասոնց
ըսուած է մասնաւոր բաժանելիներ, որոց վրայ
միացեալ աւելորդները գտնուելիք քանորդին վրայ
անդէպութիւն չունին :

Օրինակ՝ 6201 ը բաժնենք 9 ով .

6201	9	
54		689
80		
72		
81		
81		
0		

Բաժանող միաթուանշան 9ը
բաժանելին ձախ կողմի Ա.
թուանշանէն 6 էն մեծ ըլ-
լալով՝ բաժանելին ձախ
կողմի առջի երկու թուա-
նշան 62 ը կըլլայ Ա. մաս-
նաւոր բաժանելի, որուն

մէջ 9 ը 6 անգամ կայ, այս 6 ը կըլլայ Ա. մաս-
նաւոր բանորդ, ասով 9 ը բաժանողը բազմապատ-
կելով արտադրեալ 54 ը կը հանենք Ա. մասնաւոր
բաժանելին և մնացորդ 8 ին քով աւնելով բաժա-
նելին յաջորդ թուանշանը, կըլլայ 80 Բ. մասնա-
ւոր բաժանելի, որուն մէջ բաժանող 9 ը 8 ան-
գամ ըլլալով, Բ. մասնաւոր բանորդը կըլլայ 8,
ասով բաժանողին արտադրեալ 72 ը հանելով Բ.
մասնաւոր բաժանելի 80 էն, և մնացորդ 8 ին քով
բաժանելին յաջորդ թուանշան 1 ը դնելով կըլլայ
Գ. մասնաւոր բաժանելի 81, որուն մէջ 9 բաժա-

նորը 9 անգամ կը սրարունակի և կըլլայ Գ. մասնաւոր քանորդը 9, ստով բաժանողին արտադրեալը, որ է 81, կը հանենք Գ. մասնաւոր բաժանելիին, որ մնացորդ չի թողոր, և բաժանելիին բոլոր թուանշանները հասնելով քանորդին կըլլայ 689 :

Բայց գործնականին մէջ, բաժանողը միաթուանշան եղած ստեն, սովորութիւն է հետեւեալ կերպով կատարել բաժանումը :

9, 6204 Ըսելով 9 ը 62ին մէջ 6 կայ 8
689 կուեւնայ, քանորդ 6 ը կը գրեմ
62ին տակ և մնացորդ 8 ը յաջորդ թուանշանին հետ անելով կը շարունակեմ 9 ը 80ին մէջ 8 կայ 8 կուեւնայ, քանորդ 8 ը բաժանելիին 0ին տակը դնելով մնացորդ 8ին հետ կուեւնեմ բաժանելիին յաջորդ թուանշանը ըսելով 9 ը 81ին մէջ 9 կայ բան չուեւնար, քանորդ 9 ը կը դնեմ բաժանելիին 1ին տակը, որով կըլլայ ամբողջ քանորդը 689 :

Այս եղանակաւ բազմաթուանշան քանորդին իւրաքանչիւր թուանշանները դատ դատ դիւրութեամբ գտնուեցաւ :

Գ. «Ա. մասնաւոր բաժանելիին ետքը քանի թուանշան որ կայ Ա. մասնաւոր քանորդին ետքն ալ այնքան թուանշան ըլլալու է, վասն զի Ա. մասնաւոր քանորդը և Ա. մասնաւոր բաժանելիին միևնոյն կարգի թիւեր են » : Ուստի երբ մասնաւոր բաժանելի մը բաժանողին փոքր ըլլայ, քանորդին մէջ զրօ դնելու է. հետեւապէս Ա. մասնաւոր բաժանելիին ետքը գտնուած թուանշաններուն համ-

բանքին մէկ աւելի կըլլայ քանորդին թուանշաններուն համարանքը :

Ե. «Մասնաւոր քանորդները 9 են աւելի չեն կրնար ըլլալ, վասն զի, եթէ տասնյմէ մէկը տասնաւոր 10 ըլլայ, իր մասնաւոր բաժանելիին աջ կողմի թուանշանը գտնելով մնացեալին մէջ բաժանողը գտնէ 1 անգամ սրարունակելու է » :

Զ. Միաթուանշան բաժանողի մը քանորդները դիւրութեամբ կը գտնուի. բայց բազմաթուանշան բաժանողի մը քանորդները դիւրութեամբ և ճիշտը գտնալու համար կը մտածենք որ ինչ և լցէ մասնաւոր բաժանելիի մը մէջ բաժանողը ճիշդ այնչափ անգամ կը սրարունակի որչափ անգամ որ բաժանողին տակն մէկ կարգերը նոյն մասնաւոր բաժանելիին նման կարգերուն մէջ կը սրարունակին » : Ինչպէս՝ 4364ին մէջ 379 քանի անգամ սրարունակիլը ճիշդ գտնալու համար կըսեմ բաժանողին 3 հարիւրաւորը բաժանելիին 43 հարիւրաւորին մէջ 9 անգամ կայ, բայց բաժանողին 7 տասնաւորը բաժանելիին 6 տասնաւորին մէջ այնչափ անգամ չէկայ, ուստի կըսեմ բաժանողին 3 հարիւրաւորը բաժանելիին 43 հարիւրաւորին մէջ 8 անգամ կայ 3 կուեւնայ, որ քովի թուանշանին հետ կըլլայ 36 տասնաւոր, որուն մէջ բաժանողին 7 տասնաւորը 8 անգամ կայ, բայց բաժանողին 9 միւսորը բաժանելիին 4 միւսորին մէջ չիկայ, ուստի նորէն ըսելու եւրով կըսեմ բաժանողին 3 հարիւրաւորը բաժանելիին 43 հարիւրաւորին մէջ 7 անգամ կայ 10 կուեւնայ, և բաժանողին 7 տասնաւորը բաժանելիին 406 տասնաւորին մէջ 7 անգամ կայ և շատ լին 106 տասնաւորին մէջ 7 անգամ կայ և շատ կուեւնայ, բաժանողին միւսորն ալ բաժանելիին

միաւորին մէջ այնչափ անգամ պարունակիլը գիտնալով կըսեմ՝ բաժանողը բաժանելիին մէջ 7 անգամ կը պարունակի . որով բաժանողը բազմապատկելով բաժանելիին կը հանեմ և կունենամ 514 մը նացորդ :

$$\begin{array}{r|l} 4364 & 379 \\ \hline 4053 & 7 \\ \hline 511 & \end{array}$$

Բաժանողին խորքունչիւր կարգերը մասնաւոր բաժանելիին իր նման կարգերուն մէջ նայած ստեննիս երբ մնացորդը քանորդին հաւասար կամ անկէ մեծ ըլլայ , քանորդը փոփոխութեամբ գրելու է , փոսն զի այս քանորդները տասնէն փոքր միաթուանշան թիւերը ըլլալով քանորդէն մեծ մնացորդին քով մասնաւոր բաժանելիին յաջորդ թուանշան ստնելով մնացորդը տասնապատիկ կաւելնայ . որուն մէջ միաթուանշան բաժանող մը միաթուանշան քանորդէն աւելի կը պարունակէ : Ինչպիս՝ վերի օրինակին մէջ 5ը 43 ին մէջ 7 կայ 10 կաւելնայ ըսած առեւնիս , քանորդ 7ը փոփոխութեամբ գրելու է , 10 մնացորդը 7 քանորդէն մեծ ըլլալուն համար , փոսն զի 10 մնացորդին քով բաժանելիին յաջորդ թուանշան 6ը գնելով կը տասնապատիկ և կըլլայ 106 , որոյ մէջ բաժանողին յաջորդ թուանշան 7ը 7 անգամէն շատ աւելի կը պարունակի :

Է . « Բանորդը ճիշտ է , երբ զայն բաժանողով բազմապատկելով և մնացորդը եթէ կայ , արտադրեալին վրայ աւելցնելով՝ երածը բաժանելիին հաւասար ըլլայ » : Վասն զի բազմապատկութիւն և բաժանում իրարու փոխադարձ գործողութիւններ

են (68) : Ինչպիս 33614ը 8 ուլ բաժնենք , և քանորդին ճիշդ ըլլալը ստուգենք :

$$\begin{array}{r|l} 8 , 33614 & \text{Բաժնելով գտայ 4431} \\ & \text{քանորդ , և 6 մնացորդ :} \\ & \text{Բանորդին ճիշդ ըլլալը} \\ & \text{ստուգելու համար , 4431} \\ & \text{ը 8 բաժանողով բազմապատկելի և արտադրեալին վրայ աւելցուցի} \\ & \text{6 մնացորդ , գումարն ելաւ բաժանելիին հաւասար :} \\ & \text{ԿԱՆՈՆԲ ԲԱԺԱՆՄԱՆ} \\ & \text{72. Ա . Բաժանողը միարտաշան և բաժանելին} \\ & \text{անոր տասն անգամէն պզտիկ :} \\ & \text{« Որ բաժանողին աջ կողմը դրօ մը գնելով և} \\ & \text{բաժանելիին մեծ գտնելով՝ կը հասկցուի : Պէտք է} \\ & \text{ասոնց քանորդը բազմապատկութեան աղիւսակէն} \\ & \text{(58) ստիլիլ կամ փարթութեամբ գոյ գիտնալ :} \\ & \text{Վասն զի քանի որ } 7 \times 8 = 56 \text{ է , 56ին մէջ 7ը 8} \\ & \text{կայ , կամ 8ը 7 կայ : Եւ մանապէս 63ին մէջ 9ը} \\ & \text{7 անգամ կայ 2 կաւելնայ և 7ը 9 անգամ կայ 2} \\ & \text{կաւելնայ որովհետեւ } 9 \times 7 + 2 = 65 \text{ :} \\ & \text{Խ Ն Դ Ի Բ Բ :} \\ & \text{211 . Հաւասարապէս պիտի բաժնենք 4 որչք 4} \\ & \text{հոգոյ վրայ . խորքանչիւրի ին ի՞նչ կիչնայ , 4ը 4 ին} \\ & \text{մէջ քանի՞ կայ : } \text{Պ . 1 :} \\ & \text{212 . 35 տանճը 7 տրոց մէջ հաւասարապէս բաժնելու համար , անկն մկուակ քանի՞ հաւասար է . 7ը} \\ & \text{25 ին մէջ քանի՞ կայ : } \text{Պ . 5 :} \\ & \text{213 . 48 որչք 6 աղքատաց քաժնելու համար ,}$$

Բաժնելով գտայ 4431 քանորդ , և 6 մնացորդ : Բանորդին ճիշդ ըլլալը ստուգելու համար , 4431 ը 8 բաժանողով բազմապատկելի և արտադրեալին վրայ աւելցուցի 6 մնացորդ , գումարն ելաւ բաժանելիին հաւասար :

ԿԱՆՈՆԲ ԲԱԺԱՆՄԱՆ

72. Ա . Բաժանողը միարտաշան և բաժանելին անոր տասն անգամէն պզտիկ :

« Որ բաժանողին աջ կողմը դրօ մը գնելով և բաժանելիին մեծ գտնելով՝ կը հասկցուի : Պէտք է ասոնց քանորդը բազմապատկութեան աղիւսակէն (58) ստիլիլ կամ փարթութեամբ գոյ գիտնալ : Վասն զի քանի որ 7×8=56 է , 56ին մէջ 7ը 8 կայ , կամ 8ը 7 կայ : Եւ մանապէս 63ին մէջ 9ը 7 անգամ կայ 2 կաւելնայ և 7ը 9 անգամ կայ 2 կաւելնայ որովհետեւ 9×7+2=65 :

Խ Ն Դ Ի Բ Բ :

- 211 . Հաւասարապէս պիտի բաժնենք 4 որչք 4 հոգոյ վրայ . խորքանչիւրի ին ի՞նչ կիչնայ , 4ը 4 ին մէջ քանի՞ կայ : Պ . 1 :
- 212 . 35 տանճը 7 տրոց մէջ հաւասարապէս բաժնելու համար , անկն մկուակ քանի՞ հաւասար է . 7ը 25 ին մէջ քանի՞ կայ : Պ . 5 :
- 213 . 48 որչք 6 աղքատաց քաժնելու համար ,

խրաքանչիւրին ո՞րչափ տարւ է : Ո՞ր յիւր 6 ու՛
րազմատասկերու է 48 ունեւարու համար : Պ . 8 :

214 . Մարդ մը 8 տղայ ունէր . 58 դրը պիտի
բաժնէր 7 տղոցը մէջ հաւասարապէս , և մնացորդ
այ փոքրիկ տղան պիտի տար : Ֆոքր տղան ո՞րչափ
և միւս 7ր տղոց իրաքանչիւրը քանակա՞ն կը պիտի
առնեն : 8ր 58 ին մէջ քանի՞ կայ և ո՞րչափ կաւել-
նայ : Պ . 8 կայ և 2 կաւելնայ :

215 . Մէկը եկեղեցոյն 67 դրը տուաւ . որ 9 քա-
հանայք իրեն մէջ հաւասարապէս բաժնեն և մնացոր-
դըն ալ շատարարին տան : Մէկ քանական ո՞րչափ
պիտի ընդունի և շատարարը որչա՞փ : Գր ի՞նչ քուով
բազմատասկերու է և վրան ԳԷն փոքր ի՞նչ յիւ աւել-
ցընելու է որ 67 դրոյ՞ :

Պ . Մէկ քանական 7 դրը և շատարարը 4 դրը պի-
տի առնէ ,

216 . Մէկը 8 օրուան մէջ 50 դրը շահեցաւ , օրը
քանի՞ դրը և քանի՞ փաթա շահեցաւ : 8ր 50 ին մէջ
քանի՞ կայ . Պ . 6 դրը 10 փոյ :

217 . 8 հոգի 75 դրը ժախք ըրին . բայց մէկեր-
նուն մէկ քանին մէյմէկ դրը աւելի ժախք ըրին : Ի-
րաքանչիւրը քանակա՞ն ժախք ըրին , և մէյմէկ դրը ,
աւելի ժախք ընողները քանի՞ հոգի կին : 8ր 75 ին
մէջ քանի՞ կայ և քանի՞ կաւելնայ :

Պ . 9 կայ 3 կաւելնայ :

218 . 6 խաւանաւոր 53 խաւ կտրեցին մէկ օր-
ուան մէջ , մէջերնուն մէկը 2 խաւ աւելի կտրեց , և
մէկ քանին ալ մէյմէկ խաւ աւելի . իրաքանչիւրը
քանի՞ խաւ կտրեց , և քանի՞ն մէյմէկ աւելի . 6ր
53 ին մէջ քանի՞ կայ և ո՞րչափ կաւելնայ :

Պ . 8 կայ և 5 կաւելնայ , կաւ 2 հոգի 8 ական ,

3 հոգի 9 ական խաւ կտրեցին և 4 հոգին ալ 10 խաւ :
219 . 7 աշխատաւոր 45 կանգուն գործ քանեցան

5 խաւու մէջ , ստեղծէ մէկ քանին մէյմէկ կանգուն
աւելի քանեցան : Իրաքանչիւրը քանակա՞ն կանգուն
քանեցան : 7ր 45 ին մէջ քանի՞ կայ և քանի՞ կաւելնայ :

Պ . 6 ակնոյ կայ և 3 կաւելնայ . կաւ 4ր 6 ական
և 3ր 7 ական կանգուն քանեցան :

220 . Գոխը 85 ին մէջի 9 ին մեխագոյն բազմատա-
տիկը : Գր 85 ին մէջ քանի՞ կայ և քանի՞ կաւելնայ :
Պ . 84 . կաւ Գր կայ 4 կաւելնայ :

Բ . Բաժանողը միաբռանկան և բաժանիլին իր 10
ակնոյն մեծ .

» Այս թուոց բաժանումը ընելու համար պէտք
է ,

1^o Բաժանողը բաժանելիին ձախ կտրելը գրեւ
և կետով մը դատել :

2^o Բաժանելիին ձախ կտրի առջի մէկ կամ եր-
կու թուանշանը ընել Ա . մասնաւոր բաժանելի ,
և ասոր մէջ բնութեւ բաժանողը և քանորդը գրեւ
նոյն թուոց տակը :

3^o Մնացորդը , եթէ կայ , իբրև տասնաւոր
յաջորդ թուանշանին հետ առնելով ընել Բ . մաս-
նաւոր բաժանելի , որուն մէջ բնութեւ բաժանողը
քանորդը գրեւ նոյն թուոց տակը Ա . մասնաւոր քա-
նորդին քով :

4^o Մնացորդը , եթէ կայ , իբրև տասնաւոր,
բաժանելիին յաջորդ թուանշանին հետ առնելով
ընել Գ . մասնաւոր բաժանելի , որուն մէջ բնու-
տեւ բաժանողը , քանորդը գրեւ ստջիններուն
քովը :

5^o Մնացորդը , եթէ կայ , իբրև տասնաւոր

առնել բաժանելին յաջորդ թուանշանին հետ և շարունակել գործողութիւնը մինչև բաժանելին վերջի թուանշանը :

6°. Վերջի մնացորդը բոլոր բաժանմանը մնացորդն է :

7°. Եթէ բաժանողը որ և իցէ մէկ մասնաւոր բաժանելին մէջ չի սարունակի քանորդին տեղ զրօ դրել նոյն մասնաւոր բաժանելին տակը » :

Օրինակ Ա. 7137ը 3 ուլ բաժնել :

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բաժանող 3. 7137 Բաժանելի
2379 Քանորդ

Փորձ $\left\{ \begin{array}{l} 3 \\ \hline 7137 \end{array} \right.$

Նախ՝ բաժանող 3ը բաժանելի 7137ին ձախտ կողմը գրեցի, և ետքը բաժանելին ձախ կողմի առջի թուանշանը 7ը Ա. մասնաւոր բաժանելի ընելով ըսի 3ը 7ին մէջ 2 կայ 1 կաւելնայ, գրեցի 2 քանորդը 7ին տակը, և 1 մնացորդն աւ բաժանելին յաջորդ թուանշանին հետ եղաւ 44 Բ. մասնաւոր բաժանելի, ասոր մէջ բաժանող 3ը 3 կայ 2 կաւելնայ, գրեցի 1 ին տակը 3 քանորդը և 2 մնացորդը բաժանելին յաջորդ թուանշանին հետ եղաւ 23, Գ. մասնաւոր բաժանելի, այս կերպով բաժանումը շարունակելով եղաւ ընդհանուր քանորդը 2379 : Ասոր ուղիղ ըլլալը ըստուգելու համար բազմապատկեցի բաժանող 3 ուլ և գտայ սրտադրեալ 7137 հաւասար բաժանելին :

Օրինակ Բ. Բաժնել 24397ը՝ 8 ուլ :
8, 24397
3049 ⁵/₈
8
—
24392
5
—
24397

կը գրեմ 9ին տակը քանորդ 4ը, մնացորդ 7ը յաջորդ թուանշանին հետ առնելով կըլլայ 77, որոյ մէջ 8ը 9 կայ 5 կաւելնայ, կը գրեմ 9 քանորդը 7 ին տակը, և մնացորդ 5 ալ այս ձևովս ⁵/₈, որ ըսել է 5ը 8ուլ սխտի բաժնուի, և կը կարդայուի 5 բաժանեալ 8ի վայ կամ 8ը, և կամ 5 ութերորդ, որով ընդհանուր քանորդն եղաւ 3049 ⁵/₈ :

Բաժանման ուղիղ ըլլալն ստուգելու համար կը բազմապատկեմ քանորդը բաժանողով և արտադրեալին վրան կաւելցնեմ մնացորդը, որով կը զբանամ 24397 հաւասար բաժանելին :

Խ Ն Դ Ի Բ Բ

- 221. Հետևեալ բաժանումները կատարելու է Բաժանողք 4 8 9 7
Բաժանելիք 35675, 125676, 3145675, 3657151
Պ. 8918 ⁵/₄, 15709 ⁴/₈, 349519 ⁴/₉, 522450 ¹/₇
- 222. 25674 որք քա՞նի հիւնգնոց կընէ :
Պ. 5134 հիւնգնոց և 4 ալ կաւելնայ :
- 223. Օրր 9 ժամ աշխատելով 567 ժամու գործք քա՞նի օրէն կը ընկնայ :
Պ. 63 օրէն :

224. Որք տան շինարեսն համար 1256746 որչ
ժախք եղաւ, մէկ տան ժախքը քա՞նի է :

Պ. 157093 $\frac{2}{8}$ որչ :

225. Բաժնեկու է Է մարդոց մէ, հաւասարապէս
67579 որչ :

Պ. 8447 $\frac{5}{8}$:

226. Տան մը 7 սանտան վարձն է 1680 որուչ :
մէկ սանտան վարձը քա՞նի է :

Պ. 240 որչ :

227. Վեց օ մանկան ոսկին կարժէ 810 որչ . 1
ոսկին որչա՞փ կարժէ :

Պ. 135 որչ :

228. 4 գոյգ ձին կարժէ 23700 որչ . 1 գոյգ ձին
ո՞րչափ կարժէ :

Պ. 5925 որչ :

229. Մէկու 3 տարեկանը կարժէ 64500 որչ .
մէկ տարեկանը քա՞նի կարժէ :

Պ. 21500 որչ :

230. 12675 ին կէտը քա՞նի է, երրորդ մասը
քա՞նի . չարրորդ մասը քա՞նի . հինգերորդ մասը քա՞
նի :

Պ. 6337 $\frac{1}{2}$. 4225 . 3168 $\frac{5}{4}$. 2535 :

ՅԱ. Գ. Բաժանողը և բաժանելին բազմարուա
կան :

Ասոնց բաժանուածը կատարելու համար պէտք է ,

10. Բաժանելին գրեւ, և ասոր աջ կողմը քա-
շեւ դազաթնահայեաց գիծ մը որուն մէջ տեղէն
նաև հորիզոնական գիծ մը, և դնել հորիզո-
նական գծին վրայ բաժանողը, որուն տակը պիտի
գրուի քանորդը :

20. Բաժանելին ձախ կողմէն բաժանողին թուա-
նշաններուն շափ դատել Ա. մասնաւոր բաժանելի
համար, կամ թէ որ այսչափը բաժանողէն պղտիկ
է, թուանշան մը աւելի առնել :

30. Բաժանողը նայիւ Ա. մասնաւոր բաժանե-
լին մէջ թէ քանի անգամ կայ . զայն գրել Ա.
մասնաւոր քանորդ :

40. Բանորդով բազմապատկել բաժանողը և ար-
տադրեալը գրել Ա. մասնաւոր բաժանելոյն տակը
և ստորագծելով հանել զայն վրայինէն, մնացորդին
քովն առնելով Ա. մասնաւոր բաժանելին յաջորդ
թուանշանը, որ կըլլայ Բ. մասնաւոր բաժանելի :

50. Բաժանողը նայիւ Բ. մասնաւոր բաժանե-
լին մէջ թէ քանի անգամ կը պարունակի, զայն
գրել Բ. մասնաւոր քանորդ առաջնոյն աջ կողմը :

60. Բ. Մասնաւոր քանորդով բազմապատկել
բաժանողը, արտադրեալը բաժանելին տակը գրե-
լով հանել իրմէն, մնացորդին քովն առնելով բա-
ժանելին յաջորդ թուանշանը որ կըլլայ Գ. մաս-
նաւոր բաժանելի .

70. Այսպէս շարունակել բաժանումը մինչև
բաժանելին բոլոր թուանշաններն հատնին : Ալ եր-
ջի մնացորդը ամբողջ բաժանման մնացորդն է :

80. Բաժանողը որ և իցէ մասնաւոր բաժանելի
մը մէջ ճշգիւ քանի անգամ պարունակիլը գըտ-
նալու համար . բաժանողին Ա. թուանշանը մասնա-
ւոր բաժանելին ձախ կողմի առջի մէկ կամ երկու
թուանշանին մէջ քանի անգամ որ կը պարունակի-
նայիւ թէ բաժանողին միւս թուանշաններն ալ մաս-
նաւոր բաժանելոյն նոյն կարգի թուոց մէջ նոյն-
չափ անգամ կը պարունակին, եթէ չի պարունա-
կին հետզհետէ քանորդը մէկ մէկ պղտիկցնել և
այնպէս փորձել, մինչև որ ամէնքն ալ հաւասարա-
պէս պարունակին : Փորձած ատեննիս թէ որ մէ-
կուն մնացորդը քանորդին հաւասար կամ անկէ մեծ

ըլայ, նայիլը կամ փորձելը դադարեցնելով քանոր-
դը վատահուժեամբ գրել:

9^o. Քաժանման ատեն պէտք է դիտել որ

Քանորդին որ և է մէկ թուանշանով բաժանո-
ղին արտադրեալը իր մասնաւոր բաժանելիէն մեծ
չըլայ. եթէ ըլլայ, քանորդը սխալ և մեծ է,
պէտք է պղտիկցնել:

Ամեն մէկ մնացորդ բաժանողէն փոքր ըլլայ.
Եթէ հաւասար կամ մեծ ըլլայ, քանորդը սխալ և
փոքր է, պէտք է մեծցնել:

Ա. մասնաւոր բաժանելիէն ետքը քանի թուա-
նշան որ ըլլայ ընդհանուր բաժանելիին մէջ, Ա. մաս-
նաւոր քանորդէն ետքն ալ նոյնչափ թուանշան
գտնուելու է ընդհանուր քանորդին մէջ: Ուստի երբ
ինչ և իցէ մասնաւոր բաժանելի մը բաժանողէն
փոքր ըլլայ, քանորդին մէջ զրօ դնելով ետքը բա-
ժանելիին յաջորդ թուանշանը քովը առնելու է:
Հետեւապէս Ա. մասնաւոր բաժանելիէն ետքի թը-
ւանշաններուն համբանքէն մէկ աւելի կըլլայ քանոր-
դին թուանշաններուն համբանքը:

Օրինակ Ա. 10467 բաժնել 12 ուլ

10467		12	
96		872	⁵ / ₁₂
86		12	
84		1744	
27		872	
24		3	
3		10467	

Փորձ

10467ը 12ուլ բաժնելու
համար, կը գրեմ 12
բաժանողը բաժանելիին
աջ կողմը դադարեցնա-
հայեաց դժէ մը ետքը
և բաժանողին տակէն
հորիզոնական գիծ մը
քաշելով, կառնեմ բա-

ժանելիին ձախ կողմի երկու թուանշանը, որովհե-

տե բաժանողը երկու թուանշան ունի. բայց բա-
ժանելիին 10ը հաղարարորը բաժանող 12 էն փոքր
ըլլալով, կառնեմ երեք թուանշան 104 հարիւրա-
ւոր, առ է Ա. մասնաւոր բաժանելի. ստոր մէջ 12
բաժանողը կը բնութեմ թէ քանի անգամ կայ, և
դիտնալով որ 9 էն աւելի չի կայ, կըսեմ 1ը տաս-
նին մէջ 9ը կայ 1 կաւելնայ, բայց 2ը 14ին մէջ
9ը չըլլալով, կըսեմ որ 1ը 10ին մէջ 8ը կայ 2 կա-
ւելնայ, և 2 ալ 24 ին մէջ 8 էն աւելի պարունա-
կելով կը գրեմ առաջին մասնաւոր քանորդ կամ
քանորդին հարիւրաւոր 9՝ բաժանողին տակը. ստով
բաժանող 12ը բազմապատկելով կը գրեմ արտադ-
րեալը, որ է 96, առաջին մասնաւոր բաժանելի
104ին տակը, հանելով և մնացորդին աջ կողմը
բաժանելիին յաջորդ թուանշանը գրելով, կառնե-
նամ երկրորդ մասնաւոր բաժանելի 86 տասնաւոր.
ստոր մէջ բաժանող 12ը քանի անգամ պարունա-
կելը գտնալու համար կըսեմ 1ը 8ին մէջ կայ 8ը,
և 2ը 6ին մէջ 8 անգամ չարունակելուն համար,
կըսեմ 1ը 8ին մէջ 7ը կայ 1 կաւելնայ, և 16ին
մէջ 2 ալ 7 անգամ պարունակելով կը գրեմ քա-
նորդին տասնաւոր 7, ստով բաժանողը բազմա-
պատկելով և արտադրեալը, որ է 84, կը գրեմ երկ-
րորդ մասնաւոր բաժանելիին տակը և անկէ հանե-
լով ու մնացորդին աջ կողմը բաժանելիին յաջորդ
թուանշանը գրելով կառնենամ երրորդ մասնաւոր
բաժանելի 27, որոյ մէջ 12՝ բաժանողը քանի ան-
գամ պարունակելը գտնալու համար կըսեմ 1ը 2ին
մէջ 2 կայ, և 2 ալ 7ին մէջ 2էն աւելի պարունա-
կելով կը գրեմ քանորդ 2, ստով բաժանողը բազ-
մապատկելով և արտադրեալը երրորդ մասնաւոր բա-

ժանելիին հանելով կունենամ քանորդ 872 և մու-
ցորդ 3 : Այս գործարարեան ճիշտ ըլլալը ստու-
գելու համար կընեմ վորճը , բաժանող 12ով կը
բաղմապատկեմ քանորդը և կառելցնեմ վրան մու-
ցորդը և կունենամ 10467 , հաւասար բաժանելիին :

Օրինակ Բ . 15633ը բաժնել 27ով ,

15633		27
135		579
<hr/>		
213		27
189		4053
<hr/>		
243		1158
243		15633
<hr/>		
0		

Փորձ

15633ը 27 ուլ բաժնե-
նելու համար կը գրեմ
բաժանողը բաժանելիին
աջ կողմէ գաղաթեա-
հայեաց քճէ մը ետքը,
և բաժանողին տակին
գլիճ մը քաշելով կա-

նեմ բաժանելիին ձախ կողմի երկու թուանշանը ,
որովհետեւ բաժանողը երկու թուանշան ունի . բայց
այս երկու թուանշանը , որ է 15 հաղարուոր ,
բաժանող 27 կն վորքը ըլլալով , կառնեմ երեք
թուանշան 156 հարիւրաւոր , սա է առաջին մաս-
նաւոր բաժանելի . ասոր մէջ 27ը բաժանողը քանի
անգամ պարունակելը գտնալու համար կըսեմ 2ը
15ին մէջ 7 կայ 1 կաւելնայ , և 7ը 16ին մէջ 7
անգամ չըլլալուն համար նորէն կտխիմ ըսելու 2ը
15ին մէջ 6 կայ 3 կաւելնայ , և 7ը 36ին մէջ 6
անգամ չըլլալուն համար դարձեալ կտխիմ ըսե-
լու 2ը 15ին մէջ 5 կայ 5 կաւելնայ , կը գրեմ քա-
նորդ 5 , (ամեն անգամ որ բաժանողին թուանը
շանները բաժանելիին թուանշաններուն մէջ զատ
զատ բնառած առեւննիս մնացորդը քանորդին հաւա-
սար կամ անկէ մեծ ըլլայ , ալ բնառելը չարու-
նակելու չէ , այլ քանորդը վնասաւթեալի գրելու

է) , քանորդ 5 ուլ բաժանողը բաղմապատկելով և
արտադրեալը , որ է 135 , առաջին մասնաւոր բա-
ժանելիին հանելով մնացորդին քով կառնեմ բա-
ժանելիին յաջորդ թուանշանը և կըլլայ երկրորդ
մասնաւոր բաժանելի 213 , ասոր մէջ 27 բաժանողը
քանի անգամ պարունակելը գտնալու համար , կ'ը-
սեմ , 2ը 21ին մէջ 9 կայ 3 կաւելնայ , և 7ը 33ին
մէջ 9 անգամ չկայ , ուստի նորէն գաւնալով
կըսեմ 2ը 21ին մէջ 8 կայ 5 կաւելնայ և 7ը 53
ին մէջ 7 կայ 4 կաւելնայ , կը գրեմ քանորդ 7 : և
ստով բաժանողը բաղմապատկելով և երկրորդ մաս-
նաւոր բաժանելիին հանելով և մնացորդին քով
բաժանելիին յաջորդ թուանշանը առնելով կունե-
նամ երրորդ մասնաւոր բաժանելի 243 , ասոր
մէջ 27 բաժանողը քանի անգամ պարունակելը
գտնալու համար կըսեմ 2ը 24ին մէջ 9 կայ 6 կա-
ւելնայ և 7ը 63ին մէջ 9 անգամ պարունակելուն
համար կը գրեմ քանորդ 9 , ստով բաժանողը
բաղմապատկելով և արտադրեալը , որ է 243 ,
երրորդ մասնաւոր բաժանելիին հանելով մնացորդ-
չունեցայ , և եղաւ ամբողջ քանորդը 579 : Փորձն
ալ ընելով ուղիղ ըլլալը կատարեմ :

Օրինակ Գ . 623737ը բաժնելու է 178 ուլ

623737		178
534		3504 ²⁵
<hr/>		
897		178 ¹⁷⁸
890		28032
<hr/>		
737		24528
712		3504
<hr/>		
25		25
<hr/>		
		623737

Փորձ

Բաժանելիին ձախ
կողմի առջի երեք թը-
ւանշանը բաժանողին
մեծ ըլլալով առաջին
մասնաւոր բաժանելիե-
րու 623 , ասոր մէջ
178 բաժանողը քանի
անգամ պարունակելը
գտնալու համար կ'ը-

սեմ 1ը 6 ին մէջ 6 կայ բան չաւելնար . բայց 7ը 2ին մէջ չը սրտունակելուն համար , կըսեմ 1ը 6ին մէջ 5 կայ 1 կաւելնայ . և 12ին մէջ 7ը 5 անգամ չը սրտունակելուն կըսեմ 1ը 6ին մէջ 4 կայ 2 կաւելնայ , և 7ը 22ին 4 անգամ չը սրտունակելուն համար՝ կըսեմ 1ը 6ին մէջ 3 կայ 3 կաւելնայ , ուստի կը գրեմ՝ քանորդ 3 , և ստով կը բաղմնադատեմ բաժանողը և արտադրեալը տռաջին մասնաւոր բաժանելիին հանելով ու մնացորդին քով բաժանելիին յաջորդ թուանը . քննը առնելով կըլլայ երկրորդ մասնաւոր բաժանելին 897 , և ստոր մէջ 178ը բնտուելով կը գտնամ քանորդ 5 , և ստով բաղմնադատելով բաժանողը և արտադրեալը երկրորդ մասնաւոր բաժանելիին հանելով և մնացորդին քով բաժանելիին յաջորդ թուանը առնելով կըլլայ երրորդ մասնաւոր բաժանելին 73 , սրայ մէջ 178 բաժանողը չսրտունակելուն համար քանորդին մէջ դրո՞մը կը գնեմ և կառնեմ 73 ին քով բաժանելիին յաջորդ թուանը և կըլլայ յաջորդ մասնաւոր բաժանելին 737 , ստոր մէջ ըսա կոնոնի բաժանող 178 քանի անգամ սրտունակելը բնտուելով կը գտնամ քանորդ 4 և մնացորդ 25 , և սրով տարողը քանորդը կըլլայ 3504 . որոյ սխալ : չըլլալը ստուգելու համար փորձ կընեմ , բաղմնադատելով քանորդը բաժանող 178ով , և մնացորդ 25ը վրան տակցնելով կուենեամ 623737 հաւասար բաժանելիին :

Օրինակ Գ .		Օրինակ Ե .	
1720'9'8'	367	11792'0'0'	4368
1468	4689 ¹²⁵ / ₅₆₇	9136	2581 ¹⁹⁹² / ₄₅₆₈
2529		26560	
2202		22840	
3278		37200	
2936		36544	
3428		6560	
3303		4568	
125		1992	

Խ Ն Դ Ի Ր Բ

231 , Հետեւայ բաժանումները կատարելու է փորձերովը մկտեղ :

Բաժանողը	358	2978	5689	379	28764
Բաժանելիք	1005016	135678	36437800		
	31234000	12567860			

Պ. 2807 ¹¹⁰/₅₅₈ 45 ¹⁶⁶⁸/₂₉₇₈ 6404 ⁵⁴⁴⁴/₅₆₈₉

82414 ²⁵¹/₅₇₉ 436 ²⁶⁷⁵⁶/₂₈₇₆₄

232 . Դիպրոցի մը մէջ 157 աշակերտ կայ , որուն տարեկան ծախքն է 65756 դր . մկ աշակերտին համար ո՞րչափ ծախք կըլլայ :

Պ . 418 ¹⁵⁰/₁₅₇

233 : Դիցուք թէ 16 տարեկան ես , և հայրս քեզ համար 40960 դր ծախք ըրամ է . մկ տարեկան ո՞րչափ ծախք ըրամ է :

Պ . 2560 դր :

234 . 1564 տան համար 256402 հոխա 64 տրմ

- այիտ կերրայ . մէկ տան հասար ո՞րչափ կերրայ :
- Պ . 163 հից 376 տրմ :
- 235 , 15795 հից պղինձր 568620 որշ կարժէ .
- մէկ էխն քանի՞ որշ կարժէ : Պ . 36 որշ :
- 236 . 15765 որշ 15 հոգոյ քաժնկու է :
- Պ . 1051 որշ :
- 237 . Մէկ տարտան մէշ 24672 որշ Տախք ըրի ,
- ամասկան Տախք ո՞րչափ է : Պ . 2056 որշ :
- 238 . Պարտք ունիմ 25 մարդու հաւասարապէս
- 140400 որշ . մէկուն ունեցա՛ պարտք ո՞րչափ է :
- Պ . 5616 որշ :
- 239 . 279 հից ոսկին կարժէ 6696000 որշ . մէկ
- հոխան քանի՞ որշ է : Պ . 24000 որշ :
- 240 . 137 թէֆէ մետքս ափ և վճարեցի 92475
- որշ . մէկ թէֆէն քանի՞ որշ կրնէ : Պ . 675 որշ :

ԳԻՒՐԱԳՈՅՆ ԿԱՆՈՆ ԲԱԺԱՆՄԱՆ

ԿԱՄ

ԲԱԺԱՆՈՒՄՆ ՏԱՍՆԱՊԱՏԻԿ ՅՈՒՑԱԿԱՒ
ԲԱԱՍՆՈՂԻ

ՅԾ. Բաժանման մէջ բաժանողն ու քանորդը բաղմոթուանչան եղած ատեն , արդէն աւանդեալ կանոնով անոնց գործողութիւնը անվրէպ կատարելու դժուարութիւն կը քաջուի շատ անգամ , մանաւանդ իւր վարժութիւն ունեցող անձանց կողմէն : Այս դժուարութիւնը գլխաւորաբար մասնաւոր քանորդները որոշելու , և ասոնցմով բաժանողը բաղմասրատիւնն մէջ է , ուստի բոլորովին ատոր

տաջեն առնելու և բաժանման գիւրագոյն կանոն մը ունենալու համար առաջուց ՚ի վեր սովորութիւն եղած է :

1^o. « Պատրաստել բաժանողին տասնապատիկ ցուցակը , որուն համար նախ՝ բաժանողը գրելու է , ասոր աջ կողմէն դադարժնահեաց դիմ մը իջեցնելով , ասոր ալ աջ կողմը բաժանողին տողին մէջ գրելու է 1 , ետքը բաժանողը իր վրայ աւելցնելով գրելու է իր տակը և ասոր տողին մէջ գծին աջ կողմը 1 ին տակը գրելու է 2 . որ կը ցուցնէ թէ բաժանողին երկպատիկն է , այս թիւը բաժանողին վրայ աւելցնելով գումարը իր տակը գրելու է դիմացը 3 դնելով . որ կը լրաց բաժանողին եռապատիկը , և այսպէս հետզհետէ բաժանողին վրայ աւելցնելով գումարները իրարու տակ դնելու է դիմացին 4 , 5 և այլն մինչև 10 գրելով , որք կըլլան բաժանողին 4 ապատիկը , 5 ապատիկը և այլն մինչև 10 ապատիկը : Թէպէտե այս ցուցակին մէջ բաժանողին մինչև 9 ապատիկը պէտք է , 10 ապատիկը աւելորդ է , բայց այս առաջիններուն ճիշդ ըլլալը կատուք է , թէ որ այսպէս հետզհետէ բաժանողին վրայ գումարելով գտնուած 10 ապատիկը բաժանողին աջ կողմը զրո մը աւելցնելով ելած թուոյն հաւասար է , ըսել է որ առջինները ճիշդ են :

2^o. Ա. Մասնաւոր բաժանելին որոշելու է , որ բաժանողին թուանչաններուն չափ կամ այսքանը բաժանողէն փոքր եղած ատեն մէկ աւելի թուանչան բաժանելին ձախ կողմէն դատելով կըլլայ :

30. Ա. Մասնաւոր բաժանելին նայելու է որ ցուցակին մէջը կա՞յ , թէ որ չիկայ , անկէ փոքր եղած ամենէն մտաւոր թիւն առնելու և Ա. մաս

նաւոր բաժանելիին տակը գրելով հանելու է իրմէն ,
 ասոր դիմացի թուանշանը կըլլայ Ա. մասնաւոր
 քանորդը որ գրելու է քանորդին տեղը . մնացորդին
 քովը տանելու է բաժանելիին յաջորդ թուա-
 նըջանը , որ կըլլայ Բ. մասնաւոր բաժանելի :

40. Բ. Մասնաւոր բաժանելին ալ նայելու է
 ցուցակին մէջ , անոր հաւասար կամ անոր ամենէն
 ժտաւոր թիւը հանելու է իրմէն և մնացորդին բո-
 վըն տանելու է բաժանելիին յաջորդ թուանշանը ,
 Բ. մասնաւոր քանորդն ալ գրելու է Ա. մասնա-
 ւոր քանորդին քովը իր տեղը . ասանկ շարունակե-
 լու է մինչև որ բաժանելիին բոլոր թուանշաններն
 հասնին . վերջի մնացորդը ամբողջ բաժանման մը
 նացորդն է » :

Օրինակ . բաժնել 1 356 000 853 ը 2689 ով բա-
 ժանողին տասնապատիկ ցուցակաւ :

Բաժանելի	Բաժանող	Քանորդ
13560'0'0'8'5'3'	÷ 2689	1 = 304277
13445	5378	2
11500	8067	3
10756	10756	4
7458	13445	5
5378	16134	6
20705	18823	7
18823	21512	8
18823	24201	9
18823	26890	10
0		

Տասնապատիկ ցուցակ
բաժանողի

Խ Ն Դ Ի Բ Գ

241. Հետևեալ բաժանումները կատարելու է :
 Բաժանողը 286 4738 738

Բժնելիք 37753603662084740 325822784 1739066
 Պ. 132005607210090 68768 2357

242. Գործ մը 1 օրէն ընկնելու համար 12960
 մարդ պէտք է . 45 օրէն ընկնելու համար քանի
 մարդ պէտք է : Պ. 288 :

243. Կ. Պօլսոյ համար մէկ տարուան , պսիկքն
 365 օրուան մէջ 2281250 գրիւ ցորէն կարտախ , մէկ
 օրուան մէջ ո՞րչափ ցորէն կարտախ : Պ. 6250 :

244. Բաժնելու է 3756016 որչը 258 մարդոց
 հաւասարապէս :

Պ. $14558 \frac{52}{238}$

245. Խսանքարը 379 որչև 100000 որչով քանի
 խսանքար շաքար կրնայ առնուիլ :

Պ. 263 Խսանքար , 37 հօխայ $499 \frac{179}{579}$ ախրէմ :

246. Քարաքի մը 2048 տանց վրայ 1 000 000
 որուչի տարեկան տուրքը հաւասարապէս բաժնելու է :

Պ. 488 որչ $11 \frac{1}{4}$ փարայ :

247. Սժուխ առնուեցաւ 478 պարկ ընդ ամենը
 11950 հօխա , իրարու վրայ մէկ պարկ ամուխը քա-
 նի հօխայ է : Պ. 25 հօխայ :

248. Տուն մը շինուեցաւ 269 կանգուն գետնի վր-
 այ և ճախը եղաւ 98185 որչ , մէկ կանգունին քա-
 նի որչ ճախը եղա՞մ է : Պ. 365 որչ :

249. Կորձակայի մը տարեկանը 9000 որչ է .
 ամսականը քանի որչ կըլլայ և օրականը քանի :

Պ . Սևակահանը 750 , 4 օրականը 25 ,

250 . Հայր մը իր 21 որդեղը յառանգութիւն ձր-
ցեց 14492604 որչ . իրաքան իրիկն ո՞րչափ կիցնայ :

Պ . 690124 որչ :

ՇԾ . Փորձք բաժանեման և բազմապատկոյրեան :

Ա . « Արտադրեալը բաժանելի և արտադրողայ
մէկը բաժանող ընելով , թէ որ քանորդը միւս ար-
տադրողին նման ըլլայ , գործողութիւնը շտապ է » :

Բ . « Բաժանողը քանորդով բազմապատկելով և
արտադրեալին վրայ մնացորդը (թէ որ կայ) աւել-
ցընելով , եթէ գումարը բաժանելիին հաւասար ըլ-
լայ , գործողութիւնը շտապ է » :

Գ . « Բաժանելիին ու մնացորդին տարբերու-
թիւնը քանորդով բաժնելով , թէ որ երաճը բա-
ժանողին հաւասար ըլլայ , գործողութիւնը շտապ
է » :

ՇՇ . Տեսութիւնք բաժանեման .

Տեսութիւն Ա . « Բաժանողը անխօփօխ սրահելով
բաժանելին ինչ թուով որ բազմապատկուի , քա-
նորդն ալ նոյն թուով կը բազմապատկուի . բաժա-
նելին ինչ թուով որ բաժնուի , քանորդն ալ նոյն
թուով կը բաժնուի » : Վասն զի $80 \div 8 = 10$

և $80 \times 2 \div 8 = 10 \times 2$ և $\frac{80}{2} \div 8 = \frac{10}{2}$ այսինքն

$160 \div 8 = 20$ և $40 \div 8 = 5$:

Տեսութիւն Բ . « Բաժանելին անխօփօխ սրահելով ,
բաժանողը ինչ թուով որ բազմապատկուի , քա-
նորդն նոյն թուոյն չափովը կը բաժնուի . բաժանո-
ղը ինչ թուով որ բաժնուի , քանորդը նոյն թուոյն
չափովը կը բազմապատկուի » : Վասն զի $80 \div 8$
 $= 10$

և $80 \div (8 \times 2) = \frac{10}{2}$ և $80 \div \frac{8}{2} = 10 \times 2$ այսինքն

$80 \div 16 = 5$ և $80 \div 4 = 20$:

Տեսութիւն Գ . « Բաժանելին և բաժանողը միև-
նոյն թուով բազմապատկելով կամ բաժնելով քա-
նորդը անխօփօխ կը մնայ » : Վասն զի $80 \div 8 = 10$

և $(80 \times 2) \div (8 \times 2) = 10$ նոյնս $\frac{80}{2} \div \frac{8}{2} = 10$

այսինքն $160 \div 16 = 10$ » $40 \div 4 = 10$:

Տեսութիւն Դ . « Թէ որ բաժանելին և բաժանո-
ղը տարբեր թիւերով բազմապատկուին , քանորդը
նոյն բազմապատկող թուոյ քանորդին չափ կը բազ-
մապատկուի եթէ բաժանելիին բազմապատկողը մեծ
է միւսին , եթէ փոքր է՝ կը բաժնուի » : Վասն զի

$80 \div 8 = 10$

և $(80 \times 6) \div (8 \times 2) = 10 \times \frac{6}{2}$ և $(80 \times 2) \div (8 \times 4)$
 $= \frac{10}{2}$ այսինքն $480 \div 16 = 30$ և $160 \div 32 = 5$:

Տեսութիւն Ե . « Թէ որ բաժանելին և բաժանո-
ղը տարբեր թիւերով բաժնուին , քանորդը նոյն
բաժանողներուն քանորդին չափ կը բազմապատկուի
թէ որ բաժանելիին բաժանողը փոքր է միւսին , թէ
որ մեծ է՝ կը բաժնուի » : Վասն զի $80 \div 8 = 10$

և $\frac{80}{2} \div \frac{8}{4} = 10 \times 2$, և $\frac{80}{4} \div \frac{8}{2} = \frac{10}{2}$ այսինքն

$40 \div 2 = 20$ և $20 \div 4 = 5$:

Տեսութիւն Զ . « Թուոյ մը վրայ բազմապատկու-
թեան և բաժանման գործողութիւնը ՚ի միտին
սկտը եղած տակն , այս գործողութիւնները ինչ

կարգաւ որ ըլլան՝ արդիւնքն անխափօխ կը մնայ » :

Ինչպէս՝

$$(80 \div 10) \times 2 = (80 \times 2) \div 10 = 16$$

Վասն զի , բաժանելին բազմապատկելով քանորդը կը բազմապատկի . և քանորդը բազմապատկելու համար բաժանելին բազմապատկելու է , (77 տեսաւ թիւն Ա.) :

Տեսարիւն Է . « Թուոյ մը հետզհետեւ ուրիշ թիւերով բաժանման արդիւնքը հաւասար է նոյն բաժանող թուոյ արտադրեալովը բաժանման քանորդին » : Ինչպէս՝

$$(80 \div 8) \div 2 = 80 \div (8 \times 2) = 80 \div 16 = 5$$

Վասն զի , քանորդը բաժնելու համար բաժանողը բազմապատկելու է : (77 տեսաւ թիւն Բ.) :

Տեսարիւն Ը . « Փոխադարձորար թուոյ մը ուրիշ թուով մը բաժանման քանորդը հաւասար է , բաժանող թուոյն արտադրողներովը հետզհետէ բաժանման քանորդին » : Ինչպէս՝

$$80 \div 8 = 10 \text{ և } 80 \div 4 \div 2 = 10 \text{ վասն զի է } 4 \times 2 = 8$$

այս վերջի տեսաւթիւնէն կը հեռի ի որ շատ մը արտադրողներու արտադրեալ բազմաթուանշան թրււով մը՝ ինչ և իցէ թիւ մը բաժնելու տեղ , անոր արտադրողներովը հետզհետէ կրնայ բաժնուիլ

$$\frac{2808}{108} = 26 \text{ և } 108 = 4 \times 3 \times 9 \text{ ըլլալով}$$

4 ,	2808
3 ,	702
9 ,	234
	26

ԲԱԺԱՆՄԱՆ ՄՆԱՅՈՐԴԸ

ՅՏ . Բաժանումը շատ անգամ մնացորդ կունենայ (68) , այս մնացորդին ինչ ըլլալը հասկնալու համար առաջարկենք հետեւեալ խնդիրը : Խտհիլին հօխան 25 զրշ է , 360 զրշով բա՞նի հօխա խտհիլէ կրնանք առնել :

Յոյանի է որ 360 զրշին մէջ ո՞րչափ 25 զրշ կայ , այնչափ հօխա խտհիլէ կրնայ առնուիլ , ուստի 360 ը 25 ով բաժնելու է , որ կատարելով բաժանումը կը գտնուի 14 քանորդ և մնացորդ 10 , որով կը հասկցուի թէ 14 հօխա խտհիլէ կտանուի , և 10 զրշ ալ կաւելնայ . ուստի 10 իրրև մնացորդ բաժանելիին համասեւ է : Այսուամենայնիւ այս 10 զրշով ալ կրնայ խտհիլէ առնուիլ , թէպէտև հօխա յէն պահաս , բայց ո՞րչափ . ափ գտնալու համար կը մտածուի որ , խտհիլէին հօխան 25 զրշ ըլլալով , 1 զրշով 1 հօխային 25 երորդ մասին չափ խտհիլէ կտանուի այսինքն $\frac{1}{25}$ հօխայ , իսկ 10 զրշով հարկաւ $\frac{10}{25}$ հօխայ , որով քանորդին մէկ մասը կըլլայ և կը գրուի քանորդին քով $14 \frac{10}{25}$ հօխա , որուն կըլտուի « մնացորդը քանորդին քով հաստրակ կոտորակի ձևով գրուած » : Երբ մնացորդ 10 ին քով զրո մը դնենք բաժանելին 10 ով կը բազմապատկուի և մնացորդը 100 ըլլալով 25 ով կը բաժնուի և քանորդը կուտայ 4 . որով ամբողջ քանորդը կըլլայ 144 , բայց ափ ճշմարիտէն 10 անգամ մեծ ըլլալուն համար 10 ով բաժնելով (29) կըլլայ 14, 4 հօխայ , այսինքն 14 և 4 տասնորդ հօխայ , որուն կըլտուի « մնացորդը տասնորդականի ձևով գրուած » : Հաստրակ կոտորակին ձևով գրուած $\frac{10}{25}$ ը կը

Նշանակէ նաև 10 հօխան 23 ուլ բաժնուած, արդ 40 հօխան 23 ուլ ամբողջ չի բաժնուելուն համար 400 ուլ բազմապատկելով 4000 արամ կըլայ, և այնպէս կը բաժնուի 23 ուլ և կըլայ բանորդը 14 հօխայ 160 տիրէմ, որուն կըսուի « մնացորդը քա- նարդին քով խտուն թուոյ ձևով 'գրուած » :

Վերի օրինակին գործողութիւնները կատարե- լով նշանակեալ ձևերով գրենք,

իրև. մնացորդ	կատարակի ձևով
Բաժանելիին համասնո	քանորդին մասը
36'0' 23	360 23
23 14 հօխայ	23 14 ¹⁰ / ₂₅ հօխայ
410	410
400	400
40 գրչ մնացորդ	40

Տասնորդականի ձևով	Խտուն քուոյ ձևով
360 23	36'0 23
ԵՅԻՄԵՆ Բ.

ԲԱՐՉՈՒՄՆ ԽԱՌՆ ԹՈՒՈՅ

96. Կանոն. պէտք է « փոքր թիւը մեծ թըւոյն տակը գրել, հաւասար միութիւն ունեցող թիւերը իրարու տակ բերելով ստորագծել և սլոգ»

տի միութիւնն ունեցող թիւերէն սկսեալ փոքր թիւը մեծ թիւէն հանել .

Եթէ փոքր թուոյն ինչ և իցէ մէկ թիւը մեծ թւոյն իրեն հաւասար միութիւնն ունեցող թիւէն մեծ ըլլայ , մեծ թուոյն միութենէն անմիջապէս վեր եղածէն միութիւն մ'առնելով նոյն սղոյի միութեանը դարձնել և ստալինը վրան աւելցնելով հանել փոքր թիւը . այսպէս շարունակել մինչև բարձրագոյն միութիւնն ունեցող թիւերը , որոց տարրերու թիւերը ամբողջ գրել իրենց տակը » :

Քէսէ	Ղրուշ	Փարս	Ստակ
256	349	35	1 Մևէ րիւ
64	448	36	2 Փոքր րիւ
191	400	38	2 Մնացորդ

2 Ստակը 1 ստակէն մեծ ըլլալով փարաներէն 1 առի և ստակին վրայ աւելցնելով եղաւ 4 ստակ . որմէ 2 ստակը հանելով գրեցի ստակներուն տակը 2 . 36 փարան 34էն մեծ ըլլալով , 1 զրուշ առի և փարա ընելով 34 փարային վրայ աւելցուցի և եղաւ 74 փարա . ասկէ 37 փարան հանելով մնացորդ 38 փարան տակը գրեցի . 448 ալ 348էն մեծ ըլլալով , 1 քէսէ առնելով և զրուշի դարձնելով 348ին վրայ աւելցուցի , որ եղաւ 848 զրուշ , ասկէ 448ը հանելով մնացորդ 400ը գրեցի տակը . 255 քէսէէն ալ 64 հանելով զտայ ընդ ամենը 191 քէսէ 400 զրուշ 38 փարա 2 ստակ :

136 հիւ	250 տրմ	3 տէնկ	125 էնտ	5 ըուպ	1 կրհ
75 »	364 »	2 »	64 »	7 »	0 »
80	286	4	60	6	1

451 . Մէկուս հասակն է 2 արշն 5 մատ 10 գիմ , ուրիշի մը հասակն է 1 արշն 20 մատ 8 գիմ : Տարբերութիւնն է : Պ . 9 մատ 2 գիմ :

452 . Մարմին մը 'օդուն մէջ կը կրէ 3 հօխայ 315 տրմ 3 տէնկ 2 կուտ , նոյն մարմինը շոյ մէջ կը կրէ 2 հօխայ 256 տրմ 3 տէնկ 3 կուտ : Չոյ մէջ ո՞րչափ կը կորսնցնէ իր ծանրութիւնն :

Պ . 1 հօխայ 58 տրմ 3 տէնկ 3 կուտ :

453 . Մար մը Զուխայէն , որ ընդ սակներ 52 կանգուն էր , ստեղծեցաւ 27 կանգուն 7 ուրուպ 1 կիրան : Ո՞րչափ մնաց : Պ . 24 կանգուն 1 կիրան :

454 . Վաճառքով յեցուն սնտուկ մը կը կրելով զտայ 138 հիւ 340 տրմ 2 տէնկ 3 քուս , միայն սնտուկը կը կրէր 4 հիւ 260 տրմ 3 տէնկ 3 քուս : Զոտ վաճառքին ծանրութիւնը ո՞րչափ էր :

Պ . 134 հօխայ 79 տրմ 3 տէնկ :

455 . Մեր վերջին բագաւորը ԼԵՒՈՆ 2 մտաւ 'ի Փարիզ 1393 նոյեմբեր 23 : Մինչև 1876 քանի՞ տարի է : Պ . 483 տարի 1 ամիս 7 օր :

456 . Արեգակնային տարին է 365 օր 5 ժամ 48 վայրկեան և 52 երկվայրկեան : Խուսնային տարին է 354 օր 8 ժամ 48 վայրկեան և 35 երկվայրկեան : Գտնաշու է ասոնց տարրերութիւնը :

Պ . 10 օր 21 ժամ 17 երկվայրկեան :

457 . Մէկը ունէր 56 արշն 7 ուրուպ 1 կիրան դիպակ , ծախեց 28 արշն 6 ուրուպ 1 կիրանը : Ո՞րչափ մնաց : Պ . 28 արշն 1 ուրուպ :

458 . Հերշել անուանի աստղաբաշխը 42 տարեկան 3 ամսուան 8 օրուան էր երբ գտաւ յստիկն 1781 մարտ

13 Վերսալկե Ուրսուտ . մուտ 22 օգոստոս 1822 :
Ե՞րբ Տևաւ և քակի տարի ւայրեցաւ :


Պ . 1738 ղկ 5իև Տևաւ և մուտ 83 տարու 8 աւ-
տու և 22 օրուան :

459 . Քաղաքի մը կարճացոյն օրև 7 ժամ 8 ,
վայրկեան 45 , և երկվայրկեան 56 . երկայնագոյն օրև
է ժամ 15 , վայրկեան 8 , և երկվայրկեան 16 : Ի՞նչ
է այս երկու օրերուն տարբերութիւնը :

Պ . 6 ժամ 22 վայրկեան 20 երկվայրկեան :

460 . Մէկը Տևեր է 3 յուլիս 1807 , ի՞նչ էր տա-
րիքը 15 սպրիլ 1837 ին :

Պ . 29 տարու 9 ամառ 12 օրուան :



607ԹԻԱՆ Գ .

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆ ԽԱՌՆ ԹՈՒՈՏ

ՊՅ . Խառն թուոց բազմապատկութիւնը , որ ա-
ռևարոց մէջ ամենակարևոր հաշիւ մ'է , հասարակ կո-
տորակի և աւելի դիւրին տասնորդականի միջոցաւ
կը կատարուի , բայց հոս սխալ աւանդուի ուրիշ
երկու կերպ կանոններ ալ , որ հասարակ կոտորակ
և տասնորդական չի դիտցող մ'ալ կարենայ դիւ-
րութեամբ այս գործողութիւնն ընել :

Այս կանոններուն մէկը կըսուի բազմապատկա-
թիւն խառն բուոց վերամասն , և միւսը Բազմա-
պատկութիւն խառն բուոց քանորդական մասամբ :

Թուոց մը ճիշտ արտադրողները իր քանորդա-
կան մասունքն են , և խառն թուոց մէջ քանորդա-
կան մասունք են իրարու կամ գլխաւոր միւս-

թեան մէկ կտորը կամ ստորաբաժանման ամբողջ
արտադրողները , ինչպէս 5 փարան 20 փարային 4
երարդ մասն է , նոյնպէս 8 փարան դրուշին 5 եր-
րարդ մասն է : Բայց խառն թիւերը ամէն տոնն
իրենց գլխաւոր միութեան քանորդական մասը չեն
ըլլար , ինչպէս 25 փարան դրուշին քանորդական
մասը չէ , ուստի ոչեւ է սոյնպիսի կտորներու զա-
տեւ , որք գլխաւոր միութեան քանորդական մաս-
երն ըլլան , 25 փարան 20 և 5 փարաներու զտուե-
լով քանորդական մասեր կըլլան :

ՊՏ . Խառն թուոց բազմապատկութիւնը երեք
դիւրութեամբ ունի :

ԳՊՈՒՄԱՆ Ա . Միայն բազմապատկելին խառն քիւ ,

Կանոն . վերամասն : Պէտք է ,

1^o « Բազմապատկելին իր սղտի տեսակէն սխեւով
բազմապատկել բազմապատկողով , արտադրեալը
իր մեծ տեսակին միութեանը հաւասար կամ անկէ
մեծ եղած տոնն , բաժնել ստորաբաժանման
համարնովը , քանորդն աւելցնել մեծ տեսակին
արտադրեալին վրայ և Ֆուայրը գրել իր տակը ,
և սոյնպէս շարունակել գործողութիւնը մինչև բարձ-
րագոյն տեսակը :

2^o « Բազմապատկելին իր սղտի տեսակին վե-
րածելով բազմապատկել բազմապատկողով , և ետ-
քը արտադրեալը իր մեծ տեսակին վերածել » :

Օրինակ՝ բանի մը հօխան 4 դրշ 25 փարայ 2
ստակ է . 25 հօխան քանի՞ դրշ կընէ :

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ըստ 1^o Կանոնի

4 զրշ 25 փրց 2 ստակ 2 ստակը 25ով բազմա-
 25 սրատկերով դտայ 50 ըս-
 116 զրշ 1 փրց 2 ստակ տակ, որ կընէ 16 փրց
 2 ստակ, գրեցի 2 ըս-
 տակը. 25 փրն 25 ով բազմապատկերով գտայ
 625 փրց, ստոր փրայ աւելցնելով 16 փրն՝ եղաւ
 741 փրց, որ է 16 զրշ 1 փրց, գրեցի 1 փրն. 4
 զրշը 25 ով բազմապատկերով գտայ 100 զրշ, որոյ
 փրայ աւելցնելով 16 զրշն աւ եղաւ 116 զրշ. զոր
 գրեցի և եղաւ ընդ ամենը 116 զրշ 1 փրց 2 ստակ:

Ըստ 2^o. Կանոնի

4 զրշ 25 փր 2 սակ = 557 սակ 4 զր 25 փր 2 ստակը
 $\times 25$ ստակի վերածելով
 2785 եղաւ 557 ստակ,
 1114 զոր բազմապատկե-
 13925 սակ րով 25 ով դտայ
 = 116 զրշ 1 փրց 2 ստ 13925 ստակ, որ
 կընէ 116 զր 1 փր 2 ստակ:

Կանոն. ֆանորդական մասաւր:

Պէտք է « Բազմապատկողը բազմապատկելին ստակը գրել կամ գրուած համարել:

« Նախ բազմապատկելին զլաւոր միութիւն ունեցող թիւը բազմապատկել բազմապատկողով:

Ետքը բազմապատկելին մանր միութիւն ունեցող թիւերը քանորդական մասերու գտտել. և այս կտորներուն համեմատ բազմապատկողը կամ մասնաւոր արտադրեալները մասերու բաժնելով՝ քանորդները մասնաւոր արտադրելոյ կարգը գրել և գումարելով գտնալ արտադրեալը »:

Արի օրինակը այս կանոնով աւ ընելու է:

4 զր 25 փրց 2 ստակ Բազմապատկելի
 25 հիւ Բազմապատկող
 100 4 զրն 25 ով արտադրեալը
 12 զր 20 փր 20 փրին 25ով » = 25 ÷ 2
 3 » 5 » 5 » 25 » » = 12 զ 20 փ ÷ 4
 16 » 2 ստ 2 ստկին 25^o » = 12 զ 20 փ ÷ 30

116 զր 1 փր 2 ստ

Նախ 4 զրշը 25ով բազմապատկելոյ գտայ 100, ետքը 25 փրն քանորդական մասերու գտտելով ըրի 20, 5 փր: Որովհետեւ 20 փրն զրշին կէսն է, աւտի 25ին կէսը գտնալով գրեցի մասնաւոր արտադրելոյ կարգը 12 զրշ 20 փրց, և 5 փրն 20 փրցին ներքոյ մասն ըլլալով, և 25 հիւլին 20 փրցով արժէքն աւ 12 զրշ 20 փրց ըլլալով, այս թիւը 4 ով բաժնելով գտայ 3 զրշ 5 փրց, զոր, գրեցի մասնաւոր արտադրելոյ կարգը, 2 ստակը 20 փրցին 30 երորդ մասն ըլլալով, 20 փրցով արտադրեալը, այսինքն. 12 զրշ 20 փրն 30 ով բաժնեցի, և գտայ 16 փրց 2 ստակ, զոր գրելով մասնաւոր արտադրելոյ կարգը և գումարելով գտայ ընդհանուր արտադրեալ 116 զրշ 1 փրց 2 ստակ:

Խ Ն Գ Ի Ր Ք

461. Յարարիկ մէկ խանրարը 256 զրշ 24 փրց է. 612 խանրարը քանի՞ զրշ կընէ:

Պ. 157039 զրշ 8 փրց:

462. Տաճկաստանի դրամոյ մէկ քասկը, այսինքն 500 զրշը 4 սրկոյին 10 շիլին և 11 փլեւ կընէ, 256 քասկը քանի՞ շիլս սրկոյին կընէ:

Պ , 1163 շիրա , 14 շիլին , 8 փլեն :

463 . Մէկ անգղիական շիրան 125 որշ 36 փոյ է ,
256 շիրան քանի՞ որշ կընէ :

Պ . 32230 որշ 16 փոյ :

464 . Ինտագէ մը կտար 15 որշ 25 փոյ է , 18
Կնտագէն քանի՞ որշ կընէ :

Պ . 281 որշ 10 փոյ :

465 . Բանի մը 1 հոխան 14 որշ 25 փոյ 1 ստակ է ,
9 հոխան քանի՞ որշ կընէ : Պ . 131 որշ 28 փո

466 . Ինտագէ մը Չոխան 35 որշ 24 փոյ է ,
158 Կնտագէն քանի՞ որշ կընէ :

Պ . 5624 որշ 32 փոյ :

467 . Բանի մը 1 Տրարն 375 հոխա 250 տրեմ 62
ցորեն է , 217 Տրարն քանի՞ հոխայ կընէ :

Պ . 81311 հոխայ 60 տրեմ 14 ցորեն :

468 . Դուռ մը շինելու համար 3 օր 15 ժամ և
17 վայրկեան պէտք է , 20 դուռ շինելու համար ո՞ր
շաբ ժամանակ պէտք է : Սշխատորեան օրն 12 ժամ
հաշուելով : Պ . 77 օր 1 ժամ 40 վայրկեան

469 . Մէկ Տրար կտար 105 կանգուն 6 տրուպ
է 1 կիրան է . 50 Տրարն քանի՞ կանգուն է :

Պ . 5290 կանգուն 5 տրուպ :

470 . Ջան մը պատահաններն 231 տրն 23 մատ
և 9 գիժ է , 25 այդպէս տուններուն յոյր պատու
հաններն քանի՞ տրն են :

Պ . 5739 տրն 17 մատ 9 գիժ :

ԳՐԳՈՒԱԾ Բ . Միայն բազմապատկողը խստն յիւ .

Կանոն . վերաժմամբ . Պէտք է

« Բազմապատկողը իր սլաթի տեսակին վերա .

ձեւով բազմապատկել բազմապատկելին հետ, սր-
տաղրեալը բաժնել բազմապատկողին ստորաբաժա-
նումովը , քանորդն է պատասխանը » :

Օրինակ՝ կանգուն մը կերպաւը 64 որշ է , 12
կանգուն 5 ուրուպ 1 կիրան կերպաւը քանի՞ որշ
կընէ :

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

12 կանգուն 5 ուրուպ 1 կիրան = (12×8+5) 2+1
= 203 կիրան և 203×64=12992 . և որովհետև
մէկ կանգունը 16 կիրան է , ուստի

$$\frac{12992}{16} = 812 \text{ որուշ :}$$

Կանոն . Քանորդական մատմբ : Պէտք է

« Նախ բազմապատկողին զլուսւոր մի-
թիւն ունեցող թուով բազմապատկել բազմա-
պատկելին , ետքը բազմապատկողին մանր միու-
թիւններ ունեցող թիւերը քանորդական մասերու
զատելով , այս կտորներուն համեմատ բազմապատ-
կելին կամ մասնաւոր արտաղրեալները բաժնելով
քանորդները զրեւ լրբե մասնաւոր արտաղրեալ-
ներ , զատմբ դումարել և գտնալ ընդհանուր ար-
տաղրեալը » :

64 որշ

12 կնդ 5 րոյ 1 կրճ ,

բազմապատկելի

բազմապատկող

128

64

32

8

4

812

}	64	զլին	12	կնդով	արտղրը	
	64	»	4	րուպով	»	64/2
	64	»	1	»	»	32/4
	64	»	1	կրճով	»	8/2

Նախ 64 զրջը 12 կանգունով բազմապատկեցի,
 և այլ 5 ուրուպը քանորդական մասերու զտանցի
 4, 1 ուրուպ . 4 ուրուպը կնտաղէին կէան ըլլա-
 լով 64 զրուշը 2ով բաժնեցի քանորդ 32 զրջը
 գրեցի մասնաւոր արտադրելոց կարդը , 1 ուրուպն
 4 ուրուպին 4 երրորդ մասն ըլլալով 4 ուրուպին
 արժէքը եղող 32 զրջը 4ով բաժնելով գտայ 8 զրջ
 արժէք 1 ուրուպի , և նմանապէս 1 կիրաշն ալ
 ուրուպին կէան ըլլալով , ուրուպին արժէքն եղող
 8 զրջը 2ով բաժնեցի և գտայ 4 զրջ 1 կիրաշին
 արժէք , զորս մասնաւոր արտադրելոց կարդը գրե-
 լով և գուժարելով գտայ 812 զրջ :

Խ Ն Դ Ի Բ Բ

471 . Մէկ անգղիական շիրսն 136 ոչ բլլարով 156
 զիրս 15 շիլին 4 փէնար քանի՞ ոչ կընէ :

Պ . 21326 ոչ 16 փր 2 սոկ :

472 . Տնդի մը երկուցնարխեն է 256 կնգ , շայ-
 ևուրխենը 26 կնգ 22 մատ , տարաճուրխենը քանի՞
 քառուսուսի կանգուն է .

Պ . 6890 քոկիսի կնգ և 16 մատ :

473 . Բանի մը հոխան 36 ոչ է , 24 հիյ 350
 տրամը քանի՞ ոչ կընէ : Պ . 895 ոչ 20 փր :

474 . Թէնր խանրար մը շոքարը 316 ոչ ընէ ,
 48 խմրը 25 հիյ 250 տրամը քանի՞ ոչ կընէ :

Պ . 15352 ոչ 1 փր :

475 . Մէկուն տարեկանը 5400 ոչ էր : 5 տարի 5

ախիս 17 օր կենալէն ևտրը պաշտօնէն հրաժարեցաւ :
 Ո՞րչափ դրամ պիտի առնէ ,

Պ . 29505 ոչ :

476 . Մէկ գաղղիական ոսկին , որ 20 ֆրանք է ,
 կարժէ 88 ոչ , 110 գաղղիական ոսկի 16 ֆրանքը
 քանի՞ ոչ կընէ , Պ . 9750 ոչ 16 փր :

477 . Ստաղճագործին շիկնդ տրուեցաւ 156 արշև
 15 մատ և 8 քառուսուսի մատ գործ , արշևը 60 ոչէն
 ֆանի՞ ոչ պիտի առնէ : Պ . 9398 ոչ 13 փր 1 սա :

478 . Մարդ մը 1 ժամու մէջ 28 կնգ գործ կը րա-
 նի . 5 ժամ 40 վայրկեան աշխատելով քանի՞ կանգուն
 գործ կը րանի : Պ . 158 կնգ 16 մատ :

479 , Մէկը 1 ժամու մէջ 15 ոչ կը շահի . 8 ժամ
 25 վայրկեան աշխատելով ո՞րչափ կը շահի :

Պ . 126 ոչ 10 փր :

480 . Մէկ մսխալ ոսկին կարժէ 66 ոչ . 12 մսխալ
 15 քառ ոսկին քանի՞ ոչ կընէ .

Պ . 1033 ոչ 10 փր :

ԴԻԳՈՒՄԸ Գ , Թէ բազմապատկելին և թէ բազմա-
 պատկողը խառն թիւ .

Կանոն . Վերաճմանը : Պէտք է

« Երկուքն ալ իրենց մանր տեսակին վերածե-
 լով բազմապատկելի իրարմով , և արտադրելով բաժ-
 նել նախ բազմապատկելին ստորաբաժանումով և
 եւաճը , որ բազմապատկելին տեսակին կըլլայ ,
 բաժնել բազմապատկելին ստորաբաժանումով և
 կամ թէ բազմապատկողին և բազմապատկելին »

ստորորոժմանմանց արտադրեալովը , քանորդն է սրատասխանը :

Օրինակ՝ 25 խանթար 36 հիւ 120 տրամ շաքար տանուեցաւ , խանթարը 316 դր 20 փոյնն : Ընդ ամենը քանի՞ դր և կընէ :

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

25 խնթ 36 հիւ 120 տր = (25×44+36) 400+120 = 454520 տրմ և 316 դր 20 փոյ = 316 × 40+20 = 12660 փարոյ :

Նաև 1 խնթին է = 44×400=17600 տրմ , ուստի 454520×12660 = 326944 փոյ և 326944 / 40 = 8173 դր 24

Կանոն : Քանորդական մասակր : Պէտք է

« Նախ՝ զլիսաւոր միութիւն ունեցող թիւերը բազմապատկել , ետքը բազմապատկելին մանր միութիւն ունեցող թիւերը քանորդական մասերու զտակելով բազմապատկողին զլիսաւոր միութիւն ունեցող թիւը բազմապատկել ըստ կանոնի : Եւ վերջապէս բազմապատկողին մանր միութիւն ունեցող թիւերը քանորդական մասերու զտակելով և ասոնց համեմատ ամբողջ բազմապատկելին կամ մասնաւոր սրտադրեաները բաժնել և քանորդները մասնաւոր արտադրելոց կարգն անցնել , ասոնց զուամրն է սրատասխանը » :

Վերի օրինակը այս կանոնովս ալ լուծելու է :

316 դր 20 փոյ	քաղնապատկելի
25 խնթ 36 հիւ 120 տրմ	քաղնապատկող
<hr/>	
1580 } 25 խն 316 դրէն 316×25= 7900դր	
632 } 25 » 20 փոյէն 25÷2= 12» 20	
12 դր 20 փոյ	
158 » 10 » 22հիւ316» 20էն316» 20÷2= 158» 10	
79 » 5 » 11 » » 158» 10÷2= 79» 5	
14 » 15 » 2 » » 158» 10÷11= 14» 15	
7 » 8 » 1 » » 14» 15÷2= 7» 8	
1 » 32 » 100տր» » 7» 8 ÷ 4= 1» 32	
14 » 20 » » 1» 32 ÷ 5= 14	
<hr/>	
8173 դր 24 փոյ	8173» 24

Խ Ն Դ Ի Ր Ք

- 481. Խանքար մը երկարը 126 դր 26 փոյ է , 216 խերք 25 հիւ 256 տրմ երկարը քանի՞ դր և կընէ :
Պ . 26997 դր 1 փոյ :
- 482. Մէկ էնազէ կերպարը 25 դր 36 փոյ ըստ լոյ , 36 էնազէ 3 ուրուս 1 կիրանը քանի՞ դր և կընէ :
Պ . 943 դր 29 փոյ
- 483. Սենեկի մը երկայնութիւնը 8 կանգուն 17 մատ է . շոյնութիւնը 6 կանգուն 15 մատ . սարսաճութիւնը ո՞րչափ է :
Պ , 57 կնգ 16 մատ 15 քառակուսի մատ :
- 484. Մէկ խանքարը ստուտորի մէջ 56 քիչօկրաւ 410 կրաւ կը հաշուարի , 56 խանքար 37 հիւ 350 տրմը քանի՞ քիչօկրաւ կընէ :
Պ . 3208 քիչօկրաւ 799 կրաւ 52 հարիւրորդականէ
- 485. Մէկ արշն շոխակ 60 դր 13 փոյ 1 ստակ է ,

25 արշև 6 ուրուս 1 կիրան չոխան քանի՞ դշ կընէ :
Պ . 1557 դշ 14 փր :

486 . Մէկ հիս շաքարք 6 դշ 16 փր է , 8 հիս
270 տրամը քանի դշ կընէ : Պ . 55 դշ 21 փր :

487 . Թէյին մէկ հոխան 58 դշ 13 փր 1 ստակ
ըլլայ . 74 հիս 375 արևեր քանի՞ կընէ :

Պ . 4371 դշ 14 փր :

488 . Մէկը 25 դշ 20 փր օրական ունենայ , 15
օր 6 ժամ 20 վայրկեան աշխատութեանը համար ի՞նչ
պիտի ընդունի : (Օրը 12 ժամ հաւարկելով) :

Պ . 395 դշ 38 փր 1 ստակ

489 . Մաքիւնայ մը մէկ ժամու մէջ 64 արշև 6
ուրուս 1 կիրան գործ կը քանի : 16 ժամու 25 վայր-
կեանի և 30 երկվայրկեանի մէջ ո՞րչափ գործ կը քանի :

Պ . 1028 արշև 4 ուրուս :

490 . Միսին հօխան 7 դշ 30 փր է . 8 հիս 375
տրամը քանի՞ դշ կընէ : Պ . 69 դշ 11 փր :

491 . Կարագ իւղին հօխան 14 դշ 25 փր է .
15 հիս 300 տրամը քանի՞ դշ կընէ :

Պ . 230 դշ 14 փր :

99* . Տեղի մը տարածութիւնը կը գտնուի իր
բարձրութիւնը խարխախտով բաղմնապատկելով
(67 Գ .) : Ստանկ ղիպուածներու մէջ թէ բաղմն-
ապատկելին և թէ բաղմնապատկողը միևնոյն տեսակ
թիւ ըլլալով , թէոր ստորաբաժանումներն ալ պըղ-
տի թիւերով ըլլան , ինչպէս ստանաչափին և էնտա-
ղէին ստորաբաժանումները , կրնայ հետևեալ կեր-
պով ալ կատարուիլ անոնց խառն բաղմնապատկու-
թիւնը , բայց ստորաբաժանումները պէտք է որ ի-
րարմէ միեւնոյն չափով պղտիկ ըլլան . ինչպէս ստ-

նաչափինը որ իրարմէ միշտ 12ական անգամ փոքր
են :

Կանոն . « Պէտք է փոքր միութիւն ունեցող իւ-
րարանջիր տեսակ թիւերուն վրայ կարգաւ մէկ ,
երկու , երեք , և այլն շեշտեր դնել : Ս. մենէն պըղ-
տի տեսակէն սկսեալ իրարմով բաղմնապատկել , սո-
ւազրեակները արտադրողներուն ունեցած շեշտե-
րուն գումարին չափ շեշտեր կուենան , ամեն մէկ
արտադրեալ ստորաբաժանումով բաժնելով քանորդ-
ները ետքի եղած արտադրեալին վրայ աւելցնել , և
այսպէս շարունակել մինչև զվսաւոր միութիւն ու-
նեցող թիւերը » :

492 . Տեղի մը երկայնութիւնն է 75 ստնաչափ 10
քրաչափ 5 գժաչափ , և շայնութիւնը 16 ստնաչափ 5
քրաչափ 11 գժաչափ : Տարաւորութիւնը ո՞րչափ է :

75 ^տ	10'	5''	Ս. առջ մանր միութիւն
16	5'	11''	ունեցող թիւերուն վրայ
5	9'	6''	6'' 7''' շեշտեր դրի բթաչափին
31	7'	4''	1'' վրայ մէկ շեշտ և գժա-
1213	10'	8''	չափին վրայ երկու շեշտ
1251	3'	6''	7'' 7''' 11 գժաչափը 5 գժա-
			չափով բաղմնապատկելի

արտադրեալն եղաւ 55 չորս շեշտով , այսինքն քա-
ռսիւսի գժաչափ , 12 ով բաժնելով մնացորդ 7ը
գրեցի չորս շեշտով , քանորդ էր միաքս պահեցի
յաջորդ արտադրեալին վրայ աւելցնելու համար ,
11 ով 10 բթաչափը բաղմնապատկելով ունեցայ ար-
տադրեալ 110 , երեք շեշտով և որուն վրայ առջի
քանորդ էր աւելցնելով եղաւ 114''' , ասի 12 ով

բաժնեկրով մնացորդ 6ը գրեցի երեք շեշտով և քա-
նորդ 9ը միտքս սրահեցի յաջորդ արտադրեալին
վրայ աւելցնելու համար, և ասանկ շարունակելով
գտայ ընդ ամենը 1251 քառակուսի ստնաչափ 3
երկայն քառակուսի բժաշափ 6 քակի բժաշափ
7 երկայն քակի գծաչափ 7 քակի գծաչափ :

493 . Սենեկի մը երկայնութիւնն է 8 կետագէ 6
ուրուպ , շայնութիւնը է 5 կետագէ 5 ուրուպ ,
տարաճութիւնը քակի° կետագէ է :

Պ . 49 քակի կետագէ , 1 ուրուպ 6 քակի ուրուպ :

494 . Փսիսարի մը մէկ կողմը 6 կետագէ 3 ու-
րուպ է , միւս կողմը 10 կետագէ 5 ուրուպ . տարա-
ճութիւնը քակի° կետագէ է :


Պ . 67 քակի կետագէ 5 ուրուպ 7 քակի ուրուպ :

495 . Մօմարսը մը 25 կետագէ 4 ուրուպ երկայ-
նութիւն և 16 կետագէ 7 ուրուպ շայնութիւն ունէր :
Տարաճութիւնը քակի° կետագէ էր :

Պ . 430 քառակուսի կետագէ 2 1/2 ուրուպ :

496 . Իրուպական գորգ մը , որոյ երկայնութիւնը
32 կետագէ 7 ուրուպ և շայնութիւնը 12 կետագէ 2
ուրուպ է . քակի° կետագէ տարաճութիւն ունի :

Պ . 402 քակի կետագէ 5 ուրուպ 6 քակի ուրուպ :



ՅՕԴՈՒՄԵ Դ .

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԽԱՆՆ ԹՈՒՈՑ

100. Խառն թուոց բաժանումն ալ հասարակ
և տասնորդական կոտորակայ միջոցաւ աւելի զիւ-
րին կըլլայ . այսու ամենայնիւ առանց դաստիարակ
նախը մարդ կրնայ խառն թուոց բաժանումը ընել :

Բաժանելին և բաժանողն իրարու համասեւ և
տարասեւ և երկուքը մէկին խառն թիւ ըլլալուն
կամ չըլլալուն նայելով երեք դիպուած կը պատա-
հի խառն թուոց բաժանման մէջ :

ԳՊՊՈՒՄԵ Ա . Բաժանելին և բաժանողը համասեւ ,
կրկուքն ալ կամ միայն մէկը խառն :

Կանոն . « Պէտք է երկուքն ալ միեւնոյն մանր
տեսակին վերածելով ընել բաժանումը , թէև մէկը
միայն խառն թիւ ըլլայ » :

497 . Քակի° կանգուն տեղ կրկանք առնել 256 յիրս
16 շիլին 4 փէնտով , կանգունը 18 շիլինէն :

ԼՈՒԾՈՒՄՆ

Հոս բաժանողն ու բաժանելին համասեւ են ,
իրենց մանր տեսակին վերածելով կունենում .

$$256 \text{ րը } 16 \text{ շէ } 4 \text{ փէնտ } = (256 \times 20 + 16) 12 + 4 \\ = 61636 \text{ փէնտ } , \text{ նոյնպէս } 18 \text{ շիլին } = 18 \times 12 = 216 , \\ \frac{61636}{216} = 285 \text{ կանգուն } 8 \frac{1}{2} \text{ մատ } :$$

498 . Լմեցած գործի մը համար 3600 ոչ 24 փոյ
ճախը եղած է , կողմ ինկանայ թէ այդ գործը քակի°
անոյշափ է , մէկ անոյշափը 316 ոչ 12 փոյ հարու-
րով :

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

$$3600 \text{ րը } 24 \text{ փոյ } = 144024 \text{ փարա } և \\ \text{նոյնպէս } 316 \text{ ր } 12 \text{ ր } = 12652 \text{ ր } :$$

	14402'4	12652	
	1750 4		
Մնացորդ	485 2	11 ձշ 2 սոս 3 մատ 7 դիծ	
	× 6		4 կես
	29112		սոսք
Մնացորդ	3808		
	× 12		
	45696		մատ
Մնացորդ	7740		
	× 12		
	92880		դիծ
Մնացորդ	4316		
	× 12		
	51792		կես
Մնացորդ	1184		

499 . 1 հիյ քրիևնը 5 ղշ է , 32 ղշ 25 փոյվ քանի՞ հիյ կառնուի : Պ . 6 հիյ 210 տրս :

500 Մէկ էնտագէ գազմիրը 46 ղշ 10 փոյ է . 3075 ղշով քանի՞ էնտագէ կառնուի : Պ . 66 էնտագէ 3 ուրույ 1 կիրսն :

501 . Քարարին մէկ հոխան 6 ղշ 16 փոյ է , 55 ղշ 8 փարայով ո՞րչափ կառնուի : Պ . 8 հիյ 250 տրս :

502 , Մէկ ֆիօրինը 11 ղշ 11 փոյ է , 12628 ղշվ քանի՞ ֆիօրին կառնուի : Պ . 1120 ֆիօրին :

503 . Մէկ ֆրակքը 4 ղշ 16 փո է : 1353 ֆրակքի փոխարէն քանի՞ ֆիօրին կրնայ առնուիլ : 1 ֆիօրինը 60 քառակրակ է : Պ . 528 ֆիօրին :

504 . Քանի՞ ետարտ կրնէ 257 էնտագէ 2 ուրույ 1 կիրսնը : Պ . 179 ետարտ :

505 . Մէկ քաւոյօնը 17 ղշ 14 փոյ է , մէկէ մը 3036 ղշ 10 փոյ առնելիք կայ , քանի քաւոյօն տալու է : Պ . 175 քաւոյօն

506 . Մէկ հիյ խանվէն 21 ղշ 10 փոյ է , 1013 ղշ 25 փարայով քանի՞ հիյ խանվէ կրնայ առնուիլ : Պ . 47 հիյ 280 տրս :

ԴԻՊՈՒՄ Բ . Միայն բաժանելիս խստն քիւ և բաժանողին տարաստն :

Կանոն . « Պէտք է 1^օ բաժանելին իր մանր տեսակին վերածել և ընել բաժանուով և ետքը քանորդը իր մեծ տեսակին վերածել » :

Կամ « 2^օ բաժանողով նոխ բաժանելին մեծ տեսակը բաժնել , և եթէ մնացորդ ըլլայ , մանր տեսակին վերածել արդէն բաժանելին մէջ զանուածն ալ վրան աւելցնելով շարունակել բաժանուով մինչև բաժանելին վտր տեսակը » :

507 . Հաւասար մեծուրեանք 38 անհաներ պիտի շինուի 125 հիյ 366 տրս 2 ցորեն արժարով , իրաքանիքին ծանրութիւնը ո՞րչափ պիտի ըլլայ :

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ըստ 1^օ կանոնի ,

125 հ/յ 366 տրմ 2 ցորեն

400
<hr/> 50366
64
<hr/> 322'3'4'2'6 ցորեն
18 3
3 44
102
266
0

38

84827 ցորեն = 3 հ/ս 125 տրմ

1 սնկ 2.բսթ 3 ցորեն

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ըստ 2^o կանոնի

125 հ/յ 366 տրմ 2 ցորեն | 38

11
400
<hr/> 47'6'6' տրամ
96
206
16
4
<hr/> 64 տէն/
26
4
<hr/> 104 քոսթ
28
4
<hr/> 114
0

3 հ/ս 125 տր 1 տէնկ
2.բսթ 3 ցորեն

508. Երէ 316 հիյ Երկարին համար 1074 ղ 16 փրյ վճարուի , մէկ հոխան քանի՞ Եղաժ կըլլայ :

Պ . 3 ղ 16 փրյ :

509 . Մէկ ծրար պատման , որ 53 էնտագէ 3 ու ռուս է , բէ որ 7 սղբատաց փրայ հաւտարապէս քամնուի մէկուսն ո՞րչափ կիլնայ :

Պ . 7 էնտագէ 5 ուրուս :

510 . Պիտի քամնուի 16462 հիյ 200 տրմ աւ ծուխը 100 մարդոց մէջ հաւտարապէս , իւրաքան իւրը ո՞րչափ պիտի ստնէ :

Պ . 164 հիյ 250 տրմ :

511 . Պետին առնուցար 114 արշըն 68 ոսկի 2 մեհիտիյէ վճարուելով , գետնին 1 արշընը քանի՞ մէ ճիտիյէ է :

Պ . 3 մեհիտիյէ :

ԳՐԱՊՈՒՆ Գ . Բաժանողը քաժանելիին տարասնո , երկուքն ալ խառն քիւ կամ միայն քաժանողը խառն քիւ :

Կանոն . « Պէտք է , թէ որ երկուքն ալ խառն թիւ են , իրենց մանր տեսակին վերածել , և քաժանողին ստորաքաժանումով քաժանելին և քաժանելիին ստորաքաժանումովն ալ քաժանողը բաղմասպատկել և ետքը ըստ կանոնի քաժանել » :

« Թէ որ միոյն քաժանողը խառն թիւ է , միայն քաժանողը մանր տեսակին վերածել և ստոր ստորաքաժանումովը քաժանելին բաղմասպատկելն ետքը ըստ կանոնի քաժանումը կատարել » :

512 . Թարար առնուցար 25 խերր 36 հիյ 250 տրամ 5569 ղ 18 1/2 փրյ վճարելով , խանբարը քանի՞ ղ է :

Բաժանողն ու քաժանելին երկուքն ալ խառն

Թիւ ու տարասեռ ըլլալով իրենց մանր տեսակներ
բուն կը վերածեմ և կըլլայ .

25 խանթար 36 հիւ 250 տրամ	
44	5369 որ 18 ¹ / ₂ վր
<u>4136</u> հոխայ	40
400	222778 ¹ / ₂
<u>454630</u> տրամ	

Հիմայ կրնայ հարցուիլ թէ 454630 տրամ շա-
քարը 222778 ¹/₂ փարայ ըլլալով 1 տրամը քանի՞
փարա կընէ : Բայց սրովհետև բուն խնդրոյն մէջ
խանթարին արժէքը կը փնտռուի, և մէկ խանթարն
ալ 17600 տրամ է, ըսել է որ վերայգրեալ գու-
մարներուն բաժանման քանորդը 17600 անգամ
փարր սխտի ըլլայ, ուստի բաժանելին 17600 ուլ
բազմապատկելու է, յիրաւի այն ատեն խանթարին
արժէքը կը գտնուի բայց փարայով, որչ գտնալու
համար ալ բաժանողը 40 ուլ բազմապատկելու է,
վասն զի 1 զաբ 40 վր է . ինչպէս՝

222778 ¹ / ₂	454630
<u>17600</u>	40
39209'0'1'600	<u>18186,000</u>
28370	215 որ 24 վր, որ է սլուխներ .
101841	
109116	
<u>40</u>	
43646'4'	
72744	

Թէ որ այս խնդրոյն մէջ 1 հոխային արժէքը սլուխներ

ուէր, այն ատեն գլխաւոր միութիւնը հոխան ըլ-
լալով բաժանելին 400 ուլ միայն բազմապատկելու
էր, վասն զի 400 տրամը մէկ հոխայ է :

513. Երէ 256 շիրա 16 շիլին 8 փէկաբ 35057 զ
30 փրց ընէ, մէկ շիրան քանի՞ որչ կընէ :

Պ . 136 որ 20 փրց :

514. Քրիստանդեայ քար մը, որ 4 քուս 3 ցո-
րեն կը կռէր, կարժէր 4579 զ, 1 քուսը քանի՞
որուչ հաշուուած է : Պ . 964 :

515. Կիրպուսի մը 7 էնտագէ 5 ուրուպին ար-
ժէքն 122 զ է, 1 էնտագէն քանի՞ զ է : Պ . 16 :

516. Մէկու մը վճարուեցաւ 5392 զ 24 փրց. 365
քուսը քարպօն և 60 քորէքի համար, 1 քուսը քար-
պօնը քանի՞ զ է : Պ . 14 զ 30 փր :

517. Երկար աւեռուցաւ 275 խերր 28 հիւ, և
վճարուեցաւ 34078 զ . 1 խերր երկարը քանի՞ զ է :
Պ . 112 զ 30 փր :


518. Սուզանի մը մէջ 2044 հիւ 350 տրամ շուր կա-
կը պահանջուի որ 143 օրուան 6 ժամու մէջ հատնի :
Որչ քանի՞ հօխայ շար աւեռու է : (Որչ 12 ժամ
համարելով) : Պ . 14 հիւ 100 տրամ :

519. Կործատոր մը օրը 12 ժամ աշխատելու դա-
շանը 20 օր 4 ժամ աշխատելով ընդունեց 254 զ 6
փրց 2 ստակ : Որակտեր քանի՞ էր :
Պ . 12 զ 20 փրց :

520. Շրար մը կտալին համար, որ 40 նարուս
էր, վճարուեցաւ 115 որչ, էնտագէն քանի՞ եկաւ :
Պ . 2 որչ :

521. Մէկ զաղդիակիան ոսկին 20 ֆրանք է . 164
զաղդիակիան ոսկի և 5 ֆրանքին համար վճարուեցաւ
18067 զ 20 փր : Մէկ ոսկին քանի՞ զ է : Պ . 110 :

Թաւորութիւն . Խառն թուոց գործողութիւնները առանց տարացուցի աւանդուեցու որովհետեւ շատ զիւրիւն և բնական են իրենց կանոնները . և աշակերտ մը երբ ամբողջ թուոց գործողութեանց տեսութիւնները և սպայոյցները լաւ սովորած է, Խառն թուոց գործողութեանց վերաբերեալ սպայոցները կրնայ զիւրութեամբ ըսել, և ուսուցիչը պարտին պահանջել աշակերտներէն :



Թ Ն Դ Ի Ր Ք

Ի ՎԵՐԱՅ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ ԻՍՈՆ ԹՈՒՈՑ

522 . Քանի՞ երկվայրկեան է 1 արեգակնային տարին, որ 365 օր 5 ժամ 48 վայրկեան 52 երկվայրկեան է :
Պ . 31556932 երկվայրկեան :

523 . Քանի՞ օր կայ 46 տարուց մէջ նահանջ տարիներն աչ հաշուելով : հասարակ տարին 365 օր և նահանջ տարին 366 օր է :
Պ . 16801 օր

524 . Զորս տարին 1 օր աւելցնելով տարուց վերայ, որչա՞մի աւելի հաշուում կրրայ :

Պ . 400 տարուան մէջ 3 օր 2 ժամ 13' 20" աւելի առնուած կրրայ, անոր համար շատիկացիք 400 տարուան մէջ 3 նահանջ պակաս կրնեն : Եւ տասնելով աչ 4400 տարուան մէջ դարձեալ 1 օր 26 վայրկեան աւելի առնուած կրրայ :

525 . Երեք գործաւոր աշխատեցան . Ա ը 25 օր 6 ժամ 30 վայրկեան, Բ ը 18 օր 9 ժամ, Գ ը 20 օր 5 ժամ 45 վայրկեան, ամենը ո՞րչափ ժամուակ աշխատեցան, օրը 12 ժամ հաշուելով :

Պ . 64 օր 11 ժամ 15 վայրկեան :
526 . Երկու հոգի նոյն ճամբէն գացին միևնոյն ուղղութեամբ : Ա ը գնաց 28 օր 5 ժամ 30 վայրկեան . Բ ը 25 օր 8 ժամ 50 վայրկեան և երկուքն աչ օրը 14 ակում ժամ կը քաշլին : Եկորոյրը սաշիկէն քանի օրուան ճամբայ աւելի առաջ գացած է :

Պ . 2 օր 10 ժամ 40 վայրկեան :
527 . Գործաւոր մը օրը 15 ղ 30 փոյ առնելու աւարկութիւն ըրած էր, 15 օր 7 ժամ 30 վայրկեան աշխատեցաւ օրը 10 ժամ աշխատելով : Քանի՞ ղոյ պիտի առնէ .
Պ . 248 ղ 2 փո :

528 . Մեքենայ մը ժամը 12 կանգուն 18 մաս կտաւ կը գործէր . 4 օրուան 6 ժամու և 40 վայրկեանի մէջ ո՞րչափ պիտի գործէ, օրը 24 ժամ հաշուելով :
Պ . 54 կեզն 13 մաս :

529 . Գործաւոր մը օրը 12 ժամ աշխատելու համար 17 ղ 20 փոյ աւարչէք կտրած ըլլալով 275 ղ 25 փոն ո՞րչափ ժամակակուան աւարչէք է :
Պ . 15 օր 9 ժամ :

530 . Զոգնկաւոր մը իր հասարակ սրագործարարը մկ ժամու մէջ 75000 կեզն տեղ կառնէ, 1 309 500 կանգուն տեղը ո՞րչափ ժամէն կառնէ :
Պ . 17 ժամ 27' 36" :

531 . Դպարախճամէն անգամ մը 25 հից 175 տրամ քրիկն առնուեցաւ, երկրորդ անգամ 12 հից 275 տրմ . կրրորդ անգամ 125 հից 125 տրմ . հօ յսան 5 ղոյ 32 փաքայ ըլլալով ամենը քանի՞ ղոյ կրնէ :
Պ . 947 ղ 37 1/2 փո :

532. Արեգակնային տարին 365 օր 5 ժամ 48 վայրկեան և 52 երկվայրկեան է : Լուսնային տարին ալ 354 օր 8 ժամ 48 վայրկեան և 38 երկվայրկեան է : Այս երկու տարիներուն տարբերութիւնը ս'ըջատի 5 . և այս տարբերութիւնը քանի՞ տարի իրարու վրայ աւելնալով ամբողջ շունակեան տարի մը կըլլայ :

Պ . 10 օր 21 ժամ 14 երկվայրկեան . և այս տարբերութիւնը 32 տարուան 7 ամսուան մէջ մէկ շունակեան տարի կըլլայ :

533* . Երկու մարդ 'ի միասին քաղդէ մը կըլնով միեւնոյն տեղը կերրային մէկ ճամբով , մէկը կը քաշեր ժամը 2000 ձողաչափ 5 ոտնաչափ 10 մատնաչափ խակ միւսը 1896 ձողաչափ 4 ոտնաչափ 11 մատնաչափ : 10 ժամէն ետքը իրարմէ ո՞րչափ հեռու կըլնան : 12 ժամէն 35 վայրկեանէն ետքը ո՞րչափ : Երէ առաջինը օրը 12 ժամ քաշելով 36 օրէն 8 ժամէն կը հասնի տեղը , երկրորդը քանի՞ օրէն կը հասնի՝ օրը 13 ժամ 15 վայրկեան քաշելով .

Պ . 10 ժամէն ետքը իրարմէ կը հեռանան 1041 ձողաչափ 3 ոտնաչափ 2 մատ . 12 ժամ 35 վայրկեանէն ետքը իրարմէ կը հեռանան 1310 ձողաչափ 3 ոտնաչափ 6 մատ 5 գիծ : Երկրորդը կը հասնի իր տեղը 35 օր 24 վայրկեանէն :

534 . Գործ մը 2 հոգի կը շննցունեն 14 օրուան 8 ժամու մէջ օրը 10 ժամ աշխատելով : Եւ այն գործը 3 հոգի քանի՞ օրէն կը շննցունեն օրը 11 ժամ աշխատելով : Պ . 8 օր 10 ժամ 40 վայրկեանէն :

535 . Թէ որ մէկ շիրտն 143 դրոշ 24 փոյ ըլլայ , 156 շիրտն քանի՞ դրոշ կըլնէ :

Պ . 22404 դր 24 փոյ :

536 . Թէ որ կաշիին հօխան 32 դր 20 փոյ ըլլայ , և մէկ սկիին 136 դր 33 փոյ , մէկ սկիտով քանի՞ հիւյ կաշի կրնայ ստնուիլ : Թէ որ սկիիին գինը բարձրանայ 147 դր 14 փոյի , կաշիին գինը ո՞րչափի սիտի հասնի :

Պ . 4 հիւյ 84 տրմ : Հօխան 35 դրի :

537 . Կաշիին հիւն 32 դրը եղած ստներ 1 զոյգ փոքրը կոշիկը 80 դր է : 40 դրը եղած ստները նայն կոշիկը ո՞րչափ կարժէ : Պ . 100 դր :

538 . Մէկ սկիին 119 դրը եղած ասենն թէ որ գործատրի մը օրսկանն 28 դրը ըլլայ , 1 սկիին քանի՞ օրէն կստնէ : Եւ թէ որ սկիին 136ի բարձրանայ , գործատրին օրսկանը ո՞րչափ կըլլայ :

Ա Պ , 4 1/3 օր : Բ Պ . 32 դր :

539 . Գաղղիական 20 ֆրեքնոց սկիին 98 դր 32 փարայ եղած ստներ 602 դր 27 1/3 փոյ մէկէն ստնելիք ունէի : Արդ այս ստնելիքս քանի՞ սկիտով կը վճարուի : Եւ թէոր ետքէն այս սկիին 122 դր 20 փոյ եղած ստները նոյն պարտքը վճարուի , յիշուալ գումարն ո՞րչափի կը բարձրանայ : Ա Պ . 6 սկի 2 ֆր

Բ Պ . 747 դր 10 փր

540 . Կտակեղէն ստնուեցաւ 5 ծր , որոց ամենն մէկը 40 կարտու է , քանի՞ կտակեղէ կըլնէ , և թէ որ 1 կտակեղէն 5 դր 8 փր է , ամենը քանի՞ դր կըլնէ :

Պ , 1495 դր :

541 . Մէկ Անգղ . սկիին 143 դր 18 փր է , 100 անգղ սկիւոյ տեղ քանի՞ տաճկի սկի կրնանք ստնել կրր տաճկի սկիին 129 դր 20 փոյ ըլլայ : Պ . 110

542 . Քանի՞ արծաթ մէճիտ կըլնէ 1219 բօլբ . բօլբ 121 դր 20 փր և արծաթ մէճիտը 26 դր 20 փր հաշուելով : Պ . 5289 մէճիտիլէ :

Գ Լ Ո Ւ Կ Գ .

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՔ ԹՈՒՈՑ

Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Ա .

ԲԱՍՏԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԹՈՒՈՑ

ԹՅՈՒՄՆ Ը .

ՍԱՀՄԱՆՔ . ԵՒ ՏԵՍՈՒԹԻՒՆՔ

101 . Թիւ մը ուրիշ թուով մը բաժանական է կըսուի, երբ բաժանումը առանց Պնայորդի ըլլայ, ինչպէս՝ 12ը 4 ու ճիշտ կը բաժնուի կամ բաժանական է, նմանապէս 36ը 9ու, 30ը 5ու և ըն բաժանական է : Բաժանող թիւը կըսուի արտադրող, քանորդական մաս . ստորաբազմապատիկ . իսկ բաժանելին նուէ կըսուի բազմապատիկ : 12ը բազմապատիկ է 4ին, և 4ու արտադրող, ստորաբազմապատիկ, քանորդական մաս է 12ին :

102 . Այն թիւերն որ իրենցով և 1 ու միայն բաժանական են յախնական կըսուին . ինչպէս՝ 2, 3, 5, 7, 11, 13, 17, 19, 23 թիւերը :

Եւ այն ամեն թիւերը՝ որ 1 էն և իրենցմէ դատ ուրիշ թիւերով ալ բաժանական են, արտադրուող կըսուին . ինչպէս՝ 4, 6, 8, 9, 10, 12, 14, 15, 16, 18, 20, 21, թիւերը, որք 1 էն և իրենցմէ դատ ուրիշ թիւերով բաժանական են :

103 . Այն թիւը, որ ուրիշ երկու կամ ալ աւելի թիւեր ճիշտ կը բաժնէ, կըսուի նոյն թուոյ հասարակ բաժանողը . ինչպէս՝ 4 է հասարակ բաժանող 24 և 36 թիւերուն, նմանապէս 6 է հասարակ բաժանող 18, 30, 42 թուոյ :

Երկու կամ ալ աւելի թիւեր շատ մը հասարակ բաժանող կրնան ունենալ, անոնց ամենամեծը կըսուի մեխագոյն հասարակ բաժանող . ինչպէս՝ 24 և 36 թիւերն ունին հասարակ բաժանող 2, 3, 4, 6, 12 թիւերը, ասոնց ամենամեծը, որ է 12, է մեծագոյն հասարակ բաժանող 24 և 36 թիւերուն :

Երկու կամ ալ աւելի թիւեր՝ որ միտթենէ դատ հասարակ բաժանող չունին . կըսուին իրարու նայելով կամ համեմատութեամբ նախնական . ինչպէս՝ 32 և 25 թիւերը համեմատութեամբ նախնական են :

104 . Այն թիւը, որ բաժանական է ուրիշ երկու կամ աւելի թիւերով, կըսուի հասարակ բազմապատիկ նոյն թուոյ, ինչպէս՝ 48 է հասարակ բազմապատիկ 2, 3, 4, 6, 8, 12, 16, 24 թիւերուն, զի ան զի ատոնցմով բաժանական է :

Երկու կամ աւելի թիւեր միշտ անհուն բազմապատիկ կ'ունենան, անոնց ամենախորը կըսուի փոքրագոյն հասարակ բազմապատիկ . ինչպէս՝ 2, 3, 4, 6 թիւերն ունին հասարակ բազմապատիկ 12, 24, 36, 48 և ըն թիւերը, ասոնց ամենախորը 12 ըլլալով է փոքրագոյն հասարակ բազմապատիկ 2, 3, 4, 6 թուոյ :

105 . Տեսութեան Ա . Թէ որ երկու կամ ալ աւելի թիւեր բազմապատիկ են ուրիշ թուոյ

մը , անոնց գումարն ալ բազմապատիկ պիտի ըլլայ նոյն թուոյն : Օրինակ՝

24 , 36 , 48 թիւերը 12ին բազմապատիկն ըլլալով , կըսեմ որ $24+36+48=108$ թիւն ալ բազմապատիկ է 12 ին , վասն զի ,

24 բազմապատիկ ըլլալով 12ին կըլլայ $24=12 \times 2$
36 " " 12 " " $36=12 \times 3$
48 " " 12 " " $48=12 \times 4$

ուստի $24+36+48=12 \times 2+12 \times 3+12 \times 4$
և $108=12(2+3+4)$, այսինքն
 $108=12 \times 9$, որ էր հաստատելի :

106 . Տեսարիւն Բ . « Թուոյ մը երկու բազմապատիկներուն տարբերութիւնն ալ բազմապատիկ է նոյն թուոյն » :

12 ին բազմապատիկ են 60 և 24 թիւերը , կ'ըսեմ որ $60-24=36$ թիւն ալ բազմապատիկ է 12 ին , վասն զի .

60 բզմապատիկ ըլլալով 12ին պիտի ըլլայ $60=12 \times 5$
24 " " 12 " " $24=12 \times 2$

հարներն իրրմէ հանելով կըլլայ $60-24=12 \times 5-12 \times 2$
և $36=12(5-2)=12 \times 3$, որ էր հաստատելի :

107 . Տեսարիւն Գ . « Թուոյ մը բազմապատիկին բազմապատիկներն ալ նոյն թուոյն բազմապատիկ են » :

36ը 9ի բազմապատիկ կամ 9 ով բաժանուիւն ըլլալով 36 ին ամեն բազմապատիկներն ալ , օրինակի համար , $36 \times 7=252$ ալ բազմապատիկ է 9 ի կամ բաժանուիւն է 9 ով , վասն զի

$36=4 \times 9$ ըլլալով $36 \times 7=252$ ալ կըլլայ $4 \times 9 \times 7$, որ է յայտնապէս 9 ի բազմապատիկ կամ 9 ով բաժանուիւն :

108 , Տեսարիւն Գ . « Եթէ բաժանելին ու բաժանողը բազմապատիկ են թուոյ մը կամ բաժանուիւն են թուով մը , անոնց բաժանման մնացորդն ալ բազմապատիկ է նոյն թուոյն » :

168 և 36 թիւերը բազմապատիկ են 12 ին . կըսեմ որ 168 ին 36 ով բաժանման մնացորդը , որ է 24 , բազմապատիկ է 12 ին . վասն զի ,

$\frac{168}{36} = 4 \frac{24}{36}$, այսինքն , $168=4 \times 36+24$ և $168-4 \times 36$

$= 24$, որք քանի որ 168 բաժանուիւն է 12 ով , և 36 բաժանուիւն է 12 ով , $36 \times 4=144$ ալ բաժանուիւն է 12 ով (107 . Տեսարիւն Գ) , և

$168-144=24$ ալ բաժանուիւն է 12 ով (106 . Տեսարիւն Բ) Ո . է . Հ :

109 . Տեսարիւն Ե . « Եթէ բաժանողն ու մնացորդը բաժանուիւն են թուով մը , բաժանելին ալ բաժանուիւն պիտի ըլլայ նոյն թուով » :

Եթէ 36 բաժանողը և 24 մնացորդը բաժանուիւն են 12 ով , հարկաւ 168 բաժանելին ալ 12 ով բաժանուիւն է , վասն զի

$168=4 \times 36+24$. Ո . է . Հ :

110 . Վերջըրեալ տեսութիւնները կամիւրօրուին հետևեալ կերպով .

Ա . « Երկու կամ ամէլի թուոց հասարակ բաժանողը , նոյն թուոց գումարին և տարբերութեան ալ հասարակ բաժանող է » : կամ

« Երկու կամ ամէլի թուոց մեծագոյն հասարակ

րակ բաժանողը անոնց գումարին և տարրերու թեանն ալ մեծագոյն հասարակ բաժանող է » :

Բ . « Թուոյ մը ճիշտ բաժանողը նոյն թուոյն բազմաարտօրիկներուն ալ ճիշտ բաժանող է » :

Գ . « Բաժանելիին և բաժանողին հասարակ բաժանողը անոնց բաժանման մնացորդին այ հասարակ բաժանող է : կամ

Բաժանելիին և բաժանողին մեծագոյն հասարակ բաժանողը , անոնց բաժանման մնացորդին ալ մեծագոյն հասարակ բաժանող է :

Դ . « Բաժանողին և մնացորդին հասարակ կամ մեծագոյն հասարակ բաժանողը՝ բաժանելիին ալ հասարակ կամ մեծագոյն հասարակ բաժանող է :

Ն. Բաժանելիին և մնացորդին հասարակ կամ մեծագոյն հասարակ բաժանողը՝ բաժանողին ալ հասարակ կամ մեծագոյն հասարակ բաժանող է :


111 . « Երկու կամ աւելի թուոց հասարակ բաժանողը կը բողկանայ նոյն թուոց հասարակ եղած արտադրոջներէն » : Ե

« Մեծագոյն հասարակ բաժանողը կը բաղկանայ նոյն թուոց հասարակ եղած նախնական արտադրոջներուն փոքրագոյն կարողութիւններէն : Ուստի, եթէ նոյն թուոց մէկը՝ միւսներուն հասարակ արտադրող չեղող թուով մը բազմաարտօրի կուի կամ բաժնուի, մեծագոյն հասարակ բաժանողը անխախտ կը մնայ » :

36 ին և 96 ին մեծագոյն հասարակ բաժանողը գտնալու համար կը մտածուի որ

$$36 = 2^2 \times 3^2 \text{ և } 96 = 2^5 \times 3^1 \text{ է, ուստի } 36\text{ին և } 96\text{ին}$$

$$\text{մեծագոյն հասարակ բաժանողը կըլլայ } 2^2 \times 3 = 12 :$$



ՅՕՂՈՒԱՆ Բ .

ՅԱՏՈՒԿ ՆՇԱՆՔ ԲԱԺԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹՈՒՈՑ

1° ԲԱԺԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ 2 ՈՎ, ԵՒ 5 ՈՎ, ԵՒ ԻՐԵՆՑ

ԱՄԵՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎԸ

112 . « Թիւ մը բաժանական է 2 ով, թէ որ իր աջ կողմի վերջի թուանշանը զրօ կամ զրոյք թիւ է » : Այն թիւերը՝ որ 2ով ճիշդ բաժանական են զրոյք կըսուին, ինչպէս՝ 2, 4, 6, 8 թուանշանները : Այսին դի,

1° Թէ որ թիւը 0 վերջաւորի, 10 ի բազմապատիկ մ'է, և $10 = 2 \times 5$ ըլլալով բաժանական է 2 ով, ուստի առաջարկեալ թիւն ալ բաժանական է 2 ով :

2° Թէ որ զրոյք թուանշանով վերջաւորի թիւը, կրնայ համարուիլ տասնաւորէ և միւսորէ բաղկանալ, տասնաւոր մասը՝ ինչպէս որ տեսնուեցաւ 2 ով բաժանական է, և միւսոր մասը արդէն ըստ ենթադրութեան բաժանական է . ուստի առաջարկեալ թուոյն երկու մասն ալ 2 ով բաժանական ըլլալով, իրենց գումարը, այսինքն, ամբողջ թիւն ալ 2 ով բաժանական է :

113. Թիւ մը 5 ուլ բաժանական է, երբ զրօ կամ 5 վերջաւորի : Դնչպէս՝ 26, 360, 425, . . . Էւն թիւերը . սարսոյցը վերինին պէս է :

114. Թիւ մը բաժանական է 4 ուլ կամ 25 ուլ երբ աջ կողմի վերջի երկու թուանշանները զրօ, կամ 4 ուլ կամ 25 ուլ բաժանական ըլլան : Ինչպէս՝ 31200 թիւը 4 ուլ և 25 ուլ բաժանական է վերջի երկու թուանշանները զրօ ըլլալուն համար : Նաև 63116ը 4 ուլ բաժանական է, վերջի երկու թուանշան 16ը՝ 4 ուլ բաժանական ըլլալուն համար : Նւ մանապէս 3575ը 25 ուլ բաժանական է, վերջի երկու թուանշան 75ը՝ 25 ուլ բաժանական ըլլալուն համար : Վասն զի,

Առաջարկեալ թիւը երկու մասերու զատելով կըլլայ միուսոր մը և հարիւրաւոր մը, արդ առաջին մասը ենթադրութեամբ 4 ուլ կամ 25 ուլ բաժանական է, և երկրորդ մասն ալ 100 ի բազմապատիկ մ'ըլլալով և $100=10 \times 10=2 \times 2 \times 5 \times 5=2^2 \times 5^2$ ըլլալով՝ հարկու $2^2=4$ ուլ կամ $5^2=25$ ուլ 100ը բաժանական է, և հետևապէս իւր բազմապատիկը, ուստի երկու մասերը զատ զատ բաժանական ըլլալով՝ առաջարկեալ թիւն ալ բաժանական պիտի ըլլայ :

Նոյն կերպով կրնայ հաստատուիլ որ, թիւ մը $2^3=8$ ուլ կամ $5^3=125$ ուլ, և $2^4=16$ ուլ կամ $5^4=625$ ուլ ևսոյն բաժանական է, թէ որ առաջարկեալ թուոյն վերջի երեք, չորս ևլն թուանշանները զրօ կամ 8 ուլ կամ 25 ուլ, և 16 ուլ կամ 625 ուլ ևլն բաժանական են : Վասն զի,

Ըլլալով $10=2 \times 5$, 10ին կարողութիւնները 2 և 5ին նոյն կարողութիւններովը բաժանական են, յիշելի

$$10 = 2 \times 5, \quad 10 = 2 \times 5, \quad 10 = 2 \times 5,$$

$$10 = 2 \times 5 \text{ ևլն. } 100 = 4 \times 25,$$

$$1000 = 8 \times 125, \quad 10000 = 16 \times 625 \text{ ևլն :}$$

2° ԲԱԶԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 9 ՈՎ ՆԻ 3 ՈՎ

115. Թիւ մը 9 ուլ բաժանական է, երբ զինքը բաղկացնող թուանշաններուն գումարը 9 ուլ բաժանական ըլլայ : Ինչպէս 53406ը 9 ուլ բաժանական է, իր մէջի թուանշաններուն գումարը $5+3+4+6=18$ ըլլալով 9 ուլ բաժանական ըլլալուն համար : Նոյնպէս 3416ը 9 ուլ բաժանական չէ . իր թուանշաններուն գումարը $3+4+1+6=14$ ը 9 ուլ բաժանական չըլլալուն համար, 14ը 9 ուլ բաժանելով 5 մնացորդ կը թողու. և 3416 ալ 9 ուլ բաժանելով 5 մնացորդ կը թողու : Վասն զի,

Որ և իցէ կարգի միութենէն 1 սլակեցնելով, մնացածը 9ի բազմապատիկ կըլլայ, ինչպէս $10-1=9$, $100-1=99$, $1000-1=999$ ևլն է. ուստի ամեն կարգի միութիւն 9 ուլ բաժնելով 1 մնացորդ կը թողու, և ամեն կարգի թիւ 9 ուլ բաժնելով զինքը նշանակող թուանշանը մնացորդ կը թողու, 20ը 9 ուլ բաժնելով 2 մնացորդ կըլլայ. 3000ը 9 ուլ բաժնելով 3 մնացորդ կըլլայ. ևլն : Եւ ուստի առաջարկեալ թուոյն՝ որ շատ կարգերէ բաղկացեալ է, ամեն կարգէն յառաջ եկած մնացորդներուն գումարը՝ որ նոյն թիւը նշանակող թուանշաններուն

գումարն է, թէոր 9ի բազմապատիկ կամ 9 ու
բաժանական մ'ըլլայ, առաջարկեալ թիւն ալ 9ու
բաժանական պիտի ըլլայ. թէոր նոյն գումարը մը
նայորդ թողու՝ առաջարկեալ թիւն ալ 9 ու բաժ-
նելով նոյն մնացորդը պիտի թողու :

116. Թիւ մը 3 ու բաժանական է, թէ որ
իր մէջ գտնուած թուանշաններուն գումարը 3 ու
բաժանական ըլլայ : Ինչպէս 2514 ը 3ու բաժանա-
կան է իր մէջ գտնուած թուանշաններուն գումարը
 $2+5+1+4=12$ ը 3 ու բաժանական ըլլալուն հա-
մար : Եւ 2516 ը 3 ու բաժանական չէ, սրովհետեւ
իր մէջ գտնուած թուանշաններուն գումարը
 $2+5+1+6=14$ ը 3 ու բաժնելով 2 մնացորդ կը թո-
ղու, նոյնպէս 2516 ալ 3 ու բաժնելով 2 մնացորդ կը
թողու :

Յիրաւի, 9ը 3ին բազմապատիկն ըլլալով ամեն
կարգի միութիւն 3 ու բաժնելով նաև կը թողու 4
մնացորդ, և ամէն կարգի թիւ ալ գինքը նշանա-
կող թուանշանին մնացորդին չափ, շատ կարգերէ
բազկայեալ թիւ մ'ալ իւրաքանչիւր կարգէն յա-
ռաջ եկած մնացորդներուն գումարին 3 ու բաժան-
ման մնացորդին չափ մնացորդ կը թողու, ուստի
թուոյ մը թուանշաններուն գումարին 3 ու բաժան-
ման մնացորդը՝ նոյն թուոյն 3 ու բաժանման մնա-
ցորդին հաւասար է :

3°. ՌԱԺԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՌԵԱԼ ԹԻՒՆԵՐՈՎ

117. Թիւ մը 6 ու բաժանական է՝ երբ նոյն
թիւը 3 ու և 2 ու բաժանական է, ինչպէս՝ 342 ը
2 ու և 3 ու բաժանական ըլլալուն համար, 6 ու
ալ բաժանական է, վասն զի $2 \times 3 = 6$:

Թիւ մը 12 ու բաժանական է՝ երբ նոյն թիւը
3 ու և 4 ու բաժանական է. ինչպէս՝ 3352 ը 3 ու և
4 ու բաժանական ըլլալուն համար 12 ու ալ բաժա-
նական է, վասն զի $3 \times 4 = 12$:

Վերջապէս արտադրեալ թուով մը թիւ մը
բաժանական ըլլող հասկալու համար. պէտք է
նայիլ թէ բաժանող արտադրեալ թուոյն նախնա-
կան արտադրողներովը առաջարկեալ թիւը բաժա-
նական է. ինչպէս 24 ու թիւ մը բաժանական
կըլլայ՝ երբ նոյն թիւը 3 ու և 8 ու բաժանական ըլ-
լայ. նմանապէս թիւ մը 45 ու բաժանական կըլլայ՝
երբ նոյն թիւը 5 ու 9 ու բաժանական ըլլայ :

Ուստի թուոյ բաժանականութեան վերաբեր-
եալ կանոնները միայն նախնական թուոյ հա-
մար ըլլալու է :

4°. ՌԱԺԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԵ ԵՄԻՆԱԿԱՆ ԹԻՒՆԵՐՈՎ

Ս. կանոն

118. Ինչ և իցէ նախնական թուով թիւ մը
բաժանական ըլլալն որչափու ընդհանուր կանոն մը
ստանալու համար հետեւեալ դիտողութիւնը կընենք.

2էն և 5էն զատ ամեն նախնական թուով երբ
1 ին ետեւէն գրօներով գրուած թիւ մը բաժնենք,
և մնացորդներուն աջ կողմը միշտ գրօներ դնելով
բաժանումը շարունակենք, հարկաւ մնացորդները
չըջանի մէջ պիտի մտնան և առ առուեւն բաժանո-
ղէն 1 պակաս բաժանում՝ ընելէն ետքը 1 մնացորդ
պիտի ունենանք (բանի որ բաժանողն ու բաժանե-
լին հասարակ բաժանող մը չունին), և եթէ բա-

Քանուսը դարձեալ շարունակենք նոյն քանորդնե-
րը և նոյն մնացորդները պիտուենենանք : Փոր-
ձենք 11ով, 7ով, 13ով և 37ով բաժանումները :

$$\begin{array}{r} 100 \overline{) 11} \quad 1'0'0'0'0'0'0' \overline{) 7} \\ 1 \overline{) 09} \quad 30 \quad \overline{) 142857 \dots} \end{array}$$

$$\begin{array}{r} 20 \\ 60 \\ 40 \\ 30 \\ 1 \end{array}$$

$$\begin{array}{r} 10'0'0'0'0'0' \overline{) 13} \quad 10'0'0' \overline{) 37} \\ 90 \quad \overline{) 076923 \dots} \quad 260 \overline{) 027 \dots} \end{array}$$

$$\begin{array}{r} 120 \\ 30 \\ 40 \\ 1 \end{array}$$

Այս բաժանմանց վրայ նայելով կը տեսնուի որ՝
11ով բաժանուսը երկու գրոյէն ետքը 1 մնացորդ
կը թողու . 7ով և 13ով բաժանումները վեց գրո
գնեկէն ետքը 1 մնացորդ կը թողուն . և 37ով բա-
ժանուսը երեք գրոյէն ետքը 1 մնացորդ կը թողու :
Եւ թէ որ 17ով և 19ով փորձենք պիտի գտնանք
որ՝ մէկը տասնըվեց գրոյէն և միւսը տասնըութ գրո-
յէն ետքը 1 մնացորդ պիտի թողուն : Այս բաժա-
նումները շարունակելով դարձեալ նոյնչափ գրո-
նեքէն ետքը 1 մնացորդ պիտի թողուն , ընել է
որ՝ եթէ գրոներուն տեղ թուանշաններ ըլլան և
այն գրոներուն չափ թուանշան հատուած մը ընե-
լով հատուածներու դասենք , նոյն հատուածները

մնացորդ պիտի ըլլան , կամ նոյն հատուածներուն
գումարին մնացորդին չափ մնացորդ պիտի թողու
առաջարկեալ թիւը : Խօսքերնիս մասնաորի վրայ ,
օրինակի համար 11ին վրայ դարձնելով՝ 1ին 100ին
1000ին և ըն 11ով բաժանման մնացորդը 1 ըլլալով ,
25ին 4500ին 640000ին կամ որ նոյն է 644525ին
11ով բաժանման մնացորդները պիտի ըլլան՝ $25 + 45$
 $+ 64 = 134$ ին 11ով բաժանման մնացորդին հաւա-
սար : Նոյնպէս 1ին 1000000 ին 1000000000000 ին
և այլն 7ով և 13ով բաժանման մնացորդները 1 ըլ-
լալով՝ 321564 ին 123456000000 ին և ըն
կամ որ նոյն է 123456321564ին 7ով և 13ով բա-
ժանման մնացորդները պիտի ըլլան $321564 + 123456$
 $= 445020$ ին բաժանման մնացորդին հաւասար :
Ուստի կը տեսնենք որ՝

Նախնական թուով մը թուոց բաժանական ըլ-
լալը որոշելու համոն մը ունենալու համար օրէք է
նոյն նախնական թուով բաժնենք 1ին աջ կողմը
գրոներով գրուած թիւ մը և մնացորդներուն աջ
կողմը գրոներ դնելով շարունակենք բաժանուսը
մինչև մնացորդ 1 թողու , որդ այս գրոներուն
համբանքին չափ թուանշան հատուած մը ընելով
առաջարկեալ թիւը հատուածներու դասելու է ,
նոյն հատուածները գումարելով՝ գումարին նոյն
նախնական թուով բաժանման մնացորդը առաջար-
կեալ թուոցն մնացորդին հաւասար պիտի ըլլայ :

Այսպէս 11ով թիւ մը բաժանական ըլլալը հա-
կընալու համար , որովհետև 1 ին աջ կողմը երկու
գրո դնելով և 11ով բաժնելով 1 մնացորդ կը թո-
ղու , առաջարկեալ թիւը աջ կողմէն սկսեալ եր-
կու թուանշանը հատուած մ'ընելով հատուածնե-

բու զատելու է , ստանց գումարը եթէ 11 ով բաժանական է՝ առաջարկեալ թիւն ալ 11ով բաժանական պիտի ըլլայ . կամ հատուածներուն գումարին 11ով բաժանման մնացորդին չափ առաջարկեալ թիւը մնացորդ պիտի թողու : Օրինակ՝ 2360561 , այս թիւը աջ կողմէն սկսեալ երկու թուանշանը հատուած մ'ընելով հատուածներու կը դատենք 2 , 36 , 05 : 61 , այս հատուածները կը գումարենք իրարու վրայ $61 + 36 + 2 = 104$, որ 11ով բաժնելով մնացորդ կանենանք 5 : Այս 104ը հատուածներու դատելով կըլլայ 1 , 04 , ստոր ալ հատուածները իրարու վրայ գումարելով կանենանք $4 + 1 = 5$, ուստի առաջարկեալ թիւն ալ 11 ով բաժնելով 5 մնացորդ պիտի ունենանք :

Նոյնպէս 7ով և 13ով թուոյ մը բաժանական ըլլալը հասկնալու համար , սրովհետև 1ին աջ կողմը վեց զրո դնելով 7ով և 13ով բաժնելով 1 մնացորդ կը թողու . առաջարկեալ թիւն աջ կողմէն սկսեալ վեց թուանշանով հատուածներու դատելու է , այս հատուածներուն գումարը եթէ 7ով կամ 13ով բաժանական ըլլայ՝ նոյն թիւն ալ բաժանական է , կամ հատուածներուն գումարին մնացորդին չափ պիտի ըլլայ առաջարկեալ թուոյն 7 ով կամ 13ով բաժանման մնացորդը : Օրինակ՝

3123436789 . աջ կողմէն սկսեալ վեց թուանշանով հատուածներու կը դատենք կըլլայ 3123 , 456789 , այս հատուածները գումարելով կըլլայ ,

456789
3123

459912

Որ 7ով բաժնելով 5 մնացորդ կանենանք , ուստի առաջարկեալ թիւն ալ 7ով բաժանական չէ և կը թողու մնացորդ 5 :

Նոյնը 13ով բաժնելով կանենանք մնացորդ 11 . ուստի առաջարկեալ թիւն ալ 13ով բաժնելով պիտի ունենանք մնացորդ 11 :

Նժամասպէս՝ թիւ մը 17ով կամ 19ով ելն բաժանական ըլլալը հասկնալու համար , նոյն թիւը աջ կողմէն սկսեալ տասներկեց կամ տասնևութը թուանշանով հատուածներու դատելու և ստանց գումարը նոյնը է թէ 17ով կամ 19ով ելն բաժանական է :

Բ . կանոն

119* . Եթէ զիտելու ըլլանք 1ին աջ կողմը զրոներով զրուած թուոյն 11ով բաժանման հետք հետէ ելած մնացորդները , կը տեսնենք որ՝

$1 \div 11 =$	կը թողու մնացորդ	1
$10 \div 11 =$	»	10
$100 \div 11 =$	»	1
$1000 \div 11 =$	»	10

Առաջին մնացորդն է 1 , իսկ երկրորդ մնացորդը , որ 10 է՝ 1 կուղէ 11ի հաւասարելու . նոյնպէս երրորդ մնացորդը 1 է , իսկ չորրորդ մնացորդը 1 կուղէ 11ի հաւասարելու : Ասկէ կը հետևի որ , միաւոր թիւը մնացորդ է . և տասնւորը նշանակող թուանշանը կը ցուցնէ մնացորդին 11ին ունեցած տարբերութիւնը , հարիւրուորը նշանակող թուանշանը մնացորդ է , իսկ հազարուորը նշանակող թուանշանը կը ցուցնէ մնացորդին 11 կն ունեցած տարբերութիւնը , ելն ինչպէս՝ 4563273 թուոյն

3 միաւորին մնացորդն է	3	
7 տասնուորը՝ 7 կուղէ որ 11ով բժնին ըլլայ	7	
2 հարիւրաւորին մնացորդն է	2	
3 հազարաւորը՝ 3 կուղէ որ 11ով բժնին ըլլայ	3	
6 տասնհազարաւորին մնացորդն է	6	
5 հարիւր հզարը՝ 5 կուղէ որ 11ով բժնին ըլլայ	5	
4 միլիոնաւորին մնացորդն է	4	
	<hr/>	
	15	15

Կը տեսնուի որ՝ աջ կողմէն սխեալ անդոյգ տեղերուն մէջ գտնուած թիւերը 15 մնացորդ ունին և զոյգ տեղերուն մէջ գտնուած թիւերն ալ 11 ով բաժանական ըլլալու համար 15 կուղեն, առանք իրարմէ սրահեցնելով և մնացորդ չունենալով կը հասկցուի որ առաջարկեալ թիւը 11 ով բաժանական է: Ուստի թուոյ մը 11ով բաժանական ըլլալը ճանչնալու համար կունենանք երկրորդ կանոն մը՝

Առաջարկեալ թուոյն աջ կողմէն սխեալ անդոյգ տեղերուն մէջ գրուած թուանշանները զատ և զոյգ տեղերուն մէջ գրուածները զատ գումարելով, ասոնց տարբերութիւնը եթէ բաժանական ըլլայ 11ով, առաջարկեալ թիւն ալ բաժանական է:

Եթէ անդոյգ տեղերուն թուանշաններուն գումարը միւսէն մեծ ըլլայ, տարբերութեան 11ով բաժանման մնացորդը առաջարկեալ թուոյն մնացորդն է. իսկ եթէ զոյգ տեղեաց թուանշաններուն գումարը մեծ ըլլայ միւսէն, տարբերութեան 11ով բաժանման մնացորդը 11էն հանելով մնացածը առաջարկեալ թուոյն մնացորդն է:

120. Գարձեալ 1ին աջ կողմը զրօններով

գրուած թուոյ մը 7ով կամ 13ով բաժանման հետ, ըզհետէ ելած մնացորդները երբ զիտեալու ըլլանք կը տեսնենք որ՝

1 ÷ 7 կամ 13 = կը թողու մնացորդ 1	
1000 ÷ 7 կամ 13 =	» » 6 կմ 12
	որ 1 կուղէ 7 կամ 13 ըլլալու
1000000 ÷ 7 կամ 13 = կը թողու մնացորդ 1	
1000000000 ÷ 7 կամ 13 =	» » 6 կմ 12
	որ 1 կուղէ 7 կամ 13 ըլլալու

Սակե՛ ալ կը հետևի որ եթէ թիւ մը աջ կողմէն սխեալ երեք թուանշանով հատուածներու զատենք, անդոյգ տեղեաց հատուածներուն գումարը սխիտի ցուցնէ 7ով կամ 13ով բաժանման մնացորդներու գումար մը, և զոյգ տեղեաց հատուածներու գումարն ալ սխիտի ցուցնէ 7 ով կամ 13ով բաժանական ըլլալու համար սրահած թիւերու գումար մը. ուստի այս երկու գումարները երբ հաւասար գտն կամ իրենց տարբերութիւնը 7ով կամ 13ով բաժանական ըլլայ, առաջարկեալ թիւն ալ հարիւր 7ով կամ 13ով բաժանական սխիտի ըլլօց, և կամ նոյն տարբերութեանը մնացորդին չափ մնացորդ սխիտի թողու՝ եթէ անդոյգ տեղեաց գումարը միւսէն մեծ է, կամ այնչափ սխիտի սրահի 7ի կամ 13ի հաւասարելու համար, եթէ զոյգ տեղեաց թուանշաններուն գումարը մեծ է:

121. Ընդհանրապէս՝ այն ամեն նախնական թիւերով, որ 1ին աջ կողմը զոյգ զրօնք ունեցող թիւ մը բաժնելով 1 մնացորդ կը թողու, երբ 1ին աջ կողմը նոյն զրօնքուն կէսին չափ զրօ ունեցող

Թիւր բաժնէնք , երաժ մնացորդը բաժանող նախնական թիւէն 1 սրահա կըլլայ , ուստի թուոյ մը նոյն նախնական թուով բաժանական ըլլալը փորձելու համար , պէտք է առաջարկեալ թիւը աջ կողմէն սկսեալ հատուածներու զատել , այնքան թուանշանը հատուած մը ընելով՝ որչափ որ 1ին աջ կողմի գրօ դնելով բաժանող նախնական թիւէն 1 սրահա մնացորդ կըթողու : Ինչպէս թուոյ մը 17ով բաժանական ըլլալը փորձելու համար , որովհետեւ 1ին աջ կողմը տասնեակեց գրօ դնելէն ետքը 1 , և ութը գրօ դնելէն ետքը 16 մնացորդ կը թողու , ուստի առաջարկեալ թիւը աջ կողմէն սկսեալ ութը թուանշանով հատուածներու զտտելու է , նոյնպէս 19ով փորձելու համար ալ ինը թուանշանով հատուածներու զտտելու է , և անգոյգ ու զոյգ տեղերուն հատուածներուն զատ զատ դուստրններուն տարրերու թիւնը եթէ բաժանական ըլլայ 17ով կամ 19ով առաջարկեալ թիւն ալ բաժանական կըլլայ :

Գ . կանոն

122*. Այն նախնական թուով 1ին աջ կողմը գրօներ ունեցող թիւ մը բաժնելով և հետզհետէ երաժ մնացորդներուն վրայ զխտորութիւն ընելով , նախնական թուոյ բաժանականութեան երրորդ կանոն մ'ալ կատանանք : Փորձենք 7ով բաժանման մնացորդները :

1 ÷ 7 =	կը թողու	մնացորդ	1
10 ÷ 7 =	»	»	3
100 ÷ 7 =	»	»	2
1000 ÷ 7 =	»	»	6
10000 ÷ 7 =	»	»	4
100000 ÷ 7 =	»	»	5

Աւրի երեք մնացորդներն են	1 , 3 , 2
Նաքի » » »	6 , 4 , 5
Ասոնց դուստրն է	7 , 7 , 7

Հոս յայտնի կը տեսնուի որ միաւորին 7ով բաժանման մնացորդն է միաւորը նշանակող թուանշանին 1 անգամը կամ նոյն թուանշանը , տասնաւորին 7ով բաժանման մնացորդն է՝ նոյնը նշանակող թուանշանին 3 անգամը , հարիւրաւորին 7ով բաժանման մնացորդն է՝ նոյնը նշանակող թուանշանին 2 անգամը . հազարաւորին 7ով բաժանման մնացորդն է՝ նոյնը նշանակող թուանշանին 6 անգամը կամ թէ որ 1 անգամը ստանենք՝ պիտի ցցունէ՝ ճիշտ մնացորդին և բաժանողին տարրերութիւնը , նոյնպէս տասնհազարաւորին 7ով բաժանման մնացորդն է՝ նոյնը նշանակող թուանշանին 4 անգամը կամ թէ որ 3 անգամը ստանենք՝ պիտի ցցունէ՝ ճիշդ մնացորդին և բաժանողին տարրերութիւնը , նմանապէս հարիւր հազարաւորին 7ով բաժանման մնացորդն է՝ նոյնը նշանակող թուանշանին 5 անգամը կամ թէ որ 2 անգամը ստանենք՝ պիտի ցցունէ՝ ճիշդ մնացորդին և բաժանողին տարրերութիւնը : Ուստի՝

Թուոյ մը 7 ով բաժանական ըլլալը փորձելու Գ . կանոնը կըլլայ , պէտք է

« Առաջարկեալ թիւը աջ կողմէն սկսեալ երեք թուանշանով հատուածներու զտտել և իւրաքանչիւր հատուածին միաւորը 1ով , տասնաւորը 3ով և հարիւրաւորը 2ով բազմապատկել , անգոյգ հատուածներուն արտադրեալներուն դուստրէն հա-


Անդրդ հատուածներ Զոյգ հատուածներ

67	5
34	1
2	6
<u>103</u>	<u>6</u>
	× 11
	<u>66</u>

Անդրդ հատուածներուն	գումարը	103
Զոյգ	» 11 անգամը	<u>66</u>
		37

Այս տարրերութիւնը 37 է և 37 ուլ բաժանա-
կան է, ուստի առաջարկեալ թիւն ալ 37ուլ բա-
ժանական է :

123. Ամեն նախնական թիւերով բաժանա-
կանութեան կանոններ կրնայ որոշուիլ նախընթաց
բայատրութեանց համեմատ . բայց ինչպէս որ
տեսնուեցաւ 2, 5 և ասոնց կարողութիւններէն,
3, 9, 11 էն զատ մնացեալ նախնական թիւերով
բաժանականութեան կանոնները աւելի երկար ը-
լալուն համար գրեթէ դործածելի չեն, միայն իբ-
րև յատկութիւն թուոց նշանակուեցան :



ՅՕԴՈՒՄԵ Գ .

ԱՊԱՅՈՅՑ Ծ ՈՎ ՓՈՐՁԻ

124. Թէ յաւելման և թէ բազմապատկու-
թեան համար Ծով փորձ աւանդուած էր (Երես 44, 85)
որ թուոց Ծով բաժանման մնացորդը իրենց թու-
նշաններուն գումարին Ծ ուլ բաժանման մնացորդին
հաւասար ըլլալուն վրայ և գլխաւորաբար հետևեալ
սկզբանց վրայ հիմնուած է :

Տեսարիւն 2 . « Գումարելիներուն Ծ ուլ բաժան-
ման մնացորդը՝ գումարին Ծ ուլ բաժանման մնացոր-
դին հաւասար է » :

Վասն զի	36 = 9 × 6 + 2
	75 = 9 × 8 + 3
	19 = 9 × 2 + 1
	<u>150 = 9 × 16 + 6</u>

Տեսարիւն 3 . « Երկու թուոց Ծ ուլ բաժանման
մնացորդներուն արտադրեալին մնացորդը հաւասար
է նոյն թուոց արտադրեալին Ծ ուլ բաժանման մնա-
ցորդին » : Վասն զի ,

25 = 9 × 2 + 7	} Ասոնք բազմապատկե- լով յայտնի կը տես-
29 = 9 × 3 + 2	
<u>225 = 9² × 6 + 9 × 3 × 7</u>	նախ որ արտադրեա-
50	<u>9 × 2 × 2 + 7 × 2</u> լին առջի եր-

725 = 9² × 6 + 9 × 25 + 7 × 2 կու մասերը Ծ
ի բազմապատկի են և արտադրողներէն յառաջ
եկած մնացորդներուն արտադրեալին Ծ ուլ բաժա-
նման մնացորդն է ընդհանուր արտադրեալին մնացոր-
դը :

Այս սկզբունքները ճշմարիտ են, չէ թէ միայն 9ի համար, այլ բոլոր բաժանողներուն համար ալ, անանկ որ 7 ու 11 ու և ուրիշ թիւերով ալ բաժնելով փորձ կրնայ ըլլալ :

Գիտողարիւն . Ծով փորձը վստահելի չէ :
Վասն զի ,

Ա . Արտադրեալին թուանշաններուն կորզը փոխուած ատեն դարձեալ նոյն մնացորդը կը թուշու , 725 ին , 275 ին , 527 ին և ըն Ծով բաժանման մնացորդները հաւասար են :

Բ . Եթէ 9ի կամ 9ի բազմապատիկներու չափ աւելի կամ պակաս սխալ ըլլայ , դարձեալ միևնոյն մնացորդը կը թողու : Ինչպէս 716 ին , 725 ին , 743 ին և ըն Ծով բաժանման մնացորդները հաւասար են :

Այս բանը ամեն բաժանողներու համար ալ կըրնայ պատահիլ :

Գ . Եթէ զրօներ աւելի վրամ պակաս դրոխն , դարձեալ Ծով բաժանման մնացորդը չի փոխուիր : 725 ին . 7025 ին , 7250 ին և ըն Ծով բաժանման մնացորդները հաւասար են :

ԱՊԱՅՈՒՅՄՆԵՆԼԻ ԽՆԳԻՐԸ

Ի ՎԵՐԱՅ ԲԱԺԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹՈՒՈՑ

543 . Թիւ մը 6 ու բաժանակիս է , կրր իր միւտորը միւս բուանշաններուն գումարին 4 անգամին վրայ աւելցնելով կրս գումարը 6 ու բաժանակիս ըլլայ :

544* . Թիւ մը 4 ու բաժանակիս է , կրր միւտորը տասնաւորը կշանակող բուանշանին 2 անգամին վրայ աւելցնելով՝ գումարը 4 ու բաժանակիս ըլլայ :

545* . Թիւ մը 8 ու բաժանակիս է , կրր միւտորը տասնաւորը կշանակող բուանշանին 2 անգամին և հարիւրաւորը կշանակող բուանշանին 4 անգամին վրայ աւելցնելով գումարը 8 ու բաժանակիս ըլլայ :

546 : Թիւ մը բաժանակիս է 99 ու , թէոր ալ կողմէն սխալ կրկու բուանշանով հատուածներու զատուի և հատուածներուն գումարը 99 ու բաժանակիս ըլլայ : Այս կանոնը 9 ի և 11 ի համար ալ գործածել :

547 . Քանի մը արտադրողներու արտադրեալ Ծով կամ 11 ու բաժանման մնացորդը հաւասար է , նոյն արտադրողներուն Ծով կամ 11 ու բաժանման մնացորդներուն արտադրեալին մնացորդին : Այս ճիշդ է ամեն բաժանողներու համար ալ :

548 . Երկու անբող բիւերու , որք 7 ու բաժանակիս չեն , քառակուսիներուն գումարը 7 ու բաժանակիս ըլլար : Պէտք է սպացուցանել :

549 . Երկու յաշորակիս [consécutif] բուոց արտադրեալին կէտը 3 ու բաժնելով կրէք 2 մնացորդ ըր բոլոր :

550 . Երկու բիւերու , որք 3 ու բաժանակիս չեն , խորանարդներուն գումարը կամ տարբերութիւնը 9 ու բաժանակիս կըլլայ :

551 . Թիւ մը 9 ու կրնայ բաժնուիլ հետեւեալ կերպով ալ : Գիշուք թէ թիւը բաղկացեալ է $-x^2 + x - 1$ և $x^2 + x + 1$, և բաժնելու է Ծով , ըլլայ քանորդը 5 , յայտնի է որ յիշեալ բուոյն

9 ով բաժանման մնացորդն աչ 5 է, և քանորդը պիտի ըլլայ + + + + + 5 + 5 + 5 + 5 + 5 :

Օրինակի համար 356714 ը 9 ով բաժնեղու համար բուանշաններուն գումարը կանեն որ է 26, և որուն 9 ով քանորդն է 2 և մնացորդը 8, որով սակողը քանորդը կըլլայ 2+3+35+356+3567+35671 = 39634 :

552, թէ որ բունց մը քանակութիւն 13 հանեալով մնացածը 9 ով բաժանակիս ըլլայ, նոյն քիւն աչ 9 ով բաժնեղով 2 կամ 7 մնացորդ կունենայ հարկաւ : Ատր փոխադարձն աչ ճշնարիտ է :

553. Երկու ուն է քիւ ւ և ք, իրենց տարբերութեան ք — ք ով գատ գատ բաժնեղով միեւնոյն մնացորդը կը բողուն : Կը հետեւի որ ք^ա, ք^բ աչ գատ գատ բաժնեղով հաւասար մնացորդ պիտի բողուն և հետեւապէս ք^ա — ք^բ բաժանակիս է ք — ք ով :

554. Երկու քիւնու, որք 3 ով բաժանակիս չեն, փեցերորդ կարողութեանց տարբերութիւնը 9 ով բաժանակիս կըլլայ :


555. Երկու բունց տարբերութիւնը 9 ով բաժանակիս է, երբ քիւնը միեւնոյն բուանշաններով զըռուած են, բաց տարբեր կարգաւ : Ինչպէս՝ 6517 — 5716 = 801 ը բաժանակիս է 9 ով :

556. 3 ով ոչ բաժանակիս երկու շարորդակիս բունց գումարը միշտ 3 ով բաժանակիս է :

557. Թունց մը բազմապատիկէն հաւասար տարբերութեանք աւելի և պակաս բունց գումարը նոյն բունց բազմապատիկ է :

558. Երկու բունց մէկը կամ միւսը կամ իրենց գումարը կամ տարբերութիւնը 3 ով միշտ բաժանակիս է :

559. Թունց մը հակառակը իր քովը գրելով 11 ով բաժանակիս կըլլայ : Ինչպէս 3156իւն, հակառակն է 6513, որք իրարու քով գնելով կըլլան 31566513 կամ 65133156, որք 11 ով բաժանակիս են :



Հ Ա Տ Ո Ւ Մ Բ .

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱԴՐԵԱԼ ԹԻՒՔ

125. Տեսարիւն Ղ. « Ամեն ամբողջ թիւ, որ նախնական չէ, երկու կամ ալ աւելի նախնական թունց արտադրեալ պիտի ըլլայ » : Աման զի թիւ մը որ նախնական չէ. հարկաւ նախնական բաժանող մ'ունի, հարկաւ քանորդ մ'ալ, եթէ այս քանորդն ալ նախնական է, թիւը կըլլայ երկու նախնական թունց արտադրեալ :

Իսկ թէ որ այս քանորդը նախնական չէ, հարկաւ այս ալ նախնական բաժանող մ'ունի և հետեւապէս քանորդ մ'ալ, այս քանորդը եթէ նախնական է, թիւը կըլլայ երեք նախնական թունց արտադրեալ : Եւ թէ որ այս քանորդն ալ նախնական չէ, հարկաւ նախնական բաժանող մը ունի և հետեւապէս քանորդ մ'ալ, եթէ այս քանորդը նախնական է, թիւը կըլլայ չորս նախնական թունց արտադրեալ :

Եթէ այս քանորդն ալ նախնական չըլլայ :

Թիւը կըլլայ հինգ , վեց և այլն նախնական թուոյ արտադրեալ , մինչև որ վերջի քանորդը նախնա- կան ըլլայ :

$$15 = 3 \times 5$$

— , 3 , 5 , 7 , . . . նախնական թիւեր են , այս թիւերը կրնայ ըլլալ որ իրարմէ տարրեր ըլ- լան , կրնայ ըլլալ որ ամենը կամ մէկ քանին ի- րարու հաւասար ըլլան .

$$15 = 3 \times 5$$

$$15 = 3 \times 5$$

Թէ որ ամենքն ալ իրարու հաւասար ըլլան , արտադրեալ թիւը նախնական թուոյ մը կարողու- թիւնն եղած կըլլայ :

$$15 = 3 \times 5$$

Դիցուք թէ 1800ը իր նախնական արտադրող- ներուն պիտի վերածուի ,

$$1800 = 2 \times 900 \text{ և } 900 = 2 \times 450 \text{ ուստի}$$

$$1800 = 2 \times 2 \times 450$$

$$\text{և } 450 = 2 \times 225 \text{ և } 225 = 3 \times 75 \text{ և } 75 = 3 \times 25 \text{ և}$$

$$25 = 5 \times 5$$

$$\text{ուստի } 1800 = 2 \times 2 \times 2 \times 3 \times 3 \times 5 \times 5 \text{ կամ}$$

$$1800 = 2^3 \times 3^2 \times 5^2$$

Հետևողորմէն Ա. մեն թիւ կամ նախնական է կամ արտադրեալ .

Հետևողորմէն Ք. Ա. մեն արտադրեալ թիւ նախնա- կան թիւերու բազմապատկութենէն յառաջ եկած է :

126. Տեսարիւն Թ. « Նախնական թուոյ փոքրագոյն սահմանը 2 է իսկ մեծագոյն կողմը սահման չունի , այսինքն , Նախնական թիւերը ան- հուն են » : Վասն զի ,

1^o թիւերը անհուն են (8) , և որովհետև թի-ւերը կամ նախնական են կամ արտադրեալ , և արտադրեալ թիւերն ալ նախնականներէն յառաջ եկած են (125 Հետևողորմէն Ա. Ք.) , հարկաւ նախ- նական թիւերը անհուն ըլլալու են , վասն զի հու- նաւոր նախնական թիւերը անհուն թիւեր յառաջ չեն կրնար բերել :

2^o Եթեալ թիւնք թէ նախնական թիւերը իրենց մեծագոյն կողմը սահման մ'ունին և այդ սահմանը ըլլայ 1 , 2 կն մինչև 1 եղած նախնական թիւերը շարեւով և բազմապատկելով իրարմով և արտադ- րեալին վրայ 1 աւելցնելով պիտի ունենանք

$$2 \times 3 \times 5 \times 7 \dots \times 1 + 1$$

Ասիկ յառաջ եկած թիւը է համարելով , կ'ը- սեմ որ կամ նախնական է կամ արտադրեալ թիւ մը , եթէ նախնական է , ըսել է որ 1 էն մեծ նախնական թիւ կայ եղեր և այս կերպով անհուն նախնական թիւեր կրնան յառաջ բերուիլ :

Եթէ արտադրեալ թիւ է , հարկաւ պիտի ու- նենայ նախնական բաժանող մը մեծ քան զ1 , վա- սրն զի այս թուոյն առաջին մասը այսինքն է — 1 մին- չև է եղած նախնական թիւերով բաժանելի է , բայց երկրորդ մասը որ է 1 , բաժանելի չէ . ուստի նախնական բաժանողը 1 էն մեծ ըլլալու է , այսինքն

ալ դարձեալ կը հետևի որ է էն մեծ նախնական թիւեր պիտի ըլլան, և ենթադրութիւննիս անտեղի է :

127. Տեսութիւն թ. « Թիւ մը ուրիշ թուով մը բաժանական կըլլայ, երբ բաժանող թուոյն նախնական արտադրողներուն ամենքն ալ ճիշդ բաժանելի թուոյն նախնական արտադրողներուն մէջ գտնուին, բաժանելիին միւս արտադրողներն են քանորդին նախնական արտադրողները : Երբ չը գտնուին բաժանականութիւնն անկարելի է » : Այսպէս, բաժանողով բաժանական բաժանելին հաւասար է բաժանողին քանորդով արտադրեալին, ուստի բնական է որ բաժանելին պարունակէ բաժանողին բոլոր նախնական արտադրողները, և հետեւապէս բաժանելիին նախնական արտադրողներուն մէկ մասը բաժանողը կը կազմէ և միւս մասն ալ քանորդը :

72 ը բաժանական է 18 ով, վասն զի,

$$72 = 2^3 \times 3^2 \text{ և } 18 = 2 \times 3^2, \text{ ուստի ասոնց բաժանման}$$

քանորդն ալ պիտի ըլլայ $2^2 = 4$

ՆԵՏԵՆՈՒԹԻՒՆ Ա : « Թիւ մը որ ուրիշ թուով մը բաժանական է. բաժանելի թուոյն արտադրողներուն մէկը եթէ համեմատութեամբ նախնական է բաժանողին, միւս արտադրողներուն մէկը կամ մէկ քանին բաժանական պիտի ըլլան բաժանողով » : Այսպէս, եթէ չըլլան անկարելի է որ բաժանելի թիւը բաժանողով բաժանական ըլլայ :

540 ը բաժանական է 20 ով, և $540 = 60 \times 9$. արդ 9 և 20 համեմատութեամբ նախնական ըլլալով՝ 60ը 20 ով բաժանական է :

128. Տեսութիւն թ. « Թիւ մը իր նախնական արտադրողներուն մէկ քանին արտադրեալովը բաժանական է » : Այսպէս, զի,

բաժանողին արտադրողները բաժանելիին արտադրողներուն մէջ ամբողջապէս կը գտնուին :

$$540 = 2^2 \times 3^2 \times 5 \quad \text{ուստի}$$

$$540 \text{ ը բաժանական է } 2 \times 3 = 6 \text{ ով,}$$

$$2^2 \times 3 = 12 \text{ ով, } 2^2 \times 3^2 = 36 \text{ ով, և ըն } :$$

129 Ծանօթութիւն : Թուոյ մը նախնական արտադրողները իր նախնական բաժանողներն են. և նախնական արտադրողներուն մէկ քանին բազմապատկութեամբը յառաջ եկածներն ալ անոր բազմապատկութեամբ բաժանողներն են : 540 ին նախնական բաժանողներն են 2, 3, 5 թիւերը, իսկ բազմապատկութեամբ բաժանողներն են $2^2 = 4, 3^2 = 9, 3^3 = 27, 6, 12, 36$, և այլն թիւերը :

130. Թուոյ մը նախնական ըլլալը որոշելու համար պէտք է,

« Նախնական թուոյ փոքրագոյնէն, 2 էն ըսկըսեալ հետզհետէ 3ով, 5 ով և ըն փորձել թէ ասոնց մէկովը բաժանական է, և սոյս ալ սուսման ունի առաջարկեալ թուոյն մինչև մերձաւոր ամբողջական քառակուսի արմատը գտնուած նախնական թիւերը » :

Ինչպէս 67ին նախնական ըլլալը կամ չըլլալը հասկնալու համար քննելու է որ՝ 67 ին մերձաւոր ամբողջական քառակուսի արմատը 8 ըլլալով՝

մինչև 8 գտնուած նախնական, այսինքն, 2, 3, 5, 7 թիւերով 67ը բաժանակա՞ն է, 67ը ստոնց և ոչ մէկովը բաժանական ըլլալով նախնական է: Ասան զի, թիւ մը՝ երբ իր քառակուսի արմատէն փոքր եղած թիւերովը բաժանական չէ, իր քառակուսի արմատէն մեծ եղած թիւերով ալ բաժանական չի կրնար ըլլալ, թէ որ ըլլայ, քանորդը հարկաւ իր քառակուսի արմատէն փոքր պիտի ըլլայ և որովհետև արդէն իր քառակուսի արմատէն փոքր եղած թիւերով փորձուած է բաժանական չըլլալը. ուստի քառակուսի արմատէն մեծ թիւերով ալ բաժանական չի կրնար ըլլալ:

131. Մինչև սահմանեալ թիւ մը գտնուած նախնական քուոց ցուցակը շինել:

Նախնական թիւերն անհուն ըլլալով (126) բոլոր նախնական թուոց ցուցակը չի կրնար շինուիլ, բայց մինչև սահմանեալ թիւ մը եղած նախնական թուոց ցուցակը հնարաւոր է: Ինչպէս՝ գտնուլ մինչև 100 եղած նախնական թիւերը:

Այս ցուցակը շինելու համար կը մտածուի որ՝
 Ա. 2էն զատ մնացեալ ղոյգ թիւերը գտնել 2 ով բաժանական ըլլալով նախնական չեն կրնար ըլլալ, ուստի նախնական թիւերը անղոյգ թուոց մէջ գտնուելով, անոնք 3 էն սկսեալ մինչև սահմանեալ թիւը գրելու է. ինչպէս

- 2, 3, 5, 7, 9, 11, 13, 15, 17, 21, 23, 25, 27, 29, 31, 33, 35, 37, 39, 41, 43, 47, 49, 51, 53, 55, 57, 59, 61, 63, 65, 67, 69, 71, 73, 75, 77, 79, 81, 83, 85, 87, 89, 91, 93, 95, 97, 99;

Բ. 3ին քովէն սկսելով ամեն հետզհետէ երրորդ եղած թիւերը, ինչպէս՝ 9, 15, 21 . . ., բաժանական ըլլալով 3ով՝ նախնական չեն, արեւու կամ վրանին գծելու է:

Գ. 5ին քովէն սկսելով ամեն հետզհետէ հինգերորդ եղած թիւերը, ինչպէս՝ 15, 25, 35 . . . 5ով բաժանական ըլլալով՝ նախնական չեն, արեւու է կամ վրանին գծելու է:

Դ. 7ին քովէն սկսելով ամեն հետզհետէ եօթներորդ եղած թիւերը, ինչպէս՝ 21, 35, 49 . . . 7ով բաժանական ըլլալով նախնական չեն, արեւու կամ վրանին գծելու է:

Ե. Արովհետև 100ին քառակուսի արմատը 10 է, ուստի մինչև 10 եղած նախնական թիւերով այս գործողութիւնը կատարելէն ետքը, բոլոր չարուած կամ վրանին չի գծուած թիւերը կըլլան մինչև 100 եղած նախնական թիւերը և որով սրահանջեալ ցուցակն ալ շինուած կըլլայ: Ապացոյց:

Արովհետև ամեն անղոյգ թիւ իր նախնթուայէն 2 միութիւն աւելի է, և երբ 3ին քովէն սկսեալ մինչև երրորդը կը համրուի, պիտի գտնուի 6 միութեամբ աւելի թիւ մը, որ է 9 և որ բաժանական է 3 ով, նմանապէս միւսներն ալ. ևն:

Այս ոճով մինչև սահմանեալ թիւ մը նախնական թուոց ցուցակը շինելուն կըսուի մալ Երատուրենայ:

133. Արտադրեալ թուոց մը նախնական արտադրողները կամ բաժանողները գտնուու համար՝ պէտք է, «Արտադրեալ թիւը հետզհետէ բաժնել նախնական թուոց փոքրագոյնէն 2էն սկսեալ և չարունակել մինչև որ վերջէն քանորդը նախնական

Թիւ մ'ըլլայ, որ արտադրեալ թուոյն քառակուսի արմատին չափ կամ անկէ վաքր թիւ մը կըլլայ» :

Նոյն թուոյն բազադրեալ արտադրողներն կամ բաժանողներն ալ գտնալու համար՝ սէտք է,

«Նախ գրել 1 էն սխեալ փոքրագոյն նախնական բաժանողը և անոր կարողութիւնները իրարու տակ, ետքը անկէ վեր նախնական արտադրողը և իր տալին միջ ասով առջիններուն արտադրեալը, և անկէ ալ ետքը այս նախնականին կարողութիւնները և իրենց տալին միջ առջիններուն արտադրեալը ասանկ մինչև վերջին նախնական արտադրողը» այս վերջինները կը պարունակեն թի՛ նախնական և թի՛ բազադրեալ արտադրողները : Օրինակ՝

18900ին թի՛ նախնական և թի՛ բազադրեալ արտադրողները կամ բաժանողները գտնալ :

		Քանակացն
		արտադրողը
		1
18900	2	2
9450	2	4
4725	3	3, 6, 12
1575	3	9, 18, 36
525	3	27, 54, 108
175	5	5, 10, 20, 15, 30, 60, 45, 90, 180, 135, 270, 540
35	5	25, 50, 100, 75, 150, 300, 225, 450, 900, 675, 1350, 2700
7	7	7, 14, 28, 21, 42, 84, 63, 126, 252, 189, 378, 756, 35, 70, 140, 105, 210, 420, 315, 630, 1260, 945, 1890, 3780, 175, 350, 700, 525, 1050, 2100, 4200, 1575, 3150, 6300, 4725, 9450, 18900

Չախ կողմի առաջին սիւնը կը սրարունակէ 18900ին նախնական արտադրողները գտնալու հարկաւոր եղած հաշիւները, երկրորդ սիւնը նախնական արտադրողները և երրորդ սիւնը թի՛ նախնական և թի՛ բազադրեալ արտադրողները :

Երրորդ սիւնին մէջ բոլոր արտադրողները զլաւ նորը համար նախ վրան 1 գրեցինք, և բազմապատկեցինք 2 նախնական արտադրողով և գրեցինք 1ին տակը, ետքը միւս 2 արտադրողով 2ը բազմապատկեցինք և գրեցինք արտադրեալ կը կարի 2 ին շխտակութեամբը, և ետքը 3 նախնական արտադրողով 1 էն սխեալ բազմապատկեցինք և արտադրեալները 3, 6, 12, գրեցինք իր շխտակութեամբը, և այս արտադրեալները միւս 3 ով բազմապատկելով շարունակեցինք այսպէս, միշտ մտադրութիւն ընելով որ ամեն թիւ մէկ անգամ միայն զրուի : Ստանկով բոլոր արտադրողներն և զլան

1^o 1, և 18900ը բաժնող 2ին բոլոր կարողութիւնները :

2^o 3ով, 3 ով, 3 ով 1ին և 2ին բոլոր կարողութեանց արտադրեալները :

3^o 5 ով, 5 ով առջի արտադրողներուն արտադրեալները :

4^o 7ով առջի արտադրողներուն արտադրեալները :

184. Տեսութիւն ԺԲ. «Թուոյ մը բոլոր արտադրողներուն համարները հաւասար է, իր նախնական արտադրողներուն ցուցիչներուն վրայ մէյմէկ

աւելցնելով և իրարմով բազմապատկելով յառաջ և հաճ արտադրեալին » :

Եթէ Բ = a^n բժշկի ք ըլլայ, Բ ին բոլոր արտադրողներուն համանողներուն համբանքը պիտի ըլլայ $(2+1)(3+1)(4+1)(1+1)$, Վասն զի

Վերի օրինակին մէջ տեսնուեցաւ որ $18900 = 2^2 \times 3^3 \times 5^2 \times 7$ է, և որ բոլոր արտադրողները սրարունակող սիւնին մէջ կան

1^o 1 ին 2 օվ և 2² օվ արտադրեալները, այս սինքն, 1, 2, 4, որ է $(2+1)$ արտադրող :


2^o Այս արտադրողներուն 3 օվ, 3^2 օվ, 3^3 օվ արտադրեալները, որ է $(2+1)$ 3 արտադրող, և արդէն $(2+1)$ արտադրող ալ ունենալով եղաւ $(2+1)(3+1)$ արտադրող :

3^o Այս արտադրողներուն, 5 օվ 5^2 օվ արտադրեալները, որ է $(2+1)(3+1)$ 2 արտադրող, և արդէն $(2+1)(3+1)$ արտադրող ալ ունենալով եղաւ $(2+1)(3+1)(2+1)$ արտադրող :

4^o Այս բոլոր արտադրողներուն 7 օվ արտադրեալները, որք են $(2+1)(3+1)(2+1)$ 1 արտադրողը, և արդէն այսչափ մ'ալ գտնուած ըլլալով ընդ ամենը եղաւ $(2+1)(3+1)(2+1)(1+1)$, այսինքն, $3 \times 4 \times 3 \times 2 = 72$ արտադրողք. և յիրաւի 18900 ին բոլոր արտադրողներուն համբանքն ալ 72 է, և 2, 3, 2, 1 թիւերը, նոյն թուոյն նախնական արտադրողներուն ցուցիչներն են :

Այս կանոնաբխ թուոյ մը միայն նախնական արտադրողները գիտնալով բոլոր արտադրողներուն համբանքը պիտի կրնայ որոշուիլ : Նաև երբ թուոյ

մը բոլոր արտադրողները գտնուած են, պիտի կրնայ ստուգուիլ իրենց համբանքը,



Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Գ.

ՄԵՄԱԳՈՅՆ ՀԱՍԱՐԱԿ ԲԱԺԱՆՈՂ

135. Քանի մը թուոյ մեծագոյն հասարակ բաժանողը նոյն թուոյ հասարակ եղած նախնական արտադրողներուն փոքրագոյն կարողութեանց արտադրեալն է (111), ուստի առաջարկեալ թուոյ նախնական արտադրողները որոշելով, և հասարակ եղած նախնական արտադրողներուն փոքրագոյն կարողութիւնները իրարմով բազմապատկելով կը գտնուի մեծագոյն հասարակ բաժանողը : Պտնանք 320, 400, 680 թուոյ մեծագոյն հասարակ բաժանողը :

320	2	400	2	680	2
160	2	200	2	340	2
80	2	100	2	170	2
40	2	50	2	85	5
20	2	25	5	17	17
10	2	5	5	1	
5	5	1			
1					

Ուստի $320 = 2^6 \cdot 5$, $400 = 2^4 \cdot 5^2$,

$680 = 2^3 \cdot 5 \cdot 17$

Հասարակ եղած արտադրողներն են 2 և 5, և

2ին փոքրագոյն կարողութիւնն է 2⁵ և 5ին փոքրագոյն կարողութիւնը 5, ուստի մեծագոյն հասարակ բաժանողը կըլլայ,

$$\frac{3}{2 \cdot 5} = 40$$

Գործնականապէս կրնայ գտնուիլ յիշեալ երեք թուոց մեծագոյն հասարակ բաժանողը հետեւեալ կերպով

2	320	400	680
2	160	200	340
2	80	100	170
5	40	50	85
	8	10	17

Ասոնց ամենը 2ով բաժնեցի, քանորդները 160, 200, 340 գրեցի իրենց տակը, ասոնք ալ 2ով բաժնեցի՝ քանորդները 80, 100, 170 գրեցի իրենց տակը, դարձեալ ասոնք ալ 2ով բաժնեցի՝ քանորդները 40, 50, 85

գրեցի, ասոնք ալ 5ով բաժանական ըլլալով 5ով բաժնեցի և դուայ քանորդ 8, 10, 17, որք համեմատութեամբ նախնական ըլլալով ալ չեն բաժնուիր բաժանողներն են 2, 2, 2, 5, ասոնց արտադրեալն է 40 որ է մեծագոյն հասարակ բաժանող :

Գործնականին մէջ հարկ չէ որ բաժանողները միշտ նախնական թիւեր ըլլան, այլ այն արտադրեալ թիւերով ալ կրնան բաժնուիլ որոյցմով բաժանական ըլլալնին յայտնի է : Ինչպէս՝ գտնալ 2100, 2800, 3500, 5600 թուոց մեծագոյն հասարակ բաժանողը :

100	2100	2800	3500	5600
7	21	28	35	56
	3	4	5	8

Հոս կը տեսնուի որ առաջարկեալ թուոց ամենուն ալ աջ կողմը երկու դրո կայ . ուստի 100 ու՛ բաժնեցի և քանորդներն ալ 7ով, որով մեծագոյն հասարակ բաժանողը կըլլայ $7 \times 100 = 700$:

Արդ քանի մը թուոց մեծագոյն հասարակ բաժանողը գործնականապէս գտնալու համար, սխարի,

Կանոն . «Ամենքը մէկ տողի մէջ գրել, և բաժնել ամենուն հասարակ եզրած արտադրողովը, քանորդները դարձեալ բաժնել իրենց հասարակ եզրած արտադրողովը, և ասանկ շարունակել մինչև որ քանորդները հասարակ բաժանող չունենան, այսինքն, համեմատութեամբ նախնական ըլլան : Բաժանողներուն արտադրեալն է մեծագոյն հասարակ բաժանող » :

560 . Գտնալ 324, 1350, 1620 քուոց մեծագոյն հասարակ բաժանողը : Պ . 34 :

561 . Գտնալ 1260, 1680, 1860, 2280 քուոց մեծագոյն հասարակ բաժանողը : Պ . 60 :

562 . Գտնալ 810 . 1134, 1296 քուոց մեծագոյն հասարակ բաժանողը : Պ . 162 :

136. Երկու թուոց մեծագոյն հասարակ բաժանողը ընթացիկ կանոնով մը գտնալու համար հետեւեալ խորհրդածութիւնը կրնես :

Պահանջուած ըլլայ գտնալ 3384 և 1512 թուոց մեծագոյն հասարակ բաժանողը :

Այս երկու թուոց մեծագոյն հասարակ բաժանողը յայտնի է որ փոքրագոյնէն, այսինքն, 1512 էն մեծ չի կրնար ըլլուլ, թէ որ 3384ը ճիշդ բաժնէ, 1512 է մեծագոյն հասարակ բաժանող, բայց բաժնելով կունենամ 360 մնացորդ, վասն զի $3384 = 2 \times 1512 + 360$, արդ 3384ին և 1512ին մեծագոյն

հասարակ բաժանողը նաև 360ին ալ մեծագոյն հասարակ բաժանող պիտի ըլլայ (110 . Գ.) որ 360ին մեծ չի կրնար ըլլալ, և 360ին ալ մեծագոյն հասարակ բաժանողը նաև 3384ին ալ մեծագոյն հասարակ բաժանող է (110, Գ.). եթէ 360ը ճիշդ բաժնէ զթիւն 1512, կըլլայ մեծագոյն հասարակ բաժանող, բոյց բաժնելով կունենում մնացորդ 72, վասն զի $512=4 \times 360 + 72$, արդ՝ արդէն հաստատեալ սկզբանց համեմատ գիտնալով որ 1512ին և 360ին մեծագոյն հասարակ բաժանողը մնացորդ 72ին ալ մեծագոյն հասարակ բաժանող է, որ 72ին մեծ չի կրնար ըլլալ, և 72ին ու 360ին մեծագոյն հասարակ բաժանողը 1512ին և հետևապէս 3384ին ալ մեծագոյն հասարակ բաժանող է, ուստի 72ը եթէ 360ը ճիշդ բաժնէ, կըլլայ մեծագոյն հասարակ բաժանող, արդ բաժնելով մնացորդ չըլլար, ուստի 72^ն է մեծագոյն հասարակ բաժանող:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

$$\begin{array}{r|l|l|l} & 2 & 4 & 5 \\ \hline 3384 & 1512 & 360 & 72 \\ 3024 & 1440 & 360 & \\ \hline 360 & 72 & 0 & \end{array}$$

Եւ 72էն ալ մեծ չի կրնար ըլլալ, վասն զի եթէ 72էն մեծ թիւ մ'ըլլայ 3384 և 1512 թուոց մեծագոյն հասարակ բաժանողը, այդ թիւը 360ին ալ մեծագոյն հասարակ բաժանող պիտի ըլլայ, ուրովհետև $3384 - 2 \times 1512 = 360$ է, և 1512ին 360ին մեծագոյն հասարակ բաժանողը 72ին ալ մեծագոյն հասարակ բաժանող պիտի ըլլայ, որովհետև

$1512 - 4 \times 360 = 72$, ուստի 72էն մեծ չի կրնար ըլլալ, ինչպէս որ հաստատելու էր:

137. Յիշեալ գործողութիւնը կը համառօտի .

Ա. Երբ մեծագոյն հասարակ բաժանողը գըտնալու առաջարկեալ երկու թուոց հասարակ չեղող արտադրողները ջնջուին, վասն զի նոյն թուոց հասարակ չեղող արտադրողները՝ իրենց մեծագոյն հասարակբաժանողին ալ արտադրող չեն:

Բ. Երբ բաժանման մնացորդին մէկը բաժանողին կէսէն աւելի ըլլայ այս մնացորդին ու բաժանողին տարբերութիւնը յաջորդ բաժանման բաժանող ընելու է. վասն զի երկու թուոց մեծագոյն հասարակ բաժանողը իրենց տարբերութեանն ալ մեծագոյն հասարակ բաժանող է, և այս տարբերութիւնը բուն մնացորդին փոքր ըլլալով մեծագոյն հասարակ բաժանող ըլլալու աւելի հաւանականութիւն ունի:

Այս դիպուածին մէջ քանորդը 1 աւելի կը համարուի: Օրինակ .

$$\begin{array}{r|l|l} & 15-6 & 3 \\ \hline 3384 & 1512 & 72 \\ 1224 & 216 & \\ 144 & 0 & \\ \hline 72 & & \end{array}$$

Միայն 1512ը 7ով բաժանալու կան ըլլալով բաժնեցի և ունեցայ քանորդ 216, և ասով 3384ը բաժնելով մնացորդ եղաւ 144, որ 216 բաժանողին կէսէն աւելի ըլլալուն համար իրենց տարբերութիւնը, որ է 72, յաջորդ բաժանող ընելով բաժնեցի 216ը, որ մնացորդ չի թողելուն համար 72ը եղաւ մեծագոյն հասարակ բաժանող:

Սակայն 1512ը 7ով բաժանալու կան ըլլալով բաժնեցի և ունեցայ քանորդ 216, և ասով 3384ը բաժնելով մնացորդ եղաւ 144, որ 216 բաժանողին կէսէն աւելի ըլլալուն համար իրենց տարբերութիւնը, որ է 72, յաջորդ բաժանող ընելով բաժնեցի 216ը, որ մնացորդ չի թողելուն համար 72ը եղաւ մեծագոյն հասարակ բաժանող:

138. Այս խորհրդածառն թեևն կը հետևի երկու թուոց մեծագոյն հասարակ բաժանողը գտնալու հետևեալ կանոնը : Պէտք է՝

« Եթէ թիւը բաժնել փոքրով, եթէ բաժանումը առանց մնացորդի ըլլայ, փոքր թիւն է մեծագոյն հասարակ բաժանողը » :

« Եթէ այս առաջին բաժանումը մնացորդ թողու, մնացորդով առջի բաժանողը բաժնել, եթէ այս բաժանումը առանց մնացորդի ըլլայ, առաջին մնացորդն է մեծագոյն հասարակ բաժանողը » :

« Եթէ այդ բաժանումն ալ մնացորդ թողու, առաջի առջի մնացորդը բաժնել, բաժանումն առանց մնացորդի եղած առեւն, վերջի մնացորդն է մեծագոյն հասարակ բաժանողը » :

« Եթէ այս բաժանումն ալ մնացորդ թողու, ստով կրմէ առջի մնացորդը բաժնել և առանկ շարունակել մինչև որ բաժանումն առանց մնացորդի ըլլայ, վերջի մնացորդն է մեծագոյն հասարակ բաժանողը » :

« Եթէ բաժանումն ոչսպէս շարունակելով մնացորդ ըլլայ, կամ այնպիսի բաժանելի մը սրտատակն որ նախնական կամ համեմատաթեամբ նախնական ըլլայ բաժանողին հետ, նշան է որ այն երկու թիւերը մեծագոյն հասարակ բաժանող չունին, և համեմատաթեամբ նախնական են » :

« Պարծողութիւնը համատուտը համար երկու թուոց ամեն մէկը իրենց հասարակ չեղող սրտապարզով բաժնել » :

« Եթէ մնացորդ մը բաժանողին կէսն մեծ ըլլայ, այս մնացորդին և բաժանողին տարբերութիւնը յաջորդ բաժանող ընել » :

563. Պատկ 3654 և 5670 բուոց մեծագոյն հասարակ բաժանողը :


		3	4	2
5670	3654	1134	252	126
1134	252	126	0	

5 սլ 5670 ը բաժանուորն և 3654 ը ոչ բաժանական ըլլալով, 5 սլ բաժնեցի 5670 ը և գտայ 1134, և 1134 ու 3654 թուոց մեծագոյն հասարակ բաժանողը գտնալու համար ալ ըստ կանոնի գործողութիւն ըրի և ելաւ 126, որ է առաջարկեալ թուոց մեծագոյն հասարակ բաժանողը :

564. Պատկ 38870, 14872 : 27671, 21708 : 61778, 35234 : 25578, 7938 բուոց մեծագոյն հասարակ բաժանողները :

139. Այս կանոնովս երկուքէն աւելի թուոց մեծագոյն հասարակ բաժանողը կրնայ գտնուիլ, բայց առաջ պէտք է

« Երկու թիւերունը գտնալ, ետքը այս մեծագոյն հասարակ բաժանողին և երրորդ թուոյն մեծագոյն հասարակ բաժանողը գտնալ, և ետքը ասոր ու չորրորդ թուոյն մեծագոյն հասարակ բաժանողը, առանկ շարունակել մինչև որ թիւերն հասնին : Ա՛րք թիւ մեծագոյն հասարակ բաժանողը առաջարկեալ ամեն թուոց մեծագոյն հասարակ բաժանողն է » :



Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Դ .

ՓՈՔՐԱԳՈՅՆ ՀԱՍԱՐԱԿ ԲԱԶՄԱՊԱՏԻԿ

140. Երկու կամ աւելի թուոյ փոքրագոյն հասարակ բազմապատիկը պիտի ըլլայ այնպիսի թիւ մը որ պիտի պարունակէ առաջորկեալ թուոյ նախնական արտադրողոց մեծագոյն կարողութիւնները : Ինչպէս թէ որ է $Ա = 5^3 2^2 3$, $Բ = 5^4 3^2 2$, $Գ = 5^2 2^5 3$, ուն առեն $Ա$, $Բ$, $Գ$, թուոյ փոքրագոյն հասարակ բազմապատիկը կըլլայ $5^5 2^5 3^3$: Վասն զի եթէ այս արտադրողներուն մէկը սլակաս ըլլայ, օրինակի համար 3 սլակաս ունենայ փոքրագոյն հասարակ բազմապատիկը, Գը անոր մէջ բաժանելի չըլլար : Ուստի

Շատ մը թուոյ փոքրագոյն հասարակ բազմապատիկը գտնալու համար, պէտք է « առաջարկեալ թիւերը իրենց նախնական արտադրողներուն վերածել, և անոնց մեծագոյն կարողութիւնները իրարմով բազմապատիկել » : Այսմ թէ որ առաջարկեալ թիւերը նախնական են, « իրենց արտադրեալը կըլլայ փոքրագոյն հասարակ բազմապատիկ » :

320, 400 և 680 թուոյ փոքրագոյն հասարակ բազմապատիկը գտնալու համար իրենց նախնական արտադրողներուն վերածելով կը գտնուի որ՝

$$320 = 2^6 \times 5, \quad 400 = 2^4 \times 5^2, \quad 680 = 2^3 \times 5 \times 17$$

Ուստի ատոնց հասարակ բազմապատիկն է

$$2^6 \times 5^2 \times 17 = 27200$$

Նմանապէս 5, 9 և 16 թուոյ փոքրագոյն հասարակ բազմապատիկն է $5 \times 9 \times 16 = 720$:

141. Երկու թուոյ փոքրագոյն հասարակ բազմապատիկը կրնայ գտնուիլ, նաև իրենց մեծագոյն հասարակ բաժանողովը բաժնելով, որոց քանորդները կըլլան համեմատութեամբ նախնական, արդ եթէ այս քանորդները իրարմով բազմապատիկն և երաճն ալ մեծագոյն հասարակ բաժանողով արտադրեալը պիտի ըլլայ փոքրագոյն հասարակ բազմապատիկ, ինչպէս՝ 4536 ; 3528 թուոյ փոքրագոյն հասարակ բազմապատիկը գտնալ :

8	4536 , 3528
9	567 , 444
7	63 , 49
	9 , 7

$$8 \times 9 \times 7 = 504 \quad \text{և} \quad \frac{4536}{504} = 9 \quad \text{և} \quad \frac{3528}{504} = 7$$

Ուստի ատոնց փոքրագոյն հասարակ բազմապատիկն ալ է $9 \times 7 \times 504 = 31752$:

Երկուքէն աւելի թուոյ փոքրագոյն հասարակ բազմապատիկն ալ այս կանոնովն կրնայ գտնուիլ, նախ պէտք է երկուքին փոքրագոյն հասարակ բազմապատիկը գտնալ, ետքը ասոր և երկրորդին, և ետքը ասոր ու չորրորդին, ասանկ շարունակել մինչև թիւերն հատնին, վերջինը ամենուն փոքրագոյն հասարակ բազմապատիկն է :

112. Այս ըստածներէն կը հետևի հետևեալ կանոնը որ աւելի գործածական է գործնականին մէջ :

Կանոն . Պէտք է «ամենը մէկ տողի մէջ գրել և բաժնել ամենուն կամ դոնէ մեծ մասին հասարակ բաժանողովը , և քանորդները գրել իրենց տակը , ասանց ալ ամենը կամ մէկ մասը բաժնել իրենց հասարակ բաժանողովը և քանորդները գրել իրենց տակը , և չարանակել այսպէս մինչև որ քանորդները բոլորովին համեմատութեամբ նախնա կան ըլլան , այսինքն , դոնէ երկու հաս չի դանուի հասարակ բաժանող ունեցող , այս բոլորովին համեմատութեամբ նախնական քանորդներուն և բաժանողներուն սրտադրեալն է ստաջարկեալ թուոց փոքրագոյն հասարակ բաղմապատիկը » :

« Եթէ ստաջարկեալ թուոց և հետզհետէ ելած քանորդներուն մէջ այնպիսիներ գանուին որ են որիչներուն ճիշդ բաժանող , այս բաժանող թուոց վրայ կետադրել գործողութեան մէջ չաւանդու համար » : Օրինակ .

Գտնալ 12 , 27 , 36 , 28 , 35 , 54 . 96 , 112 թուոց փոքրագոյն հասարակ բաղմապատիկը .

2	12 , 27 , 36 , 28 , 35 , 54 . 96 , 112
2	18 , 35 , 27 , 48 , 56
4	9 , 35 , 27 , 24 , 28
3	35 , 27 , 6 , 7
	35 , 9 , 2

Տեսնելով որ 12ը 36ին մէջ , 27ը 54ին մէջ , 28ը 112ին մէջ ճշգիւ կը բաժնուին զրանին կետադրելով գործողութեան մէջ չափի , և մեծագոյն մասն ալ 2ով բաժանական ըլլալուն համար 2ով բաժնեցի , քանորդներուն ալ մեծագոյն մասը 2ով բաժանական ըլլալուն՝ դարձեալ 2ով բաժնեցի , այս քանորդներուն մէջ 9ը 27ին մէջ բաժանական ըլլալուն՝ կետադրելով գործողութեան մէջ չափի , և մնացածներուն երկուքը 4ով բաժանական ըլլալուն համար 4ով բաժնեցի , և քանորդներուն մէջ տեսայ որ 7ը բաժանական է 35ին մէջ , զոյն կետադրելով գործողութեան մէջ չափի , և մնացածներուն երկուքը 3ով բաժանական ըլլալուն համար բաժնեցի և վերջապէս գտայ քանորդ 35, 9, 2, որք բոլորովին համեմատութեան նախնական են , ասանք բաժանողներով բաղմապատիկելով $35 \times 9 \times 2 \times 3 \times 4 \times 2 \times 2 = 30240$ եղաւ , որ է ստաջարկեալ թուոց փոքրագոյն հասարակ բաղմապատիկը :

Ծանօթութիւն Ա : Եթէ ստաջարկեալ թիւերը կամ քանորդները նախնական թուոց մը տարբեր կարգով թիւններովը բաժանական ըլլան , նախ՝ նոյն նախնական թուոցն այն փոքրագոյն կարգով թեամբը բաժնելու է , որով այդ թիւերուն ամենքն ալ կրնան բաժնուիլ , և ետքը ըստ կանոնի շարունակելու է : Ինչպէս ստաջարկեալ օրինակին մէջ 36ը 4ով , 54ը 2ով , 96 և 112 ալ 16ով բաժանական են , բայց նախ՝ ամենքը 2ով բաժնեցի : Նմանապէս քանորդներուն մէջն ալ 18ը 2ով , 48 և 56ը 8ով բաժանական են , բայց 2ով բաժնեցի : Գարձեալ ասանց քանորդներուն մէջ ալ 24ը 8ով և

28ը հով բաժանական ըլլալուն համար հով բաժնե-
ջի :

Ծանօթութիւն Բ : Յիշեալ դիպուածին մէջ դոր-
ժաղութիւնը աւելի կը համառօտի, երբ բաժանաղայ
կարգը գրութի՛ առաջ նոյն բաժանող նախնական
թուոյն մեծագոյն կարողութիւնը և առաջարկեալ
թիւերը կամ քանորդներն ալ միայն բաժնուին
նոյն նախնական թուոյն իրենց բաժանող եղող
կարողութեամբը : Այս կերպով ընենք վերի օրինա-
կը .

32	12	27	36	28	33	54	96	112
<hr/>								
	9			35	27	3		7

12, 27, 28 թիւերը ուրիշներուն մէջ բաժանա-
կան ըլլալուն համար կետադրելէն ետքը, կը տես-
նենք որ 54ը 2ով, 36ը 4ով, 112ը 16ով և 96ը
32ով բաժանական են, և ոյս բաժանողներն ալ
2ին =, Բ, Գ, Է կարողութիւններն են, ռատի 2
ին միայն Է կարողութիւնը, որ է 32, գրեցինք
բաժանողայ կարգը, բայց յիշեալ թիւերը 2ին մի-
այն այն կարողութիւններովը բաժնեցինք որոնցով
բաժանական էին, և քանորդներէն ուրիշներուն
բաժանական եղողները կետադրելով, մնացածներն
եղան համեմատութեամբ նախնական, որով փոք-
րագոյն հասարակ բաղմապատիկն ալ եղաւ .

$$32 \times 35 \times 27 = 30240 :$$

Խ Ն Կ Ի Բ Բ

565 . Պակաւ 77, 35, 42, 91, 126, 26,
30, 65 բունց փոքրագոյն հասարակ բազմապատիկը :
Պ . 90090 :

566 . Պակաւ 105 . 126, 168, 210, 231, 294
բունց փոքրագոյն հասարակ բազմապատիկը :
Պ . 194040 :

567 . Պակաւ բիւ մը, որով 51, 65, 88 բիւերը
բաժնեկով մնացորդ բոլոր 3, 5, 4 : Պ . 12 :

568 . Պակաւ բիւ մը, որ հով, 6ով, 8ով . 9ով
բաժնեկով 2 մնացորդ բոլոր : Պ . 74, 146 կը

569 . Պակաւ բիւ մը, որ 12ով, 18ով, 25ով,
30ով բաժնեկով մնացորդ բոլոր 1 :

Պ, Ս, Յս խնդրոյն ինչպէս ևս ևս խնդրաց խընդ-
րոյն պատասխանելուն անհուն են, բայց սոս խնդրոյն
պատասխանելուն փոքրագոյնն է 901, որոյ փոյ
հետզհետէ 900-ական աւելցնելով միւս պատասխան-
ները յարաւ կարգան :

570* . Պակաւ բիւ մը, որ 3ով բաժնեկով 1 մնա-
ցորդ բոլոր, 5ով բաժնեկով 3 մնացորդ և 7ով բաժ-
նեկով 5 մնացորդ :

Սյս խնդիրը շոճելու համար կը մտաճոխ որ՝
պահանջեալ բիւ ևսի 3ին բազմապատիկէն 1 աւելի
պիտի չըլլայ, որպէս փոքրագոյնն է 4, ետքը ասոր վը-
րայ հետզհետէ 3 աւելցուի միւսի և որ գտնուի բիւ մը
որ 5ով բաժնեկով 3 մնացորդ բոլոր, 3 հնդ 3 աւելցը-
նելով կստացուի 13, որ 3ով բաժնեկով 1 և 5 ով բաժ-
նեկով 3 մնացորդ կըրտոր, բայց 7ով բաժնեկով 5 մնա-
ցորդ չիրողելուն համար 3ին և 5ին փոքրագոյն հասարակ

բազմապատիկը , որ l 15, հետզհետե կաւելցուի մինչև որ գտնուի թիւ մը , որ 7ով աչ բաժնելով 5 մնացորդ թողու , այդ 6 հեղ 15 աւելցնելով շտապ կուգայ 103 , որ խնդրոյն պայմանները ստիպողապէս կը գտնուցրէ , այսինքն 3ով բաժնելով 1 , 5ով բաժնելով 3 և 7ով բաժնելով 5 մնացորդ կը թողու : Բայց 103ը այս խնդրոյն փոքրագոյն պատասխանն է , ասոր վրայ հետզհետե 3 , 5 , 7 բուռց փոքրագոյն հասարակ բազմապատիկը , որ l $3 \times 5 \times 7 = 105$ աւելցնելով կը գտնուի ին միւս պատասխանները . որք անհուն են :

571*. Գտնայ թիւ մը որ 5ով բաժնելով 3 մնացորդ , 7ով բաժնելով 2 մնացորդ , 9ով բաժնելով 5 մնացորդ թողու .

Պ. Փոքրագոյն պատասխանն է 149 . և հետզհետե 315 աւելցնելով կը գտնուին միւս պատասխանները :

572*. Եթէ n ըլլայ ամբողջ թիւ մը , ապացուցուենք թէ n ($n+1$) ($n+2$) և n ($n-1$) ($2n-1$) թիւերը միշտ 6ով բաժանական են .

573*. Թիւ որ m և n երկու ամբողջ թիւեր են , ապացուցանել թէ $m^2 + n^2$ ($m^2 - n^2$) արտադրեալը բաժանական է 30 ով :

574*. Ապացուցանել թէ բաց ի 2 է և 3 է , ոչիչ նախնական բուռց քառակուսիներէն 1 պակսեցրելով 12ով բաժանական կըլլան :

575*. Եթէ բուռց մը բաժանողները 11ն սկսեալ որ բաժանողաց փոքրագոյնն է , մեծութեան կարգու գրուին մինչև նոյն խիւ թիւը՝ որ բաժանողաց մեծագոյնն է , յայրիներէն հաւասար հեռաւորութեամբ

երկու բաժանողաց արտադրեալը հաւասար է ծայրիներուէն արտադրեալին որ նոյն խիւ թիւն է :

Ապացուցանելու է :

576*. Երկու u և v բուռց մեծագոյն հասարակ բաժանողը հետեւեալ կերպով աչ կրնայ գտնուի :

u ին 11ն սկսեալ մինչև v հաս բազմապատիկները շարեւր է իրարու քով .

$$u, 2u, 3u, \dots, vu$$

ասոնցմէ v ով բաժանական եղողներուն համարանքն է մեծագոյն հասարակ բաժանողը : Օրինակ՝ 6ին և 9ին մեծագոյն հասարակ բաժանողը գտնուած համար կը գրեմ՝

$$9, 2 \times 9, 3 \times 9, 4 \times 9, 5 \times 9, 6 \times 9$$

ասոնց մէջ 6ով բաժանական եղողներն են ,

$$2 \times 9, 4 \times 9, 6 \times 9$$

ասոնք 3 հաս ըլլալով՝ 3 է մեծագոյն հասարակ բաժանողին : Ապացուցանելու է :

577*. Երեք u , v , w բուռց մեծագոյն հասարակ բաժանողը գտնալու համար , u ին և v ին բազմապատիկները 11ն սկսեալ մինչև w հաս շարեւր է իրարու սակ . ինչպէս՝

$$u, 2u, 3u, \dots, wu$$

$$v, 2v, 3v, \dots, wv$$

Ասոնց մէջ իրարու սակ դրուած թիւերէն երկուքն ՚ի միասին քանին որ w ով բաժանական են , այդ թիւն է մեծագոյն հասարակ բաժանողին :

Օրինակ՝ 6 , 9 , 12 թուոյ մեծագոյն հասարակ բաժանողը գտնալու համար կը գրեմ՝

$$9, 2 \times 9, 3 \times 9, 4 \times 9, 5 \times 9, 6 \times 9$$

$$12, 2 \times 12, 3 \times 12, 4 \times 12, 5 \times 12, 6 \times 12$$

Ասոնց մէջէն միայն 6 և 9 երկուքն ՚ի

միտան 6ով բաժանական ըլլալով՝ 3 է մեծագոյնն
հասարակ բաժանողին : Սպացուցանելու է :

578*. Սպացուցանել որ . երէ m և F համեմա-
տարեանք նախնական են , $m^2 - mF + F^2$ և $m + F$ չեն
կրնար ունենալ Յէն զատ հասարակ նախնական ար-
տաքոյ տր :

579*. Սպացուցանել որ , երէ բոլորակի մը ըր-
չանակին միայ ճ կէտեր նշանակուի , և երբ այս
կէտերին n և n իրարու միացուին .

1°. Սկսուած կէտին հասնելով կը վերջանայ այս
միացումը :

2°. Երէ ճ և n համեմատութեամբ նախնական են ,
բոլոր կէտերը իրարու միացուելէ և որք սկսուած
կէտին կը հասնի :

3°. Երէ այսպէս ըրոյս , ստանանան կէտերու բը-
տր բաժանական է ճ :

580*. Սպացուցանել որ . 1էն մինչև m — 1 յա-
ջորդական բոց արտադրեալը m ով բաժանական է ,
երէ m նախնական չէ :

581*. Սպացուցանել որ , երէ երկու բիւեր m և F
համեմատութեամբ նախնական են , $m + F$ և $m - F$ ին
մեծագոյնն հասարակ բաժանողը առ առաւելն 2 է :

582*. Գտնուի թէ , բիւ տր քանիք կերպով երկու
համեմատութեամբ նախնական արտադրողներու կրնայ
գատուիլ : Եւ սպացուցանել որ 2^ն — 1 կերպով կրնայ
ըրոյս . երէ առաջարկեալ բառոյն նախնական արտադ-
րողներու բիւր n է :

Գ Լ Ո Ւ Ր Ե .

Կ Ո Տ Ո Ւ Ա Կ

Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Ա .

Ս Ա Հ Մ Ա Ն Ր

143. « Միութեան մը կամ ինչ և իցէ մեծու-
թեան մը հաւասար մասերուն մէկը կամ աւելին
ԿՈՏՈՒԱԿ կըսուի » :

Ինչպէս՝ թէ որ ինչ և իցէ գումար մը 1 հաւա-
սար մասերու բաժնուի , մէկ մասը՝ որ նոյն գու-
մարին մէկ չորրորդն է , կտորակ կըսուի , 2 մա-
սը , 3 մասը՝ որ նոյն գումարին երկու չորրորդն ,
երեք չորրորդն են , կտորակ կըսուին :

Մասնապէս , 1 ուրուսը՝ որ էնտագէին 8 հա-
ւասար մասերէն մէկն է , կտորակեալ միութիւն է ,
և կտորակ կըսուի և կը կարգուցուի մէկ ութերորդ
էնտագէ , 2 ուրուսը , 3 բալը , և ըն , կտորակեալ
բիւեր են , և կը կարգուցուին երկու ութերորդ , և
բ.բ ութերորդ , և ըն էնտագէ , ասանք ալ կտորակ
են :

Նաև , թէ որ մէկ նարնջը 10 հաւասար մա-
սերու բաժնուի , մէկ մասը որ նարնջին մէկ տաս-
նորդն է , կտորակեալ միութիւն է և կտորակ
կըսուի , 2 , 3 , 4 մասերը՝ որ նարնջին 2 ասանք .



դը, 3 տասնորդը և 4 տասնորդն են, կոտորակ-
եալ թիւեր են և կոտորակ կըսուին :

Սասնկ ալ, 1 փարա, 2 փարա, 3 փարա,
. . . . 10 փարա՝ որ դիւն 40 հաւասար մասերուն
1ը, 2ը, 3ը 10 են, կոտորակ կըսուին և կը
կարգացուին 1 քառասներորդ, 2 քառասներորդ,
3 քառասներորդ, 10 քառասներորդ զը :

144. Կոտորակին սահմանէն կը հասկցուի որ՝
կոտորակ մը ցցունելու համար երկու թիւ պէտք է,
Յայտարար և Համարիչ, որք երկուքն ՚ի միասին
եզերք կոտորակաց կըսուին :

Յայտարարը՝ որ է բաժանող, կը յայտնէ որ՝
միութիւնը կամ մեծութիւնը քանի կոտորներու բաժ-
նուած է, կամ կոտորակեալ միութիւնը ո՞րչափ
է, կամ նոյն մեծութեան քաներորդ մասն է :

Համարիչը՝ որ է բաժանելի, կը ցցունէ որ՝ այն
կոտորներէն քանի՞ն ստնուած է, կամ կոտորակեալ
թիւը ո՞րչափ է : Ինչպէս թէ որ ըստի երեք ութե-
րորդ զը, հոս 8ը յայտարար կամ բաժանող է, և
կը ցուցնէ որ մէկ զընդ օղտին 40 փարան 8 հաւա-
սար կոտոր եղած է և կոտորակեալ միութիւնը զըլին
8 երորդ մասն է, որ կըլլայ 5 փոյ, և 3 ալ՝ որ
համարիչ կամ բաժանելի է, կը ցցունէ որ հաւա-
սար մասերէն միայն 3 մաս ստնուած է և կոտա-
րակեալ թիւը 3 է, որ կըլլայ 15 փոյ : 3 ութերորդ
զընդը նոսե կընայ մտածուիլ որ 3 զընդ 8 հաւա-
սար մաս եղած է, որ նոյնպէս կը նշանակէ 15 փոյ :

145. Կոտորակները նշանակեալ բաժանում են
և բաժանման նշանով (24) կը գրուին, հորիզոնական
գծին վրայ համարիչը և նոյն գծին տակը յայտա-
րարը դնելով, կամ աջէն դէս ՚ի ձախ քաշուած

ձախ գծին ձախ կողմը քիչ մը վերով համարիչը
և աջ կողմը քիչ մը վարով յայտարարը դնելով,
և կը կարգացուի առաջ համարիչը և ետը յայտա-
րարը յորչ կամ երորչ մասնիկով, կամ իբրև բա-
ժանում, համարիչը բաժանելի և յայտարարը բա-

ժանող ըսելով, ինչպէս՝ $\frac{7}{10}$ կամ $\frac{7}{10}$, կը կար-
գացուի 7 տասնորդ կամ 7 բաժանեալ 10. նմա-
նապէս $\frac{3}{5}$ կամ $\frac{3}{5}$, կը կարգացուի 3 Հինգերորդ,
կամ 3 բաժանեալ 5. հոս 7 և 3 թիւերը համա-
րիչ կամ բաժանելի, 10 և 5 թիւերն ալ յայտա-
րար կամ բաժանող են :

Հետեւեալ կոտորակները նաև կը կարգացուին՝
 $\frac{1}{2}$, կէս. $\frac{1}{3}$, երրորդ մաս. $\frac{1}{4}$, քառորդ. $\frac{2}{4}$
երկու քառորդ. $\frac{5}{4}$, երեք քառորդ :

146. Կատարակ և բաժանում միննոյն նշանա-
կութիւնը ունին, վասն զի, հաւասար կոտորները՝
որ կատարակը կը ցցունէ, բաժանմամբ կըլլայ, և
բաժանման գործողութեան նպատակն ալ հաւասար
կոտորներ ընել է :

Թէ որ $\frac{7}{10}$ զընդ իբրև կոտորակ մտածուի, կը
նշանակէ 7 զըլին 10 երորդ մասը կամ 1 զըլին
10 երորդ մասին 7 անգամ. 7 զընդ 280 փոյ է,
ասոր 10 երորդ մասն է 28 փոյ, 1 զընդ 40 փոյ է,
արայ 10 երորդ մասն է 4 փոյ, ասոր ալ 7 անգա-
մըն է 28 փոյ :

Յո՛ւ որ իբրև բաժանում մտածուի, նոյնպէ՛ս կը նշանակէ 7 զշին 10ով բաժանման քանորդը, որ ըսել է 10 երորդ մասը, որ նաև կրնայ գտնուիլ 7 ին ամեն մէկ միութիւնները 10ական հաւասար կտոր ընելով, որ ըսել է մէկ միութեան 10 երորդ մասին 7 անգամը:

Եւ այս պատճառաւ է որ բաժանման մնացորդը կտորակի ձևով կը գրուի քանորդին քովը:

Ծանօթութիւն Ա. Կտորակի սահմանը չենթադրէր որ յայտարարը միշտ համարիչէն մեծ պիտի ըլլայ, փոքր ալ կրնայ ըլլալ. ինչպէս՝ $\frac{11}{5}$ ալ կտորակ մ'է, որ կը ցցունէ միութեան երրորդ մասին 11 անգամը:

Ծանօթութիւն Բ. Ամբողջ թիւերն ալ կտորակ կի ձևով կրնան գրուիլ՝ իրենց 1 յայտարար գնելով. ինչպէս՝ 3 հաւասար է $\frac{3}{1}$, 4 $\frac{4}{1}$ և այլն: Ամբողջները ուրիշ կերպով ալ կտորակի ձև կրանեն 3 $\frac{6}{2}$, կամ $\frac{12}{4}$ կամ $\frac{15}{3}$ և այլն:

147. Կտորակները իրենց յայտարարին նույնելով երկու տեսակ կըլլան, հաւասար և ճանաչողական:



Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Բ .

Հ Ա Ս Ս Ր Ա Կ Կ Ո Տ Ո Ր Ա Կ

ՅՕԴՈՒՄ Ա .

ՍԱՀՄԱՆ ԵՒ ԿԱՐԵԻՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԵՐ

148. « ՀԱՍՍՐԱԿ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԸ անոնք են, որ ամեն թիւ յայտարար կրնան ունենալ և միշտ երկու թուով կը գրուին»: Ինչպէս՝ $\frac{5}{4}$, $\frac{7}{8}$, $\frac{9}{16}$:

149. Հատարակ կտորակները երկու տեսակ կըլլան, յատուկ և անյատուկ:

Յատուկ են այն կտորակները, որոց համարիչը յայտարարին փոքր է, որով ամբողջ միութենէն պզտիկ են և բուն կտորակներն ալ ասոնք են:

Ինչպէս՝ $\frac{5}{4}$, $\frac{5}{7}$, $\frac{1}{2}$, $\frac{5}{8}$, և այլն. ասոնց ամենն

ալ ամբողջ միութենէն փոքր են. $\frac{5}{4}$ ամբողջ միութենէն

$\frac{1}{4}$ ի չափ փոքր է, նոյնպէս $\frac{5}{7}$ փոքր է ամբողջ

միութենէն $\frac{2}{7}$ ի չափ, և այլն:

Անյատուկ են այն կտորակները, որոց համարիչը յայտարարին հաւասար կամ անկէ մեծ է, որով ամբողջ միութեան մը հաւասար կամ անկէ մեծ են: Ինչպէս՝

$\frac{5}{3}$, $\frac{8}{5}$, $\frac{6}{5}$, $\frac{7}{4}$, $\frac{13}{7}$, $\frac{16}{5}$, և այլն:

ըով կտորակն ալ 2, 3, 4 . . . անգամ կը մեծ-
նայ. և համարիչը 2ով, 3 ուլ, 4 ուլ . . . բաժնեւով
կտորակն ալ 2, 3, 4, . . . անգամ կը պզտիկ-
նայ :

$\frac{15}{7}$ ը $\frac{3}{7}$ ին 5 անգամն է. և $\frac{5}{7}$ ը $\frac{15}{7}$ էն 3 անգամ
փոքր է :

Նմանապէս $\frac{9}{8}$ զըշ $= 45$ փոյ և $\frac{9 \times 4}{8} = \frac{56}{8}$ զըշ
 $= 180$ փոյ, որ է 45 փոյին 4 անգամը և $\frac{9 : 5}{8} = \frac{5}{8}$ զըշ
 $= 15$, որ 45 փոյէն 3 անգամ պզտիկ է :

153. Տեսարիւն Գ. « կտորակի մը յայտա-
բարը ամբողջ թուով մը բազմապատկելով կտոր-
ակն ալ նոյն ամբողջ թուոյն չափ կը բաժանի,
յայտարարը բաժնեւով կտորակն ալ կը բազմա-
պատկին : (77. Տեսարիւն Բ.)

Յիրտի, կտորակի մը համարիչը նոյն պաշե-
ւով կտորակեալ թիւն տնտափոխ կը մնայ, և
յայտարարը բազմապատկելով կտորակեալ միու-
թիւնները բազմապատկող ամբողջ թուոյն չափ
անգամ կը պզտիկնան, և ուստի կտորակն կը
բաժնուի : Նշուիչս յայտարարը բաժնեւով կտոր-
ակեալ միութիւնները բազմապատկողին չափ ան-
գամ կը մեծնան, և ուստի կտորակն ալ կը բազ-
մապատկուի :

Ինչպէս՝ $\frac{5}{9}$ կտորակին յայտարարը 4 ուլ բազ-
մապատկելով կըլլայ $\frac{5}{36}$, որ առաջինին 4 րորդ մասն
է. վասն զի, մէկ միութիւնը 9 իններորդներու
բաժնեւուս ետքը, ասոնց ամեն մէկը 4 հաւասար
մասերու բաժնեւով պիտի ըլլայ ընդ ամենը 36 հա-

ւասար մասեր : որոյ ամեն մէկն է $\frac{1}{36}$, հաւասար
9 երրորդի մը բաժնորդին և հետեւապէս $\frac{5}{36}$ ալ չորս
անգամ պզտիկ է $\frac{5}{9}$ էն :

Նաև $\frac{5}{9}$ կտորակին յայտարարը 3 ուլ բաժնե-
ւով կըլլայ $\frac{5}{3}$, որ առաջինին 3 անգամն է, վա-
սըն զի, առաջինին մէջ մէկ միութիւնը 9 իններորդ-
ներու և ետքինին մէջ 3 երրորդներու բաժնուած
ըլլալով մէկ երրորդը 3 հատ մէկ իններորդի հաւա-
սար է և ուրեմն $\frac{5}{3}$ ը $\frac{5}{9}$ էն 3 անգամ մեծ է :

Նմանապէս՝ $\frac{5}{4}$ զը կը նշանակէ 30 փոյ, ասոր
յայտարարը 2 ուլ բազմապատկելով կըլլայ $\frac{5}{8}$ զըշ, որ
կը նշանակէ 15 փոյ, առաջինէն 2 անգամ պզտիկ է :
Եւ $\frac{5}{2}$ զը, որ կը նշանակէ 60 փոյ, առաջինէն 2 ան-
գամ մեծ է :

ՆՏՏՆՈՒԹՅՈՒՆ Ա. Ամբողջ թուով մը կտորակ մը
բազմապատկելու համար, համարիչը բազմապատ-
կելու է, կամ յայտարարը բաժնեւու է եթէ բա-
ժանական է. ինչպէս՝

$$\frac{7}{10} \times 5 = \frac{55}{10} \text{ կամ } \frac{7}{2} : \text{ Նաև } \frac{5}{6} \times 7 = \frac{55}{6} :$$

ՆՏՏՆՈՒԹՅՈՒՆ Բ. Ամբողջ թուով մը կտորակ մը
բաժնեւու համար, յայտարարը բազմապատկելու է,
կամ համարիչը բաժնեւու է եթէ բաժանական է :

$$\frac{10}{11} \div 5 = \frac{10}{55} \text{ կամ } \frac{2}{11} : \text{ Նաև } \frac{5}{6} \div 7 = \frac{5}{42} :$$

154. Տեսարիւն Գ. « կտորակի մը համարիչն
ալ յայտարարն ալ միևնոյն թուով բազմապատկելով
կամ բաժնեւով կտորակին արժէքը չի փոխուիր,
(77. Տեսարիւն Գ.) :

Վասն զի, համարիչը բազմապատկելով կտոր-

րակը կը բազմապատկի և յայտարարը միևնոյն թը-
ւով բազմապատկելով կոտորակը միևնոյն չափով
կը բաժանի , որով անփոփոխ կը մնայ :

Նոյնպէս հասկնալու է համարիչը և յայտարարը
միևնոյն թուով բաժանման համար ալ : Ինչպէս՝

$$\frac{45}{18} = \frac{45 \times 4}{18 \times 4} = \frac{60}{72} : \text{Նոյնպէս՝ } \frac{45}{18} = \frac{15 : 3}{18 : 3} = \frac{5}{6} :$$

Ծանօթութիւն . Այս անտաթեմէն կը հետեւի որ
կոտորակի մը շատ ձևերով կրնայ գրուիլ առանց
արժէքը փոխուելու , բայց առանց մէջ տմենէն փոքր
թուանշաններով գրուածը , սրոյ համարիչն ու յայ-
տարարը համեմատութեամբ նախնական են կըսուի
պարզագոյն ձև կամ՝ անպարզելի և կամ՝ անվերամբիկ
կոտորակ : Ինչպէս՝

$$\frac{5}{6} = \frac{10}{12} = \frac{15}{18} = \frac{20}{24} = \frac{25}{30} = \frac{35}{42} = \dots = \frac{60}{72} =$$

... առանց մէջ փոքրագոյն թուանշաններով գըր-
ուածն է $\frac{5}{6}$, որ իր հաւասար եղած բոլոր կոտո-
րակներուն պարզագոյն ձևն է , որոյ կըսուի նաև ան-
պարզելի կամ՝ անվերամբիկ կոտորակ :

155. Տեսութիւն Ե . «Կոտորակի մը համարի-
չին և յայտարարին վրայ միևնոյն թիւը գումարե-
լով կամ՝ անոնցմէ միևնոյն թիւը պակսեցնելով կո-
տորակին արժէքը հետեւեալ ձևերը կտանէ : »

1^o. Եթէ կոտորակը յատուկ է , գումարելով իր
արժէքը կը մեծնայ , և պակսեցնելով կը սղափկնայ .
Վասնզի ,

Յատուկ կոտորակի մը՝ իր ամբողջ միտթեան
հետ ունեցած տարբերութիւնը հաւասար է մէկ արիչ
կոտորակի մը , սրոյ յայտարարը նոյն մնալով , հա-

մարիչը՝ առջի կոտորակին երկու եզրերուն տարբե-
րութիւնն է : Այսպէս $\frac{7}{15}$ ն միտթեանն ունեցած

տարբերութիւնն է $\frac{15-7}{15} = \frac{8}{15}$, եթէ առաջարկեալ

յատուկ կոտորակին երկու եզրաց վրայ միևնոյն
թիւն աւելնայ , այս նոր կոտորակին միտթեան հետ
ունեցած տարբերութիւնը ցրունող կոտորակը պիտի
ունենայ առջի տարբերութիւնը նշանակող կոտո-
րակին համարիչը (50 . Տեսութիւն Բ . 3) , բայց
յայտարարը առջինէն մեծ , որով այս երկրորդ
տարբերութիւնը առջինէն փոքր կըլլայ , ուստի յա-
տուկ կոտորակի մը երկու եզրերուն վրայ միևնոյն
թիւն աւելցնելով միտթեանն ունեցած տարբերու-
թիւնը կը սղափկնայ և աւելի մեծ կոտորակ մը
կըլլայ : Նոյնպէս կրնայ հաստատուիլ որ յատուկ
կոտորակի մը երկու եզրերէն միևնոյն թիւը պակ-
սեցնելով կոտորակը կը սղափկնայ : Ինչպէս՝

$$\frac{7}{15} < \frac{7+4}{15+4} \text{ այսինքն } \frac{11}{19} , \text{ նաև } \frac{7}{15} > \frac{7-4}{15-4} \text{ այսինքն}$$

$\frac{5}{11}$ վասն զի ,

$$1 - \frac{7}{15} = \frac{8}{15} \text{ և } 1 - \frac{11}{19} = \frac{8}{19} , \text{ նմանապէս } 1 - \frac{5}{11}$$

$$= \frac{8}{11} > \frac{8}{15} > \frac{8}{19} :$$

2^o. « Եթէ կոտորակը անյատուկ է , գումարե-
լով իր արժէքը կը սղափկնայ և պակսեցնելով
կը մեծնայ » : Վասն զի ,

Անյատուկ կոտորակի մը երկու եզրերուն վրայ
միևնոյն թիւն ալ աւելնալով յառաջ եկածին մի-

աթենէն աւելի եղած մասը յցունող կոտորակին համարիչը նոյն մնալով՝ յայտարարը կը մեծնայ, որով կոտորակը կը պզտիկնայ: Նոյնպէս կրնայ հաստատուիլ որ, անյասակ կոտորակի մը երկու եզրերէն միեւնոյն թիւը պակսեցնելով կոտորակը կը մեծնայ: Ինչպէս՝

$$\frac{15}{4} > \frac{15+5}{4+5} \text{ այսինքն } \frac{18}{7} \cdot \text{ և } \frac{15}{4} < \frac{15-2}{4-2} \text{ այսինքն } \frac{15}{2},$$

ժաման զի,

$$\frac{15}{4} - 1 = \frac{11}{4} \text{ և } \frac{18}{7} - 1 = \frac{11}{7}, \text{ նմանապէս } \frac{15}{2} - 1$$

$$= \frac{11}{2} > \frac{11}{4} > \frac{11}{7} :$$

3^o « Եթէ միութիւն նշանակող այսինքն, հաւասար եզրեր ունեցող կոտորակի մը համարիչին և յայտարարին վրայ միեւնոյն թիւն աւելնայ կամ պակսի, կոտորակին արժէքը չի փոխուիր »:

Վստան զի, դարձեալ եզրերը հաւասար կը մնան (33. Գ.) : Ինչպէս՝

$$\frac{9}{9} = \frac{9+4}{9+4} = \frac{13}{13} \text{ և } \frac{9}{9} = \frac{9-4}{9-4} = \frac{5}{5} :$$

156 Տեսարիւն 2. Կոտորակ մը անարարգելի է, երբ իր երկու եզրերը համեմատութեամբ նախնական են:

Յիրաւի, կոտորակի մը երկու եզրերը համեմատութեամբ նախնական թիւեր ըլլալով հասարակ բաժանող մը (103.) չեն կրնար ունենալ, որով անարարգելի կըլլայ այդ կոտորակը: Քայքայ գաղղկացի քանակագէտ Պ. Սիրոտը հետեւեալ կերպիւ ալ կ'ապացուցանէ այս տեսութիւնը: Վըսէ,

ըլլայ կոտորակ մը $\frac{m}{F}$, որոյ եզրերը համեմատութեամբ նախնական են, և $\frac{m'}{F'}$ ուրիշ կոտորակ մը հաւասարարժէք առաջինին, անանկ որ $\frac{m}{F} = \frac{m'}{F'}$, թէ որ այս երկու կոտորակները՝ երկրորդին է՝ յայտարարովը բազմապատկուին, արտադրեալները $\frac{mF'}{F}$ և

ալիտի ըլլան հաւասար, որոյ երկրորդը ամբողջ թիւ մ'ըլլալով առաջինն ալ ամբողջ պիտի ըլլայ, ուրեմն $\frac{mF'}{F}$ արտադրեալը բաժանական պիտի ըլլայ ք ով, արդ ք ը $\frac{m}{F}$ ին հետ նախնական ըլլալով միւս արտադրող ք՝ ը բաժանական պիտի ըլլայ ք ով, այսինքն, ք՝ ը բազմապատիկ պիտի ըլլայ ք ին, ինչպէս նաև $\frac{m'}{F'}$ ալ $\frac{m}{F}$ ին, առանց որոյ $\frac{m'}{F'}$ կոտորակը հաւասար չի կրնար ըլլալ $\frac{m}{F}$ ին: Այսպէս համեմատութեամբ նախնական եզրեր ունեցող $\frac{m}{F}$ կոտորակին ամէն հաւասարարժէք կոտորակաց եզրերը մեծ և համարագմապատիկ կ'ըլլան և ինքն է անոնց պարզագոյն ձևը, ուրեմն $\frac{m}{F}$ կոտորակն անարարգելի է:

Հետեւեալ թիւերը համեմատութեամբ նախնական եզրեր ունեցող $\frac{m}{F}$ կոտորակին ամէն հաւասարարժէք կոտորակաց եզրերը մեծ և համարագմապատիկ կ'ըլլան և ինքն է անոնց պարզագոյն ձևը, ուրեմն $\frac{m}{F}$ կոտորակն անարարգելի է:

Հետեւեալ թիւերը համեմատութեամբ նախնական եզրեր ունեցող $\frac{m}{F}$ կոտորակին ամէն հաւասարարժէք կոտորակաց եզրերը մեծ և համարագմապատիկ կ'ըլլան և ինքն է անոնց պարզագոյն ձևը, ուրեմն $\frac{m}{F}$ կոտորակն անարարգելի է:

Հետեւեալ թիւերը համեմատութեամբ նախնական եզրեր ունեցող $\frac{m}{F}$ կոտորակին ամէն հաւասարարժէք կոտորակաց եզրերը մեծ և համարագմապատիկ կ'ըլլան և ինքն է անոնց պարզագոյն ձևը, ուրեմն $\frac{m}{F}$ կոտորակն անարարգելի է:

ՆԵՏԵՒՈՒԹՅՈՒՆ. Երկու անարարգելի կոտորակներն, որք իրարու հաւասար են, նոյնական կըլլան, այսինքն, համարիչին և յայտարարին իրարու հաւասար կըլլան:

Յիրաւի քանի որ երկու կոտորակներն անարարգելի և միանգամայն իրարու հաւասար են, հարկաւ կոտորակները նշանակող թուանշաններն ալ իրարու հաւասար, այսինքն, նոյնական պիտի ըլլան, եթէ չըլլա

լան , մէկ հոտորակին եզրերը միւս հոտորակին եզրերուն համարադասարտիկն ըլլալու են, որ հակառակ է ենթադրութեան :

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ Գ .

ՎԵՐԱԾՈՒԾՆ ՀԱՍՏՈՒԿ ԿՈՏՈՐԱԿԱՑ

157. « Հասարակ հոտորակաց վրայ եղած այն հոշիւնները , որ հոտորակաց նշանակութիւնը չեն փոխեր, կըսան ՎԵՐԱԾՈՒԾՆ ԿՈՏՈՐԱԿԱՑ » :

Ս . Սմբողջը կոտորակի վերածել

158. ԿԱՆՈՆ . Պէտք է ամբողջին 1 յայտարար դնել , կամ , տրուելիք յայտարարով բազմապատկել ամբողջը և արտադրեալը դնել համարիչ նոյն յայտարարին (146 . ծանօթութիւն Բ .) : » Ինչպէս $4 = \frac{4}{1}$ կամ $4 = \frac{4 \times 5}{5} = \frac{20}{5}$, որքենկերպարանեալ հոտորակք (149) :

Թէ՛ որ ամբողջ թուոյ մը հետ կոտորակ ըլլայ , և ամբողջը կոտորակին հետ խառնել ուղղուի , ամբողջը բազմապատկել յայտարարով և համարիչը վրան աւելցնելով գումարը դնել համարիչ » : Ինչպէս՝

$$4 \frac{5}{7} = \frac{4 \times 7 + 5}{7} = \frac{34}{7} . 5 \frac{2}{9} = \frac{5 \times 9 + 2}{9} = \frac{47}{9} ,$$

որք են խառն կոտորակք (149) :

Ստացոյց . Սմբողջին միութիւնը քանի հաւասար

մասերու բաժնես , ամբողջն ալ այնքան անգամ մասեր կըլլայ , եթէ 4 ամբողջին միութիւնը 5 հաւասար մասերու բաժնես , 4 ամբողջն ալ կըլլայ $4 \times 5 = 20$ մասեր , և այլն :

583 . վերածել 12 ամբողջը հինգերորդներու , 38 ամբողջը հօթներորդներու . 16 ամբողջը տասներորդներու , 5 ամբողջը մէկերորդի :

$$Պ . \frac{60}{5} , \frac{266}{7} , \frac{160}{10} , \frac{5}{1} :$$

584 . $3 \frac{1}{4} . 5 \frac{7}{8} , 4 \frac{1}{6} , 8 \frac{5}{9}$. ասոնց ամբողջները կոտորակներուն հետ խառնելու է :

$$Պ . \frac{15}{4} . \frac{47}{8} , \frac{25}{6} , \frac{77}{9} :$$

159. Թափառարիւն . Եթէ ուղուի կոտորակ մը ուրիշ կոտորակի մը վերածել որ հաւասարաբէք ըլլալով յայտարարը տրուած ըլլայ :

Սյս բանիս համար բաւական է որ առաջարկեալ կոտորակին յայտարարը պահանջեալ կոտորակին ծանօթ յայտարարին մէջ ճշդիւ բաժնուի , ան առեն քանորդով բազմապատկելու է առաջարկեալ կոտորակին համարիչը և արտադրեալը դնելու է նոր կոտորակին համարիչ : Ինչպէս $\frac{5}{7}$ կուզուի վերածել այնպիսի հաւասարաբէք կոտորակի մը , որոյ յայտարարը 21 ըլլայ , տեսնելով որ 7ը 21ին մէջ ճշդիւ կը բաժնուի և քանորդ կուտայ 3 , ուստի 3ով 5 համարիչը բազմապատկելով՝ արտադրեալ 15ը կը զրուի պահանջեալ կոտորակին համարիչ , որով կըլլայ $\frac{5}{7} = \frac{15}{21}$: Ասանկով համարիչը և յայտարարը միննոյն թուով բազմապատկուելով նոր

կոտորակը առջի կոտորակին հաւասարաբեք կըլայ :

Թէ որ առաջարկեալ կոտորակին յայտարարը տրուած յայտարարին մէջ ճշդիւ չի բաժնուի, նախ համարիչը բազմապատկելու և ետքը բաժանումն ընելու է . վասն զի, թուոյ մը վրայ բազմապատկութեան և բաժանման գործողութիւնը 'ի միասին պէտք եղած ստենը, այս գործողութիւնները ինչ կարգաւ որ ըլլան՝ արդիւնքն անփոփոխ կը մընայ . (77 . Տեսութիւն 2 .) :

Ինչպէս՝ $\frac{5}{7}$ ը կուզուի վերածել հաւասարաբեք կոտորակի մը, որոյ յայտարարը 40 ըլլայ : Հոս տեսնալով որ 7 ը 40 ին մէջ բաժանական չէ, նախ 5 համարիչը 40 ով կը բազմապատկեմ և կունենամ արտադրեալ 200, ասոր մէջ կը բաժնեմ 7 յայտարարը և կունենամ քանորդ 28 $\frac{4}{7}$, որով կըլլայ

$$\frac{5}{7} = \frac{28 \frac{4}{7}}{40} : \quad \text{Նմանապէս} \quad \frac{9}{10} = \frac{22 \frac{1}{2}}{25}$$

Թէ որ համարիչներուն քովի կոտորակները վերցրնենք, այն ստենն նոյն կոտորակին առաջարկեալ միութենէն պակաս մերձաւոր արժէքը գտնուած կը համարուի : Ինչպէս՝

$$\frac{5}{7} = \frac{28 \frac{4}{7}}{40} \text{ ըլլալով, եթէ համարիչին } \frac{4}{7} \text{ կոտորակը վերցնենք, կը համարուի որ } \frac{5}{7} \text{ ին մերձաւոր արժէքն է } \frac{28}{40}, \text{ որոյ սխալը } \frac{1}{40} \text{ էն փոքր է, վասն զի } \frac{5}{7} \text{ ին արժէքը } \frac{28}{40} \text{ ին և } \frac{29}{40} \text{ ին միջոցն է:}$$

արժէքն է $\frac{28}{40}$, որոյ սխալը $\frac{1}{40}$ էն փոքր է, վասն զի $\frac{5}{7}$ ին արժէքը $\frac{28}{40}$ ին և $\frac{29}{40}$ ին միջոցն է:

Այսու ամենայնիւ համարիչին քովին ետ ձգուած կոտորակը կէսէն մեծ ըլլալով՝ $\frac{29}{40}$ ը աւելի մաս է ճշմարիտին, թէև մեծ անկէց :

$$\text{Նմանապէս՝ } \frac{9}{10} = \frac{22 \frac{1}{2}}{25}, \text{ եթէ համարիչին } \frac{1}{2}$$

կոտորակը վերցնենք $\frac{9}{10}$ ին $\frac{1}{25}$ էն պակաս մերձաւոր արժէքը կը համարուի $\frac{22}{25}$ ը, որ ճշմարիտէն $\frac{1}{2}$ քան և հինգերորդ է տարբերութիւնը . և թէ որ $\frac{25}{23}$ տունենք, այս ալ $\frac{9}{10}$ ին մերձաւոր արժէքն է, բայց ճիշդէն $\frac{1}{2}$ քան և հինգերորդ աւելի :

Ուստի ինչ և իցէ կոտորակ մը ուզուած մերձաւոր արժէքին կրնայ բերուիլ . նոյն կոտորակին յայտարարը պահանջեալ մերձաւոր արժէքին յայտարարին վերածելով :

585. Վերածել $\frac{7}{9}$ ը 18 երորդի, 27 երորդի, 28 երորդի, 35 երորդի : Եւ $\frac{6}{11}$ ը 100 երորդի :

$$\text{Պ. } \frac{14}{18}, \frac{21}{27}, \frac{21 \frac{7}{9}}{28}, \frac{27 \frac{2}{9}}{35}, \frac{54 \frac{6}{11}}{100} :$$

586. Վերածել սահող և կոտորակ 'ի միասին, $4 \frac{5}{6}$ ը 18 երորդի . $7 \frac{5}{5}$ ը 20 երորդի . $12 \frac{4}{5}$ ը 13 երորդի :

$$\text{Պ. } \frac{87}{18}, \frac{152}{20}, \frac{166 \frac{2}{5}}{13} :$$

Բ. Կոտորակը կամ անյատուկ կոտորակը
անբողջի վերածել .

160. Անյատուկ կոտորակը ամբողջին մեծ ըլ-
լալով (149) ամբողջի կրնայ վերածիլ .

« Համարիչը յայտարարով բաժնելով , քանորդն
է ամբողջ և մնացորդն է կոտորակ » :

Վասն զի համարիչը բաժանելի է և յայտարա-
րը բաժանող , և կոտորակն ալ բաժանման քա-
նորդն է (144) :

Կերպարանեալ կոտորակները ճիշդ ամբողջ թիւ
կըլլան , բայց խառն կոտորակները՝ ամբողջ և կո-
տորակ : Ինչպէս՝

$$\frac{15}{5} = 3, \text{ և } \frac{17}{7} = 2 \frac{3}{7} :$$

$$587. \text{ Վերածել } \frac{30}{5}, \frac{165}{15}, \frac{48}{7}, \frac{148}{24} \text{ կոտորակ}$$

ներք անբողջի :

Գ. Կոտորակի մը արժէքը գտնալ կամ
գայն խառն բուոյ վերածել

161. Թէպէտև կոտորակի մը վրայ նայելով
կոտորակին արժէքը կը հասկցուի . բայց գործնա-
կանին մէջ ամեն սովորական եղած միութիւն իր
յատուկ ստորաբաժանումներն ունի , որ ամեն ա-
տեն կոտորակաց յայտարարներուն հաւասար չեն ,
ուստի կոտորակին արժէքը հասկնալ ըսելով կոտո-
րակին յայտարարը սովորական ստորաբաժանման
վերածել կը հասկցուի : Ինչպէս՝ $\frac{5}{3}$ զրջին արժէքը
գտնալու համար , զրուչին սովորական ստորաբաժա-

նումը 40 փոյ ըլլալով՝ 5 յայտարարը 40 ի վերա-
ծելու է ըստ կանոնի (159) , որ կըլլայ 40 ը 5 ով
բաժնելով և քանորդով համարիչը բազմապատկելով :

$$\frac{3}{5} \text{ զրջ} = \frac{24}{40} \text{ զրջ} , \text{ այսինքն} , 24 \text{ փոյ} :$$

Եթէ $\frac{5}{5}$ Ե արջն ըլլոր , արջնին սովորական
ստորաբաժանումը 24 մատ ըլլալով , և 5 ալ 24 ին
մէջ ճիշտ չի բաժնուելուն համար , պէտք է նախ հա-
մարիչը բազմապատկել 24 ով . և ետքը 5 յայտա-

$$\text{րարով բաժնել . } \frac{5}{5} \text{ արջն} = \frac{14 \frac{2}{5}}{24} \text{ արջն կամ } 14 \frac{2}{5}$$

մատ : $\frac{2}{3}$ մատին ալ արժէքը սովորական ստորա-
բաժանումը հասկնալու համար և մատին ալ ստո-
րաբաժանումը 12 գիծ ըլլալով՝ պէտք է բաժնել
զոյս 5 յայտարարով , և ճիշտ չի բաժնուելուն հա-
մար 12 ով 2 համարիչը բազմապատկելով արտադ-
րեալ 24 ը 5 ով բաժնել , կըլլայ $4 \frac{4}{5}$ այսին-

$$\text{քըն} , \frac{2}{5} \text{ մատ} = \frac{4 \frac{4}{5}}{12} \text{ մատ կամ } 4 \frac{4}{5} \text{ գիծ} , \text{ այս } \frac{4}{5}$$

գծին ալ արժէքը գտնալու համար , գծին ստորա-
բաժանումը որ է 12 կետ , պէտք է բաժնել 5 ով ,
որ ճիշտ չի բաժնուելուն համար պէտք է 12 ով 4 հա-
մարիչը բազմապատկել և արտադրեալը բաժնել 5

